



Երկրի Տեղեկատվությունը մաս է կազմում Բելգիայի Միջազգային Կարիտասի *Հասուն Աջակցված Գանձվոր Կերպարների Հզորացում* ծրագրի: Կարիտասը հավաքում և փոխանցում է հատուկ և թարմացված ինֆորմացիա պոտենցիալ վերադարձողներին և նրանց խորհրդատուներին վերաինտեգրման հնարավորությունների վերաբերյալ: Եթե չեք գտնում ձեր հուզող հարցերի պատասխանները այս տեղեկատվական նյութում, կարող եք ուղղակիորեն դիմել Բելգիայի Միջազգային Կարիտասի տեղեկատու ծառայությանը՝ էլ. հասցե: reintegration@caritasint.be

ԵՐԿՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1 Հունվարի
2010

Ծրագիրը ֆինանսավորված է Եվրոպական Համայնքի և ՖԵՂԱՍԻԼԻ կողմից: Եվրոպական Հանձնաժողովը և/կամ ՖԵՂԱՍԻԼԸ չի կրում պատասխանատվություն տրված տեղեկատվության օգտագործման համար: Բովանդակության պատասխանատվությունը կրում է հեղինակը

1. Մուտք Տարածք(ապաստանի երկրից վերադարձի երկիր)

1.1 Փաստաթղթեր

1.1.1 Ճանապարհորդական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերադարձողների համար

1.1.2 Փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերադարձի երկրում

1.1.3 Ինչպես ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր /պայմանները, ժամանակահատվածը/:

1.1.4 Անհրաժեշտ փաստաթղթերի արժեքը

1.2 Ճանապարհորդություն ելքի երկիր/ միջոցները, մոտավոր գները, տևողությունը, բեռների սահմանափակումը, կոնտակտները և այլն/

1.2.1 Օդով

1.2.2 Ցամաքով

1.3 Մուտքի ընթացակարգը /ընթացքը կազմակերպող իշխանությունը, միջամտությունը, հսկողությունը, ձերբակալումը, կաշառքը և այլն/

1.3.1 Օդով

1.3.2 Ցամաքով

1.4 Նախկին գործողությունների և կարգավիճակների ազդեցությունը մուտքի դեպքում:

1.4.1 Նախկին փախստական կամ և լրացուցիչ պաշտպանության կարգավիճակի ազդեցությունը:

1.4.2 Նախկինում անհաջող ապաստան հայցելու ազդեցությունը

1.4.3 Նախկինում ծագման երկրից անօրինական հեռանալու ազդեցությունը

1.4.4 Ելքի երկրից դուրս իրականացված հանցագործության ազդեցությունը/ երկակի վտանգի ռիսկը/

1.5 Մաքսային կարգավորում/ինչպես է կատարվում համապատասխան կարգավորումը/

1.6 Մուտք վերադարձի տարածք

1.6.1 Ներքին ճանապարհորդության սահմանափակումներ

1.6.1.1 Վարչական սահմանափակումներ

1.6.1.2 Պրակտիկ խոչընդոտներ

1.6.2 Տարածքներ, որոնց անհնար կամ վտանգավոր է մոտենալ/ականապատ, բնական խարխված/

1.6.3 Ներքին ճանապարհորդության միջոցները/ կոնտակտներ և պրակտիկ տեղեկատվություն, գնացուցակ և այլն/

2. Ֆիզիկական Անվտանգություն

2.1 Ընթացող ռազմական հակամարտություն

2.2 Բարձր ռիսկային տարածքներ

2.3 Հանցագործություն

2.3.1 Հանցագործության ծայրահեղ բարձր մակարդակ ունեցող շրջաններ/ ֆիզիկական ապահովությանը սպառնացող/

2.3.2 Թրաֆիքինգի զոհ դառնալու ռիսկը

2.3.3 Բռնի պոռնկության զոհ դառնալու ռիսկը

2.3.4 Պաշտպանության արդյունավետությունը/կարողություններ, փորձառություն, կոռուպցիա, և այլն/

2.3.4.1 Ոստիկանություն

2.3.4.2 Արդարադատություն

3. Սոցիալական ապահովագրություն և վերաինտեգրում

- 3.1 Վերահստեղծման և վերադարձի հնարավորություն չունեցող տարածքներ / օրինակ, բնական աղետներ, երաշտ և այլն/
- 3.2 Բնակարանային հարցեր, կեցություն
 - 3.2.1 Սեփականության փոխարկում կամ փոխհատուցում/ նախկին հակամարտության և աղետի գոտիներում/
 - 3.2.2 Տնաշինական ծրագրեր վերադարձի շրջաններում
 - 3.2.3 Տնաշինության հնարավորությունները
 - 3.2.3.1 Հողի սեփականություն ձեռք բերելու պայմանները
 - 3.2.3.2 Համապատասխան մոտավոր գները/ հող, շինանյութ, և այլն/
 - 3.2.3.3 Հնարավոր վարկերը, սուբսիդիաները և այլ տեսակի օգնությունները
 - 3.2.4 Անշարժ գույք ձեռք բերելու հնարավորություններ:
 - 3.2.4.1 Իրավական պայմաններ
 - 3.2.4.2 Հնարավոր խոչընդոտները որոշ խմբերի համար/ օրինակ՝ միայնակ կանայք, փոքրամասնություններ և այլն/
 - 3.2.4.3 Համապատասխան մոտավոր գները
 - 3.2.4.4 Հնարավոր վարկեր և սուբսիդիաներ
 - 3.2.5 Հնարավորություններ տուն կամ բնակարան վարձելու
 - 3.2.5.1 Հնարավոր խոչընդոտներ որոշ խմբերի համար /օրինակ՝ միայնակ կանայք, փոքրամասնություններ և այլն/
 - 3.2.5.2 Համապատասխան մոտավոր գներ
 - 3.2.5.3 Հնարավոր սուբսիդիաներ
 - 3.2.6 Այլ ժամանակավոր բնակարանային հնարավորություններ/ ապաստարաններ, հկ-ներ , եկեղեցի, և այլն/
 - 3.2.7 Բնակվելու և խնամքի հնարավորություն ծերերի համար/ պետություն, հկ-ներ/
 - 3.2.8 Բարեգործական և խնամքի կենտրոններ հաշմանդամների համար:
 - 3.2.9 Հնարավոր ժամանակավոր կացարաններ նախքան երկարաժամկետ հարմարությունների ապահովումը
- 3.3 Ապրուստ-հիմնական ապրելամիջոց
 - 3.3.1 Ջրաղվածություն
 - 3.3.1.1 Գործազրկություն
 - 3.3.1.2 Աշխատաշուկայի ծրագրերը
 - 3.3.1.3 Աշխատանքի պայմանները/ նվազագույն/ միջին աշխատավարձ, աշխատանքային ժամեր, ապահովություն/
 - 3.3.1.4 Կարճաժամկետ/պատահական աշխատանքների հասանելիությունը:
 - 3.3.1.5 Հատուկ մասնագիտությունների պակաս/ մեծ պահանջարկ
 - 3.3.1.6 Պրակտիկ և կոնտակտային տեղեկատվություն/զբաղվածության գործակալություններ, թերթեր և այլն/
 - 3.3.1.7 Հայ կանանց սոցիալ-տնտեսական դժվարությունները/ համաձայն գործողությունների ազգային պլանի/
 - 3.3.2 Հաշմանդամների զբաղվածությունը
 - 3.3.3 Կոնտակտային տեղեկատվություն այլ վայրերում ստացած աստիճանների ճանաչման վերաբերյալ
 - 3.3.4 Ջինվորական ծառայություն
 - 3.3.4.1 Իրավական կարգավորում և պրակտիկա/ հատկապես նրանց համար, ովքեր գտնվել են արտասահմանում/
 - 3.3.4.2 Հնարավորություն խղճի ազատության հիմքով ազատման իրավական կանոնների և պրակտիկայի
 - 3.3.5 Կրթություն և վերապատրաստման ծրագրեր/մատչելիությունը, արժեքները/
 - 3.3.5.1 Մանկապարտեզ և դպրոցական հնարավորություններ
 - 3.3.5.2 Կառավարության կողմից
 - 3.3.5.3 Մասնավոր կազմակերպությունների կողմից:
 - 3.3.5.4 Միջազգային կազմակերպությունների և հկ-ների կողմից
 - 3.3.5.5 Վերադարձողների երեխաները

- 3.3.5.6 Բաժանված/ Անջատված երեխաներ:
- 3.3.5.7 Որբեր
- 3.3.5.8 Հաշմանդամ երեխաներ
- 3.6 Նոր բիզնես սկսելը
 - 3.3.6.1 Իրավական պայմանները/գրանցում,կորպորատիվ ձևերը, նվազագույն կապիտալը և այլն/
 - 3.3.6.2 Վարկեր և սուբսիդիաներ և նրանց հասանելիությունը/տոկոսադրույք, վարկառուներ և այլն/
- 3.3.7 Սոցիալական Ապահովություն
 - 3.3.7.1 Գործազրկության նպաստ և նրա մատչելիությունը
 - 3.3.7.2 Հիվանդության նպաստ և նրա մատչելիությունը
 - 3.3.7.3 Ընտանեկան նպաստ և նրա մատչելիությունը
 - 3.3.7.4 Տարիքային կենսաթոշակ
 - 3.3.7.5 Սոցիալական ապահովության համակարգի այլ նպաստներ
 - 3.3.7.6 Հատուկ նպաստներ վերադարձողների համար
- 3.3.8 Բարեգործական կազմակերպություններ /ծառայություններ, կոնտակտային տվյալներ/
- 3.3.9 Օգտակար տվյալներ ապրելածախսը հաշվարկելու համար/բենգինի գին, հիմնական սնունդ և այլն/
- 3.4 Առողջապահություն
 - 3.4.1 Ընդհանուր առողջապահական իրավիճակն ըստ տարածաշրջանների
 - 3.4.2 Խմելու ջուր և սանիտարիա ըստ շրջանների; ջեռուցման համակարգ/եթե հնարավոր է/
 - 3.4.3 Առողջապահություն/ ներառյալ հոգեբանական խնամք
 - 3.4.3.1 Առողջապահական ենթակառույցները ըստ շրջանների/ հիվանդանոցներ, սարքավորումներ և այլն
 - 3.4.3.2 Ընտրության չափանիշները և առողջապահական ծառայությունների հասանելիությունը
 - 3.4.3.3 Առողջապահական ծառայությունների արժեքը/բուժման, դեղորայքի, բժիշկների կաշառքի արժեքը
 - 3.4.3.4 Խտրականություն առողջապահական համակարգում/էթնիկ, կրոնական, սոցիալական, և այլն
 - 3.4.3.5 Ոչ-պետական կազմակերպությունների ծառայությունները առողջապահական ոլորտում /միջազգային, հկ-ներ, եկեղեցի/
 - 3.4.3.6 Հիվանդություններ, որոնք չեն կարող արդյունավետորեն բուժվել մեր երկրում
 - 3.4.3.7 Ստանդարտ դեղորայքով ապահովումը
 - 3.4.4 Ֆիզիկական հաշմանդամությամբ անձինք
 - 3.4.4.1 Իրավական կարգավորումը և պրակտիկան
 - 3.4.4.2 Բուժօգնություն
 - 3.4.5 Ստավոր հաշմանդամության խնդիրներով և խանգարումներով անձինք/ներառյալ տրավմայի երթարկված անձինք/
 - 3.4.5.1 Հատուկ հաստատությունների և խնամքի հասանելիությունը վերադարձողների համար
 - 3.4.5.2 Բարեգործական և խնամքի կազմակերպություններ

4.Մարդու Իրավունքներ

- 4.1 Էթնիկ փոքրամասնություններ
- 4.2 Կրոնական փոքրամասնություններ
- 4.3 Սեռական փոքրամասնություններ

5.Հապավումների ցանկ

1. Մուտք Տարածք(ապաստանի երկրից վերադարձի երկիր)

1.1. Փաստաթղթեր

1.1.1. Ճանապարհորդական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերադարձողների համար

Հայաստանի Հանրապետություն ժամանելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներառում են՝

- ՀՀ քաղաքացիների համար՝ ՀՀ քաղաքացու վավեր անձնագիր կամ վերադարձի վկայական (laissez-passer-մուտքի արտոնագիր) եթե առաջինը հնարավոր չէ
- **Զինվորական գրքույկ է պահանջվում 18 տարին անց ՀՀ արական սեռի քաղաքացիներից, որոնք հատում են սահմանը**
- Փախստականների համար, որոնք ունեն ՀՀ-ում փախստականի կարգավիճակ-ՀՀ փախստականի վավեր վկայական և ճանապարհորդական փաստաթուղթ կամ վերադարձի վկայական, եթե առաջինը հնարավոր չէ
- Օտարերկրացիների համար-ՀՀ մուտքի արտոնագիր/ըստ պահանջի/ կամ անձնագիր կամ միջազգայնորեն ընդունված այլ ճանապարհորդական փաստաթուղթ

Մինչև 18 տարեկան քաղաքացիները, որոնք Հայաստանի օրենսդրությամբ ճանաչվել են անկարող, եթե նրանք չեն ուղեկցվում ծնողների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված օրինական ներկայացուցիչների կողմից, պարտավոր են քաղաքացիների մուտքի/ ելքի վերաբերյալ ներկայացնել ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնագիր՝ նոտարի կողմից վավերացված։¹

Ավելի մանրամասն ՀՀ մուտքի և ելքի մասին ծևերի և պայմանների վերաբերյալ տես 1.2. և 1.3/

Հայաստանից դուրս, եթե ՀՀ քաղաքացին կորցրել է անձնագիրը կամ լրացել է անձնագրի վաղեմության ժամկետը, ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականները կարող են ստանալ նոր անձնագիր կամ վերադարձի վկայական, ինչպես նաև երկարացնել անձնագրի վաղեմության ժամկետը ՀՀ դեսպանատների և հյուպատոսական ծառայությունների, համապատասխան երկրներում դիվանագիտական ներկայացուցիչների, իսկ նրանց բացակայության դեպքում հարևան երկրներում գտնվող դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով, որոնք հավատարմագրված են ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից²

1.1.2. Փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերադարձի երկրում

❖ Հիմնական անձը հաստատող փաստաթղթեր

- ՀՀ քաղաքացու վավեր անձնագիր (16 տարին լրացած և անց ՀՀ քաղաքացիների համար)
- ՀՀ փախստականի անձնագիր(16 տարին լրացած և անց ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող քաղաքացիների համար)

¹ Այս կարգը հիմնված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29,30,32,33 հոդվածների վրա/թիվ 239 օրենքը ուժի մեջ է մտել 1999թ. Հունվարի 1-ին, համաձայն որի մինչև 18 տարեկան անչափահասները որոնք ճանաչվել են անկարող կամ սահմանափակ կարողություններով կարող են գործարքներ կատարել ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությունից հետո, ՀՀ ազգային ժողով, Օրենսդրություն, Քաղաքացիական օրենսդրություն <http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>

² ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Դեսպանատներ, Հյուպատոսարաններ և ներկայացուցչություններ <http://www.armeniaforeignministry.am/ministry/embassiesList.html>

- Կացության քարտ/ինչպես նաև անձնագիր(օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցողների համար)
- Ապաստան հայցողի վկայական(14 տարին լրացած և անց անձանց համար, որոնք ունեն ապաստան հայցողի կարգավիճակ ՀՀ-ում)

Վերոնշյալ փաստաթղթերը պահանջվում են հետևյալ հանգամանքներում`

- ՀՀ մուտքի/ելքի համար(բացառությամբ կացության քարտի ու ապաստան հայցողի վկայականի)
- ուսումնական հաստատություններ ընդունվելու համար
- աշխատանքի ընդունվելու համար
- թոշակ կամ նպաստ ստանալու համար
- բանակցություններ վարելու, դատարան դիմելու համար
- պոլիկլինիկաների և հիվանդանոցների ծառայություններից օգտվելու համար
- և այլն

❖ **Ծննդյան վկայական (մինչև 16 տարեկան երեխաների /ներառյալ փախստականների երեխաները) և մինչև 14 տարեկան ապաստան հայցողների երեխաների համար**

Պահանջվում է հետևյալ դեպքերում`

- թոշակ , նպաստ ստանալիս
- մանկապարտեզ, դպրոց ընդունվելիս
- պոլիկլինիկաների և հիվանդանոցների ծառայություններից օգտվելիս
- անձնագիր ստանալու դեպքում
- մնացած բոլոր պահանջվող դեպքերում

❖ **Զինվորական գրքույկ (18 և անց տարիքի արական սեռի ՀՀ քաղաքացիների համար)**

Պահանջվում է հետևյալ դեպքերում`

- աշխատանքի ընդունվելիս
- ուսումնական հաստատություններ ընդունվելու համար
- վարորդական իրավունք ստանալու համար
- ՀՀ մուտքի/ելքի համար
- մնացած բոլոր պահանջվող դեպքերում

❖ **Սոցիալական քարտ**

Սահմանված կարգի համաձայն, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Պահանջվում է հետևյալ դեպքերում`

- աշխատանքի ընդունվելիս
- նպաստ ստանալիս
- հարկեր և տուրքեր վճարելիս
- բանկային հաշիվներ բացելիս
- պահանջվող այլ դեպքերում

❖ **Սեփականության վկայական**

Ընդունված կարգի համաձայն, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, այն անձանց, ովքեր ունեն փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակ, կամ օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց

Պահանջվում է հետևյալ դեպքերում`

- հողի, անշարժ և շարժական գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքը վավերացնելու համար
- սեփականության կամ հողի վաճառելու(օտարման, նվիրատվության կամ կտակելու դեպքում)
- պահանջվող այլ դեպքերում

ԾԱՆՈՒՑՈՒՄ: Օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք չունեն հողի սեփականության իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:³

❖ Ընտանիքի սոցիալական անձնագիր

Սահմանված կարգի համաձայն, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, փախստականի կամ ապատան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Պահանջվում են հետևյալ դեպքերում`

- աղքատության ընտանեկան նպաստից օգտվելու համար/ավելի մանրամասն տես 3.3.7.3
- սոցիալական և բժշկական ծառայություններից օգտվելիս որոշակի արտոնություններից օգտվելու համար (ավելի մանրամասն տես 3.3.7)
- պահանջվող այլ դեպքերում

❖ Հաշմանդանության աստիճանի տեղեկանք

Սահմանված կարգի համաձայն, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, փախստականի կամ ապատան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Պահանջվում են հետևյալ դեպքերում`

- հաշմանդանության թոշակ ստանալու համար
- սոցիալական և բժշկական ծառայություններից օգտվելիս որոշակի արտոնություններից օգտվելու համար
- անվճար պրոթեզ-օրթոպեդիկ սարքավորումներ ստանալու համար
- հատուկ թույլտվություն պահանջող դեղորայք ստանալու համար
- պահանջվող այլ դեպքերում

❖ Թոշակի գրքույկ

Սահմանված կարգի համաձայն, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, փախստականի կամ ապատան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Պահանջվում է հետևյալ դեպքերում`

- տարիքային , հաշմանդանության, կերակրողին կորցնելու կամ օրենքով նախատեսված այլ տեսակի թոշակներ ստանալու համար
- պահանջվող այլ դեպքերում

❖ Աշխատանքային գրքույկ

³ ՀՀ Ազգային Ժողով, Օրենսդրություն, Պետության և տեղական իշխանության հիմնական կառույցները, ՀՀ սահմանադրություն/փոփոխություններ/, հոդված 31/4/
<http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>

Համաձայն հաստատված ընթացակարգի, այն տրվում է ՀՀ քաղաքացիներին, փախստականներին կամ ապաստան հայցողներին, օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Պահանջվում է հետևյալ դեպքերում՝

- աշխատանքի ընդունվելիս
- թոշակի անցմելիս
- այլ դեպքերում ըստ պահանջի

Ծանուցում: Փաստաթղթեր, ինչպիսին են դիպլոմը, հասունության ատեստատը, ամուսնության, ծննդյան, մահվան վկայականները, վարորդական իրավունքը, բժշկական քարտը, տրված այլ երկրներում, համապատասխան մարմինների միջոցով վավեր են նաև ՀՀ-ում :Նրանք կարող են պահանջվել թարգմանված/ հայերեն տարբերակով նոտարական վավերացմամբ հաստատված:

1.1.3. Ինչպես ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթեր /պայմանները, ժամանակահատվածը/:

❖ ՀՀ քաղաքացու անձնագիր:⁴

ՀՀ քաղաքացու անձնագիրը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում է ՀՀ քաղաքացու անձը հաստատող հիմնական փաստաթուղթն է

- 16 տարեկան և անց ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք պարտավոր են ունենալ ՀՀ անձնագիր անկախ իրենց բնակության վայրից
- 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիները կարող են ունենալ ՀՀ անձնագիր իրենց ցանկությամբ(այն պահանջվում է ՀՀ մուտքի/ ելքի համար)

ՀՀ անձնագրի տրամադրումը:Հայաստանում ՀՀ քաղաքացիները իրենց անձնագրերը կարող են ստանալ, փոխարինել կամ երկարացնել դրանց վաղեմության ժամկետները, կամ կորցնելու դեպքում դիմել ՀՀ ոստիկանության տարածքային բաժանմունքի անձնագրային բաժին համաձայն իրենց մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի:

➤ **16 տարին լրացած ՀՀ քաղաքացիները** անձնագիր ստանալու համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում
- ծննդյան վկայական կամ ՀՀ քաղաքացու անձնագիր ստացված մինչև 16 տարին լրանալը:
- երկու 35x45մմ չափսի գունավոր լուսանկար
- այլ ինքնությունը հաստատող փաստաթղթեր, եթե անկարող են ներկայացնել կետ Բ-ում պահանջվող փաստաթղթերը:
- Զինվորական կցման թերթիկ(զորակոչի համար)
- պետական տուրքի ստացական(1000 դրամ⁵ կամ 1.82Եվրո⁶)

⁴ ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրության հաստատման մասին թիվ 821 դրոշում և ՀՀ քաղաքացիների անձնագրի նկարագրությունը ընդունված 1998 թ. Դեկտեմբերի 25-ին ՀՀ կառավարության կողմից, ՀՀ ոստիկանության պետի 2008թ. Օգոստոսի 15-ի հրամանը անձնագրերի տրամադրման և փոխարինման կարգը ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ անձնագրերին վերաբերող այլ հարցեր հաստատող

⁵ ՀՀ թիվ 186 օրենք պետ տուրքի մասին, ընդունված 1997թ. Դեկտեմբերին, հոդված 14/1/

⁶ ՀՀ-ում ազգային տարադրամը հայկական դրամն է կամ հակիրճ ՀՀ դրամ, փոխանակման կուրսի մասին տես ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքը: www.cba.am. 2010թվականի հունվարի 13-ին, փոխանակման կուրսը 1 Եվրոյի համար 548.11 ՀՀ դրամ է: Այս զեկույցում բոլոր արժեքները հաշվարկված են այս կուրսով:

Պայմաններ: Անձնագիրը տրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

- **Անձնագիրը փոխելու դեպքում ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**
 - անձնագիրը, որը պետք է փոխվի
 - երկու 35x45մմ չափսի գունավոր լուսանկար
 - զինվորական գրքույկ 18 տարեկանն անց ՀՀ արական սեռի քաղաքացիների համար
 - պետական տուրքի ստացական/ 1000 դրամ կամ 1.82Եվրո/

Պայմաններ: Անձնագիրը տրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Անձնագիրը կորցնելու դեպքում ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում
- երեք 35x45 մմ չափսի գունավոր լուսանկար
- զինվորական գրքույկ 18 տարեկանն անց ՀՀ արական սեռի քաղաքացիների համար
- պետական տուրքի ստացական/ 1000 դրամ կամ 1.82Եվրո/

Պայմաններ: Անձնագիրը տրվում է 15-30 աշխատանքային օրվա ընթացքում բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Կարճ ժամանակահատվածում անձնագիր ստանալը: Կարճ ժամանակահատվածում, մինչև 5 օր, անձնագիր տրվում է կամ փոխարինվում է ՀՀ Ոստիկանության անձնագրի և վիզաների բաժնում, որը կոչվում է նաև ՕՎԻՐ⁷, և այն գտնվում է Երևանում՝ Մաշտոցի 13 ա հասցեում /մուտքը Ամիրյան փողոցից/:

Մեկ օրում անձնագիր ստանալու դեպքում վճարը կազմում է 20000 ՀՀ դրամ կամ 36.49 Եվրո, 2-4 օրում 10000 դրամ կամ 18.24 Եվրո:

Պահանջվող փաստաթղթերը նույնն են և նշված են վերևում:

ՀՀ անձնագրի վավերականությունը: Կան երկու տեսակի վավերականություն /համապատասխան կնիքներ են դրվում անձնագրում/:

- **Վավերականության ժամկետը:** ՀՀ անձնագիր տրվում է 10 տարի ժամկետով⁸: 10 տարուց հետո վավերականության ժամկետը երկարացվում է 5 տարով: Ժամկետի երկարացումն արվում է 1 օրում առանց վճարման;
- **Վավերականությունը այլ երկրներում:** Այս գրառումը անհրաժեշտ է Հայաստան մուտքի/ելքի համար: ՀՀ անձնագիրը վավեր է արտասահմանում հինգ տարի: Անձնագրում դրվում է ամսաթիվ, քանի դեռ անձնագիրը վավեր է արտասահմանում /1-5 տարի/: Արտասահմանում անձնագրի վավերականության գրառումը արվում է 1 օրում համապատասխան վճարման ստացականը ներկայացնելու դեպքում: Յուրաքանչյուր տարվա վավերականության համար վճարվում է 1000 դրամ⁹ կամ 1.82 Եվրո:

ՀՀ քաղաքացիների գրանցումը: Բոլոր ՀՀ քաղաքացիները պետք է ունենան գրանցում: Վերադարձողները պետք է հաշվի առնեն, որ անձնագրերի տրամադրումը կամ փոխարինումը կարող է հետաձգվել, եթե դիմողը չունի գրանցում:

⁷ Վիզաների և գրանցումների ռուսերեն համառոտագիրը

⁸ Մինչև 16 տարեկաններին անձնագիրը տրվում է 3 տարի ժամկետով: Արական սեռի մինչև 15 և ավել ներկայացուցիչները անձնագիրը ստանում են վավերականության ժամկետը մինչև 18 տարեկան, կապված զինվորական ծառայության հետ

⁹ ՀՀ օրենք պետ տուրքի մասին, հոդված 14/7/

ՀՀ քաղաքացիների գրանցումը և անձնագրում բնակության վերաբերյալ գրառումներ կատարելը արժե 1000 դրամ¹⁰ կամ 1.82 Եվրո/վճարման անդորրագիր/:

Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներ: Լեռնային Ղարաբաղը /հայկական անվանումը Արցախ/ ՀՀ-ի վարչական մաս չի կազմում և չի ճանաչված որևէ ազգի կողմից:

Այն չունի պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ ավանդական իմաստով: Քանի դեռ չի լուծված Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, տեղացիները օգտվում են հայկական անձնագրից, որը միջազգայնորեն ճանաչված է: Ուստի արտասահմանում Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները կարող են դիմել ՀՀ հյուպատոսություններ իրենց անձնագրերով:

Երկքաղաքացիություն: ՀՀ ազգային ժողովը արդեն ընդունել է փոփոխություններ կապված ՀՀ քաղաքացիության օրենքի հետ, որը տալիս է երկքաղաքացիության հնարավորություն:¹¹ Այն հնարավորություն է տալիս աշխարհում սփռված միլիոնավոր էթնիկ հայերի ձեռք բերել հայկական քաղաքացիություն առանց իրենց ընթացիկ քաղաքացիությունը դադարեցնելու: ՀՀ երկքաղաքացուն տրվում է ՀՀ քաղաքացու անձնագիր:

Մյուս կողմից, այն քաղաքացիները, որոնք արտագաղթել են այլ երկրներ և հետևաբար ձեռք են բերել այլ երկրների քաղաքացիություն առանց բացահայտ հրաժարվելու իրենց հայկական քաղաքացիությունից, կարող են ստանալ հայկական քաղաքացիություն բոլոր ուղեկցվող իրավունքներով ու պարտականություններով: Նոր օրենքը նաև նշանակում է, որ երկքաղաքացիները կարող են մուտք և ելք ունենալ Հայաստան իրենց հայկական անձնագրերով, այսինքն նրանք այլևս վիզայի կարիք չեն ունենա: Օրենքի այս փոփոխության հետ կապված նոր կարգավորումները պահանջում են բոլոր երկքաղաքացիներից գրանցել իրենց երկքաղաքացիությունը ՀՀ ոստիկանության Անձնագրերի և Վիզաների բաժնում՝ հայտնի որպես ՕՎԻՐ/ ներկայացնելով բոլոր պահանջվող փաստաթղթերը: Մանրամասների համար կարող եք դիմել ՀՀ ոստիկանության Անձնագրերի և Վիզաների բաժնի/հեռախոս՝ 374 10 501439/ Երևանում և կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն արտասահմանում:

❖ Սոցիալական քարտ

Սոցիալական քարտի համակարգի ներդրումը կօգնի առանց անձնական տվյալներ փոխանակելու /անուն, ազգանուն, անձնագրի համար և այլն/պահանջվող ինֆորմացիան կարճ ժամկետում ստանալ և օգտագործել, մեխանիկորեն փոխանակել տվյալները, որը կազատի անձին տարբեր պետական մարմինների դիմելու ժամանակ զանազան տեղեկանքներ ներկայացնելու անհրաժեշտությունից և կվերացնի հետագա հնարավոր սխալների ու խախտումների ծավալը: Չնայած մարդկանց մեծ մասը արդեն ունեն սոցիալական քարտեր, բայց այս խնդիրները դեռևս առկա են:¹²

Սոցիալական քարտ ստանալու ընթացակարգը: Այս փաստաթուղթը ստանալու ընթացակարգը շատ պարզ է և առանց պաշտոնական երկարաբանության համեմատած այլ փաստաթղթերի ձեռքբերման հետ: Այն ստանալու համար անհրաժեշտ է լրացնել հատուկ ձև և անձամբ կամ այլ անձի միջոցով ներկայացնել համապատասխան սոցճառայության տարածքային կենտրոն՝ /տեղացիների լեզվով Փարոս/ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

¹⁰ Նույն տեղում, հոդված 14/4/

¹¹ ՀՀ Ազգային Ժողով, Պետության և տեղական իշխանության հիմնական կառույցները, 1995 թվականի նոյեմբերի 6-ին ընդունված թիվ 16 օրենք/փոփոխված 2007 թվականի փետրվարի 26-ին, օրենք թիվ 75-Ն, հոդված 13/2/<http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>

¹² Ավելի մանրամասն սոցիալական քարտերի մասին կարելի է գտնել ՀՀ աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության ինտերնետային կայքի հարց-պատասխան բաժնում, բացատրություններ սոցիալական քարտերի մասին http://www.mss.am/home/index.php?code_id=323&menu_id=317

Այն տրվում է մեկ ամսում և առանց որևէ վճարման:

Ծանուցում:

- **Սոցիալական քարտը** պիտի փոխվի երբ ID քարտը փոխվում է /անձը 16 տարեկան է , ստանում է անձնագիր կամ փոխում է անձնագիրը ժամկետը լրանալու հետ կապված և այլն/, նոր սոցիալական քարտում նշվում են նոր ID-ի տվյալները:
- Շատերն են հրաժարվում ունենալ սոցիալական քարտ տարբեր պատճառներով: Սոցիալական քարտ պահանջելու դեպքում նրանք կարող են ներկայացնել տեղեկանք այն չունենալու վերաբերյալ: Այսպիսի տեղեկանք ունենալու համար, նրանք պետք է դիմեն ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն:
- Չնայած անձի անունը և ID տվյալները /անձնագիր, ծննդյան վկայական/ նշված են սոցիալական քարտի վրա, բայց նրանք չեն կարող ներկայացվել որպես ID:

Ավելի մանրամասն տեղեկատվության համար դիմորդը կարող է դիմել ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարություն, կամ զանգահարել 374 10 56 42 10 կամ դիմել Սոցիալական Ծառայության Տարածքային Կենտրոն ըստ բնակության վայրի:

❖ **Ձինվորական գրքույկ**

Ձինգրքույկը տրվում է 18 տարեկանն անց ՀՀ արական սեռի քաղաքացիներին, ովքեր ծառայել են բանակում, ինչպես նաև նրանց, որքեր պիտանի չեն զինծառայության համար:¹³ Այն տրվում այն զինվորական կոմիսարիատում, որտեղ զինծառայողը ամրագրված է: Ավելի մանրամասն տես 3.3.4:

❖ **Սեփականության վկայական**

Խորհրդային տարիներին հողը հանդիսանում էր պետության սեփականությունը: Տարիներ շարունակ նարդիկ ապրում էին իրենց տներում /բնակարաններում, որոնք ոչ մի տեղ չէին գրանցված և չէին ճանաչվում որպես նրանց սեփականություն:

Սեփականության վկայականի փոխարեն օգտագործվում էր Տնային գիրքը: Սովետական Միության փլուզումից հետո Հայաստանում սկսվեց մասնավորեցման գործընթացը: Մարդիկ շարունակում են առ այսօր գրանցել անշարժ գույքի հանդեպ ունեցած իրենց սեփականության իրավունքը: Հետևաբար այն վերադարձողները, ովքեր դեռ չեն գրանցել իրենց բնակարանները/տները, հողը, վերադարձից հետո պետք է դիմեն համապատասխան Անշարժ Գույքի պետական Գրանցման Գործակալություն/ ավելի պարզ **Կադաստր**/ իրենց անշարժ գույքը գրանցելու և սեփականության վկայական ստանալու համար:

Նկատառում:

- Պետության կողմից սեփականության իրավունք տրվում է միայն Անշարժ Գույքի Գրանցման Գործակալությունում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո
- Ավելին, «սեփականության հանդեպ ոչ մի հատուկ իրավունք չի գրանցվի, եթե սեփականության իրավունքը գրանցված չէ»:¹⁴ Դա նշանակում է, որ կարելի է վաճառել, գրավադրել կամ կատարել այլ գործարքներ, միայն եթե սեփականության իրավունքը գրանցված է:

Սեփականության մասնավորեցման մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար վերադարձողները կարող են դիմել համապատասխան Անշարժ Գույքի Պետական Գրանցման Գործակալություն:

¹³ Իրենց գրքույկում գրված է պիտանի չէ զինծառայության համար

¹⁴ ՀՀ Ազգային Ժողով, Օրենսդրություն, Բնակարանային օրենսդրություն, սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 295 օրենք, ընդունված 1999 թվականի ապրիլի 14-ին, հողված 23/5/<http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>

❖ Ծննդյան վկայական

Ծնունդների պետական գրանցումը, ինչպես նաև ծննդյան վկայականների տրամադրումը սահմանված կարգով կատարվում է Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման Գրասենյակներում/ կոչվում է ՁԱԳՍ^{15/}:

Ծննդյան վկայականը կորցնելու դեպքում վերադարձողը պետք է դիմի այն Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման Գրասենյակ, որտեղ տրամադրվել է վկայականը, որպեսզի ստանա կրկնօրինակը՝ վճարելով 3000 ՀՀ դրամ կամ 5.47 Եվրո պետական տուրք¹⁶:

Ծննդի գրանցումը, ներառյալ վկայականի տրամադրումը անվճար է:

Սանրամասն ինֆորմացիա կարելի է ստանալ Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման գրասենյակներում:

❖ Ընտանիքի սոցիալական անձնագիր

Աղքատության ընտանեկան նպաստի համակարգը սոցիալական աջակցության բնագավառի ամենամեծ ծրագրերից մեկն է, որը հիմնված է ընտանիքի անապահովության աստիճանի գնահատման վրա: Ոչ թե անձը, այլ ընտանիքն է համարվում սոցիալական աջակցության սուբյեկտ:

Համաձայն ՀՀ կառավարության ընտանեկան նպաստի հաստատման, միանվագ աջակցության նշանակման, վճարման կարգի վերաբերյալ 2006թ. դեկտեմբերի 1-ին ընդունված թիվ 110 որոշման, նպաստ նշանակվում է այն ընտանիքներին, որոնք գրանցված են ընտանիքի աղքատության համակարգում և ունեն ավելի բարձր անապահովության միավոր, քան առավելագույն աղքատության միավորն է¹⁷:

Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառվելու և ընտանիքի սոցիալական անձնագիր ստանալու կարգը:

Ընտանեկան նպաստի նշանակման համար ընտանիքի հասուն անդամներից մեկը ներկայացնում է դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր իրենց ժամանակավոր, մշտական կամ փաստացի բնակության վայրի **սոցժառայության տարածքային կենտրոններ**:¹⁸

Անհրաժեշտ փաստաթղթեր

- տեղեկանք ընտանիքի կազմի մասին
- դիմում/բնակարանային պայմաններ, ընտանիքի եկամուտ և այլն մասին/
- տեղեկանք ընտանիքի անդամների աշխատանքի վայրից /գործազրկության դեպքում տեղեկանքը տրվում է զբաղվածության տարածքային ծառայության կենտրոնների կողմից/
- ընտանիքի չափահաս անդամների անձնագրերը և մինչև 18 տարեկան անդամների ծննդյան վկայականները
- այլ փաստաթղթեր ըստ պահանջի/հաշմանդամության վկայական, թոշակի գրքույկ և այլն/

Պայմանները: Անապահովության աստիճանը վերականգնելու համար պահանջվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել սոցժառայության տարածքային կենտրոններ:

¹⁵ <Քաղաքացիական ակտերի գրանցման գրասենյակ> ռուսերեն հապավում

¹⁶ ՀՀ օրենք պետ տուրքի մասին, հոդված 12/5/

¹⁷ 2010 թվականի համար աղքատության միավորը 30 է

¹⁸ Սոց ծառայության տարածքային կենտրոնները կոչվում են նաև Փարոս

25 օրվա ընթացքում կենտրոնը տալիս է ընտանիքի սոցիալական անձնագիր՝ ընտանիքի անապահովության միավորով, նշելով թե արդյոք նպաստ նշանակված է, թե ոչ: Այն տրվում է անվճար:

«Ընտանեկան նպաստի համակարգում ներառվելը և ընտանեկան սոցիալական անձնագիր ստանալը դժվար չէ: Խնդիրն այն է, որ շատ քիչ ընտանիքներ են ստանում ընտանիքի անապահովության բարձր միավոր և ստանում ընտանեկան նպաստ: Պրակտիկայում հանդիպում են շատ սխալ նշանակումներ»¹⁹:

Մանրամասները նպաստի չափերի մասին տես 3.3.7.3- ում

❖ Հաշմանդանության խմբի վկայական /հաշմանդանության աստիճան և հաշմանդանության խումբ/

Անձը համարվում է հաշմանդան, եթե առողջության խաթարմամբ պայմանավորված սահմանափակված է նրա գործունեությունը և ունի սոցիալական պաշտպանության կարիք: ՀՀ կառավարության 2003թ. մարտի 13-ի թիվ 254 որոշմամբ հաստատվել է սոցիալ- բժշկական փորձաքննության իրականացման կարգ և կատարվել է փոփոխություն հաշմանդանության ճանաչման ընթացակարգը սահմանող ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 684 որոշման մեջ:

Հաշմանդանության որոշման ընթացակարգը

Հաշմանդանությունը որոշվում է բժշկա-սոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից, /այսուհետ ԲՍՓՀ/ որոնք համարվում են բժշկա-սոցիալական փորձաքննական գործակալության տարածքային գրասենյակներ²⁰: Փորձաքննությունը կարող է իրականացվել հիվանդանոցներում, տանը կամ հեռավոր վայրերում /որոշված կարգով/:

ԲՍՓՀ-ն քննում է անձին և կայացնում որոշում նրա հաշմանդանության մասին: Նրանք տալիս են հաշմանդանության առաջին, երկրորդ և երրորդ կարգ; եթե երեխան 18 տարեկանից փոքր է, նրան տրվում է հաշմանդան երեխայի կարգավիճակ: Նրանք տալիս են նաև տեղեկանք, որը հավաստում է հաշմանդանության կարգը: Այդ հաշմանդանները և հաշմանդան երեխաները ստանում են հաշմանդանության թոշակ համաձայն կարգի:

Հետևյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն ԲՍՓՀ տարածքային գրասենյակներ՝

- գրավոր դիմում
- «ձև 88» տրված առողջապահական մարմնի կողմից /հատուկ տեղեկանք անձի առողջական վիճակի մասին/
- անձնագրեր չափահասների համար, կամ վկայականներ 16 տարեկանից ցածր անձանց համար
- սոց ապահովության քարտ
- աշխատանքային գրքույկ, եթե պահանջվում է
- այլ բժշկական փաստաթղթեր անձի առողջական վիճակի մասին

Նրանք, ովքեր չունեն մշտական բնակության վայր և չեն հանդիսանում ՀՀ քաղաքացի, կարող են անցնել բժշկա-սոցիալական փորձաքննություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թույլտվությամբ:

¹⁹ Հարցազրույց Ալլա Հարությունյանի հետ, իրավաբան, Առաքելություն Հայաստան ՀԿ, անցկացված 2009թվականի փետրվարի 10-ին

²⁰ Գործակալությունը և կոմիտեները գործում են ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության ենթակայության ներքո

Պայմաններ: ԲՍՓՅ-ն պարտավոր է անձի հաշմանդամության մասին որոշումը ներկայացնել մեկ ամսվա ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի թիվ 780 որոշման, որը հաստատում է բժշկա-սոցիալական քննության ժամանակ կիրառվող դասակարգիչները ու հաշմանդամության կարգի որոշման չափանիշները, հաշմանդամության կարգ շնորհվում է:

- **Պայմանով:** Մեկ տարի երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամներին, երկու տարի առաջին կարգի հաշմանդամներին կամ հաշմանդամ երեխաներին:
Երբ նշանակված ժամկետը ավարտվում է, հաշմանդամ անձը դիմում է ԲՍՓՅ կրկնակի հետազոտման առաջին տարվա բոլոր բժշկական և մնացած անհրաժեշտ փաստաթղթերով: Կրկնակի հետազոտությունից հետո հաշմանդամություն տրվում է կամ չի տրվում:
- **Անժամկետ:** Անժամկետ/ առանց պայմանի/ հաշմանդամության կարգ տրվում է նրանց, ովքեր կենսաթոշակային տարիքից անց են, ինչպես նաև նրանց, ովքեր ունեն գործունեության անվերականգնելի սահմանափակում:

Այն տրվում է անվճար:

«Այս փաստաթուղթը ստանալը կարևոր է վերադարձողների համար: Առանց հաշմանդամության կարգի վկայագիր ներկայացնելու մարդը չի կարող օգտվել հաշմանդամի իր իրավունքներից ու արտոնություններից: Չնայած որ այն տրվում է անվճար, բայց իրականում մարդիկ ստիպված են կատարել տարբեր վճարումներ բժշկական հետազոտությունների համար»:²¹

Հետագա ինֆորմացիայի համար վերադարձողները պիտի դիմեն համապատասխան բժշկա-սոցիալական հետազոտության հանձնաժողովների:

Ավելի մանրամասն հաշմանդամության թոշակների և հաշմանդամների իրավունքների մասին տես 3.3.7-ում:

❖ Աշխատանքային գրքույկ

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի /օրենք թիվ124, որը ուժի մեջ է մտել 2005 հունիսի 21-ին/, աշխատանքային պայմանագիր ստորագրելու համար գործատուն պետք է պահանջի աշխատողից աշխատանքային գրքույկ²², բացառությամբ այն դեպքերի, եթե դա աշխատողի առաջին աշխատանքն է կամ նա ունի տարբեր աշխատատեղեր/ աշխատանքային գրքույկը պահվում է աշխատողի հիմնական աշխատավայրում:

Աշխատանքային գրքույկը հիմնական փաստաթուղթն է, որը պարունակում է ինֆորմացիա աշխատողի մասին: Գործատուն լրացնում է աշխատանքային գրքույկը ընդունված կարգով և պահում է այն:

Պայմանները: Երբ աշխատողը ազատվում է, այն նրան հետ է վերադարձվում:

Ապագայում, սոցիալական քարտի վերջնական կիրառման դեպքում աշխատանքային գրքույկները դուրս կգան կիրառությունից:

Բայց առայժմ այն պահանջվում է և վերադարձողներին խորհուրդ է տրվում լինել ուշադիր և գրանցել իրենց աշխատանքային գործունեությունը աշխատանքային գրքույկների մեջ:

❖ Թոշակի գրքույկ

²¹ Հարցազրույց Ալլա Հարությունյանի հետ, իրավաբան, Առաքելություն Հայաստան ՀԿ, անցկացված 2009 թվականի փետրվարի 10-ին

²² ՀՀ Աշխատանքային Օրենսգրք, հոդված 89/1//2/

Եթե անձը հասել է կենսաթոշակային տարիքի, պահանջվում բնակության վայրի Տարածքային Սոցիալական Ապահովության Գործակալություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Անձնագիրը և նրա պատճենը
- Սոցիալական քարտը ու նրա պատճենը
- Աշխատանքային գրքույկը և պատճենը, պահանջի դեպքում նաև այլ փաստաթուղթ, որը հավաստում է աշխատանքային գրանցումները
- Տեղեկանք պարտադիր կենսաթոշակային ապահովագրության վճարումների վերաբերյալ, որը տրվում է տարածքային սոցիալական ապահովագրության գործակալություններից:
- Ֆոտո/4x6սմ/

Այն տրվում անվճար:

Ավելի մանրամասն կենսաթոշակային համակարգի մասին տես 3.3.7.4-ում:

1.1.4. Անհրաժեշտ փաստաթղթերի արժեքը

ՀՀ պետտուրքի մասին թիվ 186 օրենքը, ընդունված 1997թ. դեկտեմբերի 27-ին սահմանում է այս օրենքով սահմանված պարտադիր վճարներ պետական մարմինների գործունեության համար անհրաժեշտ ծառայությունների և գործողությունների համար:

Պետտուրքերի չափը որոշվում է գնահատման ենթակա սեփականության արժեքի համեմատ կամ այս օրենքով սահմանված բազային տուրքի համեմատ: Բազային տուրքը կազմում է 1000 դրամ կամ 1.82 Եվրո²³:

Ստորև ներկայացվում են որոշ գործողությունների ու ծառայությունների համար սահմանված պետական տուրքերը:

Հաշվի առեք, որ գները ներկայացված են առանց ծառայության գումարի:²⁴

ՀՀ պետական տուրք վճարվում է՝

Նոտարական գործարքների համար, որոնք իրականացնում է նոտարը²⁵

- այն պայմանագրերի համար, որոնք համաձայն օրենքի պահանջում են նոտարական վավերացում 500-5000 դրամ/0.91-9.12 Եվրո/
- Վավերացում թարգմանված փաստաթղթերի յուրաքանչյուր էջի համար 500 դրամ/0.91 Եվրո/

Անշարժ գույքի գրանցման գրասենյակում սեփականության իրավունքի գրանցման համար²⁶

- ֆիզիկական անձանց համար կախված անշարժ գույքի հանդեպ իրավունքի տեսակից գումարը կազմում է 1000-20000 ՀՀ դրամ/1.82-36.49 Եվրո/²⁷:

Պետական կացության ակտերը գրանցելու համար²⁸, կրկնակի սերտիֆիկատ տալը և այլ գործարքներ կապված պետական գրանցման ակտերի հետ²⁹:

- ամուսնության գրանցումը, ներառյալ վկայականի տրամադրումը-1000 ՀՀ դրամ/1.82 Եվրո/

²³ ՀՀ օրենք պետ տուրքի մասին, հոդված 8

²⁴ Առայժմ չկան հստակ որոշված գներ նոտարական գրասենյակների ծառայության վճարների, մարդիկ վճարում են այնքան, որքան պահանջում են նոտարական գրասենյակները

²⁵ ՀՀ օրենք պետ տուրքի մասին, հոդված 11/1-10,18

²⁶ Ibid., հոդված 16 (36)

²⁷ Անշարժ գույքի հողի չափագրման ծառայության համար այլ վճարումներ են նախատեսված

²⁸ Այս ակտերը ներառում են ամուսնալուծությունը, ծնունդը, որդեգրումը, հայրության ճանաչումը, անվանափոխությունը

²⁹ ՀՀ օրենք պետ տուրքի մասին, հոդված 11/2,3,5,9/

- ամուսնալուծության գրանցումը, ներառյալ վկայականի տրամադրումը-10000 ՀՀ դրամ/18.24 Եվրո/
- տեղեկանքի տրամադրելը քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության վերաբերյալ-2000 ՀՀ դրամ/3.65 Եվրո/
- քաղաքացիական կացության ակտերի կրկնօրինակները տրամադրելը-3000 ՀՀ դրամ/5.47 Եվրո/

ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը և ՀՀ քաղաքացիության փոխումը³⁰

- ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը -1000 ՀՀ դրամ/1.82 Եվրո/
- ՀՀ քաղաքացիության փոփոխումը-25000 ՀՀ դրամ/45.61 Եվրո/

ՀՀ հյուպատոսարանների կողմից իրականացվող ծառայությունների ու գործարքների համար³¹

- ՀՀ վերադարձի վկայականի տրամադրումը, եթե անձնագիրը կորել է անձնագրի տիրոջ մեղքով-32000դրամ / 58.38 Եվրո/ Սա Արևմտյան Եվրոպայի գներ են/: Մնացած դեպքերում, եթե անձնագիրը կորել է ոչ անձնագրի տիրոջ մեղքով, այս վկայականը տրվում է անվճար
- Անձնագրում ելքի թույլտվությունը նշելու համար/Հայաստանից/ 38000 ՀՀ դրամ /69.33 Եվրո /Սա Արևմտյան Եվրոպայի գներ են/

Օրենքով նախատեսված այլ շատ ծառայությունների և գործարքների համար:

Պետական մարմինների, մասնավոր հաստատությունների, հկ-ների և Հայաստանում գործող օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցչությունների կոնտակտները կարելի է գտնել <http://www.spyur.am/htmlfix/yp.htm> Սփյուռ-ում: Այս տեղեկատվությունը կարող է օգնել վերադարձողներին նախապես պլանավորել իրենց վերադարձը: Սփյուռը ծառայություն է, որը տրամադրում է տեղեկատվություն անվճար հեռախոսով 374 10 51 9999

1.2. Ճանապարհորդություն ելքի երկիր/ միջոցները, մոտավոր գները, տևողությունը, բեռների սահմանափակումը, կոնտակտները և այլն/

Գոյություն ունի Հայաստան ճանապարհորդելու երկու ձև՝ օդով և ցամաքով:

1.2.1. Օդով

Հայաստանում կան մի քանի օդանավակայաններ: Երևանի Ջվարթնոց Միջազգային օդանավակայանը Հայաստանի հիմնական դարպասն է : Թռիչքների պայմանների մասին ամբողջ ինֆորմացիան այսուհետ կենտրոնացած է «Ջվարթնոց» օդանավակայանում/ այն գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանից 10 կմ հեռավորության վրա/: Վերջերս 20 ավիաուղիներ ստացել են լիզենզիա չվերթներ իրականացնելու համար և ունեն պլանավորված և ոչ-պլանավորված չվերթներ:

Ուղիղ չվերթներ որոշ եվրոպական երկրներից³²

Ավիաուղիներ	Թռիչքներ	Թռիչքների հաճախականություն ³³
Ավստրիական ավիաուղիներ	Վիեննայի միջազգային օդանավակայան, Ավստրիա-Ջվարթնոց	շաբաթական անգամ 4

³⁰ Ibid., հոդված 13,

³¹ Ibid., հոդված 15 (1) (g, h)

³² Տեղեկատվությունը 2010 թվականի հունվարի դրությամբ է, տես www.zvartnots.am Ջվարթնոց օդանավակայանից իրականացվող թռիչքների չվացուցակները, տևողությունը:

³³ Թռիչքների նշված հաճախականությունը կարող է նվազել աշուն-ձմեռ ժամանակահատվածում

Ատլանտիս ավիաուղիներ	Վիեննայի միջազգային օդանավակայան, Ավստրիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	4
Բրիտանական ավիաուղիներ	Լոնդոնի Հիթրոու միջազգային օդանավակայան, Մեծ Բրիտանիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	4
ՆՌՎԱ Ավիաուղիներ	Կոպենհագեն-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
ՆՌՎԱ Ավիաուղիներ	Ստոկհոլմ-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Արմավիա հայկական ավիաուղիներ	Հռոմ-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Արմավիա հայկական ավիաուղիներ	Ցյուրիխ-Չվարթնոց	շաբաթական անգամ	2
Չեխական ավիաուղիներ	Պրահայի Ռիզին օդանավակայան, Չեխիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Չեխական ավիաուղիներ	Պրահա, Չեխիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Արմավիա հայկական ավիաուղիներ	Բեռլին/Գերմանիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Էյը Ֆրանս	Փարիզի Շարլ դը Գոլի օդանավակայան, Ֆրանսիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	2
Արմավիա հայկական ավիաուղիներ	Փարիզի Շարլ դը Գոլի օդանավակայան, Ֆրանսիա-Չվարթնոց	շաբաթական անգամ	2
Արմավիա	Ամստերդամի Շիպհոլի օդանավակայան, Նիդերլանդներ-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Արմավիա	Աթենքի Էլեֆտերոս Վենիզելոսի միջազգային օդանավակայան, Հունաստան-Չվարթնոց	շաբաթական անգամ	1
Արմավիա ³⁴	Մոսկվայի Դանոդեդովո, Վնուկովո, Շերեմետյեվո օդանավակայան-Չվարթնոց	օրական մի քանի անգամ	
Աերոֆլոտ ռուսական ավիաուղիներ	Մոսկվայի Շերեմետյեվո օդանավակայան-Չվարթնոց	օրական 2 անգամ	

Ուղիղ չվերթներ այլ երկրներից/ Արմավիա ավիաուղիներով կամ նշված երկրների ավիաուղիներով/ Ռուսաստան/ 20-ից ավելի քաղաքներ/, Ուկրաինա, Բելուռուս, Վրաստան, Թուրքմենստան, Ղազախստան, Թուրքիա, Իրան, Սիաոցյալ Արաբական էմիրություններ, Սիրիա և մի քանի այլ երկրներ:

Տարանցիկ կամ կանգառներով չվերթներ: Այլ երկրներից կամ քաղաքներից, որոնք չունեն ուղիղ չվերթներ, հնարավոր է հասնել Հայաստան տրանզիտ կամ նշված ուղիղ չվերթներով կանգառներ անելով:

Տոմսերի արժեքների, թռիչքների հաճախականության և բեռների սահմանափակումների մասին կապվեք Ավիաուղիների ներկայացուցիչ գրասենյակների հետ, որոնք տեղակայված են համապատասխան երկրներում, քանի որ կախված ավիաուղիներից,

³⁴ Շաբաթական երկու անգամ Արմավիան չվերթներ է իրականացնում Մոսկվա/Վնուկովո-Ֆյումրի/Հայաստան/

ուղևորների տարիքից և տարվա եղանակից, տոմսերի արժեքները, թռիչքների հաճախականությունը, բեռների ծավալը և այլ թռիչքային պայմաններ կարող են փոխվել:

Ավիաուղիների կայքերը:

Արմավիա	www.armavia.am
Ավստրիական ավիաուղիներ	www.aua.com/am/eng
Բրիտանական Ավիաուղիներ	www.ba.com
Չեխական ավիաուղիներ	www.czechairlines.am
Էյր Ֆրանս	www.airfrance.am

1.2.2. Ցամաքով

Ներկայումս,(...) երկու հարևան երկրները, **Թուրքիան և Ադրբեջանը** շրջափակման մեջ են պահում Հայաստանը և փակել են իրենց սահմանները Հայաստանի հետ: Երկու մայրուղի և մեկ երկաթուղային ճանապարհ է հնարավոր Վրաստանի միջով³⁵, որը մատչելի է դարձնում Բաթումի և Փոթիի սևծովյան նավահանգիստները: Լրացուցիչ, կա նաև մեկ հարավային ճանապարհ Իրանով դեպի Պարսկական ծոց(...)³⁶:

Քանի որ Թուրքիայի հետ սահմանները փակ են, մեքենայի ճանապարհը Վրաստանով դառնում է չափազանց կարևոր Հայաստանի համար: Այն կապում է Հայաստանը Ռուսաստանի Դաշնության հետ: Բայց Ռուսաստանի և Վրաստանի միջև ծագած քաղաքական լարվածությունը, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի շուրջ առաջացած խնդիրները շատ բացասական են ազդել Հայաստանի վրա: Գոյություն ունեցող միակ երկաթուղին հասնում է մինչև Բաթումի, Վրաստան:

Խորհուրդ է տրվում ՀՀ վերադարձողներին խուսափել Հարավային Օսեթիայով և Աբխազիայով վերադառնալուց: Վրաստանի ոստիկանությունը ու սահմանապահները ՀՀ քաղաքացիների անձնագրերի մեջ Հարավային Օսեթիայում և Աբխազիայում դրված կնիքները համարում են անօրինական և նրանք կարող են ձերբակալվել Վրաստանի ոստիկանության կողմից, արդեն իսկ գտնվելով Վրաստանի տարածքում:

(...) Ավելին, այն քաղաքացիները, որոնց անձնագրում դրված է «Ադլեր ԿՊՊ»³⁷ կնիք, խորհուրդ է տրվում փոխել իրենց անձնագիրը, նախքան Վրաստան մեկնելը, քանի որ այդ կնիքները սահմանը հատելիս Վրաստանի ոստիկանության կողմից համարվում են անօրինական:³⁸

Օդային ճանապարհորդությունը համարվում է միակ ապահով և հասանելի միջոցը եվրոպական երկրներից Հայաստան ժամանելու համար:³⁹

1.3. Մուտքի ընթացակարգը /ընթացքը կազմակերպող իշխանությունը, միջամտությունը, հսկողությունը, ձերբակալումը, կաշառքը և այլն/

³⁵ Հայկական Տուրիզմի Զարգացման Գործակալություն, ժամանումներ գնացքով <http://www.armeniainfo.am/travel/?section=land&page=2>

³⁶ Հայկական Տուրիզմի Զարգացման Գործակալություն, ժամանումներ ցամաքով <http://www.armeniainfo.am/travel/?section=land>

³⁷ <Ադլերի սահմանային հսկման կետ> ռուսերեն հապավում

³⁸ **Հարցազրույց** պարոն Ա. Մարգարյանի հետ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարություն, Հյուպատոսություն, Միգրացիայի բաժին, 1-ին քարտուղար

³⁹ Լեոնային Ղարաբաղին վերաբերող՝ Ներկայումս Լեոնային Ղարաբաղ հնարավոր է հասնել միայն Հայաստանի միջով/ ԼՂ-ն ունի երկու ավտոմոբիլային ճանապարհ Հայաստանին կապող/

ՀՀ քաղաքացիների Հայաստան մուտք գործելու ընթացակարգը շատ պարզ է և առանց հատուկ ընթացակարգի: Եթե վերադարձողը ունի վավեր անձը հաստատող փաստաթուղթ, նա չի ունենա որևէ խնդիր Հայաստան մուտք գործելու համար:

Ձերբակալում: Պետական սահմանը անցնելիս և անձի ինքնությունը ստուգելիս անձը անմիջապես ձերբակալվում է, եթե պարզվում է, որ վերջինս գտնվում է քրեական հետախուզման մեջ կամ կատարել է գործողություն, որը բնորոշվում է որպես հանցանք սահմանը հատելիս:

Կաշառք: Կան զեկույցներ, որոնք նշում են սահմանը հատելիս կաշառքի դեպքեր փաստերը: Օրինակ, 2007 թվականի տվյալներով, «Թրաֆիքինգի գոհերը նշում են, որ թրաֆիքինգ իրականացողները հեշտությամբ կաշառում են ռուս և հայ սահմանապահներին(...)»⁴⁰:

1.3.1. Օդով

ՀՀ կառավարության 1998թ. մարտի 24-ի պետական սահմանի անցման կետերում պետական լիազորված մարմինների գործառույթների իրականացման կարգը հաստատելու մասին թիվ 200 որոշումը սահմանում է օդային կամ ցամաքային տրանսպորտով հայաստանի Հանրապետություն մուտքի/ելքի իրականացումը:

Համաձայն նշված որոշման օդային տրանսպորտով մուտք գործելիս սահմանային ծառայությունը ստուգում է Հայաստան ժամանող քաղաքացիների անձնագրերը; օտարերկրացի քաղաքացիների դեպքում՝ ստուգվում է նաև մուտքի վիզան:

Անձնագրային ստուգումից հետո

- ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև այն երկրների քաղաքացիները, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային համաձայնագրերի համաձայն ազատ վիզային ռեժիմ, անցնում են մաքսային ստուգման գոտի
- անցնում են մաքսային ստուգման գոտի
- Մուտքի վիզայի բացակայության դեպքում, սույն կետի Ա ենթակետում չնշված մուտքի վիզա ունեցող օտարերկրացի քաղաքացիները դիմում են ոստիկանության Անձնագրային և Վիզային բաժին պետական սահմանի սահմանային կետերում մուտքի վիզայի համար և անցնում են մաքսային ստուգման գոտի

Քաղաքացիները, ովքեր անցնում են Մաքսային գոտի, լրացնում են ՀՀ Մաքսային կոմիտեի կողմից նշակված հայտարարագիր և ներկայացնում են այն մաքսային անձնակազմին: Մաքսային ստուգման ժամանակ մաքսային պաշտոնյաները կարող են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել քաղաքացու, նրա բեռի, անձնական գույքի և այլ իրերի մաքսային ստուգում:

1.3.2. Ցամաքով

Ցամաքային տրանսպորտով մուտք գործելու դեպքում, պետական լիազոր մարմինները ունեն նույն գործառույթները, ինչ օդով մուտք գործելու դեպքում:

1.4. Նախկին գործողությունների և կարգավիճակների ազդեցությունը մուտքի դեպքում:

⁴⁰ ԱՄՆ Պետ Դեպարտամենտ; Մարդու Իրավունքների պրակտիկայի Հայաստանի Ձեկույց 2007, իրականացված 2008թ. Մարտի 11-ին Ժողովրդավարություն, Մարդու Իրավունքներ և Աշխատանքի Բյուրոյի կողմից, հոդված 5, Խտրականություն, Հասարակական պարսավանք և Մարդկանց Թրաֆիքինգ; Մարդկանց Թրաֆիքինգ, պարբերություն 14 <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/100546.htm>

1.4.1. նախկին փախստական կամ և լրացուցիչ պաշտպանության կարգավիճակի ազդեցությունը:

ՀՀ քաղաքացիության փոխումը: ՀՀ սահմանադրությունը սահմանում է քաղաքացիությունը փոխելու անձի իրավունքը/հոդված 30.1/: Հետևաբար, ՀՀ քաղաքացիության փոփոխումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չի համարվում պատժելի արարք:

ՀՀ քաղաքացիության դադարումը միայն ՀՀ նախագահի հրամանով: «ՀՀ նախագահը ՀՀ քաղաքացիություն շնորհելու և վերականգնելու, խմբերով քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու մասին որոշումները ընդունում է իր հրամանով, ինչպես նաև որոշում է քաղաքացիությանը վերաբերող դիմումների քննարկումների ընթացակարգերը»:⁴¹ Ուստի, եթե անձը հրաժարվում է ՀՀ քաղաքացիությունից կամ ստանում է այլ պետության քաղաքացիություն, այն չի կարող մեխանիկորեն դադարեցնել ՀՀ քաղաքացիությունը, ինչպես նաև այն չի ազատում անձին պետության շահերին վերաբերող չկարգավորված պարտականություններից:

Դա շատ կարևոր է հատկապես հայ արական սեռի քաղաքացիների համար: Այլ երկրների քաղաքացիության ստացումը չի ազատում նրանց պարտադիր զինվորական ծառայությունից: Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի Հայաստանի հյուպատոսական տեղեկատվական թերթիկում նշվում է«(...)Բացի նրանից, որ ԱՄՆ քաղաքացիություն ունեցողները պարտավոր են ենթարկվել բոլոր հայկական օրենքներին, երկքաղաքացիները ենթակվում են նաև այլ օրենքների, որոնք հատուկ պարտավորություններ են դնում հայ քաղաքացիների վրա: Հայաստանում գտնվելու ժամանակ արական սեռի 18 տարեկան անց ԱՄՆ քաղաքացիները, որոնք համարվում են նաև հայ քաղաքացիներ, ժամանման պահից համարվում են զինապարտ, ենթակա են պարտադիր զինվորական ծառայության և ենթարկվում են հայկական օրենքի այլ ասպեկտներին: Հայկական իշխանությունները կանոնավոր կերպով այս հիմքով ձերբակալել են ԱՄՆ քաղաքացիներին նրանց ժամանման ժամանակ կամ Հայաստանից նրանց հեռանալու ժամանակ: Մեծամասամբ, էթնիկ հայ ճանապարհորդները, որոնք մեղադրվում են հայ զինվորական ծառայության պարտականություններից խուսափելու համար, անմիջապես ձերբակալվում են և հետագայում համարվում են մեղավոր ծառայությունից խուսափելու համար: Պատիժը այդ դատապարտյալների համար խիստ է և ներառում է բանտարկության ժամկետը կամ զգալի տուգանքը: **Նրանց, ովքեր կարող են տուժել դրանից, խորհուրդ է տրվում խորհրդակցել հայ պաշտոնյաների հետ և նախքան ճանապարհորդելը հայկական դեսպանատներից և կամ հյուպատոսարանից ճշտել իրենց կարգավիճակը (...)**⁴²:

Նույն խորհուրդը տրվում է բոլոր հայ արական սեռի անձանց, որոնք վերադառնում են այլ երկրներից:

ՀՀ օրենսդրության համաձայն հանցագործություն/զանցանք համարվող արարքների համար պատասխանատվության կանչումը: Օրինականության սկզբունքի համաձայն, /ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված /միայն քրեական օրենքն է որոշում գործողության հանցավոր և պատժելի լինելը: Եվ քանի որ «**ՀՀ քաղաքացու փախստականի կարգավիճակ ստանալու խնդրանքը**» կամ «**այլ երկրում փախստականի կարգավիճակի ստացումը**» որևէ նորմատիվ ակտ չի համարում հանցագործ կամ պատժելի արարք, **ՀՀ-ում անձը չի կարող պատժվել այս արարքի համար:**

Չկան գրանցված դեպքեր, որ ՀՀ-ում ինչ-որ մեկը վերադարձից հետո ձերբակալվել է, պատժվել կամ հետապնդվել միայն այլ երկրում փախստական լինելու համար:

⁴¹ ՀՀ Քաղաքացիության մասին Օրենք, հոդված 26

⁴² ԱՄՆ Պետ Դեպարտամենտ, Հյուպատոսական Բաժին, Հայաստան Հատուկ տեղեկատվություն, 2009թ սեպտեմբերի 15, հատուկ հանգամանքներ, պարտադիր զինծառայություն http://travel.state.gov/travel/cis_pa_tw/cis/cis_1141.html#special_circumstance

1.4.2. Նախկինում անհաջող ապաստան հայցելու ազդեցությունը

Փախստականի կարգավիճակ ստանալու համար դիմելը, ինչպես նաև **ապաստանի հայցումը կամ ապաստան հայցողի կարգավիճակ ստանալը/** հաշվի չառնելով հայցի ընդունում կամ մերժումը, արտասահմանում օրինական կամ անօրինական գտնվելը, անձի հարկադիր կամ կամավոր վերադարձը/ չեն համարվում պատժելի արարք Չայաստանում, քանի որ ըստ ՀՀ Օրենսդրության այս արարքները **չեն համարվում հանցանք կամ զանցանք:**

Չկան գրանցված դեպքեր, որ ինչ-որ մեկը վերադարձից հետո ձերբակալվել է, պատժվել կամ հետապնդվել ՀՀ-ում միայն այլ երկրում ապաստան հայցող լինելու համար:

1.4.3. Նախկինում ծագման երկրից անօրինական հեռանալու ազդեցությունը

Չայաստանից հեռանալու կամ Չայաստան վերադառնալու անձի իրավունքը: ՀՀ սահմանադրության 25-րդ հոդվածը շարադրում է **ՀՀ քաղաքացու ՀՀ-ից հեռանալու կամ ՀՀ վերադառնալու իրավունքը:** Այս իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքներով: Բայց իրականում «/.../երկրից մշտապես հեռանալու թույլտվությունը կարող է մերժվել այն անձանց, ովքեր պահում են պետական գաղտնիք, ենթակա են զինծառայության, ներգրավված են չվճռված դատական պրոցեսներում, կամ որոնք ունեն չվճարված ֆինանսական պարտավորություններ: Ձինվորական տարիքի տղամարդիկ, որոնք չեն կատարել իրենց զինվորական պարտականությունը, պետք է հաղթահարեն էական բյուրոկրատական խոչընդոտներ արտասահման ճանապարհորդելու համար, ներառյալ զգալի ընթացակարգային հետաձգումները և ելքի կնիքների համար պաշտոնյաների կաշառումը»⁴³:

Ընդհակառակը, ՀՀ քաղաքացիների վերադարձը ողջունվում է ՀՀ կառավարության կողմից ներկայիս ժողովրդագրական իրադրությամբ պայմանավորված:

ՀՀ պետական սահմանի անօրինական հատումը: Առանց համապատասխան փաստաթղթերի կամ թույլտվության ՀՀ պաշտպանված պետական սահմանի հատումը համարվում է պատժելի /Քրեական Օրենսգրքի 329-րդ հոդված /:

1.4.4. Ելքի երկրից դուրս իրականացված հանցագործության ազդեցությունը/ երկակի վտանգի ռիսկը/

Կրկնակի պատժի բացառումը Չայաստանում մի հանցագործության համար, որը կատարվել և պատժվել է ՀՀ-ից դուրս: ՀՀ սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ ոչ մեկը չպիտի պատժվի երկու անգամ նույն արարքի համար: Այսպիսով, մեկ անգամ Չայաստանից դուրս որևէ արարքի համար պատժված լինելու դեպքում, անձը չպիտի պատժվի նույն արարքի համար:

ՀՀ-ից դուրս անձի դատապարտման օրինական կարևորությունը: Համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի, այլ երկրի դատարանի վճիռը կարող է հաշվի առնվել, պայմանով, եթե ՀՀ քաղաքացին դատապարտվել է ՀՀ-ից դուրս գործած հանցանքի համար և կատարել է կրկնակի հանցագործության Չայաստանի Հանրապետությունում:

1.5. Մաքսային կարգավորում/ինչպես է կատարվում համապատասխան կարգավորումը/

Ներմուծման ընթացակարգը: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի, բոլոր ապրանքները, որոնք ներմուծվում են Չայաստանի Հանրապետության մաքսային

⁴³ Մարդու իրավունքների Պրակտիկայի Հայաստանի Զեկույցը, 2007, հոդված 2, Քաղաքացիական ազատությունների հարգանք, Տեղաշարժման ազատություն, Ներքին Տեղահանված անձինք, փախստականների և Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանություն, պարբերություն 3 <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/100546.htm>

սահմանով ենթակա են հայտարարագրման: Հայտարարագիրը ներկայացվում է կամ գրավոր կամ բանավոր՝ նշելով մանրամասն տեղեկատվություն ապրանքների մասին, տեղափոխման նպատակի, ինչպես նաև այլ տեղեկատվություն պահանջվող մաքսային վերահսկման և ընթացակարգի համար:

Առանց մաքսային վճարների թույլատրվում է ներմուծել⁴⁴:

- **Ուղեկցող բեռ հանդիսացող ապրանքներ**, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150000 ՀՀ դրամ⁴⁵:
- **միջազգային փոխադրումներով փոխադրվող ապրանքներ/ծանրոցներ/**, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կգ-ը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 50000 ՀՀ դրամը⁴⁶:

Ապրանքներ, որոնք տեղափոխվում են ՀՀ մաքսային սահմանով օդային տրանսպորտային միջոցներով

Ապրանքի անվանումը	Բնաիրային չափը
սուրճ, թեյ, մատե և համեմունքներ	1կգ
մսի, ձկան, խեցգետնամաններից, կակղամորթերից կամ ջրային այլ անողնաշարավորներից արտադրանք, այդ թվում	5կգ
խավիար և խավիարի փոխարինիչներ	0.5կգ
տարբեր տեսակի սննդամթերքներ, բացառությամբ դրոժների	1կգ
ալկոհոլային և ոչ-ալկոհոլային խմիչքներ, քացախ	2 լիտր, կամ 1 շիշ, եթե 1 շիշը պարունակում է 2 լիտրից ավելի
սիգարներ, սիգարեղաներ, սիգարետներ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, այդ թվում	
սիգարներ	10 հատ
սիգարեղաներ	400 հատ
սիգարետներ	400 հատ

- իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող **անձնական օգտագործման իրերը**: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք
 - չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում
 - ՀՀ ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին, բացառությամբ ծանրոցներով ստացվող ապրանքների
- **անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար նախատեսված դեղեր և դեղանյութեր**, որոնք չեն գերազանցում «10 անվանում, յուրաքանչյուրից երեքական սպառողական փաթեթ» քանակը, եթե փաստաթղթով հիմնավորված չէ բուժման համար անհրաժեշտ ավելի մեծ քանակ
- Ի լրումն այս ամենի, ՀՀ ֆիզիկական անձինք իրավունք ունեն ՀՀ ներմուծել տարադրամ, 15000 եվրոյին համարժեք: Նշված գումարը գերազանցող տարադրամը կարելի է փոխադրել բացառապես բանկային փոխադրման միջոցով:

⁴⁴ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Մաքսային Կոմիտե, Վերադարձող ՀՀ քաղաքացիներ <http://www.customs.am/intro.php>(in Armenian)

⁴⁵ 273.67Եվրո

⁴⁶ 91.22 Եվրո

Տուգանքներ⁴⁷

- Մաքսային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջը դիտավորյալ չկատարելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ 10000 դրամի չափով⁴⁸
- մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներին մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձի մոտենալուն խոչընդոտելը առաջացնում է տուգանքի նշանակում 50000 դրամի չափով⁴⁹
- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, այսինքն գաղտնարանների օգտագործումը՝ ապրանքների հայտնաբերումը դժվարացնող այլ եղանակներով կամ ապրանքներին այլ տեսք տալու միջոցով՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:
- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցներ չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը, ինչպես նաև հայտարարագրումը ոչ իրենց անվանումով հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:
- և այլն

Տույժեր⁵⁰

- Մաքսատուրքի և մաքսավճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու համար յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսատուրքի 0.2 տոկոսի չափով
- Ավելացված արժեքի⁵¹ և ակցիզային հարկերի, ինչպես նաև հաստատագրված վճարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու համար յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսատուրքի գումարի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան 365 օրվա համար
- և այլն

Մաքսային կարգի մասին ավելի մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ արտասահմանում ՀՀ հյուպատոսական առաքելություններից և հյուպատոսարաններից կամ ՀՀ կառավարության Մաքսային ծառայության կոմիտեի պաշտոնական կայքից <http://www.customs.am/intro.php>

1.6. Մուտք վերադարձի տարածք

1.6.1. Ներքին ճանապարհորդության սահմանափակումներ

1.6.1.1. Վարչական սահմանափակումներ

Հայաստանը միատար հանրապետություն է: Հետևաբար տարածքական ստորաբաժանումների /մարզերի⁵²/ միջև չկան վարչական սահմանափակումներ:

⁴⁷ Համաձայն ՀՀ կառավարության առընթեր Պետական Մաքսային Կոմիտեի, Տույժեր ու տուգանքներ

⁴⁸ 18.24 Եվրո

⁴⁹ 91.22 Եվրո

⁵⁰ Համաձայն ՀՀ կառավարության առընթեր Պետական Մաքսային Կոմիտեի, Տույժեր ու տուգանքներ

⁵¹ Ավելացված Արժեքի Հարկ

⁵² Հանրագիտարան ՎԻԿԻՊԵԴԻԱ; Հայաստանի Վարչական բաժանումը http://en.wikipedia.org/wiki/Administrative_divisions_of_Armenia,

1.6.1.2. Պրակտիկ խոչընդոտներ

Անհարմար տեղաշարժ հաշմանդամների համար: Շատ քիչ փողոցներ և սոցիալական հարմարություններ են ստեղծված հաշմանդամների համար, անկախ նրանից, որ վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարվել են մեծածավալ աշխատանքներ: Հարմարեցված տրանսպորտային միջոցներ ընդհանրապես չկան:

Սահմանամերձ և բարձր լեռնային շրջաններում գտնվող գյուղական համայնքների հեռացումը/օտարումը: Համապատասխան վերանորոգված գյուղական համայնքային ճանապարհների բացակայությունը և համապատասխան առողջապահական հաստատությունների, նախակրթարանների, դպրոցների ինչպես նաև այլ կարևոր ենթակառուցվածքների ոչ որակյալ լինելը դարձնում են առողջապահությունը, կրթությունը և այլ ծառայությունները ֆիզիկապես ոչ մատչելի գյուղական բնակչության համար:

1.6.2. Տարածքներ, որոնց անհնար կամ վտանգավոր է մոտենալ/ականապատ, բնական խարխլված/

Ականներ: Հայաստանում *Ականների ազդեցության հետազոտությունը* կատարվել է ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի Ականազերծում ծրագրի շրջանակներում Վիետնամական վետերանների ամերիկյան հիմնադրամի տեխնիկական աջակցությամբ 2005 թ փետրվար-օգոստոս ամիսներին:

Ըստ այդ հետազոտության⁵³, ականապատումը հանդիպում է միայն Ադրբեջանին հարակից հայկական սահմանին, հատկապես այն շրջաններում, որտեղ իրականացվել են ռազմական գործողություններ և այն շրջաններում, որոնք տեղակայված են շատ մոտ ճակատային գոտուն:

Այս տարածքները գտնվում են Ադրբեջանի սահմանի երկայնքով և Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու գծում, մարդկանց բնակավայրերից հեռու:

Չնայած ամեն տարի իրականացվում են ականազերծման աշխատանքներ, բայց նրանք դեռևս սպառնալիքի աղբյուր են հատկապես զինվորականների համար և այն քաղաքացիների, ովքեր աշխատում են սահմանակից շրջանների կից դաշտերում:⁵⁴

Բացի վերը նշված ականապատ տարածքներից, այլ վտանգավոր և մոտեցմանը անհնար տարածքներ չկան:

1.6.3. Ներքին ճանապարհորդության միջոցները/ կոնտակներ և պրակտիկ տեղեկատվություն, գնացուցակ և այլն/⁵⁵

Երթևեկությունը: Հայաստանում, հատկապես մայրաքաղաք Երևանում, երթևեկության նշանները և օրենքները շատ հաճախ անտեսվում են և ճանփեզրի կանոնները թույլ են:

⁵³ Միացյալ Ազգերի Ջարգացման Ծրագիր, Հայաստան, 2005թ. Հրապարակումներ, Ականապատման Հետազոտություն, 2005, <http://www.undp.am/docs/publications/2005publications/liseng.pdf>

⁵⁴ Ամեն տարի ԱՄՆ պետ դեպարտամենտը տալիս է տեղեկատվություն ականապատման մասին Մարդու Իրավունքների Ազգային Ջեկույցում <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/index.htm>

⁵⁵ Հայկական Տուրիզմի Ջարգացման Գործակալություն, Ճանապարհորդություն և տեղափոխություն, Երթևեկելը Երևանում/Տեղեկատվություն Երևանի տրանսպորտային միջոցների, գնացուցակի և այլնի վերաբերյալ <http://www.armeniainfo.am/travel/?section=yerevan&page=1> և Երթևեկելը Մարզերում/Տեղեկատվություն մարզերի տրանսպորտային միջոցների, գնացուցակի և այլնի վերաբերյալ <http://www.armeniainfo.am/travel/?section=region&page=1>: Խնդրում ենք հաշվի առնել, որ այս ինֆորմացիան փոփոխական է և մանրամասները փոխվում են ժամանակ առ ժամանակ

վարորդները շատ հաճախ վարում են անխոհեմ և բարձր արագությամբ շատ քիչ հաշվի առնելով երթևեկության հոսանքները և նշանները: Անցորդները անցումներից չեն օգտվում և պիտի լինեն շատ զգույշ փողոցն անցնելիս: Գրանցված տրանսպորտային միջոցների քանակը տարեցտարի ավելանում է և ճանապարհային համակարգը չի կարող բավարարել կանոնավորապես ավելացող վարորդներին:

Ուստի խորհուրդ է տրվում բոլոր վերադարձողներին լինել շատ ուշադիր մեծ քաղաքների, հատկապես Երևանի փողոցներում:

Գոյություն ունեն հետևյալ տրանսպորտային միջոցները:

Միկրոավտոբուսներ: Միկրոավտոբուսները Հայաստանում ամենից շատ օգտագործվող տրանսպորտային միջոցն են: Երևանում⁵⁶ և այլ քաղաքներում այն արժե 100 դրամ կամ 0.18 Եվրո:

Շրջաններ մեկնելու համար միկրոավտոբուսները նույնպես ամենատարածված և համար միջոցն են: Գները տատանվում են 150-6000 դրամի կամ 0.27-10.95 Եվրոյի սահմաններում՝ Երևանից եղած հեռավորությունից կախված⁵⁷:

Ավտոբուսներ: Ավտոբուսները այնքան էլ տարածված չեն, ինչպես միկրոավտոբուսները: Նորից Երևանում գինը կազմում է 100 դրամ կամ 0.18 Եվրո: Շրջաններ գնալու համար գները փոխվում են Երևանից եղած հեռավորությունից կախված⁵⁸:

Տաքսի: Յուրաքանչյուր կիլոմետրի համար գները տատանվում են 100-200 դրամ /0.18-0.36 Եվրո/սահմաններում: Որպես կանոն, տաքսիները շատ պարտաճանաչ են, և շատ մեծ տարածում ունեն: Խորհուրդ է տրվում օգտվել գրանցված տաքսի ծառայություններից:

Էլեկտրոտրանսպորտ / մետրո, տրոլեյբուս/ միայն Երևան քաղաքում: Մետրոն բաղկացած է միայն մեկ գծից, որը սկսվում է Բարեկամության հրապարակից /բանուկ թաղամաս Բաղրամյան փողոցի ծայրում/ մինչև Երևանի արվարձաններում՝ Չարբախ: Մետրոն գործում է առավոտյան 6.30-ից մինչև երեկոյան 23.00 և արժե 50 դրամ կամ 0.09 Եվրո մի ուղղությամբ:

Տրոլեյբուսները դարձել են շատ հազվադեպ հանդիպող տրանսպորտային միջոց, ներկայումս կան միայն մի քանի ուղիներ Երևանում, արժեքը 50 դրամ կամ 0.09 Եվրո : Գոյություն ունեցող տրանսպորտային գծերը այլևս չեն օգտագործվում:

Գնացք: Հայաստանում հիմնական երկաթուղային կայարանը Սասունցի Դավթի կայարանն է, որը գտնվում է Երևանի Տիգրան Մեծ պողոտայի վրա, նույն անվամբ մետրոյի կայարանի հարևանությամբ⁵⁹: Այն ներքին երթևեկության համար շատ չի կիրառվում: Գնացքները վատ վիճակում են, ճիշտ ժամանակին չեն և չկա զարգացած ներքին երկաթուղային ցանց: Երթևեկելու համար մարդիկ սովորաբար օգտագործում են միկրոավտոբուսները:

2. Ֆիզիկական Անվտանգություն

2.1. Ընթացող ռազմական հակամարտություն

⁵⁶ Հայկական Տուրիզմի Չարգացման Գործակալություն; Երթևեկելը Երևանում; Միկրոավտոբուսների ժամանակացույցը <http://www.armeniainfo.am/travel/?section=yerevan&page=3>

⁵⁷ Հայկական Տուրիզմի Չարգացման Գործակալություն; Երթևեկելը մարզերում; Միկրոավտոբուսների ժամանակացույցը <http://www.armeniainfo.am/travel/?section=region&page=3>

⁵⁸ Հայկական Տուրիզմի Չարգացման Գործակալություն; Երթևեկելը մարզերում; Ավտոբուսների ժամանակացույցը; <http://www.armeniainfo.am/travel/?section=region&page=4>

⁵⁹ Հայկական Տուրիզմի Չարգացման Գործակալություն; Երթևեկություն և տրանսպորտ; Երթևեկելը մարզերում; Գնացքներ <http://www.armeniainfo.am/travel/?section=region&page=2>

Հայաստանում չկա ընթացող ռազմական հակամարտություն:

2.2. Բարձր ռիսկային տարածքներ

Անվտանգությունը Հայաստանում կապված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Չնայած որ ռազմական հակամարտությունը դադարել է 1994 թվականից, շատ պատահական բախումներ են հանդիպում Ադրբեջանի հետ սահմանային գոտում:

Լեռնային Ղարաբաղ/ԼՂ/ Լեռնային Ղարաբաղի շրջանը չունի հատուկ անվտանգության խնդիր, ԼՂ-ի ամբողջ տարածքը գտնվում է ԼՂ-ի և Հայաստանի զինվորական ուժերի պաշտպանության տակ, չնայած սահմանամերձ շրջանները մնում են վտանգավոր ականապատման հետևանքով: Սահմանամերձ շրջաններում զինադաշարի անկայունությունը և տարերային կռիվները կարող են վտանգի աղբյուր լինել ադրբեջանական զինուժի հետ:

Այն հայերի համար, ովքեր ուժով վտարվել են Ադրբեջանից 1988-1992 թվականներին, դեռևս վտանգավոր է վերադառնալ իրենց տները Ադրբեջանում:⁶⁰

2.3. Հանցագործություն

2.3.1. Հանցագործության ծայրահեղ բարձր մակարդակ ունեցող շրջաններ/ ֆիզիկական ապահովությանը սպառնացող/

Հայաստանում չկան այնպիսի շրջաններ, որտեղ հանցագործության տոկոսը մտահոգիչ լինի ֆիզիկական անվտանգության առումով:

Տվյալների համաձայն⁶¹, 2009 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում հանցագործության ընդհանուր մակարդակը ավելացել է 57,0 %-ով՝ համեմատած 2008թ. նույն ժամանակահատվածի հետ:

Հոդվածներ հանցագործությունների մասին Հայաստանում:

Eurasianet.org, Marianna Grigoryan, 06/06/09, "ARMENIA: SOPRANOS-STYLE TV DRAMAS SPARK DEBATE OVER CRIME RATES",

<http://www.eurasianet.org/departments/insightb/articles/eav060909.shtml>

Overseas Security Advisory Council (OSAC), US Government inter-agency website, "Armenia 2009 Crime & Safety Report", Crime & Safety, done on 23 June 2009,

<https://www.osac.gov/Reports/report.cfm?contentID=103953>

2.3.2. Թրաֆիքինգի զոհ դառնալու ռիսկը

2009 թվականին ԱՄՆ պետ դեպարտամենտը հիմնգրորդ տարին անընդմեջ Հայաստանին դասեց երկրորդ կարգի վերահսկելի ցուցակում⁶²:

Համաձայն Պետ դեպարտամենտի «Մարդկանց Թրաֆիքինգ» 2009թ. զեկույցի «Հայաստանը հիմնականում ելքի երկիր է կանանց և աղջիկների համար, որոնք ուղարկվում են Արաբական էմիրություններ և Թուրքիա առևտրային սեռական

⁶⁰ Շահումյանի և Գետաշենի շրջանները, որոնք բնակեցված են հայերով, գտնվում են Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի հարևանությամբ և նույնպես անհասանելի են վերադարձողների համար

⁶¹ ՀՀ ոստիկանություն, ՀՀ ոստիկանության տեղեկագիրը հանցագործությունների քանակի և կատարված աշխատանքների մասին 2009թվականի 9 ամիսների ընթացքում

<http://www.police.am/vichakagrutyun/9%20amis-nor.pdf>

⁶² ԱՄՆ Պետ դեպարտամենտը երկրները դասակարգում է 3 սուսակների, որոնք բնութագրվում են որպես կարգեր, Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության վերավավերացման ակտի մանդատի տակ գտնվող: Այս դասակարգումը հիմնված է Թրաֆիքինգի դեմ պայքարի գործում կառավարությունների իրականացրած գործողությունների չափով: Ավելի մանրամասն տես: ԱՄՆ պետ դեպարտամենտ, Մարդկանց Թրաֆիքինգի վերահսկման և պայքարի գրասենյակի, Մարդկանց Թրաֆիքինգ միջանկյալ գնահատում, Փետրվար 2008 <http://www.state.gov/g/tip/rls/rpt/101438.htm>

շահագործման համար: Հայ տղամարդիկ և կանայք աշխատանքային թրաֆիքինգի են ենթարկվում Ռուսաստանում: Հասարակական կազմակերպությունները զեկուցում են, որ հայ կանայք ենթարկվում են աշխատանքային թրաֆիքինգի նաև Թուրքիայում: Կանայք Ուկրաինայից և Ռուսաստանից կանայք աշխատանքային թրաֆիքինգի են ենթարկվել Հայաստանում: Արաբական Միացյալ Էմիրություններ թրաֆիքինգի ենթարկված զոհերը սովորաբար տեղափոխվում են Դուբայ Երևանից կամ Ռուսաստանի Դաշնության քաղաքներից; թրաֆիքինգի ուղին Թուրքիա սովորաբար իրականացվում է ավտոբուսով Վրաստանի տարածքով: Փոքրաթիվ հայ աղջիկներ և տղաներ ենթարկվում են ներքին թրաֆիքինգի սեռական ծահագործման և հարկադիր մուրացիկության նպատակով:⁶³

ՀՀ Ոստիկանության տվյալների համաձայն, 2009թվականին Հայաստանում գրանցել է Թրաֆիքինգի 45 դեպք:⁶⁴

«Աջակցություն Թրաֆիքինգի զոհերին» ծրագրի ղեկավար Հասմիկ Էդիլյանը «Դեմոկրատիան այսօր» հի-ից համարում է , որ «առավել խոցելի խմբերի մեջ են մանկատների երեխաները: Մանկատներից դուրս գալով նրանք դառնում են բռն իրենց ընտանիքների համար կամ պարզապես հայտնվում են փողոցում: Մյուս խոցելի խումբը համարվում է գյուղերի և փոքր քաղաքների բնակիչները: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը գյուղական վայրերից են կամ փոքր քաղաքներից: Պատճառն այն է, որ այնտեղ չկան աշխատանքային հնարավորություններ և փող վաստակելու միակ ճանապարհը երկրից հեռանալն է: Այնպիսի փոքր քաղաքներ, ինչպիսիք են Գյումրին կամ Վանաձորը նախկինում եղել են մեծ արդյունաբերական կենտրոններ: Հիմա գործարանների և ֆաբրիկաների բացակայության պատճառով, շատ մարդիկ գործազուրկ են: Կան դեպի Ռուսաստան տղամարդկանց աշխատանքային թրաֆիքինգի դեպքեր»⁶⁵:

2.3.3. Բռնի պոռնկության զոհ դառնալու ռիսկը

Բռնի պոռնկությունը կապված է թրաֆիքինգ երևույթի հետ:

«Թրաֆիքինգ իրականացնողները, օգտագործելով ելքի և մուտքի երկրներում զարգացած ցանցերը, սովորաբար հավաքագրում են զոհերի, որոնք ընդգրկված են տեղական պոռնկության մեջ: Մեծամասնությունը, բայց ոչ բոլոր նույնականացված զոհերը, տեղյակ են եղել, որ իրենք հավաքագրվում են այլ երկրներում սեքս ինդուստրիայում աշխատելու նպատակով, համենայն դեպս նրանք տեղյակ չեն եղել թրաֆիքինգ իրականացնողների մտադրությունների և մուտքի երկրների իրական շահագործման հանգամանքների պայմանների մասին: Հայտնվելով այդ երկրներում, զոհերից վերցվել են իրենց ճանապարհորդական փաստաթղթերը, նրանց փակել են հյուրանոցների սենյակներում և ասել են, որ պիտի «հետ վերադարձնեն» իրենց ծախսերը: Ձոհերի կողմից նախնական համաձայնությունը դժվարացնում է իշխանությունների կողմից թրաֆիքինգի դեպքերի բացահայտումը: Մեծ մասամբ, զոհերը հեռանում են իրենց երկրից վավեր փաստաթղթերով, որից հետո թրաֆիքինգ իրականացնողները տարանցիկ երկրում նրանց տալիս են կեղծ փաստաթղթեր: Ըստ տեղական դիտորդների, թրաֆիքինգ իրականացնողները երբեմն խուսափում են իրենց զոհերի հանդեպ բռնություն ցուցաբերելուց և օգտագործում են ավելի փափուկ վերահսկման մեթոդներ: Կան հաղորդագրություններ, որ թրաֆիքինգ իրականացնողները կանանց քաջալերել են

⁶³ Հայաստան/ TIER 2 - WATCH LIST/ քաղվածք Մարդկանց Թրաֆիքինգ պետ դեպարտամենտի զեկույցից, առաջին պարբերություն; <http://www.state.gov/g/tip/rls/tiprpt/2009/123135.htm>

⁶⁴ Panarmenian.net լուրերի գործակալություն <45 թրաֆիքինգի զոհեր են գրանցված Հայաստանում 2009 թվականին> 27.10.2009, <http://www.panarmenian.net/news/eng/?nid=38470>

⁶⁵ Հարցազրույց <Ժողովրդավարությունն այսօր> հի-ի ծրագրի ղեկավար Հասմիկ Էդիլյանի հետ, անցկացված 2008 թվականի դեկտեմբերին Երևանում

դառնալ հավաքագրողներ՝ խոստանալով, որ նրանք կարող են ստանալ տոկոսներ իրենց հավաքագրման գումարներից:⁶⁶

2.3.4. Պաշտպանության արդյունավետությունը/կարողություններ, փորձառություն, կոռուպցիա, և այլն/

2.3.4.1. Ոստիկանություն

2003 թվականի հունվարի 1-ից ՀՀ Ներքին գործերի նախարարությունը վերակազմավորվեց և դարձավ ՀՀ Ոստիկանություն:

Ծանուցում:

- 2006 թվականից սկսած ոստիկանություն կատարած բոլոր զանգերը գրանցվում են
- Հայաստանի տարածքում Ոստիկանության հեռախոսահամարն է՝ 1.02: Չանգերն անվճար են

ՀՀ կառավարությունը ջանքեր է գործադրում արդիականացնելու և վերակառուցելու ոստիկանության և անվտանգության ուժերը: Համենայն դեպս, անկախ բոլոր գործադրվող բարեփոխումներից, ՀՀ ոստիկանության աշխատանքը դեռևս քննադատվում է:

Զեկույցներ Հայաստանում ոստիկանության աշխատանքների մասին`

US Department of State (USDOS); Armenia Country Reports on Human Rights Practices 2008, <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2008/eur/119066.htm>
Freedom House, Nations in Transit 2008, Armenia, <http://www.freedomhouse.org/template.cfm?page=47&nit=444&year=2008>,
Human Rights Watch, Report 2008-Armenia, 14 January 2009, <http://www.hra.am/en/issue/19237>

2.3.4.2. Արդարադատություն

❖ Ղատարաններ

ՀՀ-ում արդարադատությունը կառավարվում է բացառապես դատարանի միջոցով համաձայն ՀՀ սահմանադրության և օրենքների:

- ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
- մասնագիտացված դատարաններ/վարչական դատարան, 3 քաղաքացիական դատարան, 3 քրեական դատարան/
- վճռաբեկ դատարան/վճռաբեկ քաղաքացիական և վճռաբեկ քրեական/
- վերաքննիչ դատարան

Նշենք որ ՀՀ պաշտոնական լեզուն հայերենն է: ՀՀ քաղաքացիական ընթացակարգերի օրենսգրքի 7-րդ հոդվածը նույնպես նշում է, որ քաղաքացիական ընթացակարգերի հետազոտությունները արվում են հայերենով:

Ավելի մանրամասն դատական համակարգի, դիմումների և բողոքների ներկայացման վերաբերյալ կարելի է ստանալ <http://www.court.am> կայքից

⁶⁶ ԱՄՆ Պետ Դեպարտամենտ; Մարդու Իրավունքների պրակտիկայի Հայաստանի Զեկույց 2008, իրականացված Ժողովրդավարություն, Մարդու Իրավունքներ և Աշխատանք Բյուրոյի կողմից 2009թ-ին, հոդված 5, Խտրականություն, Հասարակական պարսավանք և Մարդկանց Թրաֆիքինգ; Մարդկանց Թրաֆիքինգ, <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2008/eur/119066.htm>

2005 թ հայաստանյան իշխանությունների կողմից կատարված որոշ առանցքային կանոնադրական փոփոխությունները նպատակ ունեին հզորացնել արդարադատությունը: Բայց պրակտիկայում շատ քիչ առաջընթաց նկատվեց:

Շատ զեկույցներ նշում են, որ արդարադատությունը մնում է թույլ և չունի անկախությունը Հայաստանում: Չնայած Հայաստանի սահմանադրությունը ապահովում է հիմնարար քաղաքական, քաղաքացիական և մարդու իրավունքներ, բայց կան էական խոչընդոտներ նրանց արդյունավետ պաշտպանելու համար: Դատարաններում իրենց իրավունքները պաշտպանելու բնակչության վստահությունը շատ ցածր է :

Ձեկույցներ Հայաստանում արդարադատության համակարգի մասին

American Bar Association's Central and East European Law Initiative (ABA/CEELI), http://www.abanet.org/rol/publications/regional_publications.shtml#armenia, accessed in January 2010

Freedom House, Nation in Transit 2008, Judicial Framework and Independence (Score: 5.25), first paragraph, http://www.freedomhouse.org/inc/content/pubs/nit/inc_country_detail.cfm?page=47&nit=444&year=2008&pf
Freedom House, Freedom in the World - Armenia (2008), http://www.freedomhouse.org/inc/content/pubs/fiw/inc_country_detail.cfm?year=2008&country=7343&pf

❖ Պետական տուրքի չափերը հայցերի և բողոքարկումներ դատարան ներկայացնելու համար⁶⁷

Հայցադիմումների և երրորդ կողմի մասնակցությունը առանջին հայցով դիմելու դեպքում

- սեփականության հայց-հայցի արժեքի 2%-ը
- ոչ-սեփականության հայց-4000 ՀՀ դրամ/ 7.30Եվրո/
- հատուկ հետախուզական դեպքերի հայցադիմում -3000ՀՀ դրամ/ 5.47Եվրո/
- հայցադիմում՝ իրավական կարևորության փաստը հաստատելու համար- հիմնական վճարման կրկնապատիկը -2000ՀՀ դրամ/ 3.65 Եվրո/

Հայցերի համար, որոնք դեմ են առանջին ատյանի դատարանի դատավճռին կամ որոշմանը

- սեփականության հայց -հայցի արժեքի 3%-ը
- ոչ-սեփականության հայց -10 000 ՀՀ դրամ /18.24Եվրո/
- հատուկ հետախուզական դեպքերի հայցադիմում -8 000ՀՀ դրամ/ 14.60 Եվրո/

Դատարանի վճիռների և որոշումների դեմ վճարելի հայցերի համար

- սեփականության հայցերի դեպքում- հայցի արժեքի 3%-ը, բայց ոչ պակաս քան 10 000 ՀՀ դրամ/ 18.24Եվրո/ և ոչ ավել քան 1 000 000 ՀՀ դրամ/1824.45 Եվրո/
- ոչ-սեփականության հայցերի դեպքում- 20000 ՀՀ դրամ/ 36.49 Եվրո/
- հատուկ դեպքերում-10 000 ՀՀ դրամ /18.24Եվրո/

❖ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

2008 թվականին⁶⁸ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ներկայացված բողոքների մեծ մասը ուղղված էին ոստիկանության դեմ /259 գրավոր բողոք/

⁶⁷ ՀՀ Օրենք Պետական տուրքի մասին

դատարանների դեմ/157 գրավոր բողոք/, / և Երևանի քաղաքապետարանի դեմ /97 գրավոր բողոք/: Բոլոր բողոքների հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր իրավունքների խախտումները վկայակոչվել են:

2008թ. և նախկին տարիների Պաշտպանի գրասենյակի գործունեությունը, շրջաններից ստացված բողոքների սակավությունը, համեմատած մայրաքաղաքից ստացվող դիմումների, ցուցանիշ չէ շրջաններում մարդու իրավունքների ավելի լավ պաշտպանության; ավելին, դա մարզերի բնակչության օրենքի մերժման պատճառով է, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի և պաշտպանության հանրային գործակալությունների անտարբերության պատճառով առաջացած, ինչպես նաև պայմանավորված այն փաստով, որ պաշտպանի գրասենյակը հասանելի չէ մարզային բնակչությանը:

Այստեղ կարելի է գտնել օգտակար ինֆորմացիա թե ինչպես կարելի է դիմել մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես ձևակերպել բողոքը, ինչպես ՄԻՊ-ը կարող է վերականգնել իրավունքը և այլն

<http://www.ombuds.am/main/en/8/14/> and <http://www.ombuds.am/main/en/8/15/>.

All reports of RA ombudsman are presented in this website: <http://www.ombuds.am/main/en/10/31/>, last accessed in January 2010

❖ ՀԿ-ներ

Սախարովի անվան Մարդու Իրավունքների Պաշտպանության Կենտրոնը տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն բոլոր քաղաքացիներին, ուստի բոլոր վերադարձողները անհրաժեշտության դեպքում կարող են դիմել նրանց:

- Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն, հասցեն՝ ք. Երևան 0009, Սարմենի 1, հեռ՝ +(374)(10) 542936, 561505, 561560, էլ.փոստ info@sakharovcenter.org; կայք՝ <http://www.sakharovcenter.org/html/welcome.html>
- Շիրակի մարզային մասնաճյուղ՝ ք.Գյումրի, Մ. Սկրտչյան 1, +(374)(312)36918; 33450 էլ.փոստ shirak@sakharovcenter.org
- Գեղարքունիքի մարզային մասնաճյուղ՝ հասցեն՝ ք. Գավառ, Գ. Լուսավորչի 14/27, հեռ.+(374)(264)26880, էլ.փոստ՝ geggharkunik@sakharovcenter.org
- Սյունիքի մարզային մասնաճյուղ: Գորիս, Ավանգարդի 4, հեռ: +(374)(284)25077, էլ.փոստ syunik@sakharovcenter.org

3. Սոցիալական ապահովագրություն և վերաինտեգրում

3.1. Վերաինտեգրման և վերադարձի հնարավորություն չունեցող տարածքներ / օրինակ, բնական աղետներ, երաշտ և այլն/

Բնական աղետներ: Բնական աղետների տեսակետից Հայաստանում չկան վերադարձի հնարավորություն չունեցող հատուկ շրջաններ: Հայաստանի ամբողջ տարածքը աշխարհագրական դիրքի մեծ զանազանության պատճառով գտնվում է աղետների /երկրաշարժեր, սողանքներ, ջրհեղեղ, երաշտ, ձմեռային և ամառային սառնամանիքներ,

⁶⁸ ՀՀ Մարդու Իրավունքների պաշտպան, 2008 թվականի Մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում տարեկան զեկույցի, կատարված 2009 թվականին <http://ombuds.am>

կարկուտ, հողմ և այլն/ ռիսկի տակ: Ամեն տարի նրանք գյուղատնտեսությանը և տնային տնտեսություններին պատճառում են զգալի վնասներ:
Բայց ընդհանուր առմամբ Հայաստանը համարվում է երկրաշարժի և սողանքների ենթակա երկիր:

Սողանքները լայնորեն տարածված են Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, բացառությամբ Արարատյան դաշտավայրի: Ներկայումս Հայաստանի ամբողջ տարածքի 4.1%-ը գտնվում է սողանքների ազդեցության տակ: Հայաստանի 960 բնակավայրերից 233-ը վնասված են սողանքներից, իսկ 100 բնակավայրում նկատվում են սողանքների զգալի ակտիվացում:

Վերահնտեզրման պակաս հնարավորություններ ունեցող մարզեր/համայնքներ: Կան տարածքներ/ համայնքներ, որոնք համեմատած մյուսների հետ ունեն վերահնտեզրման ավելի պակաս հնարավորություններ՝ որոշ հանգամանքների պատճառով/ աշխարհագրական դիրք, համայնքային ենթակառուցվածքների պակաս և այլն/:

- **Մարզեր/** վարչական տարածքներ/ համեմատած Երևանի հետ
- **փոքր քաղաքներ** համեմատած գյուղական տարածքների և Երևանի հետ
- **աղետի գոտի/1988թ.** երկրաշարժի գոտի/, սահմանամերձ և բարձր-լեռնային համայնքներ

խոցելի սոցիալական խմբեր: Ինտեզրման և վերահնտեզրման հնարավորությունները ավելի շատ կախված են կարիքավոր որոշ սոցիալական խմբերի խոցելիությունից: Նրանք ավելի պակաս հնարավորություն ունեն վերահնտեզրվելու իրենց խոցելիության պատճառով:

3.2. Բնակարանային հարցեր, կեցություն

3.2.1. Սեփականության փոխարկում կամ փոխհատուցում/ նախկին հակամարտության և աղետի գոտիներում/

Երկրաշարժի գոտում:1988 թվականի դեկտեմբերին Հայաստանի հյուսիսային շրջանները տուժեցին աղետալի երկրաշարժից: 25000 մարդ զոհվեց և մոտավորապես 100 000 տնային տնտեսություններ մնացին առանց տանիքի: Շատ երկրներ օգնության ձեռք մեկնեցին վերականգնելու ավիրված քաղաքներն ու գյուղերը: Հայաստանը խորհրդային Միության հանրապետություններից մեկն էր և ղեկավարվում էր Մոսկվայից: Խորհրդային կառավարությունը խոստացավ կառուցել տները և վերականգնել աղետի գոտին 3 տարում և փոխհատուցել կորուստները: Բոլոր նախկին խորհրդային հանրապետությունները մոբիլիզացվեցին վերականգնելու աղետի գոտին: Բայց խորհրդային Միության անկումից հետո շինարարները տարբեր խորհրդային հանրապետություններից հեռացան, որի արդյունքում բազմաթիվ շենքեր մնացին անավարտ և ժամանակավոր կացարանները կանգուն են մինչ օրս:

Քանի որ Շիրակի և Լոռու մարզում բնակչության մեծ մասը կորցրել էին տները, սովետական կառավարությունը նրանց հատկացրեց ժամանակավոր կացարաններ/ դոմիկներ/⁶⁹, որոնք բերված էին տարբեր սովետական հանրապետություններից և արտասահմանից:

Հատուկ հանձնաժողովները գնահատեցին կորստի չափերը և գրանցեցին բնակչության մնացած սեփականությունը: Մարդիկ, որոնք կորցրել էին իրենց տները կամ այլ սեփականություն, ստացան ֆինանսական աջակցություն կախված ընտանիքի անդամների քանակից:

⁶⁹ ՀՀ արտակարգ Իրավիճակների Նախարարության հարցման հիման վրա, կատարված 2008 թվականի փետրվարի 11-ին, <Առաքելություն Հայաստան> հկ-ի կողմից, Երևան

Մինչև 1991-1992 թվականները նոր բնակարաններ կառուցվեցին և բաժանվեցին աղետի գոտում: Բնակչությունը, որ կորցրել էր տները դասակարգվեց համաձայն որոշ չափանիշների:

Շինարարությունը շարունակվեց 1992-1999թթ. ընթացքում, բայց պրոցեսը շատ դանդաղ էր:

1998 թվականին Հայաստանում Համաշխարհային Բանկի «քաղաքաշինական զարգացման ծրագիրը» ընդգրկեց ֆոնդեր Հայաստանի կառավարության համար «Աղետի գոտում նոր տնաշինական ռազմավարություն» մշակելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար:

Ուրբան Ինստիտուտը կատարեց խորքային ուսումնասիրություն և մշակեց հիմնովին նոր մոտեցում ընտանիքներին բնակարանների փոխհատուցման կառավարության պարտականությունն իրականացնելու համար: Նպատակը քաղաքի կենտրոնները վերակառուցելով անօթևան բնակչությանը մշտական բնակություն ապահովելն էր: Ռազմավարության էությունը սկզբունքորեն առնչվում էր նոր տնաշինության այլընտրանքին նաև:

Ռազմավարության մեջ ներառված նոր գաղափարը շուկայում առկա բնակարանների /ազատ կամ չօգտագործվող/վերաբաշխումն էր: Սրան պետք էր հասնել բնակարանային վկայականներ ծրագրի միջոցով, որը հայտի է որպես Բնակարանի Գնման Վկայական /ԲԳՎ/ ծրագիր:

3.2.2. Տնաշինական ծրագրեր վերադարձի շրջաններում

Հայաստանում ընդհանուր բնակարանային խնդիրները օրենքով չեն կարգավորվում: Ներկայումս կան ծրագրեր միայն աղետի գոտու/ հատկապես Գյումրի քաղաքի/ և փախստականների համար:⁷⁰

Բնակարանային խնդիրները լուծելու համար Հայաստանում կան 2 պետական ծրագրեր:⁷¹

- Ընտանիքներ, որոնք անօթևան են դարձել երկրաշարժի պատճառով
- Փախստական ընտանիքներ

2001 թվականի հուլիսի 27-ին ՀՀ թիվ 203 օրենքով Ազգային ժողովը հաստատեց երկրաշարժի գոտու բնակարանային խնդիրների լուծման համար համալիր ծրագիր: Համաձայն այս օրենքի պետությունը պարտավորություն է ստանձնել Շիրակի, Լոռու , Արագածոտնի և Տավուշի մարզերի բնակարանային խնդիրներ ունեցող 14920 ընտանիքների ապահովել տներով:

2001-2008թթ. 13347 ընտանիքներ ստացան տներ, որոնք ֆինանսավորված էին տարբեր աղբյուրներից:

- Պետական միջոցներ
- ԱՄՆ Կառավարություն
- Լինսի հիմնադրամ
- Հայաստան Համահայկական Հիմնադրամ
- Հանթսման հիմնադրամ
- Համայնքային ռեսուրսներ

2008 թվականի հունիսի 12-ին կառավարության թիվ 23 որոշման համաձայն ընդունվեց հայեցակարգ լուծելու այն անձանց բնակարանային խնդիրները, ովքեր մինչ օրս չեն ստացել բնակարաններ: Համաձայն այս հայեցակարգի մինչև 2013 թվականը 6930

⁷⁰ Ժամանակավոր կացարան բառի ռուսերեն տարբերակը

⁷¹ Օրենքները և որոշումները, որոնք կարգավորում են բնակարանաշինարարական ծրագրերը Հայաստանում /հայերեն լեզվով/ տեղադրված են www.arlis.am ինտերնետային կայքում

ընտանիք աղետի գոտուց պետք է բավարարվեն բնակարաններով, համաձայն գրանցման ցուցակների: Տները քաղաքային և գյուղական համայնքների համար են:

❖ **2009 թվականի տնաշինական ծրագրերը Աղետի Գոտու համար**

Կան երկու տեսակի ծրագրեր աղետի գոտու համար

- բնակարանի գնման վկայական/ԲԳՎ
- տնաշինական ծրագրեր

ԲԳՎ-ն տրվում է Շիրակի, Լոռու մարզի բնակիչներին Գյումրի, Վանաձոր, Մարալիկ, Ստեփանավան, Գուգարք, Դիլիջան քաղաքներում և Լոռու և Արագածոտնի մարզի մի քանի այլ գյուղերի:

Բնակարանաշինական ծրագրեր

- Ստեփանավան-կիսասարք տների ավարտում
- Ծաղկահովիտ-բնակարանների վերակառուցում
- Մարալիկ- շենքերի ավարտում

❖ **2009 թվականի տնաշինական ծրագրերը փախստականների համար**

Փախստականների համար բնակարանաշինությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից: 2009 թվականին 64 փախստական ընտանիքներ պիտի ստանան բնակարաններ:

Երկու տեսակի ծրագրեր են առկա:

- Բնակարանի Գնման Վկայական/ԲԳՎ/ Տավուշի և Վայոց Ձորի մարզերում 14 ընտանիքների համար
- Բնակարանաշինական ծրագրեր Երևանի Սուլդովական 70 և Տերյան 107 հասցեներում 50 ընտանիքների համար

Ինֆորմացիան վերցված է երկրաշարժի պատճառով անօթևաններին և փախստական ընտանիքներին բնակարաններով ապահովման մասին 2009 թվականի փետրվարի 18-ի տեղեկանքից, Քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայքից, www.mud.am

Փախստականների տների համար դիմելու պրակտիկ քայլերը: Եթե փախստականը ապահովված չէ ապաստանով, հանրակացարանով կամ տնով, առաջին քայլը դա Տարածքային Կառավարման Նախարարության Միգրացիայի Գործակալություն դիմելն է: Նա պիտի ապացուցի իր փախստականի կարգավիճակը: Նրա փաստաթղթերը կստուգվեն Միգրացիայի գործակալությունում առկա տվյալների բազայում⁷² և դրանից հետո նա կարող է գրանցվել որպես շահառու և ներառվել գրանցման ցուցակներում:

Միգրացիոն Գործակալություն⁷³

ք. Երևան 375033,

Ղ. Քոչար 4,

Հեռ` (374)(10)225865; (374)(10) 22 5664

Ֆաքս` (374)(10) 22 58 24,

Էլ փոստ` migration@dolphin.am

Ինտերնետային կայք` www.dmr.am

⁷² ՄԱԿ-ի ՓՀԳՀանձնակատարը ֆինանսավորել է Միգրացիայի Գործակալությանը տվյալների բազա պատրաստելու համար, որը ներառում է շահառուներին, նրանց բնակության վայրը, բնակավայրի տեսակը և այլն

⁷³ Տեղեկատվությունը տրամադրված է Միգրացիայի Գործակալության Ապաստան Հայցողների և Փախստականների հարցերով զբաղվող վարչության պաշտոնյաների կողմից

3.2.3. Տնաշինության հնարավորությունները

3.2.3.1. Հողի սեփականություն ձեռք բերելու պայմանները⁷⁴

Հողի նկատմամբ մարդկանց իրավունքը բխում է այնպիսի գործարքներից, ինչպիսին է պետական կամ համայնքնային հողերի սեփականաշնորհումը, ժառանգումը, օտարում/զնուումը, նվիրատվությունը և այլն: Բայց Հայաստանում ներկայումս անշարժ գույք ձեռք բերելու ամենատարածված ձևը առքուվաճառքի գործարքն է:

Անհրաժեշտ փաստաթղթեր հողային սեփականություն /կամ այլ անշարժ գույք/ ձեռք բերելու համար:⁷⁵

- Անձը հաստատող վավեր փաստաթուղթ, օրինակ՝ անձնագիր
- Գույքի սեփականության վկայական
- Տեղեկանք անշարժ գույքի Կադաստրից, պարտքերի բացակայությունը հավաստող
- Գնման պայմանագիր նոտարական վավերացմամբ
- Տեղեկանք քաղաքապետարանից տանը գրանցված անձանց վերաբերյալ
- Նոտարի կողմից հաստատված այն անձանց համաձայնությունը, ովքեր ունեն որոշ իրավունքներ բնակարանի հետ կապված/ կին, ամուսին, երեխաներ, վարձակալ/
- Խնամակալ անձանց համաձայնությունը, եթե անչափահասներ են գրանցված բնակարանում

Գործարքից հետո Անշարժ Գույքի Գրանցման տեղական գրասենյակ/ կադաստր ներկայացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նոր տիրոջ դիմումի հետ մեկտեղ ընդունվում են նրա իրավունքը որպես սեփականատեր գրանցելու համար: Տեղական գրասենյակները հավաստում են ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Եթե նրանք համապատասխանում են օրենսդրությանը, ապա սեփականության իրավունքը գրանցվում է, եթե ոչ՝ փաստաթղթերը վերադարձվում են դիմողին համապատասխան ցուցումներով:

Սահմանափակումներ: *Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի այն անձինք, ովքեր ՀՀ օրենսդրության համաձայն համարվում են անկարող, ինչպես նաև 18 տարեկանից փոքր երեխաները, չեն կարող մտնել գործարքների մեջ, որոնք պահանջում են պետական գրանցում կամ նոտարական վավերացում/տվյալ դեպքում՝ հողի գույքի ձեռքբերումը:⁷⁶ Համաձայն ՀՀ սահմանադրության 31/4/ հոդվածի, միայն ՀՀ քաղաքացիները կարող են լինել հողի սեփականատերեր:*

3.2.3.2. Համապատասխան մոտավոր գները/ հող, շինանյութ, և այլն/

Հողի գները: Մայրաքաղաք Երևանում և նրա շրջակա բնակավայրերում հողի արժեքը ավելի բարձր է, քան մարզերում/ շրջաններում/:

Ներկայացվում են 2009թ. շուկայական գները 1000 քմ հողի համար համաձայն ՀՀ կառավարության պետական գրանցման գործակալության⁷⁷:

⁷⁴ Կան տարբեր տեսակի հողեր, որոնք բնորոշվում են ՀՀ հողային Օրենսգրքով, և 3.2.3 կետում ներկայացված ինֆորմացիան վերաբերում է հողերին, որոնք ունեն բնակելիության նշանակություն

⁷⁵ <Ակցեռն> անշարժ գույքի գործակալություն, հիմնված <Հայաստանի օրենսդրություն: նկատառումներ որոշ անշարժ գույքի խնդիրներին> հոդվածի վրա: Անհրաժեշտ փաստաթղթեր առուվաճառքի գործարկ իրականացնելու համար <http://realakcern.am/eng/temp/legal.html>,

⁷⁶ ՀՀ քաղաքացիական Օրենսգիրք, հոդված 29-32

⁷⁷ ՀՀ կառավարության ենթակայության պետական գրանցման գործակալություն, Անշարժ գույքի շուկան Հայաստանում 2009թվականի առաջին եռամսյակում, կատարված 2009 թվականին <http://www.cadastre.am/Hodvac-1eramsyak-2009.pdf>

Մարզեր	ՀՀ դրամ	Եվրո
Արագածոտն	60 000-22 200 000	117.49-43470.60
Արարատ	126 100-25 000 000	246.92-48953.38
Արմավիր	100000-26 528 400	195.81-51946.19
Գեղարքունիք	71 300-5 000 000	139.62-9790.68
Լոռի	45 300-14 083 300	88.70-27577.00
Կոտայք	117 700-35 353 500	230.47-69226.33
Շիրակ	40 800-18 750 000	79.89-36715.03
Սյունիք	67 900-2 638 900	132.96-5167.32
Վայոց Ձոր	96 700-7 659 600	189.35-14998.53
Տավուշ	74 100-14 423 100	145.10-28242.38

Որոշ գներ, երբ հողի սեփականությունը գրանցում են Անշարժ գույքի կադաստրում⁷⁸

- Կադաստրի պետական գրասենյակից տեղեկանք ստանալու համար: 7000 ՀՀ դրամ կամ 12.77 Եվրո
- Հողի առք ու վաճառքի պայմանագրի նոտարական հաստատման համար: 5000ՀՀ դրամ կամ 9.12 Եվրո պետ տուրք/ներառյալ ծառայության վճարը
- Հողի սեփականության իրավունքը գրանցելու համար: 10000 ՀՀ դրամ կամ 18.24 Եվրո/ներառյալ պետք տուրքը/

Եթե կարիք կա հողի չափագրության կամ գնահատման, ապա գները հետևյալն են:

- հողի չափագրություն/ 100 քմ հողի համար-300 ՀՀ դրամ կամ 0.55 Եվրո
- հողի գնահատում/հողի յուրաքանչյուր միավորի համար 350 ՀՀ դրամ կամ 0.64 Եվրո/
- չափագրման աշխատանքներ: անշարժ գույքի հատակագծում համաձայն որոշված սանդղակի /A3, A4 ձևաչափ/ մեկ էջը 1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո

3.2.3.3. Հնարավոր վարկերը, սուբսիդիաները և այլ տեսակի օգնությունները

Վարկեր: Հայաստանում հնարավոր է բանկերից և վարկային կազմակերպություններից⁷⁹ տանալ վարկ՝ հող կամ այլ անշարժ գույք ձեռք բերելու համար: Բանկերից կախված, փոխառություններ տրվում են բնակարան/տուն գնելու կամ վերանորոգելու համար:

Համեմայն դեպս, ոչ բոլորը կարող են ստանալ հիպոթեքային վարկեր բանկերից: Հիպոթեքային վարկեր կարող են ձեռք բերել միայն Հայաստանի բնակչության շատ աննշան մասը, որովհետև միայն քչերը կարող են ունենալ երկարատև, կայուն աշխատանքային հեռանկար: Բանկերը պահանջում են, որ վարկառուն լինի 18-ից բարձր տարիքի բնակիչ, կայուն եկամտով, որն ընդունելի է բանկի կողմից/ մշտական աշխատանք, բիզնես և այլն/

Կապված գլոբալ տնտեսական ճգնաժամի հետ բանկերը զգուշանում են տրամադրել հիպոթեքային վարկեր:

«Հաբիթաթ մարդկությանը» բնակարանային ծրագիրը Հայաստանում: «Հաբիթաթ մարդկությանը բնակարանային ծրագիրը Հայաստանում միտված է տրամադրել

⁷⁸ Համաձայն ՀՀ պետական տուրքի մասին թիվ 186 օրենքի և ՀՀ կառավարության ենթակայության տակ գտնվող Անշարժ գույքի գրանցման գործակալության կողմից ընդունված թիվ 89 կարգի, որը հավաստում է պետական գրանցման, սեփականության, սեփականության իրավունքներին և սահմանափակումներին վերաբերող տեղեկատվության տրամադրման գնացուցակը

⁷⁹ Առավել մանրամասն: Մեդիամաքս լուրերի գործակալություն, Հայաստանի Բանկերը, Հիպոթեք http://banks.am/en-loans_hypotheke.html

բնակարանային լուծումներ այն ընտանիքների համար, որոնք ապրելու և բարգավաճելու համար կարիք ունեն պարզ, արժանավայել տարածքի: Հատկապես մենք աշխատում ենք ցածր եկամտով ընտանիքների հետ, նրանց տները կառուցելու և վերանորոգելու համար, տալով նրանց հնարավոր ամտոկոս վարկեր կամ տների բարելավման փոխառություններ: Քանի որ ընտանիքները նույնպես նվիրաբերում են «քաղցր հավասարության» հարյուրավոր ժամեր մինչև իրենց տունը կկառուցվի, Հաբիթաթ մարդկությանը մոդելը ինքնօգնություն է կամ ձեռքերը վերև և ոչ թե ձեռքերը դուրս:⁸⁰

Հարցերի դեպքում կարելի է դիմել Հաբիթաթ մարդկությանը հայաստանյան գրասենյակին, Երևան, Հանրապետության 62, սենյակ 47, հեռ.374 10 54 30 01:

3.2.4. Անշարժ գույք ձեռք բերելու հնարավորություններ:

3.2.4.1. Իրավական պայմաններ

Անշարժ գույք ձեռք բերելու պայմանները նույնն են, ինչ որ հող ձեռք բերելու դեպքում: /տես 3.2.3.1/.

3.2.4.2. Հնարավոր խոչընդոտները որոշ խմբերի համար/ օրինակ՝ միայնակ կանայք, փոքրամասնություններ և այլն/

Միակ սահմանափակումը 18 տարեկանից ցածր երեխաների համար է և այն անձանց, ովքեր ունեն սահմանափակ կարողություններ կամ անկարող են համաձայն ՀՀ օրենսդրության: Նույնիսկ երբ 18 տարեկանից փոքր երեխան ժառանգում է անշարժ գույք, նա կարող է օգտվել սեփականության իրավունքից 18 տարին լրանալուց հետո: Մինչ այդ, անշարժ գույքը տնօրինվում է ծնողների կամ օրինական ներկայացուցիչների կողմից:

3.2.4.3. Համապատասխան մոտավոր գները

Ինչպես հող ձեռք բերելու դեպքում, բնակարանների կամ տների գները մայրաքաղաք Երևանում ավելի բարձր է, քան մնացած մարզերում:

2009 թվականին Երևանում բազմաբնակարան շենքերի 1 քմ տարածքի միջին շուկայական գները՝ ⁸¹համաձայն ՀՀ կառավարության Պետական գրանցման գործակալության

Համայնք	ՀՀ դրամ	Եվրո
Կենտրոն	499200	977.50
Արաբկիր	365000	714.72
Քանաքեռ	283900	555.91
Նոր-նորք	251400	492.28
Ավան	252500	494.43
Էրեբունի	266100	521.06
Շենգավիթ	254200	497.76
Դավթաշեն	278600	545.54
Աջափնյակ	246500	482.68
Մալաթիա-Սեբաստիա	237900	465.84
Նուբարաշեն	151800	297.24

⁸⁰ Առավել մանրամասն տես Հաբիթաթ Հայաստանի Մարդկությանը ինտերնետային կայքում <http://www.habitat.org/cd/frame/frameset.aspx?r=3&url=www.habitat.am>

⁸¹ ՀՀ կառավարության Պետական գրանցման գործակալություն, Անշարժ գույքի շուկայական Հայաստանում 2009 թվականի առաջին եռամսյակում

Մարզերի որոշ քաղաքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ տարածքի համար միջին շուկայական գները

Քաղաք	ՀՀ դրամ	Եվրո
Աշտարակ	140200	274.53
Ապարան	38600	75.58
Արտաշատ	94600	185.24
Մասիս	144700	283.34
Վաղարշապատ	171400	335.62
Սևան	98700	193.27
Վանաձոր	96300	188.57
Արովյան	149100	291.96
Հրազդան	67500	132.17
Գյումրի	112300	219.90
Կապան	102400	200.51
Գորիս	119900	234.78
Իջևան	150300	294.31

Անշարժ գույքի կադաստրում տների/ բնակարանների գրանցման որոշ գներ:⁸²

- Կադաստրի պետական գրասենյակից տեղեկանք ստանալու համար, 7000 դրամ կամ 12.77 Եվրո
- Առք ու վաճառքի պայմանագրի նոտարական հաստատման համար 5000դրամ կամ 9.12 Եվրո պետ տուրք, /ներառյալ ծառայության վճար/
- Անշարժ գույքի սեփականության իրավունքը գրանցելու համար-10000 դրամ կամ 18.24 Եվրո Պետռեգիստրի վճար / ներառյալ ծառայության վճար/

Եթե կարիք կա չափագրության և գնահատման, գները հետևյալն են:

- շենքի չափագրություն- 1 քմ շենքի համար 20 դրամ կամ 0.04 Եվրո
- շենքի տարածքի ուսումնասիրություն, տարածքից կախված 2500-60000դրամ կամ 4.56-109.47 Եվրո
- չափագրման աշխատանքներ: անշարժ գույքի հատակագծում համաձայն որոշված սանդղակի /A3, A4 ձևաչափ/ մեկ էջը 1000 դրամ կամ 1.82 Եվրո
- շենքի գնահատում: յուրաքանչյուր շին. միավորի համար 350 դրամ կամ 0.64 Եվրո

3.2.4.4. Հնարավոր վարկեր և սուբսիդիաներ

Վարկեր: Հայաստանում հնարավոր է բանկերից/ վարկային կազմակերպություններից ստանալ վարկեր տուն/բնակարան ձեռք բերելու համար/մանրամասն տես կետ 3.2.3.3./

3.2.5. Հնարավորություններ տուն կամ բնակարան վարձելու

3.2.5.1. Հնարավոր խոչընդոտներ որոշ խմբերի համար /օրինակ՝ միայնակ կանայք, փոքրամասնություններ և այլն/

Համաձայն ՀՀ օրենսդրության միակ սահմանափակումը մինչև 18 տարեկան երեխաների համար է և այն անձանց համար, ովքեր ունեն սահմանափակ կարողություններ կամ անկարող են համաձայն ՀՀ օրենսդրության: Բայց տների վարձակալության դեպքում

⁸² Համաձայն պետ տուրքի մասին թիվ 186 օրենքի և ՀՀ կառավարության Անշարժ Գույքի գրանցման գործակալության թիվ 89 կարգի

շատերը չեն կազմում գրավոր պայմանագրեր , ուստի 17 տարեկանից փոքր երեխան/ օրինակ ուսանողը/պրակտիկոսներն նույնպես կարող է վարձակալել բնակարան:

3.2.5.2. Համապատասխան մոտավոր գներ

Երևանում բնակարանի վարձակալության ամսեկան գումարը սկսվում է 45000-50000 դրամից կամ 82.10-91.22 Եվրոյից , այլ քաղաքներում գները սկսվում են 20000 դրամից/36.49 եվրո/:

3.2.5.3. Հնարավոր սուբսիդիաներ

Հայաստանում հատուկ սուբսիդիաներ չկան տուն կամ բնակարան վարձելու համար:

3.2.6. Այլ ժամանակավոր բնակարանային հնարավորություններ/ ապաստարաններ, հյ-ներ , եկեղեցի, և այլն/

Անտունների համար: Կա ժամանակավոր կացարան⁸³ կցված թիվ 1 Ծերերի տանը: Այն գործում է 2006թ-ից և գտնվում է Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության ենթակայության տակ: Կացարանը 18-ից բարձր տարիքի մարդկանց համար է, որոնք չունեն բնակվելու տեղ և գտնվում են դժվար կյանքային իրավիճակում: Այս կացարանում մարդիկ ստանում են սոցիալական, հոգեբանական, բժշկական և իրավական աջակցություն: Նրանց տրվում է 3 անգամ սնունդ և նաև ստանում են անձնական հիգիենիկ պարագաներ, ինչպես նաև հագուստ: Մարդիկ այստեղ կարող են մնալ 2 ամսից ոչ ավել և այս կացարանը կարող է ապաստանել մինչև 60 անձի:

Թրաֆիքինգի զոհերի համար: «Գոյություն ունի ապահով, գաղտնի ապաստարան: Այն փոքր, երկհարկանի, կահավորված հաստատություն է, որը տրամադրում է բժշկական, հոգեբանական , աշխատանքային և իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև վերաինտեգրման ծառայություններ թրաֆիքինգի զոհերի համար: Վերականգնման և աջակցության կենտրոնը առաջարկում է զոհերին ապահով տարածք, որտեղ հնարավոր է կազմակերպել վերականգնումը: Այն կարող է տեղավորել 8-10 զոհ և այն կազմակերպում է տարաբնույթ սոցիալական գործողություններ:⁸⁴ Այս կացարանում աշխատում է տեղական « Դեմոկրատիան այսօր» հյ-ն Հայկական Ամբորի հետ սերտ համագործակցությամբ:

Անտուն երեխաների համար: Անտուն երեխաների կենտրոնը գործում է «Հայ օգնության Ֆոնդ» հյ-ի իրավասության տակ և տեղավորված է Երևանում հետևյալ հասցեում: Կարապետ Ուլնեցու 64, հեռ. 374 10 24 01 50: Այս կենտրոնը անտուն երեխաների միակ կենտրոնն է Հայաստանում: Այստեղ ընդունվում են Հայաստանի ամբողջ տարածքից և Լեռնային Ղարաբաղից ցանկացած 3-ից 18 տարեկան երեխա: Բոլոր երեխաները ստանում են հոգեբանական և բժշկական աջակցություն, ցերեկային խնամք և ուսուցում: Կենտրոնի արհեստավարժ անձնակազմը ապահովում է յուրաքանչյուր երեխայի հարմար և վերջնական տեղավորումը: Միջինը 32 օր հետո , շատ երեխաներ վերադառնում են իրենց ընտանիքներ կամ տեղավորվում են գիշերօթիկ դպրոցներում կամ մանկատներում⁸⁵:

⁸³ Այս ապաստարանը գործում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական Հարցերի նախարարության ենթակայության տակ: Հասցե: Հաղթանակի տարածք, փողոց 2 տուն 45, հեռ` (374)(10) 72 10 70

⁸⁴ԱՄՔՈՐ-Հայաստան, ծրագիր <կարողությունների հզորացում, աջակցություն և զոհերի պաշտպանություն> գործողություն 3, զոհերի պաշտպանություն <http://www.umcor.am/traffick.htm>

Հասցեն ` Կարապետ Ուլնեցու 14, Երևան, Հայաստան, հեռ` +(374-10)24 81 41; (374)(10) 28 29 770

⁸⁵Ավելի մանրամասն <Հայ Օգնության Ֆոնդ/ՀՕՖ/> Անտուն երեխաների կենտրոն http://www.farusa.org/whatwedo_projectlocator.asp?t=&a=&s=&b=&p=63&m=

Հայ Օգնության Ֆոնդ/ՀՕՖ/, հասցեն Երևանում` Խորենացի 22, 374 (10) 52-66-60; Հասցեն Գյումրիում` Աբովյան 236; 374 (312) 2-40-6

Հանրակացարաններ: Հանրակացարանները նույնպես կարող են լինել ժամանակավոր լուծում: Շատ փախստական ընտանիքներ, որոնք 1988-1992 թվականներին բռնի տեղահանվել էին Ադրբեջանից, Հայաստանում տեղավորված են տարբեր հանրակացարաններում, մինչև կլուծվի նրանց բնակարանային խնդիրը: Այժմ հանրակացարանները զբաղված են նաև անտուն ընտանիքներով, երկրաշարժից տուժած տարածքների բնակիչներով:

3.2.7. Բնակվելու և խնամքի հնարավորություն ծերերի համար/ պետություն, հի-ներ/

❖ Պետական հաստատություններ

Հայաստանում կան երեք պետական տուն-ինտերնատ /ծերանոցներ/ այն միայնակ ծերերի համար, որոնք չունեն մտավոր խնդիրներ, չունեն մշտական բնակության վայր և կարիք ունեն 24-ժամյա խնամքի և մեկ հատուկ տուն-ինտերնատ՝ մտավոր խնդիրներ ունեցող ծերերի համար:

Այս բոլոր չորս հաստատությունները գործում են ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության ենթակայության ներքո: Այնտեղ մարդկանց ապահովում են օրական 3 անգամյա սնունդով, հագուստով և հիգիենիկ պարագաներով: Նրանք կարող են նաև ստանալ բժշկական, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն և կենցաղային միջոցներ:

Քրոնիկ մտավոր անկարողություններով մարդկանց համար կա հատուկ **տուն-ինտերնատ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում:** Սա միակ հաստատությունն է Հայաստանում, որտեղ ապրում են քրոնիկ մտավոր թերություններով մարդիկ, որոնք ունեն խնամքի կարիք: Այն մտավոր թերություններով ծերերը, որոնք չունեն խնամողներ, կարող են տեղավորվել Վարդենիսի հաստատությունում: /Ավելի մանրամասն 3.4.5/

Թիվ 1 ինտերնատը գտնվում է Երևանում, Հաղթանակի տարածք, փողոց 2, 45, հեռ. 374-10 72-10-70, 72-39-10
Նորքի ինտերնատը գտնվում է Երևանում, Նորք-Մարաշ համայնքում, հասցեն՝ Նորք-Մարաշ, Արմենակյան 197ա, հեռ. 374 10 652827, 652771
Գյումրիի ինտերնատ 65 տարեկան և անց միայնակ ծերերի և 18 տարեկան անց հաշմանդամների համար: Հասցեն՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Երևանյան 18, հեռ. 374 312 40821

Ինչպես դիմել Պետական տուն-ինտերնատ տեղավորվելու համար:

Հետևյալ փաստաթղթերը⁸⁶ պետք է ներկայացվեն սոց ծառայության տարածքային կենտրոններ

- դիմում
- սոցիալական քարտ և նրա պատճենը
- անձնագիր և նրա պատճենը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ

Հասցեն Ստեփանակերտում, Միրզոյան 1, 374 (71) 4-68-26

⁸⁶ Նշված փաստաթղթերը անհրաժեշտ են ոչ-պետական հաստատությունների համար, բայց այս դեպքում անհրաժեշտ չէ ներկայացնել փաստաթղթեր սոցծառայության տարածքային գործակալություն կամ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարություն

- տեղեկանք թոշակի չափի և տեսակի վերաբերյալ՝ տրված Սոցիալական ապահովագրության տարածքային գործակալությունից
- բժշկական տեղեկանք առողջության վիճակի մասին՝ տրված պոլիկլինիկայից

Այս փաստաթղթերի և դիմողի ապրելակերպի կարիքների գնահատման հիման վրա սոցիալական տարածքային կենտրոնը մերժում կամ հաստատում է դիմումը: Հաստատման դեպքում երեք օրվա ընթացքում որոշումը պետք է ուղարկվի ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության ծերերի վարչություն գրանցման համար: Սովորաբար տուև-ինտերնատներում ազատ տեղեր չեն լինում, ուստի գրանցումից հետո ծերերը ստիպված են երկար ժամանակ սպասել:

Տնային պայմաններում ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման հանրապետական կենտրոն: Պետական սոցիալական սպասարկման կենտրոնը հոգ է տանում 1200 միայնակ ծերերի/ 75 տարեկանն անց/ և կարիքավոր առաջին և երկրորդ կարգի հաշմանդամների երևանում: Կենտրոնը տրամադրում է մի շարք ծառայություններ՝ ընտանեկան ծառայություն և խնամք, բժշկական աջակցություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն: Կենտրոնը գործում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության իրավասության ներքո: Լրացուցիչ ինֆորմացիայի համար դիմել հետևյալ հասցեով: Երևան, Անդրանիկի 74, հեռ. 374 10 740402

❖ **Ոչ պետական հաստատություններ**

«Հույս» մասնավոր ծերերի տուն Վանաձորում՝ միայնակ, անժառանգ, առանց խնամակալի և ոչ հաշմանդամ ծերերի համար, որոնք հասել են կենսաթոշակային տարիքի: Այն ապաստանում է մոտ 55 ծերի: Թոշակառուների ապրելակերպի կարիքների գնահատումից հետո և համաձայնության դեպքում կատարվում է գրանցում և տեղավորում ինտերնատում: Վճարումներ չկան կապված դիմելու ընթացակարգի հետ պայմանով, որ թոշակառուն թողնում է իր թոշակի 40%-ը հաստատությանը: Հասցեն: Լոռու Մարզ, ք.Վանաձոր, Մայմեքսի 1,(374)(322) 23745; 43211

«Նարեկ» մասնավոր տուև-ինտերնատ Աբովյանում- այն ծերերի համար է , որոնք չունեն խնամող: Այնտեղ տեղավորվելու համար թոշակառուն պետք է ներկայացնի փաստաթղթերը: Կա լրացուցիչ վճարում 50000 դրամի կամ 91.22 Եվրոյի չափով: Հաստատվելու դեպքում թոշակառուները կարող են տեղավորվել տուև-ինտերնատում պայմանով, որ նրանք թողնում է իրենց թոշակն ամբողջովին հաստատությանը: Հասցեն՝ Կոտայքի Մարզ, Աբովյան, Հատիսի 6, հեռ.(374)(322) 23866

«Արծվաբույն» խնամքի տուև Սյունիքի մարզի Արծվանիք գյուղում- նախատեսված է միայնակ, ոչ հաշմանդամ և կարիքավոր 70 տարին լրացած ծերերի համար, որոնք բնակվում են Սյունիքի մարզում, որոնք կապրեն կենտրոնում 24-ժամյա խնամքի ու ուշադրության ներքո: Ներկայումս 10 միայնակ ծերեր են ապրում այնտեղ: Այն գործում է «Առաքելություն Հայաստան» հկ-ի ներքո: Դիմելու համար ծերը պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր Սյունիքի մարզպետարան⁸⁷: Այնտեղից բոլոր փաստաթղթերը ուղարկվում են «Առաքելություն Հայաստան» վերանայելու համար: Կարիքների գնահատումից հետո, հաստատվելու դեպքում, ծերին տեղավորում են տուև-ինտերնատում: Ավելի մանրամասն տեղեկատվության համար կապվել Սյունիքի մարզպետարանի հետ, որը տեղակայված է Կապան քաղաքում, Նժդեհի 1 հասցեում, հեռախոս (374) 10 28 78 22; 28 78 30 կամ «Առաքելություն Հայաստան» հկ-ի կենտրոնական գրասենյակ, ք, Երևան 0026, Նժդեհի փողոց 42, հեռախոս (374)10 444792/444793

⁸⁷ Սյունիքի Մարզպետարան

Հկ-ների կողմից տրամադրվող ծառայություններ: Կան մի քանի հկ-ներ, որոնք ակտիվ են այս ոլորտում և մատուցում են տարբեր ծառայություններ ծերերին: «Առաքելություն Հայաստան»,⁸⁸ «Հայկական Կարիտաս»,⁸⁹ «Հայկական Կարմիր Խաչ»⁹⁰ և այլն:

3.2.8. Բարեգործական և խնամքի կենտրոններ հաշմանդամների համար:

«Հավատ» դժվար լսող երեխաների մայրերի հկ-թիրախ խումբը խուլ և լսողության դժվարություններ ունեցող մինչև 14 տարեկան երեխաներն են: Գործունեությունը խուլ և լսողության դժվարություններ ունեցող երեխաների ինտեգրացիան է, լսողական սարքերի տրամադրումը, բանավոր խոսքի զարգացումը, և նախապատրաստումը ընդհանուր դպրոցական կրթության: Կազմակերպությունն ունի ցերեկային զարգացման կենտրոն լսողության դժվարություններով երեխաների համար Արաբկիր միավորված բժշկական կենտրոնի «Լսողության դժվարություններով երեխաների ինտեգրման կենտրոն»-ի հիմքի վրա: Կենտրոնը կդառնա մի հաստատություն, որը կապահովի ներդաշնակ կյանք երեխաների և նրանց ծնողների համար: Լուրջ լսողության դժվարություններ ունեցող երեխաները ստանում են ուսուցումներ և բանավոր խոսքի զարգացում, երաժշտական և ռիթմի դասեր, հոգեբանական աջակցություն, ինչպես նաև ծնողների համար օգտակար ինֆորմացիա երեխայի լսողության խնդիրների վերաբերյալ:

Հասցեն՝ Երևան, Շիրվանզադեի 17, հեռ. 37410231953, էլ փոստ. surdoam@yahoo.com; կայք՝ www.havat.am

«Հուսո կամուրջ» հկ-թիրախ խումբ: երեխաներ ֆիզիկական և մտավոր թերություններով: Այս կազմակերպության ուշադրության կենտրոնում ներառական կրթությունն է: Ներկայումս Կրթության և Գիտության Նախարարությունը համարում է այս կազմակերպությունը իր երկարամյա գործընկերը Հայաստանում ներառական կրթության հետագա զարգացման և տարածման գործում: Կազմակերպությունը ունի կենտրոններ նաև Երևանում և Տավուշի մարզում: «...Այսօր երեխայի զարգացման և ընտանիքի աջակցման համայնքային կենտրոններ են հիմնվել «Հուսո կամուրջ» հկ-ի կողմից Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Բերդ և Նոյեմբերյան քաղաքներում: /.../Կենտրոնները մատուցում են ծառայություններ մտավոր և ֆիզիկական թերություններով երեխաների համար, ոչ-հաշմանդամ երեխաների համար, զարգացնելու նրանց սոցիալական հմտությունները մասնակցելու դպրոցի և համայնքի կյանքին: Ուսուցման փորձառության մեծ մասը կազմում է արթ թերապիան, խոսքի զարգացումը, կյանքի հմտություններն և ֆիզիկական թերապիան: Երեխաները սովորում են համագործակցել և կիսել իրենց կարողությունները իրենց հասակակիցների հետ, մասնակցել խմբային գործողություններին և խոսակցություններին, կրել պատասխանատվություն իրենց սեփական գործողությունների և իրենց սեփական ուսուցման համար: Անհատական ծրագրերի միջոցով երեխաները կարող են զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են սոցիալական համագործակցության և մասնակցության համար»⁹¹:

Գլխավոր գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեում: Կորյունի 19ա, սենյակ 207, հեռախոս 374 10 589186: ինտերնետային: Էլ փոստ՝ bridge@arminco.com, կայք՝ <http://www.bridgeofhope.am/system/index.htm>

«Կամք և Կորով» հկ երիտասարդ հաշմանդամների համար-Առաքելությունը խուլ և լսողության դժվարություններ ունեցող երիտասարդների ինտեգրումն է հասարակության մեջ: Կազմակերպությունը հիմնադրել է «Օվասիս» մնջախաղի թատրոն-ստուդիան և ժամանակակից պարի խումբը: 2000թվականին այս հկ-ն առաջինն էր Հայաստանում, որ հիմնադրեց կերամիկայի ստուդիա դժվար լսող երիտասարդների համար: Կազմակերպությունը անցկացնում է նաև կարողությունների հզորացման դասընթացներ

⁸⁸ <Առաքելություն Հայաստան> հկ, ծրագրեր, գործունեության տեսակներ <http://www.mission.am/en/activities/>

⁸⁹ Հայկական Կարիտաս, Ընթացիկ ծրագրեր http://www.caritasarm.am/?pageUrl=current_projects

⁹⁰ Կենտրոնական գրասենյակը գտնվում է հետևյալ հասցեում, Պարոնյան 21, հեռ՝ (374-10) 53-80-72,53-84-31

⁹¹ Ավելի մանրամասն <Հուսո կամուրջ> հկ, մասնաճյուղեր, համայնքային կենտրոններ <http://www.bridgeofhope.am/system/index.htm>

ինչպիսիք են հայերենի և անգլերենի լեզուների ուսուցում, նշանների լեզու, համակարգչային հմտություններ և այլն: Հասցեն: ք. Երևան, Կուրդինյան նրբանցք 2, բն. 37; հեռ 374 10 77 04 24 կայք՝ <http://ngokamk-korov.am.iatp.net/engl.%20home.htm>, էլ. փոստ՝ kamkorov@netsys.am

«Փյունիկ» հաշմանդամների ասոցիացիա- Թիրախ խումբը մինչև 30 տարեկան տարբեր տիպի հաշմանդամություն ունեցող երիտասարդներն են:

Փյունիկը հիմնադրվել է 1989-ին օգնելու 1988 թվականի երկրաշարժից հաշմանդամ մնացած երեխաներին: Ներկայումս «Փյունիկ» հաշմանդամների կենտրոնը գործում է Երևանում՝⁹² տրամադրելով տարաբնույթ վերականգնողական ծառայություն հաշմանդամներին: Կենտրոնն ունի սպորտային հարմարություններ, կազմակերպում է արհեստագործական ուսուցումներ, լեզվի և համակարգչային դասընթացներ: 12 տարեկանից փոքր հաշմանդամ երեխաների համար կա մասնագետների խումբ- խոսքի մասնագետ, հոգեբան, սոցիալական աշխատող, կենտրոնում գործում են նաև նկարչական, ասեղնագործության, փայտամշակման արհեստագործական խմբեր: Այս կազմակերպությունը տրամադրում է անվճար պրոթեզավորման ծառայություններ/ միայն նրանք, ովքեր չեն ստացել այս սարքերը Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարությունից/: Փյունիկը ունի մասնաճյուղ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Կազմակերպության հասցեն Երևանում հետևյալն է՝ Ծիծեռնակաբերդի մայրուղի 16; հեռ. 374 10 560707 էլ փոստ՝ pyunic@arminco.com

Ունիսոն հկ հատուկ կարիքներով մարդկանց աջակցության համար: Թիրախ խմբերն են: հաշմանդամներ, ծերեր, որբեր: Այլ գործողությունների շարքում հկ-ն տրամադրում է իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն հաշմանդամներին: Կազմակերպությունը կազմակերպում է նաև արհեստագործական, համակարգչային և նկարչության դասընթացներ հաշմանդամների համար: Հասցեն: Դեմիրճյան 36, հեռ: 374 10 522170, էլ փոստ՝ unison@unison.am, կայք՝ <http://www.unison.am>.

«Փրկություն» հկ հաշմանդամ երեխաների համար: Թիրախ խումբը մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներն ու երիտասարդներն են: /.../Հաշմանդամ երեխաների Փրկություն կենտրոն հկ-ն հիմնադրել է Կյանքի Կազմակերպման Դյուրնայ Կենտրոնը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների և երիտասարդների համար նրանց ամենօրյա կյանքի կազմակերպման համար/.../: Այն տարեկան հաճախում են 24-26 երեխաներ և երիտասարդներ, որոնք ավարտել են օժանդակ դպրոց և չեն գտել դեռևս իրենց զբաղմունքը: /.../Մտավոր հետամնաց երեխաներին այստեղ սովորեցնում են նկարել, մակրամե, գործել, ասեղնագործություն, կավագործություն կենտրոնի տարբեր արհեստների խմբակներում: Ոչ հաշմանդամ երեխաներ նույնպես հաճախում են այս դասերին, և այն նպաստում է հաշմանդամ երեխաների ներդաշնակ ինտեգրացիային իրենց հասակակիցների հետ/.../:⁹³ Ավելի մանրամասն այս կազմակերպության աշխատանքների մասին կարելի է տեղեկանալ այս հասցեից: Երևան, Չեխովի փողոց 33, մուտքը Մանանդյան փողոցից; 374 10 42 78 50; էլ փոստ՝ prkutyun@netsys.am, կայք՝ <http://www.prkutyun.am>

«Հավատք ու լույս» համայնք: Թիրախ խումբը Շիրակի մարզի մտավոր և բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաներն են: 25 կամավորներ են աշխատում այս համայնքում-բժիշկ, հոգեբան, վերականգնող թերապիստ, մանկավարժ և այլն:

⁹² Շենքը գտնվում է Երևանի կենտրոնական հատվածում, Հրազդան Մարզադահլիճի և Թենիսի ազգային մարզադահլիճի հարևանությամբ

⁹³ Ավելի մանրամասն ինֆորմացիա այս կենտրոնի մասին կարելի է իմանալ <Փրկություն>հկ-ի ինտերնետային կայքից <http://www.prkutyun.am/?go=3>.

Հիմնական առաքելությունը հաշմանդամ երեխաների ինտեգրացիան է և նրանց իրավիճակի բարելավումը: Գտնվում է Գյումրիում, Հաղթանակի 45 հասցեում, հեռախոս՝ 374 91 219223; էլ փոստ՝ fv1999@yahoo.com.

Ձայնալարեր չունեցող մարդկանց ասոցիացիա: Այս կազմակերպությունը կարող է օգնել անվճար ձեռք բերել ձայն/խոսք սինտեզատոր «Էլեկտրոլարինքս» արտասահմանից: Նախագահ՝ պրն Խ.Բաղալյան, հասցե՝ Երևան, Ա. Ահարոնյան 5/2, 37410 245383; բջջային 374 93 24 53 83 էլ փոստ՝ ogn1@yahoo.com.

«Սքարպ» վերականգնողական կենտրոն: Թիրախ խումբը երիտասարդ հաշմանդամներ են, առաջին հերթին նրանք, ովքեր օգտագործում են անվասայլակներ: Այս կազմակերպությունն այլգործողությունների թվում ունի նաև Երևանում գործող սպորտ դահլիճ երիտասարդ հաշմանդամների համար: Հասցեն՝ Երևան, Բաշինջադյան 10, նրբանցք 2, հեռ. 374 10 390209 էլ փոստ skarp@freenet.am

«Լիարժեք կյանք» բարեգործական հկ: Սոցիալական կազմակերպություն է, հիմնված Ստեփանավանում: Թիրախ խումբը ողնաշարի վնասվածքներ և այլ հաշմանդամություն ունեցող անձինք են Լոռու մարզի Ստեփանավան և Տաշիր քաղաքներից: Այն տրամադրում է սոցիալական և իրավաբանական խորհրդատվություն, աշխատացնում է «Երեխայի զարգացման ցերեկային կենտրոնը» մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար: Հասցեն՝ ք.Ստեփանավան, Գ. Նժդեհի 17: Այնտեղ երեխաներին ուսուցանվում են համակարգչային հմտություններ, Արթ Թերապիա և այլն: Նախագահ: պրն. Խ. Մաղախյան, էլ.փոստ [fullife@freenet.am](mailto:fulllife@freenet.am)

Կրթության և մշակույթի զարգացման Փարոս հաշմանդամների կենտրոն:

Թիրախ խումբը հաշմանդամներն են: Այս հկ-ն կազմակերպել է արհեստագործական ուսուցումներ, արթ թերապիա հաշմանդամ երեխաների հետ և այլ գործունեություն: Հասցեն Երևանում՝ Նոր Նորք համայնք, Բաղյան 2 հեռ: 374 10 66 41 01; էլ.փոստ paros@web.am

«Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների միություն: Թիրախ խումբը: Մտավոր խնդիրներ և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաներ և նրանց ընտանիքները: Հասցեն ք. Երևան Չարենցի փողոց 1, 4-րդ հարկ: Հեռ 374 10 57 51 85; էլ.փոստ levast@netsys.am

3.2.9. Հնարավոր ժամանակավոր կացարաններ նախքան երկարաժամկետ հարմարությունների ապահովումը

Չկան ժամանակավոր կացարաններ, որտեղ մարդիկ կարողանան մնալ մի քանի օր: Հնարավոր է միայն տան վարձելը կամ հյուրանոցներում մնալը: Վերադարձողների մեծ մասը մնում են իրենց հարազատների տներում մինչև նոր բնակարան գտնելը:

3.3. Ապրուստ-հիմնական ապրելամիջոց

3.3.1. Ջբաղվածություն

Ջբաղվածությունն ու աշխատանքը Հայաստանում կարգավորվում է ՀՀ սահմանադրությամբ, զբաղվածության մասին օրենքով⁹⁴, միջազգային պայմանագրերով և զանազան իրավական ակտերով:

ՀՆԵ-ի աճին⁹⁵ հակառակ վերջին մի քանի տարիներին աշխատանքային իրավիճակը Հայաստանում մնում է լարված աշխատանքի առաջարկի և պահանջարկի միջև եղած տարբերության պատճառով:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանի աշխատաշուկան ցույց է տալիս մեծ աճ թաքնված գործազրկության և թաքնված զբաղվածության: Սա վերաբերվում է չգրանցված գործունեության մեջ զբաղված աշխատողներին/հատկապես մասնավոր սեկտորում/, չգրանցված աշխատողներին, ինչպես նաև չգրանցված ինքնազբաղվածներին: «Թաքնված գործազրկությունը» ներառում է անտեսանելի կիսազբաղվածներին և հողագործ ֆերմերների մի մասին, որոնք հողը մշակելու կարողություն չունեն բայցևայնպես գրանցված չեն որպես գործազուրկներ:

Դժբախտաբար, զբաղվածությունը չի ապահովում ապրուստ: Ջբաղվածների 17 տոկոսը համարվում է ծայրահեղ աղքատ: Աշխատավարձը Հայաստանում ոչ կատարում է իր վերականգնողական և ստիմուլացնող գործառույթը և ոչ էլ ազդում է կազմակերպությունների ներսում նոր աշխատանքային հարաբերությունների վրա, այսպիսով նպաստելով սոցիալական լարվածության սաստկացմանը:

Ջբաղվածությունը պակասել է պետական սեկտորում և ավելացել է մասնավորում: Արդյունաբերական սեկտորում այն նվազել է, իսկ ծառայության ոլորտում՝ ավելացել: Հնարավոր չէ նկարագրել ամբողջ պատկերը, քանի որ ծառայությունների աճը գրանցվել է սովետային տնտեսությունում, այսինքն ի հաշիվ անօրինական զբաղվածության:

3.3.1.1. Գործազրկություն

Համաձայն Հայաստանի Հանրապետության զբաղվածության մասին օրենքի, անձը, որը չունի աշխատանք, փնտրում է այն և պատրաստ է աշխատել, ունի առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ և գրանցված է զբաղվածության կենտրոնում, համարվում է գործազուրկ: Անցման ժամանակաշրջանում, բնակչության ապրելու մակարդակը/ 30% ավելին գտնվում է աղքատության գծից ցածր/բնակչության գնողունակությունը շեղակիորեն իջել է: մեկչնչին ընկնող միջին եկամուտը գրեթե հինգ անգամ նվազել է:

Համաձայն 2008թ.պետական զբաղվածության գործակալության տարեկան զեկույցի դեկտեմբերի 31-ի դրությամբ տարածքային զբաղվածության կենտրոններում կա 90 244 աշխատանք փնտրող, որը 1,0% անցած տարվա համեմատությամբ աճել է: 74698 մարդ ստացել է գործազուրկի կարգավիճակ: 2008 թվականի ընթացքում 8657 մարդ տեղավորվել է աշխատանքի, 7006 մարդ ստացել է ժամանակավոր աշխատանք: 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործազրկության պաշտոնական տոկոսը կազմում է 6.3 %: 43.5 % գործազուրկ ներգրավված են զբաղվածության ծրագրերում:

Աշխատանք ստացողների տոկոսը կազմում է 9.6%, որը գերազանցում է անցած տարվա ցուցանիշը 4.3% -ով: Նրանց մեջ երիտասարդները կազմում են 20.7%:

Գլոբալ տնտեսական ճգնաժամի հետ կապված մասսայական կրճատումներ եղան հատկապես Լոռու և Սյունիքի մարզերում, քանի որ նվազել են հանքարդյունաբերության ծավալները: Ներկա դրությամբ, 380 մարդ կորցրել է աշխատանք, 1390 մարդ ստացել է

⁹⁴ Բոլոր օրենքներն ու որոշումները կարող եք գտնել www.arlis.am-nu

⁹⁵ Համախառն ներքին եկամուտ

ծանուցում աշխատաքից ազատվելու, 678 մարդ ազատվել են աշխատանքից իրենց դիմումների համաձայն կամ պայմանագրի ավարտի հետ կապված: Զեկույցին կարելի է ծանոթանալ՝ Պետական զբաղվածության գործակալություն, Տարեկան Զեկույց <http://www.employment.am/html/reports/reports.htm>

3.3.1.2. Աշխատաշուկայի ծրագրերը

Հիմնական խնդիրները, որոնց մենք առնչվում ենք Հայաստանի զբաղվածության ոլորտում հետևյալն են:

- աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի տարբերությունը
- աշխատուժի մասնագիտական որակավորման անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին
- անհավասար տարածքային զարգացում
- անբավարար աշխատանքային ծանրաբեռնվածություն գյուղերում
- աշխատաշուկայում գործազրկության բարձր տոկոս երիտասարդների, կանանց և անմրցունակ մարդկանց շրջանում
- ազատ աշխատատեղերը զբաղեցնելու խոչընդոտներ
- աշխատուժի տեղաշարժի իրավական կարգավորման բարելավում, աշխատանքային միզացիայի մեծ տոկոս
- օրենսդրական դաշտի բարելավում զբաղվածության նոր ծրագրերի մշակմամբ և նոր ճկուն ներդրումային համակարգի ստեղծումով տնտեսական ոլորտի զարգացումներին համապատասխան:

2008թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի կառավարությունը ընդունեց որոշում՝ հաստատելով «2009 թ. զբաղվածության կարգավորման» պետական ծրագրի իրականացումը: Այս ծրագրի նպատակն է ձեռք առնել միջոցներ ապահովելու լրիվ և արդյունավետ բնակչության զբաղվածության:

Բնակչության զբաղվածության կարգավորումը իրականացվում է պետական ծրագրերի, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվող միջոցառումների և ծրագրերի միջոցով:

Այս ոլորտի դերակատարներն են Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարությունը և նրա առանձնացված ստորաբաժանումը՝ «Զբաղվածության Պետական Գործակալությունը»: Պետական ծրագրերի իրականացման ֆինանսական միջոցները գալիս են պետական բյուջեից և որոշ միջազգային կազմակերպություններից և հկ-ներից:

Վերոնշյալ «Զբաղվածության Պետական Գործակալությունը» իրականացնում է հետևյալ պետական զբաղվածության ծրագրերը՝

❖ Գործազրկության նպաստ

- Գործազրկության նպաստը Պետական Զբաղվածության Գործակալության կողմից նշանակվում է այն անձանց, ովքեր ունեն գործազուրկի կարգավիճակ և առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ:
- Գործազրկության նպաստի վճարման նվազագույն տևողությունը 6 ամիս է: Գործազրկության նպաստ չի կարող նշանակվել 12 ամսից ավել:
- Գործազրկության նպաստի չափը սահմանվում է նվազագույն ամսական աշխատավարձի 60 %-ի չափով:

❖ Ուսուցումներ

- **Ուսուցման տեսակները:** մասնագիտական արհեստագործական կրթություն, նրանց համար, ովքեր չունեն մասնագիտություն, վերամասնագիտացման դասընթացներ, մասնագիտական որակավորման բարձրացում
- **Մարդիկ, որոնք կարող են մասնակցել:** գործազուրկներ, հաշմանդամներ, երկարամյա ծառայության կենսաթոշակառուներ

- **Տևողությունը:** ուսուցումները երեք ամիս, արհեստագործական ուսուցումները վեց ամիս
- **Կրթաթոշակ:** մասնագիտական ուսուցման ամբողջ ընթացքում գործազուրկները, հաշմանդամները, որոնք ընդգրկված են այս ուսուցումների և վերաորակավորման դասընթացների մեջ ստանում են կենսաթոշակ գործազրկության նպաստ ստացող անձանց համար նշանակված գործազրկության նպաստի 120 տոկոսի չափով, գործազրկության նպաստ ստանալու իրավունք չունեցող անձանց համար նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով:

❖ **աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին**

- աշխատավարձի փոխհատուցումը գործատուին տրվում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորմանն աջակցելու համար,
- աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար գործատուին տրվում է փոխհատուցում՝ գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը: Փոխհատուցման ծրագրում ընդգրկված անմրցունակ առաջին և երկրորդ խմբի հաշմանդամների աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է երկու տարի ժամկետով, իսկ անմրցունակ այլ անձանց՝ մեկ տարի ժամկետով:

❖ **Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների նյութական ծախսերի փոխհատուցում**

- իր ու իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը,
- իր ու իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ 30-50 ճանապարհի համար 10000դրամ/18.24 Եվրո/, 50կմ-ից ավել յուրաքանչյուր 50 կմ-ի համար՝ 8000 դրամ/14.60Եվրո/, բայց ոչ ավելի քան 50000 դրամ/91.22 Եվրո/,
- 30 կիլոմետրից ավել հեռավորությամբ այլ վայր աշխատանքի մեկնելու դեպքում իր ու իր ընտանիքի անդամների օրապահիկը,
- գործազուրկին տրվում է միանվագ ֆինանսական աջակցություն նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,
- մեկ տարվա ընթացքում չորս անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս միկրոավտոբուսի կամ ավտոբուսի համար,
- ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

❖ **Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար ֆինանսական աջակցության տրամադրում:**

Այս ծրագրում ընդգրկված են որոշ գումարների փոխհատուցում

- Պետական տուրք,
- Անվանման գրանցման համար տուրք,
- Կնիքի պատրաստման վճար:

❖ **Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում**

Վարձատրվող հասարակական աշխատանքները ժամանակավոր աշխատանքներ են, որոնք չեն պահանջում մասնագիտական որակավորում: Գործազուրկները, ընտանիքի

անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների աշխատանք փնտրող անձինք կարող են օգտվել այս ծրագրից: Այս աշխատանքների տևողությունը երեք ամիս է: Վարձատրության օրական չափը կազմում է նվազագույն աշխատավարձի 8 տոկոսը:

Մարզային և տարածքային զբաղվածության կենտրոնները տրամադրում են խորհրդատվություններ սոցիալական երաշխիքների և մասնագիտական կողմնորոշման, ինչպես նաև ինֆորմացիա աշխատանքային հնարավորությունների և զբաղվածության ծրագրերի մասին:

Ավելի մանրամասն պետական զբաղվածության գործակալության ծրագրերի մասին կարելի է գտնել www.employment.am ինտերնետային կայքում:

Լրացուցիչ ինֆորմացիա մարզերում և տարածքներում աշխատանքային հնարավորությունների մասին կարելի է գտնել <http://www.employment.am/html/employer/workers.htm> կայքում:

3.3.1.3. Աշխատանքի պայմանները/ նվազագույն/ միջին աշխատավարձ, աշխատանքային ժամեր, ապահովություն/

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը պարունակվում է ՀՀ սահմանադրության, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության մեջ և սոցիալական և տնտեսական ոլորտի այլ իրավական ակտերում:

Պետության հիմնական խնդիրները տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում առաջին հերթին զբաղվածության ապահովումն է և բնակչության աշխատանքային պայմանների բարելավումը:

Երաշխավորված է մասնագիտության ընտրության ազատությունը, ինչպես նաև իրավունքը աշխատանքային պայմանների, որոնք համապատասխանում են անվտանգության և հիգիենիկ պահանջներին /ՀՀ սահմանադրության հոդված 32 /: Ստիպողական աշխատանքն արգելված է:

Աշխատողն ունի իրավունք սոցիալական ապահովագրության, եթե նա թոշակառու է, հաշմանդամ, հիմնական կերակրողին կորցրած, գործազուրկ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: /ՀՀ սահմանադրության հոդված 37/:

Վճարում/Վարձատրություն⁹⁶: Ցանկացած անհատ իրավունք ունի արդար վարձատրության և վճարը չպիտի ցածր լինի օրենքով նախատեսված նվազագույն աշխատավարձից/ ՀՀ սահմանադրության հոդված 32(1)/:

Ինչպես նշված է վերևում, աշխատավարձի հարցերը կարգավորվում են առանձին ակտերով, ինչպիսին են աշխատավարձի մասին 2001թ.226-րդ օրենքը, քաղաքացիական ծառայողի վարձատրության 2002թ. 409-րդ օրենքը, նվազագույն աշխատավարձի մասին 2004թ. 66-րդ օրենքը:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 19-րդ գլուխը նվիրված է աշխատավարձի հարցերին, իսկ 20-րդ գլուխը վերաբերում է ֆինանսական երաշխիքներին և փոխհատուցումներին:

Աշխատավարձը վճարվում է ՀՀ արժույթով/ դրամով: Նվազագույն ամսեկան և օրական վճարման չափը հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենքով/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 179/ և աշխատավարձի ինդեքսացիայի օրենքով/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 182/:

Հայաստանի Հանրապետությունում 2009 հունվարի 1-ի դրությամբ նվազագույն աշխատավարձը կազմում է 30000 ՀՀ դրամ կամ 54.73 Եվրո:

⁹⁶ Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն, /ԱՄԿ/ՀՀ Աշխատանքային օրենսգիրք. Ներկայացված Անգելիկա Մյուլլերի կողմից, ԱՄԿ սոցիալական երկխոսության, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի վարչարարության բաժին, օգոստոս 2006
<http://www.ilo.org/public/english/dialogue/ifpdial/info/national/armenia.htm>

Հատուկ աշխատանքային պայմաններ են ապահովվում արտաժամյա և գիշերային աշխատանքի համար, վտանգավոր պայմաններում աշխատանքի համար, արձակուրդի կամ ազատ օրերի ընթացքում, պարապուրդի կամ կես դրույք աշխատանքի ժամանակ/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 183 և 189/:

Գործատուն իրավունք ունի հետպահումներ անել աշխատողների աշխատավարձից, եթե արտադրվել է խոտան արտադրանք կամ չեն բավարարվել պահանջվող քվոտաները/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 190 և 191/։ Աշխատավարձի հետպահումների լրացուցիչ հիմքերը նշված են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածում։ Համեմայն դեպս, բոլոր հետպահումները չեն կարող գերազանցել աշխատողի ամսեկան աշխատավարձի 50 տոկոսը/ՀՀ աշխատանքային օրենսգրքի 214-րդ հոդված/։

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի աշխատավարձը պետք է վճարվի առնվազն ամիսը մեկ անգամ։ Գործատուն պարտավոր է գրավոր տեղեկանք տալ աշխատողին աշխատավարձի, ինչպես նաև կատարվող հետպահումների մասին /ՀՀ աշխատանքային օրենսգրքի 193-րդ հոդված/։

Ի հավելումն դրա, աշխատավարձի վճարման ուշացումների դեպքում, գործատուն վճարում է տույժ՝ օրենքով սահմանված կարգով /ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդված/։

Աշխատաժամանակ⁹⁷։ ՀՀ աշխատանքային օրենսգրքի գլուխ 17, /հոդված 137-149/ վերաբերում է աշխատաժամանակին։ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածը ասում է, որ նորմալ աշխատաժամանակը չի կարող գերազանցել շաբաթական 40 ժամը, կամ օրական 8 ժամը։

Աշխատանքի առավելագույն տևողությունը ներառյալ արտաժամյա աշխատանքը, որը իրականացվել է գործատուի պահանջով, չի կարող գերազանցել շաբաթական 48 ժամը և օրական 12 ժամը։

Նվազեցված աշխատաժամանակ է հատկացվում հատկապես երիտասարդ բանվորներին/ տես ներքևում/ և գիշերային աշխատողներին/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդված/։

Արտաժամյա աշխատանքը խիստ կանոնավորված է , որոշ սահմանափակումներ կան երիտասարդների և հաշմանդամների համար, ընտանիքավոր աշխատողների, կամ վտանգավոր պայմաններում աշխատողների համար /ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդված/։ Արտաժամը չի կարող գերազանցել չորս ժամ երկու աշխատանքային օրվա ընթացքում կամ 120 ժամ տարեկան/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 146-րդ հոդված/։

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 148-րդ հոդվածը կարգավորում է գիշերային աշխատանքը։ Սա վերաբերում է աշխատանքին, որը կատարվում է երեկոյան 22.00-ից մինչև առավոտյան 06.00-ն ընկած ժամանակահատվածում։

ՀՀ-ում աշխատանքային պայմանները վերահսկվում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության ներքո գործող Աշխատանքի Պետական տեսչության կողմից։

3.3.1.4. Կարճաժամկետ/պատահական աշխատանքների հասանելիությունը։

ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարությունը կազմակերպում է «Կարճատև և պատահական աշխատանք» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս փոքր-ինչ մեղմելու աշխատաշուկայի լարվածությունը և ապահովելու ժամանակավոր աշխատանք գործազուրկներին։ Այս աշխատանքները հիմնականում գտնվում են սոցիալական ենթակառուցվածքների տիրույթում և ենթադրում են շրջակա միջավայրի բարեկարգման, հուշարձանների և ճարտարապետական կառույցների, սանիտարական մաքրման աշխատանքներ։ Հասարակական վարձատրվող աշխատանքները

⁹⁷ Նույն տեղում

ժամանակավոր աշխատանքներ են, որոնք չեն պահանջում մասնագիտական որակավորում: Գործազուրկները, այլ աշխատանք փնտրողները, որոնք ներառված են ընտանեկան նպաստի համակարգում կարող են օգտվել այս ծրագրից: Այս աշխատանքների տևողությունը երեք ամիս է: Վարձատրության նվազագույն օրական չափը կազմում է նվազագույն աշխատավարձի ութ տոկոսը:

3.3.1.5. Հատուկ մասնագիտությունների պակաս/ մեծ պահանջարկ

Խորհրդային համակարգի տարիներին և անցումային ժամանակաշրջանում կրթություն ստացած սերունդը ունի դժվարություններ աշխատաշուկա մտնելու: Շատ հաճախ նրանք ունեն բարձր մասնագիտական որակավորում, բայց չեն կարող դիմանալ աշխատաշուկայի մրցակցությանը: Զկա պահանջարկ նրանց գիտելիքների և պրակտիկ ունակությունների:

Հայաստանի աշխատաշուկան հիմա պահանջում է օտար լեզուների, համակարգչի հմտություններ, որը դեռևս շատերը չունեն: Կան շատ կազմակերպություններ, որոնք առաջարկում են նման դասընթացներ, բայց նրանք բոլորը մասնավոր հիմքերի վրա են: Շատերը ի վիճակի չեն անցնել այս դասերը, քանի որ նրանք վճարովի են:

Այլ կազմակերպություններ, ասենք հասարակական կազմակերպություններ կամ հիմնադրամներ, նույնպես առաջարկում են համակարգչային կամ լեզվի դասընթացներ, ուսուցումներ կամ վերապատրաստման դասընթացներ, բայց այս ծառայությունները հատուկ կատեգորիայի մարդկանց համար են, համաձայն ծրագրերի:

Լավ աշխատանք գտնելու պահանջները շատ խիստ են: Շատ մարդիկ, նույնիսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտածները չեն բավարարում այս պահանջները: Եթե մայրաքաղաքում մեծ պահանջարկ ունեն այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են վարորդները, մեքենաների օպերատորները, զոդողները, սպասավորները, վաճառողները, խոհարարները և այլն/մոտավորապես 92 տոկոս/, ապա մարզերում կա մեծ պահանջարկ բժիշկների և ուսուցիչների/մոտավորապես 35 տոկոս/:

Զնայած այն հանգամանքին, որ գործազուրկների մեջ մեծ թիվ են կազմում միջնակարգ կրթություն ունեցողները, այնուամենայնիվ բանվորական աշխատանքի պահանջը դեռևս մեծ է: Որոշ մասնագիտությունների վականսիաները կրկնվում են ցածր աշխատավարձի, ոչ-բավարար որակավորման, անբարենպաստ աշխատանքային պայմանների, աշխատաժամերի, հանգստյան ժամերի և այլնի պատճառով:

3.3.1.6. Պրակտիկ և կոնտակտային տեղեկատվություն/զբաղվածության գործակալություններ, թերթեր և այլն/

Աշխատանքի և զբաղվածության ոլորտին վերաբերող բոլոր հարցերով Հայաստանի քաղաքացիները կարող են դիմել ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության Աշխատանքի և Զբաղվածության բաժին: /հեռախոս /374/ /10/ 565354 կամ պետական զբաղվածության ծառայություն իրենց մասնաճյուղերով հանդերձ/:

Տեղեկատվություն ոչ-պետական զբաղվածության գործակալությունների մասին կարելի է գտնել «Սփյուռ» տեղեկագրքում , որը Հայաստանի վերաբերյալ տեղեկագիրք է (<http://www.spyur.am/htmlfix/spyure.htm>)

Տեղեկատվություն աշխատանքային հնարավորությունների մասին սովորաբար տպագրվում են հանրապետական և տեղական լրագրերում, հայտարարվում է հեռուստացույցով և «Կարիեր ցենտր» ինտերնետային կայքում: www.careercenter.am)

3.3.1.7. Հայ կանանց սոցիալ-տնտեսական դժվարությունները/ համաձայն գործողությունների ազգային պլանի/

Հայաստանի օրենսդրության համաձայն կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ տնտեսության բոլոր ոլորտներում, բայց այսօր կանանց գործունեությունը սահմանափակվում է մանր առևտրով և փոքր ձեռնարկատիրությամբ, հատկապես սպասարկման ոլորտում:

Որպես արդյունք նոր շուկայական տնտեսության անցման, տեղի ունեցան շատ կառուցվածքային փոփոխություններ երկրում, շատ հաստատություններ փակվեցին կամ վերակազմավորվեցին, աշխատանքի հնարավորությունները նվազեցին, շատ մասնագիտություններ կորցրեցին իրենց պահանջարկը, գործազրկությունը ավելացավ, միգրացիոն գործընթացները ակտիվացան: Արդյունքում բնակչության մեծամասնությունը հայտնվեց ծայրահեղ աղքատության մեջ:

Գործազրկությունը մեծ խնդիր է տղամարդկանց և կանանց համար, բայց կանայք ավելի մեծ թիվ են կազմում գործազուրկների մեջ:

Պաշտոնական տվյալների համաձայն, գրանցված գործազուրկների թիվը մեծ է քաղաքներում: Տնային տնտեսությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ առավել դժվար և խոցելի իրավիճակներում են գտնվում շատ երեխաներ ունեցող և կանանց կողմից ղեկավարվող ընտանիքները:

Այսպիսով, նոր հարաբերությունները և աշխատաշուկայի պահանջները կանանց դարձրել են պակաս մրցունակ: Բացի դրանից, ընտանեկան և մասնագիտական պարտականությունների համատեղելու անհնարինությունը կանանց հետ է պահում անհրաժեշտ աշխատանքային փորձառության հնարավորությունից, որը հետագայում ազդում է նրանց թոշակի չափի վրա:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը զարգացման փուլում է: Չկան մոտիվացնող պայմաններ և էֆեկտիվ հարկային դաշտ ձեռնարկատիրության զարգացման համար: Այդ իսկ պատճառով կանայք չեն կարող ակտիվորեն ներգրավվել արդյունաբերական և բիզնես ոլորտում:

Մինչդեռ կանանց տնտեսական առաջընթացը անհրաժեշտ է նրանց դերի բարձրացման համար ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կյանքում:

Կանանց մասնակցության մակարդակի նվազումը աշխատանքի շուկայում նաև արդյունք է նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների ոչ բավարար (<http://www.spyur.am/htmfix/spyure.htm>).

գործունեության: Նախադպրոցական հաստատությունների թիվը նվազել է վերջին տարիներին: Ներգրավվածությունն ու հասանելիությունը այս հաստատություններ նույնպես նվազել է: Շատ երեխաներ սոցիալապես անապահով ընտանիքներից հայտնվում են մանկատներում և հատուկ դպրոցներում:

Հայաստանում տնտեսության հիմնական ճյուղերից է գյուղատնտեսությունը: Համաձայն 2001թվականի մարդահամարի տվյալների բնակչության 45.1 տոկոսը ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում: Նրանց կեսից ավելին կանայք են: Աշխատանքի պայմանները շատ ծանր են և այն ունենում է իր ազդեցությունը կանանց ընդհանուր և վերականգնողական առողջության վրա:

Կառավարությունը փորձում է աջակցել կանանց առաջարկելով նրանց միկրո վարկային ծրագրեր, բայց վարկերի տոկոսադրույքները այնքան բարձր են, որ հնարավորություն չեն տալիս կանանց զարգացնելու իրենց տնտեսությունները:

Ծանր սոցիալ-տնտեսական պայմանները պատճառ են դառնում նաև արտագաղթի: Միգրանտների մեկ երրորդը աշխատանքային միգրանտներ են: Նրանցից 42 տոկոսը կանայք են: Բացի դրանից, շատ հաճախ կանայք մնում են միայնակ, երբ իրենց ամուսինները գնում են այլ երկրներ աշխատանք փնտրելու: Մի կողմից նրանք պետք է վարեն իրենց տնտեսությունը, մյուս կողմից հայթայթեն եկամուտ իրենց ընտանիքի համար: Աշխատանքի հնարավորության սակավության պատճառով կանայք երբեմն ստիպված դիմում են մուրացիկության և պոռնկության:

Առավել խոցելի խմբի մեջ են փախստական կանայք: Նրանք կազմում են բոլոր փախստականների 54 տոկոսը, իսկ նրանց կեսը ծեղեր են: Նրանք հիմնականում եղել են քաղաքաբնակ, բայց Հայաստանում ներգրավվել են գյուղատնտեսական աշխատանքների մեջ, որին սովոր չեն եղել:

3.3.2. Հաշմանդամների զբաղվածությունը

Հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մասին օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է այն աշխատանքային պայմանները, որ գործատուները պիտի ապահովեն հաշմանդամներին, օրինակ առաջին և երկրորդ կարգի հաշմանդամների համար սահմանված է կրճատված աշխատանքային օր, շաբաթական 36 ժամից ոչ ավել և ընդհանուր առմամբ, բոլոր գործատուները պետք է ապահովեն անհրաժեշտ աշխատանքային պայմաններ հաշմանդամների համար:

Պրակտիկայում, գործատուները խուսափում են աշխատանք տրամադրել հաշմանդամներին: Ջբաղված հաշմանդամների թիվը, որոնք ի վիճակի են աշխատել շատ ցածր է: «Խորհրդային Միության փլուզումից հետո այս ոլորտում իրավիճակն ավելի վատթարացել է, քանի որ Խորհրդային ժամանակաշրջանում գործում էին ձեռնարկություններ խուլերի, համրերի և այլ հաշմանդամություն ունեցողների համար: Անկախության հռչակումից հետո, ձեռնարկությունների մեծ մասը փակվեց, ներառյալ նրանք, որոնք նախատեսված էին հաշմանդամների համար»: (...)»⁹⁸ Աշխատատեղերը և պայմանները չեն համապատասխանում հաշմանդամների կարիքներին: Մյուս կողմից, հաշմանդամները իրենք պատրաստ չեն Հայաստանի աշխատաշուկայի պահանջներին: Մասնագիտական կրթության և աշխատանքի տրամադրման ընթացքը անբավարար է :

Տես նաև՝ «Ունիսոն» հկ; Զբաղվածությունը <http://unison.am/en/employment>,

3.3.3. Կոնտակտային տեղեկատվություն այլ վայրերում ստացած աստիճանների ճանաչման վերաբերյալ⁹⁹

2004 թվականին Հայաստանի կառավարությունը վավերացրեց որակավորման ճանաչման Լիսաբոնի կոնվենցիան և 2005թ. Հայաստանը միացավ Բոլոնյայի գործընթացին:

Լիսաբոնի կոնվենցիան և Բոլոնյայի գործընթացը նպատակ ունեն ստեղծել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական համարկարգ, որը կխթանի որակավորման արդար և արագ ճանաչում:

Ով է շնորհում ակադեմիական ճանաչում

ՀՀ կառավարության որոշման համաձայն ստեղծվեց Ազգային Տեղեկատվական Կենտրոն Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության համար /ԱՓՇԱՏԿ: Այս կենտրոնի

⁹⁸ ՈՒՆԻՍՈՆ հկ, հաշմանդամների ռեսուրս կենտրոն, Զբաղվածությունը <http://www.disability.am/english/employment.htm>

⁹⁹ Ինֆորմացիան վերցված և թարգմանված է Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոն /ԱՓՇԱՏԿ/-ի ինտերնետային կայքից <http://www.armenic.am/>; ինչպես նաև Կենտրոնի Գործադիր տնօրեն Գայանե Հարությունյանի հարցազրույցի արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա

նպատակն է աջակցել Հայաստանի ինտեգրացիային եվրոպական և համաշխարհային կրթական ծառայություններին, ինչպես նաև որակավորված աշխատաշուկա:

Այն անդամ է միջազգային **ԷՆԻԿ/Նարիկ ցանցի/ ENIC/NARIC- European Network of Information Centres on Academic Recognition and Mobility/Network of National Academic Recognition Information Centres** Ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների Եվրոպական Ցանց/Ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների Ազգային Ցանց:

Ինչ է ակադեմիական ճանաչումը:

Ակադեմիական ճանաչումը օտարերկրյա որակավորման ճանաչումն է կրթության շարունակման նպատակով: Ակադեմիական ճանաչումը կիրառվում է հետևյալ դեպքերում:

- Եթե անձն ունի հայկական որակավորում/ դիպլոմ և ցանկանում է շարունակել կրթությունը այլ երկրներում
- Եթե անձն ունի օտարերկրյա կրթություն/դիպլոմ և ցանկանում է շարունակել կրթությունը Հայաստանում
- Եթե անձը տեղափոխվում է մի օտար երկրից մեկ այլ երկիր որպեսզի շարունակի կրթությունը հաջորդ փուլում
- Եթե անձը վերադառնում է իր երկրի ԲՈՒՀ՝ որոշ ժամանակ արտասահմանում սովորելուց հետո:

Սովորաբար անձը դիմում է դիպլոմի ճանաչման՝ կրթությունը շարունակելու համար: Բայց կան դեպքեր, երբ ճանաչումը անհրաժեշտ է նախքան աշխատանք փնտրելը այն մասնագիտություններով, որոնք չեն պահանջում պաշտոնական ճանաչում/ոչ-կանոնակարգված մասնագիտություններ/: Այս տիպի ճանաչումը օգնում է գործատուին հասկանալ ինչքանով են համատեղելի օտարերկրյա ճանաչումը նման տեղական որակավորման հետ:

Ակադեմիական որակավորման ճանաչում ստանալու համար անձը պետք է դիմի Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն/ԱՓՇԱՏԿ, (*NICARM /National Information Center for Academic Recognition and Mobility*), ստանա պաշտոնական տեղեկանք և ներկայացնի այս փաստաթուղթը ԲՈՒՀ՝ կրթության շարունակության համար: Վերջնական որոշումը կայացվում է ԲՈՒՀԻ կողմից՝ հաշվի առնելով ԱՓՇԱՏԿ-ի խորհուրդը:

Եթե անձը արտասահմանում է, որակավորման ակադեմիական ճանաչման համար, նա պետք է դիմի ԲՈՒՀ, որն ընտրվել է կրթության շարունակության համար: Ինֆորմացիայի և խորհրդատվության համար նրանք կարող են դիմել այն երկրի **ԷՆԻԿ/Նարիկ** կենտրոն, որտեղ գտնվում են:

Հայաստանում, ինչպես նաև արտասահմանյան երկրների մեծ մասում ակադեմիական ճանաչման վերջնական որոշումը կայացնվում է ԲՈՒՀ-երի կողմից: Որոշ եվրոպական երկրներում նախքան որոշում կայացնելը ԲՈՒՀ-ը ուղարկում է դիպլոմը/ տեղեկանքները տվյալ երկրի ճանաչման տեղեկատվական կենտրոն խորհուրդ ստանալու համար:

Տեղեկատվություն գոյություն ունեցող Ակադեմիական ճանաչման կենտրոնների մասին Եվրոպայում, Հյուսիսային Ամերիայում և Ավստրալիայում կարելի է ստանալ ԷՆԻԿ/Նարիկի ցանցում, Միջազգային կազմակերպություններում, Եվրոպական միության, Յունեսկո-ի, Եվրոպական Հանձնաժողովի ինտերնետային կայքերից:

Այն անձինք, ովքեր ունեն օտարերկրյա որակավորում, անկախ քաղաքացիությունից, կարող են դիմել ակադեմիական և մասնագիտական ճանաչման:

Ճանաչման ընթացակարգը:

Արտասահմանում ստացած որակավորումը անցնում է գնահատման և ճանաչման ընթացք: Անձը պետք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր ՆԻԿԱՐՄ:

Կազմակերպությունը այնուհետև հարցումներ է կատարում այն հաստատություններին, որտեղ տրվել են հավատարմագրերը: Այս պրոցեդուրայի արդյունքում և ստացած ինֆորմացիայի հիման վրա իրականացվում է գնահատում և եզրակացություն է արվում: Եզրակացությունը տրվում է տեղեկանքի տեսքով: Այս պրոցեդուրաների ժամանակահատվածը ըստ Լիսաբոնի կոնվենցիայի կարող է տևել 16 շաբաթ:

Օտարերկրյա որակավորումները գնահատելուց հետո տրվում է **ընդհանուր ճանաչում**, եթե չկան էական տարբերություններ օտարերկրյա և ազգային համատեղելի որակավորումների միջև:

Այն դեպքում, երբ ճանաչումը մերժվում է, մասնակի կամ այլընտրանքային ճանաչումն է քննարկվում:

Լրիվ կամ մասնակի ճանաչում կամ մերժում տրվում է տեղեկանքի տեսքով հայերեն կամ անգլերեն լրգվով համաձայն միջազգային չափանիշների:

Մանրամասն ինֆորմացիա ՆԻԿԱՐՄԻ գործունեության և ծառայությունների մասին կարելի է ստանալ կենտրոնի կայքից <http://www.armenic.am/> հասցեն-Վրացյան փողոց 73, հեռախոս (374) (10) 57 84 56

Ինֆորմացիա պաշտոնական ճանաչված և հավատարմագրված հաստատությունների մասին կարելի է ստանալ <http://www.armenic.am> կայքից

3.3.4. Ձինվորական ծառայություն

3.3.4.1. Իրավական կարգավորում և պրակտիկա/ հատկապես նրանց համար, ովքեր գտնվել են արտասահմանում/

Պարտադիր զինվորական ծառայությունը Հայաստանում դեռևս Խորհրդային տարիներից ամրագրված է սահմանադրությամբ բոլոր 18-27 տարիքի երիտասարդ տղաների համար: Ձորակոչի ընթացակարգը շատ նման է Խորհրդային կարգերի զորակոչին, և նրանք ովքեր ավարտում են իրենց ծառայությունը ստանում են զինվորական ծառայության տեղեկանք: Ձինծառայության վկայականի ունենալը կարևոր է տարաբնույթ փաստաթղթերի դիմելու համար, ներառյալ անձնագիր կամ վիզա, և էական է մի շարք հիմնական քաղաքացիական իրավունքներ իրականացնելիս, ինչպիսիք են անուսնությունը, պետական կրթական համարկարգում բարձրագույն կրթության դիմելը, ինչպես նաև հանրային ոլորտում աշխատանքի դիմելը:¹⁰⁰

ՀՀ սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համաձայն օրենքով նախատեսված ընթացակարգի:

Ձինծառայության մասին օրենքը ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի սեպտեմբերի 16-ին:

Ձինակոչիկ են համարվում նախագինակոչային և զինակոչային տարիքի տղամարդիկ, որոնք գրանցված են պահեստազորում և կանայք, որոնք ունեն զինվորական մասնագիտություն և ավարտել են զին ծառայությունը

- Նախագինակոչիկը 16-18 տարեկան արական սեռի քաղաքացին է համաձայն զինծառայության մասին օրենքի
- Ձինակոչիկը 18-27 տարեկան արական սեռի քաղաքացին է համաձայն զինծառայության մասին օրենքի;

Ձին ծառայության տևողությունը 24 ամիս է: Բոլոր 18-27 տարեկան տղամարդիկ ենթակա են զինվորական ծառայության: Այն մարդիկ, ովքեր սպա են և ունեն հատուկ հմտություններ, կարող են կանչվել ծառայության մինչև 35 տարեկանը: Երիտասարդները ստանում են նախագինակոչային հրահանգներ 16 տարեկանում, համաձայն որի նրանք

¹⁰⁰ Հայաստան: Խղճի և կրոնի ազատության վախ՝ Եհովայի Վկաների իրավունքների ոտնահարում, 2008, հունվարի 16 <http://www.amnesty.org/en/>

գրանցվում են ցուցակներում և պետք է անցնեն բժշկական քննություն: Ջորակոչը կատարվում է 18 տարեկանում: Տարեկան կա երկու զորակոչ, մեկը՝ գարնանը, մյուսը՝ աշնանը:¹⁰¹

Ձինժառայության մասին օրենքի 3.1 հոդվածը կարգավորում է երկքաղաքացիների զինվորական պարտականությունները: Մասնավորապես այն ասում է, որ այլ երկրի քաղաքացիները, ովքեր ստացել են ՀՀ քաղաքացիություն ազատվում են զինժառայությունից, եթե նրանք ծառայել են այլ երկրների զինված ուժերում ոչ պակաս քան 12 ամիս կամ այլընտրանքային զինժառայություն ոչ պակաս քան 18 ամիս նախքան ՀՀ քաղաքացիություն ստանալը, բացառությամբ ՀՀ կառավարության կողմից նշված որոշ երկրների: Օրենքը ասում է նաև, որ ՀՀ քաղաքացիները, ովքեր ստանում են այլ երկրի քաղաքացիություն, չեն ազատվում զինվորական ծառայությունից անկախ նրանից, թե նրանք այլ երկրում անցել են ծառայություն, թե ոչ:

- Ձին ծառայության մասին օրենքի 4/6/ հոդվածը կարգավորում է ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական մարմինների պարտականությունները, զինակոչիկների գրանցման հետ կապված: Նրանք պարտավոր են զինակոչիկներին տեղեկացնել իրենց ներկայանալու մասին զինկոմիսարիատ և աջակցել նրանց վերադառնալու հանրապետություն և տեղեկացնել համապատասխան կոմիսարիատ իրենց ժամանման մասին:
- Ձին ծառայության մասին օրենքի 5/2/ հոդվածը ասում է, որ քաղաքացիների գրանցումը, որոնք ապրում են արտասահմանում ավելի քան մեկ ամիս կատարվում է դիվանագիտական և հյուպատոսական մարմինների կողմից:

Ջորակոչից խուսափելը պատժելի է Քրեական օրենսգրքի 327 հոդվածի համաձայն: Փոփոխություններ են կատարվել այս հոդվածում 2005թվականի դեկտեմբերի 13-ին համաձայն ՀՀ թիվ 34 օրենքի, և 2006 թվականի հունիսի 1-ին համաձայն ՀՀ թիվ 59 օրենքի:

Դասալքությունը պատժելի է ՀՀ ՔՕ 362 հոդվածով:

- Դասալքությունը, այսինքն, զինժառայությունից լիովին խուսափելու նպատակով կանավոր զինվորական մասը լքելը և ծառայության վայրից հեռանալը, ինչպես նաև նույն պատճառներով ծառայության չներկայանալը պատժվում է մինչև հինգ տարի ազատազրկմամբ
- Դասալքությունը, որն իրականացվում է ծառայողական զենքով, կամ նախապես մի խումբ անձանց համաձայնությամբ պատժվում է ազատազրկմամբ 3-8 տարի ժամկետով
- Դասալքությունը, որն իրականացվում է ռազմական գործողությունների ժամանակ, պատերազմի կամ զինվորական գործողությունների ժամանակ, պատժվում է 5-12 տարի ժամկետով
- Ծառայողները, որոնք իրականացնում են այս հոդվածի առաջին և երկրորդ մասում նշված գործողությունները, առաջին անգամ կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե այս գործողությունները կատարվել են դաժան/սարսափելի/ հանգամանքներում, ինչպես նաև եթե ծառայությունից բացակայելուց հետո 3 օրվա ընթացքում նրանք հանձնվում են զինվորական տեղամաս, ծառայության վայր կամ իրավապահ մարմիններին կամ այլ պետական մարմին:

2003 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց օրենք ՀՀ քաղաքացիների մասին, որոնք խուսափել են կատարել պարտադիր զինվորական

¹⁰¹Ազգային զեկույց, Հայաստան, Եվրոպական Գործերի Քվեյքը Խորհուրդ
<http://www.quaker.org/qcea/coreport/armenia.pdf>

ծառայությունը սահմանված կարգի խախտմամբ:¹⁰² Այս օրենքը ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ից: Այս օրենքը տարածվում է ՀՀ բոլոր քաղաքացիների վրա, որոնք չեն անցել իրենց պարտադիր զինվորական ծառայությունը 1992 թվականի զորակոչից մինչև սույն օրենքի ընդունումը:

Այս օրենքի համաձայն, պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները պարտադիր զինվորական ծառայության զորակոչին օրենքի խախտմամբ չներկայանալու պահից սկսած մինչև 27 տարին լրանալը կամ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքերը ձեռք բերելը, կարող են մուծել վճարներ՝ համաձայն դրույքաչափերի: Վճարման դրույքաչափերը պետք է մուծվեն յուրաքանչյուր զորակոչին չզորակոչվելու դիմաց: Օրենքը սահմանում է վճարման դրույքաչափերը՝ ելնելով նվազագույն աշխատավարձից:

Սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները պետք է դիմումը ներկայացնեն այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են: Դիմումին կից ներկայացվում է պարտադիր զին ծառայությունից ազատվելու կամ տարկետման իրավունք ստանալու հիմքերը: Այն քաղաքացիները, որոնք գտնվում են օտարերկրյա պետություններում, կարող են դիմումը ներկայացնել օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայություն կամ հյուպատոսական հիմնարկ: Քաղաքացիների դիմումները սահմանված կարգով գրանցվելուց հետո փոխանցվում են համապատասխան մարմիններին: Քաղաքացու դիմումի հետ կապված փոստային առաքումների ծառայության վճարները կատարում է դիմումատուն:

Դիմումը քննարկվում է և քաղաքացուն պատասխանը տրվում է մեկ ամսվա ընթացքում: Լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում պահանջող դիմումները քննարկվում են և պատասխանը տրվում է երկու ամսից ոչ ուշ:

2004 թվականի մարտի 4-ին ՀՀ կառավարությունը ընդունեց թիվ 264 որոշումը, համաձայն որի որոշվեց դիմումների քննարկման մարմինների կառուցվածքը և աշխատանքային գրաֆիկը: Համաձայն այս որոշման հաստատվեցին հանրապետական հանձնաժողովը և միջգերատեսչական հանձնաժողովը:

3.3.4.2. Հնարավորություն խղճի ազատության հիմքով ազատման իրավական կանոնների և պրակտիկայի

Խղճի հիմքով խուսափումը իրավաբանորոշեն ճանաչվել է այլընտրանքային ծառայության մասին օրենքով: Օրենքը ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2003 թվականի դեկտեմբերին և ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսին: Փոփոխություններ են կատարվել այս օրենքում համաձայն 2004 թվականի հունվարի 13-ի թիվ 162 օրենքի և 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 60 օրենքով:

- Համաձայն այս օրենքի հոդված 3-ի « այլընտրանքային ծառայություն կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործումը:
- Համաձայն այս օրենքի հոդված 5-ի « այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը 36 ամիս է, մինչդեռ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը 42 ամիս է:

Չնայած որ այլընտրանքային ծառայության մասին օրենքը ընդունվել է, բայց դեռևս կան շատ բացթողումներ կապված այս օրենքի իրականացման հետ:

¹⁰² ՀՀ Ազգային ժողով, օրենսդրություն, «Սահմանված կարգի խախտումով պարտադիր զինծառայությունից խուսափող քաղաքացիներ <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&lang=eng>

3.3.5. Կրթություն և վերապատրաստման ծրագրեր/մատչելիությունը, արժեքները/

3.3.5.1. Մանկապարտեզ և դպրոցական հնարավորություններ

Համաձայն երեխայի իրավունքի մասին ՀՀ թիվ 59 օրենքի 11-րդ հոդվածի ընդունված 1996 թվականի մայիսի 29-ին յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք և կրթական հաստատության ընտրության իրավունք ծնողների կամ իրավական ներկայացուցչի համաձայնությամբ:

ՀՀ սահմանադրության 35-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուր հայ քաղաքացու կրթության իրավունքը: Միջնակարգ կրթությունը հանրային հաստատություններում անվճար է և յուրաքանչյուր քաղաքացի ունի անվճար բարձրագույն ուսումնական հաստատություն կամ արհեստագործական կրթություն ստանալու իրավունք մրցակցային հիմքի վրա:

Համաձայն ՀՀ կրթության մասին թիվ 297 օրենքի, ընդունված 1999թ. ապրիլի 14-ին, Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է բոլոր երեխաների կրթությունը անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, հավատից, քաղաքական կամ այլ հայացքներից:

Երեխաներն ունեն իրավունք ստանալու կրթություն նախադպրոցական, դպրոցական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Երեխայի զարգացման և կրթության առաջին քայլըն նախադպրոցական խնամքն ու կրթությունն է: ՀՀ նախակրթության մասին թիվ 236 օրենքը ընդունվել է 2005թ. նոյեմբերի 15-ին, որը կարգավորում է նախադպրոցական հաստատությունների աշխատանքը: Նախակրթարանները մատուցում են ցերեկային խնամքի և կրթության ծառայություններ:

Նախադպրոցական խնամքի հիմնական դերը կառավարությունը հատկացնում է ընտանիքին և վերցնում է պարտավորություն ապահովելու համապատասխան պայմաններ ընտանիքին՝ երեխային լիարժեք զարգացում և խնամք ապահովելու համար:

Նախադպրոցական կրթությունը նպատակ ունի ուժեղացնելու պայմանները երեխայի առողջության պահպանման համար, բացահայտելու երեխայի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունները և ապահովելու վստահելի/հաստատուն հիմք կրթելու մի սերունդ ազգային գիտակցության և ինքնագնահատման ոգով:

Խորհրդային Միության փլուզումից հետո և տնտեսական ճգնաժամի տարիներին նախադպրոցական կրթական համակարգը զգալիորեն տուժեց: Մտերների, մանկապարտեզների և նրանց հաճախողների թիվը զգալիորեն կրճատվեց: Կառավարությունը ի վիճակի չէր եղել ֆինանսավորելու այս հաստատությունները: 1996-ին բարեփոխումների արդյունքում, նախադպրոցական հաստատությունները փոխանցվեցին տեղական ինքնակառավարման մարմիններին, և ներկայումս նրանք ստանում են ֆինանսավորում համայնքային բյուջեներից:

Կան պետական և ոչ-պետական նախադպրոցական հաստատություններ: Երկու դեպքում էլ ծնողները պետք է վճարեն հաճախելու համար, ինչպես նաև ամբողջ տարվա ընթացքում տարբեր միջոցառումների համար: Նախադպրոցական հաստատությունների թիվը քաղաքներում ավելի շատ են, քան գյուղերում: Շատ գյուղեր չունեն այսպիսի հաստատություններ կամ նրանք չեն գործում:

Նպատակ ունենալով բարեփոխումներ մտցնել նախադպրոցական կրթության բնագավառում, շատ միջազգային կազմակերպություններ են աջակցում այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են «Նախադպրոցական կրթություն, խնամք և զարգացում» «Ծնողների կրթություն», «Քայլ առ քայլ» և «Ներառական կրթության զարգացում երեխաների համար»: Այս ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են ՅՈՒՆԵՍԿ-ի և Ուորլդ

Վիժըն միջազգային բարեգործական ծրագրերի կողմից, տրամադրել են ուսուցումներ նախադպրոցական ուղրտի մասնագետների համար, ծնողների և համայնքի անդամների համար: Թողարկվել են մեթոդաբանական ձեռնարկներ:

«Ծնողական կրթություն» ծրագրի նպատակն է հատկապես երեխաներին և խնամակալներին տրամադրել գիտելիքներ երեխայի զարգացման վերաբերյալ և ընդարձակել ծնողների և երեխաների ներգրավումը նախադպրոցական կրթության մեջ այլընտրանքային ծառայությունների միջոցով: Ծրագիրը տրամադրում է մեթոդական աջակցություն երեխաների ծնողներին, որոնք չեն հաճախում մանկապարտեզ, որպեսզի նորմալ կարողանան կազմակերպել իրենց ընտանեկան դաստիարակությունը:

3.3.5.2. Կառավարության կողմից

Դպրոցական հնարավորություններ: Կրթության ոլորտը հիմնականում կառավարվում է ՀՀ կրթության մասին օրենքով: Երկու հիմնական ծրագրերը համաձայն այս օրենքի հետևյալն են:

- Հանրակրթություն
- Մասնագիտական կրթություն

Հանրակրթություն: Քանի որ Հայաստանը միացել է Բոլոնիայի գործընթացին, համաձայն որի կրթական համարկարգը պիտի համապատասխանի միջազգային ստանդարտներին, կրթական համակարգը անցնում է կրթական բարեփոխում: 2006թ.-ից միջնակարգ կրթության տևողությունը 12 տարի է:

Չնայած որ միջնակարգ կրթությունը անվճար է, ծնողները ստիպված են ծախսել բավականին զուևար դպրոցահասակ երեխայի վրա: Այս ծախսերը ներառում են հագուստը, կոշիկները, դասագրքերը, վարձերը և այլն:

Երեխաները, որոնց ընտանիքները գրանցված են Ընտանիքի աղքատության նպաստի համակարգում, կարող են ստանալ 25000 ՀՀ դրամ/ 45.61Եվրո/յուրաքանչյուր առաջին դասարանցու համար:

Ծնողներին մտահոգում է դասագրքերի արժեքների հարցը: 1997-ից գործում է դասագրքերի վարձակալական համակարգը: Վճարը, որը ծնողները վճարում են դասագրքերի համար, գնում է դասագրքերի վերականգնման ֆոնդին, որն օգտագործվում է դասագրքերի հետագա տպագրման համար: Կառավարությունը անապահով ընտանիքների երեխաների համար ֆոնդին տրամադրում է գումարի տաս տոկոսը:

Հանրակրթությունը բաղկացած է երեք մակարդակից:

- Տարրական դպրոց/1-3 դասարաններ/
- Հիմնական դպրոց/4-9 դասարաններ/
- Ավագ դպրոց/10-12 դասարաններ/

Միջնակարգ կրթությունը իրականացվում է միջնակարգ դպրոցում: Միջնակարգ կրթությունը պարտադիր է մինչև 16 տարեկանների համար, երբ նրանք ավարտում են 9-րդ դասարանը: Երեխաները ընդունվում են դպրոց 6 տարեկանում:

Ավագ դպրոցի շրջանավարտները ստանում են լրիվ միջնակարգ կրթության վկայական, որը կոչվում է ատեստատ/ հասունության վկայական/ և կարող են շարունակել կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Միջնակարգ կրթության պարտադիր պահանջը չի վերաբերում հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին: Հատուկ ընդհանուր կրթությունը կարգավորվում է հատուկ կրթության մասին օրենքով: Հատուկ դպրոցները իրականացնում են հանրակրթական և հատուկ կրթական ծրագրեր ապահովելու համար կրթություն հատուկ կարիքներով երեխաների և հակա-սոցիալական վարք ցուցաբերող երեխաների համար: Համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարության 2008 թվականի

հաշվետվության Հայաստանում կան 26 հատուկ դպրոցներ հատուկ կարիքներով երեխաների համար, 2-ը՝ հակասոցիալական վարք ցուցաբերողների համար, և 9-ը՝ հատկապես տաղանդավոր երեխաների համար:

Արտադպրոցական կրթություն: Արտադպրոցական կրթության նպատակն է ստեղծել պայմաններ զարգացնելու աշակերտների հետաքրքրությունը, ապահովելու նրանց հոգեբանական, գեղագիտական, ֆիզիկական զարգացումը և ապահովել շրջակա միջավայրի և այլ պրակտիկ գիտելիքներ՝ կազմակերպելով նրանց ազատ ժամանակը /Կրթության մասին օրենքի 20-րդ հոդված/: Արտադպրոցական կրթական համակարգը ներառում է ստեղծագործական և գեղագիտական երիտասարդական կենտրոնները, երաժշտական և արվեստի դպրոցները, ակումբները և պատանի բնասերների, տեխնոլոգների, շրջակա միջավայրի պաշտպանների տուրիստական ճամբարները, սպորտ դպրոցները և հանգստյան ճամբարները և այլն:

Մասնագիտական կրթությունը ներառում է՝

- նախնական/ արհեստագործական
- միջին մասնագիտական/արհեստագործական
- բարձրագույն մասնագիտական
- հետ բուհական

Նախնական/ արհեստագործական կրթության նպատակն է ուսուցանել աշակերտներին այն աշխատանքների համար, որոնք պահանջում են նախնական մասնագիտական որակավորում, հանրակրթության հիմքի վրա:

Տեխնիկական մասնագիտական կրթությունը տրվում է հիմնական կամ միջնակարգ կրթության հիմքի վրա տեխնիկական քոլեջներում: Կրթության ժամանակահատվածը կազմում է համապատասխանաբար 1-3 տարի:

Միջին մասնագիտական կրթության նպատակն է ապահովել աշակերտներին միջին մասնագիտական որակավորում, ընդհանուր միջնակարգ կրթության հիմքի վրա, նաև ապահովել խորը և ընդհարձակ մասնագիտական գիտելիքներ:

Միջին մասնագիտական կրթությունը իրականացվում է միջին մասնագիտական կրթության հաստատություններում: քոլեջ կամ արհեստագործական դպրոցներում:

Մասնագիտական կրթության ոլորտը կարգավորվում է նախնական մասնագիտական/ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին թիվ 164 օրենքով, ընդունված 2005թ. հուլիսի 8-ին Ազգային ժողովի կողմից:

«Առած» գործակալությունը տպագրում է տեղեկագիրք «Հայաստանի քոլեջները, որը ներառում է մանրամասն ինֆորմացիա գործող պետական և ոչ-պետական քոլեջների, գիմնազիաների, հատուկ և բժշկական դպրոցների վերաբերյալ:

Բարձրագույն և հետ-բուհական կրթության ոլորտը կարգավորվում է կրթության մասին օրենքով և բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին թիվ 62 օրենքով, ընդունված Ազգային ժողովի կողմից 2004թ-ի դեկտեմբերի 14-ին:

Բարձրագույն և հետ-բուհական կրթությունը իրականացվում է երեք աստիճաններով պետական և ոչ-պետական կրթական հաստատություններում, առկա և հեռակա կրթական ձևերով, վճարովի և անվճար հիմունքներով:

- **Առաջին աստիճանը/** բակալավր ներառում է չորս տարի ուսուցում ինստիտուտներում/համալսարաններում: Չորս տարվա կուրսը ավարտելուց հետո տրվում է բակալավրի աստիճան: Դիպլոմ տրվում է, եթե կրթությունը իրականացվել է հինգ տարում:
- **Երկրորդ աստիճանը/** մագիստրոս/ ներառում է ուսուցման երկու տարի: Ուսանողին տրվում է մագիստրոսի աստիճան:
- **Երրորդ աստիճանը /**ասպիրանտուրա/-հետ-բուհական կրթությունը շարունակվում է երկու տարի: Ուսանողները ստանում են անհրաժեշտ գիտելիքներ գիտական հետազոտական աշխատանք իրականացնելու համար: Այս աստիճանը

ավարտելուց և դիսերտացիոն թեզ պաշտպանելուց հետո ուսանողներին տրվում է Գիտությունների թեկնածուի աստիճան:

Ասպիրանտուրան ավարտելու և գիտությունների թեկնածուի աստիճան ստանալուց հետո հետազոտողները կարող են շարունակել իրենց դոկտորական ուսումնասիրությունները Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետազոտական ինստիտուտներից որևէ մեկում: Դիսերտացիան պաշտպանվում է Բարձրագույն Ատեստացիոն Կոմիտեի դիմաց: Այն անկախ մարմին է՝ բաղկացած է տվյալ ոլորտի դոկտորներից, ակադեմիկոսներից և պրոֆեսորներից:

Բարձրագույն կրթության համար գործում են հետևյալ հաստատությունները՝

- համալսարան
- ինստիտուտ
- ակադեմիա
- կոնսերվատորիա

Բարձրագույն կրթությունը պարտադիր չէ, բայց շատ ցանկալի է հայերի համար, որոնք ավանդորեն մեծ ուշադրություն են դարձնում կրթությանը: Կան պետական և ոչ-պետական հաստատություններ:

Կրթական վճարները հաստատություններում շատ բարձր են և շատ հաճախ ծնողները չեն կարող վճարումներ անել: Նրանք, ովքեր չեն կարող վճարել, չեն կարող շարունակել իրենց կրթությունը: Կան նաև շատ սահմանափակ անվճար տեղեր /պետ պատվեր/ ինստիտուտներում, բայց դրանք շատ մրցունակ են:

Որոշ կատեգորիաներ ունեն որոշակի առավելություններ սովորելու անվճար տեղերում: Դրական գնահատականներով ընդունվելու դեպքում առավելությունը տրվում է առաջին և երկրորդ կարգի հաշմանդամներին և հաշմանդամ երեխաներին: Ուսման վճարները այս հաշմանդամների, որոնք սովորում են պետական ուսումնական հաստատություններում, փակվում է պետական բյուջեից:

Բարձր դասարանի երեխաները հանդիպում են դժվարությունների բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելիս, քանի որ դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն համալսարաններ կամ այլ ԲՈՒՀ-եր ընդունվելու համար: Սա լրացուցիչ ֆինանսական ներդրում է ընտանիքի համար:

Միջնակարգ դպրոցի շրջանավարտները օգտվում են մասնավոր կրկնուսույցների ծառայություններից, հաճախ սա անելով երկու կամ ավելի առարկաների համար, ծախսելով միջինը 30-35 ժամ շաբաթական և վճարելով տարեկան 200000-500 000 դրամ/364.89-912.23 եվրո/ այս ծառայությունների դիմաց:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է մրցութային կարգով: Դիմորդները կարող են ստանալ ինֆորմացիա պետական և մասնավոր ԲՈՒՀ-երի մասին Դիմորդ տեղեկագրքից: Տեղեկագիրքը հրատարակվում է «Առած» գործակալության կողմից:

Տեղեկագիրքը թարմացվում և տպագրվում է ամեն տարի: Այն ներառում է ինֆորմացիա Հայաստանի, ինչպես նաև Ռուսաստանի դաշնության ինստիտուտների և բարձրագույն կրթության վերաբերյալ: Տեղեկագիրքը ներառում է լրացուցիչ ինֆորմացիա:

- Ներկա լրացուցիչ կուրսերի և քոլեջների
- Վճարման նպաստների և արտոնությունների
- Հետ-բուհական կուրսերի
- Գիտական և սոցիալական ուսանողական կազմակերպությունների մասին

Ինֆորմացիա բարձրագույն հաստատությունների, պայմանների և ընդունման կարգի մասին կարելի է ստանալ ՀՀ Կրթության և Գիտության ինտերնետային կայքից www.edu.am

Մանրամասն ինֆորմացիա տարբեր կրթական հաստատությունների, ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մասին կարելի է ստանալ Սփյուռից: www.spyur.am.

3.3.5.3. Մասնավոր կազմակերպությունների կողմից:

Ինչպես նշվեց վերևում, բոլոր կրթական հաստատությունները Հայաստանում գտնվում են ՀՀ Կրթության և Գիտության նախարարության ենթակայության ներքո:

Բացի պետական կրթական հաստատություններից, կան նաև մասնավոր հաստատություններ բոլոր մակարդակներում:

- Դպրոցներ
- Քոլեջներ, գիմնազիաներ, արհեստագործական դպրոցներ
- Բարձրագույն ուսումնական հաստատություններ

Նրանց գործունեությունը կարգավորվում է նույն իրավական ակտերով և նորմերով ինչպես պետական հաստատություններին: Բոլոր հաստատությունները, որոնք առաջարկում են կրթություն Հայաստանում պահանջում են լիցենզիա: Համակարգը տալիս է հավասար հնարավորություններ պետական և հանրային հաստատություններին:

Կրթության մասին օրենքի համաձայն /հոդված 41-44/ «Կրթական հաստատություններին լիցենզիաների տրամադրումը», «Պետական հավատարմագրումը» «կրթության պետական կառավարման լիազորված մարմինը» իրականացնում է լիցենզավորումն ու հավատարմագրումը:

«Լիցենզավորման և հավատարմագրման ծառայությունը» ստեղծվել է 2000թ հունիսի 7-ին: Լիցենզավորման և հավատարմագրման ծառայությունը Կրթության և Գիտության նախարարության կառուցվածքային միավոր է և բոլոր որոշումները լիցենզավորման և հավատարմագրման կայացնում է նախարարը:

Կրթական հաստատությունների լիցենզավորումը, ինչպես նաև մասնագիտությունների հավատարմագրումը և եզրակացությունների տրամադրումը կատարվում է Լիցենզավորման և հավատարմագրման ծառայության կողմից համաձայն կառավարության 2000թ. հունիսի 23-ին հաստատված թիվ 344 որոշման:

Մասնավոր կրթական հաստատությունները հայտարարում են իրենց ծառայությունների մասին հանրապետական և տեղական թերթերում և հիմնականում գրանցված են «Սփյուռ» տեղեկագրքում:¹⁰³

3.3.5.4. Միջազգային կազմակերպությունների և հկ-ների կողմից

Շատ միջազգային կազմակերպություններ և հկ-ներ իրականացնում են տարբեր ծրագրեր կրթության ոլորտում: Նրանք իրականացնում են տարբեր ուսումնական և վերապատրաստման ծրագրեր:

«Սփյուռ» տեղեկագիրքը տալիս է ինֆորմացիա տարբեր կրթական հաստատությունների և ծրագրերի մասին:

3.3.5.5. Վերադարձողների երեխաները

Ռիսկերի մեջ, որ կարող են վերադարձողների երեխաները հանդիպել հայրենիք վերադառնալուց հետո, կրթական համակարգի վերաինտեգրման հարցն է: Այստեղ լեզվի խնդիրն է: Գոյություն ունի կարգ ընդհանուր/հանրակրթական/ և հատուկ կրթական

¹⁰³ ՍՓՅՈՒՌ տեղեկատու, Հայաստան www.spyur.am

հաստատություններ ընդունվելու համար: Թիվ 619 կարգը ընդունվել է Կրթության և Գիտության նախարարության կողմից 2003 թվականի օգոստոսի 25-ին: Փոփոխություններ են կատարվել կարգի 18,19 կետերում կապված վերադարձողների երեխաների հետ համաձայն 2007թվականի դեկտեմբերի 11-ի Նախարարի հրամանի¹⁰⁴

- **Կետ 18:** Հայաստանի քաղաքացիների երեխաները, որոնք սովորել են օտար երկրների առաջին և երկրորդ դասարաններում ռուսական կամ օտար լեզվով դասավանդվող դպրոցներում կամ դասարաններում, իրենց երկիր վերադառնալուց հետո կարող են շարունակել իրենց ուսումը հայերեն ուսուցմամբ համապատասխան դասարաններում:
- **Կետ 19:** Այն հայ քաղաքացիների երեխաները, որոնք անընդմեջ վեց տարի սովորել են օտար երկրների ռուսերեն կամ օտար լեզվով դասավանդվող դպրոցներում կամ դասարաններում, իրենց ծագման երկիր վերադառնալիս կարող են շարունակել իրենց ուսուցումը ռուսերեն կամ օտար լեզվով դասավանդվող համապատասխան դասարաններում: Մնացած դեպքերում, վերադարձողների երեխաները կարող են շարունակել իրենց ուսուցումը ռուսերեն կամ օտար լեզուներով դասավանդվող դասարաններում մինչև ուսումնական տարվա վերջ, իսկ երկրորդ կիսամյակում վերադառնալու դեպքում մինչև հաջորդ ուսումնական տարվա վերջ պայմանով, որ նրանք պիտի ապահովեն հայերեն լեզվի գիտելիքներ այս ժամանակահատվածում և տեղափոխվել հայերեն լեզվով դասավանդվող դասարան:

Հայաստանի քաղաքացիների երեխաները կարող են ընդունվել դպրոցներ ընդունելության ընդհանուր կանոնների համաձայն /կարգ թիվ 619` ընդունված Կրթության և Գիտության նախարարության կողմից 2003թ.օգոստոսի 25-ին/: Այս կարգի համաձայն ծնողները պետք է ներկայացնեն:

- Դիմում
- Երկու լուսանկար
- Ծննդյան վկայականի պատճենը
- Տեղեկանք երեխայի առողջական վիճակի մասին համապատասխան բժշկական հաստատությունից
- Դպրոցից դպրոց փոխանցման թերթիկ
- Աշակերտի անձնական թերթիկը

Այս փաստաթղթերը պետք է ներկայացվեն հուլիսի1-ից մինչև օգոստոսի31-ը:

Այլ հատուկ ռիսկեր չկան վերադարձողների երեխաների համար:

3.3.5.6. Բաժանված/ Անջատված երեխաներ:

Երեխաները չպիտի բաժանվեն իրենց ծնողներից, բացառությամբ երբ բաժանումը կատարվել է իրավասու իշխանությունների կողմից, երեխայի շահերից բխելով/ Երեխայի իրավունքների կոնվենցիայի հոդված 9 /

Երեխաներ, որոնք անջատված են իրենց ծնողներից կարող են լինել:

- Երեխաներ, որոնք օրենքի հետ հակասություն/ կոնֆլիկտ ունեն
- Երեխաներ, որոնք ապրում և աշխատում են փողոցներում
- Երեխաներ հաստատություններում/հատուկ դպրոցներ և մանկատներ/

❖ Երեխաներ, որոնք օրենքի հետ հակասություն/կոնֆլիկտ ունեն

Դեռահասների հանցագործությունների բնորոշումը և կանխարգելումը կարևոր խնդիր է հայ հասարակության համար:

¹⁰⁴ Ինֆորմացիան տրամադրել է Անահիտ Մուրադյանը, Կրթության և Գիտության նախարարության հատուկ կրթության վարչության գլխավոր մասնագետ, 2008թ. Ապրիլի 18

Պետությունը, ինչպես նաև հկ-ները և միջազգային կազմակերպությունները միջոցներ են ձեռնարկում պաշտպանելու այն դեռահասների իրավունքներն և շահերը, որոնք զոհ են դարձել հանցագործությունների:

Հայկական Կարիտասը իրականացնում է «Երիտասարդների և նրանց ընտանիքների սոցիալական վերականգնում» ծրագիրը Վանաձորում: Այս ծրագիրը նպաստում է դեռահասների հանցագործությունների նվազեցմանը Վանաձորում, տրամադրելով համակարգչի և լեզվի ուսուցումներ: Դեռահասները նաև սովորում են որոշ արհեստների տարրական հմտություններ՝ հաճախելով տարբեր կուրսեր՝ կոշկակարության, վարսահարդարման, խոհարարության, ասեղնագործության/կարի դիզայնի ուսուցումներ առաջարկվում են 10-22 տարեկան 150 երեխաների, որոնք արդեն գրանցված են Վանաձորի ներքին գործերի /ոստիկանության/դեռահասների բաժնում:¹⁰⁵

Այն երեխաների կրթությունը, որոնք կոնֆլիկտի մեջ են օրենքի հետ, իրականացվում են հատուկ կրթական հաստատություններում:

❖ Փողոցային երեխաներ ու մուրացիկներ

Հայաստանի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում փողոցի երեխաների վրա, փորձելով նվազեցնել այս երևույթը և կանխարգելել այն: Այս երեխաները գտնվում են ՀՀ Ոստիկանության հատուկ բաժնի վերահսկողության տակ:

Հայ Օգնության ֆոնդի/ՅՕՖ/ Ընդունման և Կողմնորոշման կենտրոնը, «Օրրան» հկ-ն և Ուորլդ Վիժն Հայաստանը աջակցում են այս երեխաներին իրենց ցերեկային կենտրոններում:

3.3.5.7. Որբեր

❖ Պետության պարտականությունը ծնողազուրկների խնամքի հանդեպ, իրավական կարգավորումը

Ընդհանուր իրավիճակը: Այն երեխաները, որոնք չունեն ծնողներ կամ զրկված են ծնողական խնամքից տարբեր պատճառներից ելնելով, կարիք ունեն պետության և հասարակության աջակցությանը: Նրանք դասվում են առավել խոցելի խմբերի դասին:

Հայաստանի Հանրապետությունում Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարությունը, Կրթության և գիտության Նախարարությունը, Առողջապահության Նախարարությունը պատասխանատվություն են կրում այս երեխաների խնամքի և կրթության համար:

Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության կառուցվածքում կա երեխաների և կանանց հարցերի վարչություն, որոնք գործունեություն են իրականացնում բարելավելու կանանց և երեխաների պայմանները:

Երեխաների վարչությունը ներգրավված է մի շարք ծրագրերում, որոնք նպատակ ունեն պաշտպանելու խոցելի խմբերին, ներառյալ փողոցներում ապրող երեխաները, ծնողներից բաժանված երեխաները /որբեր և հաստատություններում գտնվող երեխաները/: Խնամատար ընտանիքի և որդեգրման մեխանիզմի նոր համակարգ է հաստատվել:

Բոլոր վարչական տարածքներում ստեղծվել են «երեխայի իրավունքների պաշտպանության» հատուկ բաժիններ:

2002թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ ազգային ժողովը ընդունեց ծնողական խնամքից զրկված երեխաների սոցիալական պաշտպանության թիվ 411 օրենքը: Այս օրենքը կարգավորում է ծնողական խնամքից զրկված երեխաների կրթության, բնակության և սոցիալական պաշտպանության իրավունքը:

¹⁰⁵ Հայկական Կարիտաս հկ http://www.caritasarm.am/index.php?pageUrl=current_implementation&num=16

Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարությունը գրանցում է ծնողական խնամքից զրկված և բնակարանի կարիք ունեցող երեխաներին:

2003թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը ընդունեց թիվ 1745 որոշումը՝ հաստատելով ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների Ազգային ծրագիրը: Այս ծրագիրը ներառում է երեխայի տարբեր ոլորտներին վերաբերող քաղաքականությունը, համաձայն որի երեխաների խնդիրները պետք է լուծվեն պետական հաստատությունների, տեղական իշխանությունների և հի-ների հետ համագործակցելով:

2004թ. նոյեմբերին 9-ին ՀՀ ազգային ժողովը ընդունեց նոր ընտանեկան օրենսգիրքը, որը կարգավորում է դժվար իրավիճակում գտնվող երեխաների հիմնական խնդիրները:

Հիմնական ուղղությունները հետևյալն են:

- երեխայի խնամքի և պաշտպանության մեկ համակարգի ստեղծումը
- երեխաների թվի կրճատումը մանկատներում, պետական հատուկ կրթական հաստատություններում, երեխայի խնամքի և պաշտպանության գիշերօթիկ դպրոցներում և հոսքի կանխարգելում դեպի այս հաստատություններ
- Պայմանների բարելավում երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում:

2006թ. մարտի 12-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց «Դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների ռազմավարությունը 2006-2010-ին»

Կա նաև երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագիր-2007/ընդունված, 2006թ. օգոստոսի 18-ի կառավարության միստի արձանագրային թիվ 32 որոշմամբ/:

2000թ. փետրվարին ՀՀ կառավարությունը ընդունեց թիվ 64 Որոշումը երեխայի որդեգրման կարգը հաստատելու վերաբերյալ:

Ծնողական խնամքից զրկված երեխաների խնամքը: Վերջին տարիների ընթացքում շատ երեխաներ հայտնվեցին մանկատներում և հատուկ կրթական հաստատություններում դժվար սոցիալական պայմանների պատճառով՝ գործազրկություն, բնակչության ցածր կենսապայմաններ, դեղորայքի և բժշկական ծառայությունների բարձր արժեքներ, ծնողների կարողությունների պակաս երեխաների խնամքի և դաստիարակության վերաբերյալ, երեխայի խնամքի ծառայությունների պակաս: Հաստատությունները դարձան տուն ոչ միայն որբերի և հաշմանդամների համար, այլ նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: Այս ընտանիքները հիմնականում բազմազավակ ընտանիքներ են, և հաճախ կանանց կողմից ղեկավարվող:

❖ Մանկատներ

Կան ութ մանկատներ, որոնք գտնվում են Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության ենթակայության տակ, որտեղ իրականացվում են 940 երեխաների խնամքը և դաստիարակությունը, որոնցից 321-ը հատուկ հաստատություններում:

Երևանի «Մանկան տուն»(0-6տարեկան)
հասցեն՝ Երևան, Արմենակ Արմենակյանի փողոց 119, հեռ՝ (374 10) 65 12 91, 65 13 62
տնօրեն՝ Լիանա Կարապետյան

«Զատիկ» մանկատուն (3-18 տարեկան)
հասցեն՝ Երևան, Զաքարիա Սարկավազի փողոց 145բ, հեռ՝(374 10) 28 34 91, 28 37 30
տնօրեն՝ Աշոտ Մնացականյան

Մարի Իզմիրյանի անվան մանկատուն (0-18 տարեկան)
հասցեն՝ Երևան, Յաղուբյան փողոց 13, հեռ.՝ (374 10) 25 15 86
տնօրեն՝ Հասմիկ Մկրտչյան

Գյումրիի «Երեխաների տուն» (0-6տարեկան)
հասցեն՝ Գյումրի, Թումանյան փողոց 17, (374 312)3 13 28
տնօրեն՝ Ռուզաննա Ավագյան

Նանսենի անվան մանկատուն (3-18 տարեկան)
հասցեն՝ ք. Գյումրի, Ա.Շիրակացու փողոց 10, հեռ. (374 312) 32783,

Գավառի մանկատուն (6-18 տարեկան),
հասցեն՝ ք.Գավառ, 23 Օգոստոսի 106, հեռ. (374 10) 28 39 19

Վանաձորի մանկատուն 0-18 տարեկան,
ք. Վանաձոր, Տարոն 2 թաղամաս, հեռ. (374 322) 6 01 20; 6 26 89
տնօրեն՝ Արշալույս Հարությունյան

Նոր Խարբերտի մասնագիտացված մանկատուն (6-18 տարեկան)
հասցեն՝ Նոր-Խարբերտ; հեռ: (374 10) 28 01 25
տնօրեն՝ Հարություն Բալասանյան

Բարեգործական (ոչ-պետական) մանկատներ

Տիրամայր Հայաստանի կենտրոն Գյումրի
հասցեն՝ ք. Գյումրի, Չարենցի 6, հեռ. (374 312) 34338
ղեկավար՝ քույր Արուսյակ

«ՍՈՍ» մանկական գյուղ,
հասցեն՝ Կոտայքի մարզ, ք.Կոտայք, հեռ. (374) __28 71 21;
տնօրեն՝ Հովհաննես Կոստանյան

Սպիտակի Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի
մանկատուն
հասցեն՝ Լոռու մարզ, Սպիտակ Իտալական թաղամաս, հեռ. (374) 28 66 13,
ղեկավար՝ Քույր Ռոզ դը Մարի

Թռչունյան Տուն,
հասցեն՝ ք.Գյումրի, հեռ. (374 312) 3 24 57
տնօրեն՝ Սոնա Սիմոնյան

Խնամակալ ընտանիքի ինստիտուտի փորձնական ծրագիրը իրագործվում են «Յունիսեֆ»-ը և «Հայ օգնության ֆոնդը» մեկտեղ: Որպես արդյունք այս ծրագրի 15 երեխա Գավառի և Վանաձորի մանկատներից տեղափոխվել են խնամատար ընտանիք:

Մանկատան շրջանավարտների հետագա կյանքի պրոբլեմները լուծելու համար ՀՀ կառավարությունը 2003 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունել է թիվ 1419 որոշումը՝ հաստատելով ծրագիր «Սոցիալական աջակցություն երեխայի խնամքի հաստատությունների շրջանավարտներին»: Այս ծրագրի շրջանակներում մանկատան շրջանավարտները, սկսած 1991թվականից, պիտի ապահովվեն տներով, մասնագիտական կողմնորոշման ուսուցումներով, վերապատրաստումով, հիմնական կարիքների համար որոշ եկամտով, նյութական ներառյալ գույք, բժշկական և իրավաբանական օգնության տրամադրումով:

Բացի մանկատներից, կան նաև պետական կրթական հաստատություններ հատուկ կարիքներով երեխաների համար/ հաշմանդամներ, մտավոր խնդիրներով երեխաներ, լսողության, խոսակցական, տեսողական, շարժողական խնդիրներով երեխաների համար նախատեսված և այլն/:

❖ **ՉԿ-ներ**

Ուորլդ Վիժն Հայաստանը իրականացնում է «Երեխայի պաշտպանության ծրագիր սկսած 2000 թվականից: 2004-ից սկսած ՈՒՎ-ն իրականացնում է «Հատկապես դժվար իրավիճակներում գտնվող երեխաների» ծրագիրը, որի նպատակն է նպաստել հատուկ կարիքներով և/կամ հատկապես դժվար իրավիճակներում գտնվող երեխաների ինտեգրմանը տարրական/հիմնական կրթության և հանրային կյանքի մեջ:

Ներկայումս հատուկ կարիքներով և հատկապես դժվար իրավիճակներում գտնվող երեխաները օգտվում են ծառայություններից 17 համայնքային կենտրոններում և 24 ներառական մանկապարտեզներում Երևանում, Սյունիքի, Տավուշի, Շիրակի Արագածոտնի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում:

ՈՒՎ-ը Հայաստանը համագործակցում է Կրթության և Գիտության Նախարարության, Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության հետ, շեշտելով հատկապես հատուկ դպրոցների դեինստիտուցիոնալիզացիայի և ներառական կրթության կազմակերպման կարևորությունը¹⁰⁶:

Հայկական Կարիտաս **հկ-ն** աջակցում է հատուկ դպրոցներում և մանկատներում գտնվող երեխաներին՝ իրականացնելով «Սոցիալական աջակցություն հաստատություններում ապրող երեխաներին»:

Ծրագրում ընդգրկված են Լոռու ու Շիրակի մարզի երեք մանկատներ՝

- Գյումրու «Հույս» մանկատուն
- Գյումրու Թռչունյան տուն մանկատուն
- Տաշիրի Տիրամայր Հայաստանի կենտրոնը

Մեկ այլ ծրագիր «Դժվար իրավիճակներում ապրող երեխաների և նրանց ընտանիքների զարգացումը» սկսվել է 2010 թվականի հունվարին 12-18 տարեկան երեխաների համար և կշարունակվի մինչև 2013 թվականը: Ծրագրի նպատակն է սոցիալական, մանկավարժական, արհեստագործական և կրթական ծառայություններ տրամադրել որբերին, սոցիալական որբերին, դժվար իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ծնողներին:

«Ցերեկային կենտրոն հաշմանդամ երեխաների համար» ծրագիրը սկսվել է Հայկական Կարիտաս կազմակերպության կողմից 2008թ. մայիսի 1-ին: Այն տրամադրում է հիգիենիկ և բժշկական խնամք, սնունդ, կազմակերպում է կրթական գործունեություն, հոգեբանական և արթ թերապիա, ժամանցային գործունեություն, սոցիալական միջոցառումներ և այլն:

ՉԿ-ներ, հիմնադրամներ և միջազգային կազմակերպություններ, որոնք առնչվում են դժվար իրավիճակներում գտնվող երեխաների հետ

- Խաչվող ուղիներ
- Հայկական Կարիտաս
- Փրկություն
- Փրկեցեք երեխաներին
- Հայ դեմոկրատական ֆորում

¹⁰⁶ Ուորլդ Վիժն Հայաստան, «Երեխաների Պաշտպանություն» ծրագիր
<http://www.wvarmenia.am/en/?nid=16&id=1>

- Ձանգակատուն
- Օրրան
- «Հուսո կամուրջ» և այլն

Մանկատնային խնամքի և մանկատների հասանելիությունը վերադարձողների երեխաների համար: Չկան հատուկ պայմաններ վերադարձողների երեխաների մանկատների մատչելիության համար: Կան սահմանված չափանիշներ այս հաստատություններ ընդունվելու համար, որոնք կարգավորվում են ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324 որոշմամբ, որը հաստատում է պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները մանկատան երեխաների կրթության և դաստիարակության համար և ճանաչումը ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական վարչական մարմնի:

Ընդունելությունը մանկատներ և գիշերօթիկ դպրոցներ կարգավորվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1735 որոշմամբ, որը հաստատում է երեխաների ընդունելության կարգը երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններ/մանկատուն, գիշերօթիկ դպրոց/:

Ընդունելությունը հատուկ կրթական հաստատություններ կարգավորվում է կրթության և Գիտության նախարարության 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 619 հրամանով:

Ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրումը երեխաներին կարգավորվում է 2006 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՀ կառավարության թիվ 1877 որոշումով, որը հաստատում է ցերեկային խնամքի տրամադրումը երեխաներին:

3.3.5.8. Հաշմանդամ երեխաներ

Կրթություն: Օրենսդրությունը փաստում է, որ համապատասխան պետական մարմինները հաշմանդամների համար ապահովում են անհրաժեշտ պայմաններ նախակրթական, միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթության համար:¹⁰⁷

Նախակրթություն: Իրականում չկա հատուկ նախակրթարան հաշմանդամ երեխաների համար: Ներառական նախակրթական կրթությունն իրականացվում է միայն 26 նախակրթարաններում, հիմնականում՝ Երևանում¹⁰⁸:

Միջնակարգ կրթություն: Համաձայն 1999թ. ապրիլի 14-ին ընդունված կրթության մասին թիվ 297 օրենքի 19/3/ հոդվածի ծնողների հայեցողությամբ, հատուկ կարիքներով երեխաների կրթությունը կարող է իրականացվել և հանրակրթական և հատուկ դպրոցներում, հատուկ ծրագրերով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ կա 25 հատուկ կրթական հաստատություն:¹⁰⁹

Կրթության նախարարության ռազմավարությունը մի կողմից ուղղված է բարելավելու կրթության և խնամքի որակը այդ հաստատություններում, մյուս կողմից նպատակ կա կիրառել այլընտրանքային ծառայություններ, բեռնաթափելով այս հաստատությունները/տեղափոխելով երեխաներին այս հաստատություններից

¹⁰⁷ Համաձայն հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ թիվ 57 օրենքի, ընդունված 1993 թվականի ապրիլի 14-ին, հոդված 12/2/

¹⁰⁸ Ինֆորմացիան տրամադրել է Անահիտ Մուրադյանը, Կրթության և Գիտության նախարարության հատուկ կրթության վարչության գլխավոր մասնագետ, 2009 թ. հունիսի 15-ին

¹⁰⁹ Ինֆորմացիան տրամադրել է Անահիտ Մուրադյանը, Կրթության և Գիտության նախարարության հատուկ կրթության վարչության գլխավոր մասնագետ, 2009 թ. հունիսի 15-ին

սովորական դպրոցներ/ներառական կրթություն/ կամ կիրառելով խնամատար ընտանիքի մեխանիզմը:

«(...)Այս պրոցեսը կշարունակվի ամեն տարի, մինչև ներառական կրթությունը կիրականացվի ՀՀ բոլոր դպրոցներում: Չնայած այս նախաձեռնություններին, հատուկ կրթության համակարգում շատ առաջնային խնդիրներ կան դեռ լուծման ենթակա:

Հատուկ դպրոցների և ներառական կրթություն իրականացնող դպրոցների շենքերը գտնվում են շատ վատ վիճակում, սանիտարական հարմարությունների տեսակետից և շատ հատուկ դպրոցներ կարիք ունեն հիմնանորոգման:

Դեռևս չեն ստեղծվել հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների բժշկական, հոգեբանական և մանկավարժական կարիքների գնահատման կենտրոններ:

Հատուկ կրթության մասնագետները կարիք ունեն համալիր վերապատրաստման(...)»¹¹⁰:

2008թ. ապրիլի դրությամբ, ներառական կրթություն իրականացվում է 14 հանրակրթական դպրոցներում, որոնցից 10-ը գտնվում են Երևանում, իսկ 4-ը՝ մեկական դպրոց համապատասխանաբար Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան քաղաքներում՝ 300 երեխայի համար:

Բարձրագույն կրթություն: Հավասար պայմանների դեպքում, երբ հաշմանդամները դրական են հանձնում ընդունելության քննությունները, նրանց տրվում է արտոնություն ընդունվելու պետական և ոչ-պետական ուսումնական հաստատություններ, համաձայն հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքի 14/3/ հոդվածի: Համաձայն նույն օրենքի հոդված 14/9/-ի, պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտակա հաստատություններ ընդունված հաշմանդամ երեխաների կամ հաշմանդամության 1-ին և 2-րդ կարգ ունեցողների ուսման վճարը փակվում է պետության կողմից:

Վերադարձողների համար հատուկ հաստատությունների և խնամքի կենտրոնների մատչելիությունը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Հայաստանում հաշմանդամների մատչելիությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներ ապահովված չէ:

Հաշմանդամների համար շարժումների անհարմարությունը: Շատ քիչ փողոցներ և սոցիալական հաստատություններ են մատչելի հաշմանդամների համար, չնայած որ վերջին տարիներին այդ ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ: Տրանսպորտացիայի հարմարեցված միջոցներ ընդհանրապես չկան:

Ժամանցը: Հայաստանում սովորաբար հկ-ներն են, որ կազմակերպում են հաշմանդամների ժամանցը սպորտային կամ այլ իրադարձություններ: «(...)Մշակութային հաստատությունների/ համերգային դահլիճներ, թանգարաններ, թատրոններ/ մեծ մասը անհասանելի է հաշմանդամների համար: Գոյություն ունեցող ճարտարապետական տարբեր արգելքների պատճառով այս մարդիկ չեն կարող հաճախել համերգներ, ցուցահանդեսներ և այլ մշակութային միջոցառումներ:¹¹¹

Հկ-ների շարքում միայն «Փյունիկ» և «Սքարպ» հկ-ներն են զբաղվում հաշմանդամների սպորտով:

Մանրամասն տես http://www.disability.am/english/leisure_sport.htm

Կրթական հաստատությունների մատչելիությունը: Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համաձայն, 2007թ. դրությամբ «52 հատուկ դպրոցներում, որտեղ տրվում է անվճար կրթություն, սնունդ և կեցություն, սովորող 10 000 երեխաների կեսից ավելին սոցիալապես անապահով ընտանիքներից են: Այս հաստատություններն ավարտելով այս

¹¹⁰ ԱՄՆ ՄԶԳ, Կրթական Բարեփոխումները Հայաստանում, Մարդկային Զարգացման Ազգային Զեկույց, 2006, մաս 2, հիմնական կրթության կազմակերպումը, 6.1 Մակրո-կառավարում, Կրթության կառավարումը Ազգային և մարզային մակարդակներում, Ներառական կրթության իրականացումը Հայաստանում <http://www.undp.am/docs/publications/2007publications/NHDR2006ENG.pdf>

¹¹¹ ՈՒՆԻՍԵՖ հկ, Հաշմանդամների ռեսուրս կենտրոն <http://www.disability.am/english/culture.htm>

երեխաներից շատերը կանգնում են թրաֆիքինգի ենթարկվելու վտանգի առջև: (...)Շատ նախակրթարաններ և դպրոցներ դեռևս անկարող են տրամադրել ծառայություններ որպես հաշմանդամներ գրանցված ավելի քան 8000 երեխաների և նրանց մեծ մասը դուրս է մնում հատուկ և հիմնական կրթության ոլորտից: Շատ հաշմանդամ երեխաներ ուշ են հայտնաբերվում, իսկ վաղ միջամտական ծառայություններ համայնքային մակարդակներում չկան»:¹¹²

Չնայած օրենքով հաստատված անվճար բարձրագույն կրթության իրավունքին, միայն շատ քիչ հաշմանդամներ կարող են օգտվել այս արտոնությունից, քանի որ համալսարանները լիովին անմատչելի են ֆիզիկական թերություններ ունեցող հաշմանդամների համար: Ավելին, շատ հաշմանդամներ վերոնշյալ պատճառներով չեն կարող ստանալ նաև միջնակարգ կրթություն: Եվ բնականաբար, նրանք չեն կարող ընդունվել համալսարաններ:¹¹³

Ստիգմատիզացիա: Սա շատ ցավոտ խնդիր է այնպիսի ավանդական երկրի համար, ինչպիսին Հայաստանն է: Հասարակությունը համարում է հաշմանդամությունը «պորբլեմ», իսկ հաշմանդամներին անօգնական և կախյալ, որոնք մշտապես խնամքի և բժշկական աջակցություն կարիք ունեն և համարվում են ընտանիքի համար «բեռ»:

Շատ ընտանիքներ, որոնք ունեն հաշմանդամ երեխա, պահում են նրանց մեկուսացված: Առաջին հերթին, կենտրոնները դժվարություն ունեն հայտնաբերելու այսպիսի երեխաներին, քանի որ շատ ծնողներ ամաչում են նույնիսկ փողոց դուրս գալ և քայլել այդ երեխաների հետ: Հաճախ նույնիսկ հարևանները տեղյակ չեն իրենց հարևանությամբ ապրող հաշմանդամ երեխաների գոյության մասին: Շատ դժվար է լինում երբեմն համոզել ծնողներին բերել իրենց երեխաներին դպրոց:

3.3.6. Նոր բիզնես սկսելը

3.3.6.1. Իրավական պայմանները/գրանցում,կորպորատիվ ձևերը, նվազագույն կապիտալը և այլն/

Հայաստանի կառավարությունը գիտակցում է ավելի բարենպաստ բիզնես միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը: Նախագահը 2005 թվականի համար հայտարարել է հարկային և մաքսային վարչարարության մեջ կարևոր բարեփոխումների մասին: Այս բարեփոխումների իրականացումը շատ կարևոր է Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման համար: Կառավարությունն ունի նաև ընթացիկ ծրագրեր հզորացնելու բանկային համակարգի ֆինանսական միջնորդի դերը, բարելավելու հանրային ծառայությունների վարչարարությունը, և նվազեցնելու պետական մարմինների կոռուպցիան ու միջամտությունը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը համարվում է Հայաստանի տնտեսության զարգացման առաջատար ուղղություններից մեկը: Հայաստանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման ուղղությամբ, հատկապես ՓՄՁ պետական աջակցության համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Հայաստանի Ազգային ժողովը 2000 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունել է թիվ 121 օրենքը Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության վերաբերյալ:

Համաձայն այս օրենքի, փոքր և միջին ձեռնարկությունները դասակարգվում են համաձայն աշխատակիցների թվաքանակի հետևյալ կերպ:

¹¹² ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, Երեխաների Պաշտպանություն

<http://www.unicef.org/armenia/protection.html>

¹¹³ ՈՒՆԻՍՈՆ հկ, Հաշմանդամների ռեսուրս կենտրոն; <http://www.disability.am/english/education.htm>

- առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռներեցը հինգ անձից ոչ ավել աշխատակիցների միջին քանակով համարվում է միկրո ձեռնարկություն:
- առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռներեցը միջին աշխատակիցների քանակով համարվում է փոքր ձեռնարկություն, եթե բավարարում է հետևյալ չափանիշները:
 - արդյունաբերություն և այլ արտադրական ոլորտ-հիսուն աշխատակցից ոչ ավել;
 - շինարարություն և էլեկտրատեխնիկական ոլորտ- 25 աշխատակցից ոչ ավել;
 - գիտության և կրթության ոլորտ- 25 աշխատակցից ոչ ավել
 - տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ոլորտ-15 աշխատակցից ոչ ավել
- առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռներեցը համարվում է միջին ձեռնարկություն, եթե բավարարում է հետևյալ չափանիշները:
 - արդյունաբերություն և այլ արտադրական ոլորտ-100 աշխատակցից ոչ ավել;
 - շինարարություն և էլեկտրատեխնիկական ոլորտ- 50 աշխատակցից ոչ ավել;
 - գիտության և կրթության ոլորտ-50 աշխատակցից ոչ ավել
 - տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ոլորտ- 50 աշխատակցից ոչ ավել

❖ Ձեռնարկատիրական գործունեության գրանցումը

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար ձեռնարկատերը պիտի գրանցվի որպես առևտրային իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց՝ համաձայն իրավաբանական անձի իրավաբանական գրանցման մասին 2001թ.-ի ՀՀ թիվ 161 օրենքի:

Գրանցման քայլերը:

Անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար, անհաժեշտ է մուծել 3000 ՀՀ դրամ/ 5.47 Եվրո պետական տուրք բանկերում համապատասխան հաշվեհամարին, այնուհետև պետք է լրացվի և ներկայացվի գրանցման դիմում: Դիմումի ձևը կարելի է ձեռք բերել արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալությունից /պետական ռեգիստրից/: Դիմումը քննարկելուց հետո պետական ռեգիստրը կարող է մերժել կամ ընդունել գրանցումը: Մերժման դեպքում պետռեգիստրը պարտավոր է տալ գրավոր բացատրություն դիմումը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում; ընդունելու դեպքում, հաստատումը պիտի կատարվի երկու աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո պիտի տրվի գրանցման վկայական:

Իրավաբանական անձ գրանցվելու համար անհրաժեշտ է վճարել 5000 ՀՀ դրամ/9.12 Եվրո ցանկացած բանկում որպես պետական տուրք կազմակերպության անվանումը գրանցելու համար, ինչպես նաև 12 000 ՀՀ դրամ /21.89 Եվրո համապատասխան հաշվեհամարի գրանցելու կազմակերպությունը պետական ռեգիստրում: Կազմակերպության անվան ընդունման կամ մերժման որոշումը կատարվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև դիմումի ձևը, կանոնադրության նմուշը, հիմնադիր ժողովի հիմնադիր արձանագրության նմուշը կարելի է վերցնել պետական ռեգիստրից:

Օգտագործելով վերը նշված փաստաթղթերի նմուշային օրինակները, պետք է կայացնել հիմնադիր ժողով, կայացնել որոշում իրավաբանական անձի հիմնադրման վերաբերյալ, կազմել ժողովի արձանագրություն, ինչպես նաև պատրաստել հիմնադիր փաստաթուղթ-կանոնադրություն: Ունենալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, գրանցման դիմում պետք է ներկայացվի պետ ռեգիստր, որից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում

կամ կտրվի կազմակերպության գրանցման վկայական կամ գրավոր պատասխան՝ մերժման և նրա պատճառների մասին:

Անկախ նրանից, թե գրանցվում է կազմակերպություն, թե անհատ ձեռներեց, նրանց անվանումները պետք է պաշտոնապես գրանցվեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայությունում գրանցումից հետո երեսուն օրվա ընթացքում: Հարկային ծառայությունում գրանցվել նշանակում է ստանալ հարկ վճարողի հաշվառման համարը/ՀՎՀՀ/, այնուհետև անհրաժեշտ է գրանցվել սոցիալական ապահովագրության հիմնադրամում՝ ներկայացնելով Պետ ռեգիստրից վերցրած գրանցման վկայականի պատճենը, կանոնադրության պատճենը և ՀՎՀՀ-ն: Վերոնշյալ քայլերը կատարելուց հետո, պետք է վերցնել կնիքը, որը պարտադիր չէ անհատ ձեռներեցների համար: Համենայն դեպս, եթե կա ցանկություն, նրանք նույնպես կարող են վերցնել կնիք: Եթե ձեռնարկատիրական գործունեությունը պահանջում է լիցենզավորում, որը կարգավորվում է լիցենզիայի մասին օրենքով, անհրաժեշտ է դիմել համապատասխան լիցենզավորման մարմին լիցենզիա ստանալու համար:

❖ Լիցենզավորում:

Տնտեսական գործունեության շատ տեսակների համար անհրաժեշտ է լիցենզիայի առկայություն: Գործունեության ցուցակը, որն անհրաժեշտ է լիցենզավորել, կարելի է գտնել ՓՄՁ ՋԱԿ-ի ինտերնետային կայքում:

Եթե անհրաժեշտ է լիցենզիա, ապա պետք է պարզել, թե ինչ տեսակի: Կա երկու տեսակի լիցենզիա՝ պարզեցված և բարդ: Հաջորդ քայլը պարզելն է, թե որ կազմակերպությունն է տրամադրելու լիցենզիան: Այդ կազմակերպությունը տալիս է տեղեկատվություն լիցենզիայի արժեքի մասին՝ համաձայն պետ տուրքերի մասին օրենքի:

Պարզեցված լիցենզիա:

Լիցենզիայի այս տեսակը տրվում է առանց լիցենզավորման հանձնաժողովի որոշման: Պարզ լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել գրավոր դիմում Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն/ հասցեն: ք.Երևան, Մ. Աղամյան 1/: Անհատ ձեռներեցները պետք է ներկայացնեն անունը, հասցեն և գործունեության վայրը, պետական գրանցման վկայականի պատճենը և լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

Եթե լիցենզավորումը իրավաբանական անձի համար է, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև կանոնադրության պատճենը: Պատասխանը տրվում է երեք օրվա ընթացքում:

Բարդ լիցենզիա:

Բարդ լիցենզիան տրվում լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Այս հանձնաժողովները կազմված է մի քանի տարբեր մարմինների և նախարարությունների ներկայացուցիչներից: Բարդ լիցենզիան տրվում է դիմումը ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում: Դիմումը պիտի ներառի հետևյալ ինֆորմացիան՝ կազմակերպության անվանումը, հասցեն, գործունեության վայրը, պետական գրանցման վկայականի պատճենը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ: Եթե լիցենզիան իրավաբանական անձի համար է, ապա անհրաժեշտ է նաև ներկայացնել կանոնադրության պատճենը:

Կազմակերպության գրանցման գնացուցակ:

	Անհատ ձեռներեց	Իրավաբանական անձ
Պետական գրանցում	3,000 ՀՀ դրամ (5.47 Եվրո)	12,000 ՀՀ դրամ (21.89 Եվրո)
Կազմակերպության	-	5,000* ՀՀ դրամ 9.12 Եվրո


անվանումը		
Գրանցումը մաքսային մարմիններում	500** ՀՀ դրամ (0.91 Եվրո)	500** ՀՀ դրամ 0.91 Եվրո)
Լիցենզավորումը	Տարբեր է՝ կախված տնտեսական ակտիվության տեսակից	Տարբեր է՝ կախված տնտեսական ակտիվության տեսակից
Կնիքի թույլտվություն	***	6,000 ՀՀ դրամ (10.95 Եվրո)
Կնիքի գինը	***	10,000-20,000 ՀՀ դրամ (18.24-36.49 Եվրո)
Կանոնադրական բանկային հաշվին	-	Տարբեր է կախված իրավաբանական անձի տեսակից

Նկատառում: *Հայաստան կան հայկական անվանումը կազմակերպության անվան մեջ օգտագործելու դեպքում կազմակերպությունը պիտի վճարի 600 000 ՀՀ դրամ/1094.67 Եվրո տարեկան:

**Պաշտոնական մուծումներ չկան այս նմուշների մասին,բայց հարկային մարմինները պահանջում են այն որպես նշուշների պատճենների գումար: Այդ իսկ պատճառով գները տարբեր են: Օրենքը չի պահանջում կնիք անհատ ձեռներեցի համար, բայց ցանկության դեպքում այն կարելի է ստանալ:

Անկախ գրանցման համար ձեր ընտրած ձևից, արտահանմամբ և ներմուծմամբ զբաղվող բիզնեսները պետք է գրանցվեն նաև ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեում: Ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսազերծումը կատարվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որտեղ կազմակերպությունը գրանցված է:

❖ **Կազմակերպությունների իրավական ձևերը**



Իրավաբանական անձինք որպես առևտրային կազմակերպություններ կարող են ստեղծվել **առևտրային ընկերակցությունների** և **առևտրային կազմակերպությունների** ձևով:

Առևտրային ընկերակցություն կան կազմակերպություն համարվելու համար, առևտրային կազմակերպությունը պիտի տնօրինի իր կանոնադրական բաժնեմասը բաղկացած հիմնադիրների բաժնեմասերից: Սեփականությունը, որը ստեղծվում է մասնակիցների դեպոզիտներից, ինչպես նաև ձեռք է բերվում կան արտադրվում է առևտրային

ընկերակցության կամ կազմակերպության գործունեության արդյունքում, պատկանում է վերջինիս սեփականության սկզբունքով:

- Առևտրային ընկերակցությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լիակատար ընկերակցության ձևով:
- Առևտրային կազմակերպությունները կարող են հիմադրվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության, ինչպես նաև բաժնետիրական ընկերության տեսքով:

Առևտրային ընկերակցություն:

- **Լիակատար ընկերակցության/ԼԸ/** ստեղծման հիմքում ընկած է մի քանի անձանց և իրավաբանական անձանց միավորվելու և համատեղ գործունեություն իրականացնելու ցանկությունը: Կարևոր հանգամանք է, որ դա արվի միավորելով կապիտալը և ստեղծելով անկախ առևտրային կազմակերպություններ, այսինքն, ԼԸ մասնակիցները կարող են լինել միայն անհատ ձեռներեցները և/կամ առևտրային կազմակերպությունները: Վերջինս կարող է լինել միայն մեկ ԼԸ մաս:
- **Սահմանափակ ընկերակցությունը/ՍԸ/** նույնպես մի քանի անձանց և նրանց կապիտալը միավորելու տեսակ է: Այս տեսակի ընկերակցության մասնակիցները բաղկացած են երկու խմբից-լիակատար մասնակիցներ և ներդրողներ: Առաջինը զբաղված է ձեռնարկատիրության մեջ ընկերակցության անունից և պատասխանատու է ընկերակցության պարտավորությունների համար իրենց ամբողջ գույքով: Դա նշանակում է, որ այս խմբի մասնակիցների իրավական ռեժիմը լիովին համապատասխանում է լիակատար ընկերակցության մասնակիցներին: Երկրորդ խումբը, ներդրողները անում են իրենց ավանդները և կրում են ընկերակցության գործունեության հետ կապված ռիսկը իրենց ներդրած ավանդի չափով:

Առևտրային կազմակերպություն:

- **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:** Ներկայումս ձեռնարկատիրության ամենատարածված տեսակն է ՍՊԸ-ն: ՍՊԸ-ն կազմակերպություն է, որը հիմնվում է մեկ կամ մի քանի մարդկանց կողմից, որոնց կանոնադրական կապիտալը բաժանված է մասերի ըստ կազմակերպության կանոնադրությամբ հաստատված չափաբաժնի: ՍՊԸ-ի հիմնադիրները կարող են լինել և անձինք և իրավաբանական անձինք: ՍՊԸ-ն կարող է ստեղծվել մեկ կամ մի քանի անձանց կողմից: Մարդկանց թիվը չպիտի գերազանցի 49-ը: Այլապես, մեկ տարվա ընթացքում այն պիտի վերակազմավորվի որպես բաժնետիրական ընկերություն: Այն ժամանակահատվածից հետո այն պիտի լուծարվի դատարանի որոշման համաձայն: ՍՊԸ-ն բնութագրվում է մի քանի հատկանիշներով՝ օրինակ, մասնակիցները պարտավոր չեն կազմակերպության պարտավորությունների համար և կրում են կազմակերպության գործունեության հետ կապված ռիսկերը իրենց ներդրումների չափով: Այսպիսով «սահմանափակ պատասխանատվություն» անունը գալիս է այստեղից: Որպես իրավաբանական անձ ՍՊԸ-ն դառնում է հիմնադիրների կողմից ներդրումների տեսքով ներդրած գույքի սեփականատեր: Երբ մասնակիցները կատարում են իրենց ներդրումը կազմակերպության կանոնադրական կապիտալում, նրանք կորցնում են իրենց սեփականության իրավունքը այդ գույքի հանդեպ:
- **Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն:** ԼՊԸ-ն հիմնադրվում է մեկ կամ մի քանի անձանց կողմից, և նրա կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: ԼՊԸ-ն տարբեր է ՍՊԸ-ից մասնակիցների պարտավորությունների բնույթով; եթե կազմակերպության գույքը չի բավարարում պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա ԼՊԸ-ի մասնակիցները կրում են լրացուցիչ առանձին պատասխանատվություն: Համեմայն դեպս այս տեսակի պատասխանատվությունը ունի իր սահմանները: Այն չի վերաբերում մասնակիցների ամբողջ

սեփականությանը, այլ նրա մի մասին, ինչպես որոշված է կազմակերպության կանոնադրությամբ: Պատասխանատվության աստիճանը հավասար է բոլորի համար և որոշվում է նույն բազմապատկիչով բոլոր ներդրումներին վերաբերող: ԼՊԸ հիմնադիրները կարող են լինել և անձինք և իրավաբանական անձինք: Ընդհանուր առմամբ, եթե մենք, մի կողմ դնենք ԼՊԸ-ի պատասխանատվության բնութագրիչները, այս տեսակի կազմակերպությունները կարող են դիտվել որպես ՍՊԸ-ներ, քանի որ ըստ բնորոշման ՍՊԸ-ի օրենսդրությունն է, որ կիրառվում է ԼՊԸ-ների նկատմամբ:

- **Բաժնետիրական ընկերությունը** առևտրային կազմակերպության տեսակ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի՝ հավաստելով պատասխանատվության նվիրումը կազմակերպությանը: ԲԸ-ի մասնակիցները պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների համար և կրում են ռիսկերը կապված կազմակերպության գործունեության համար իրենց բաժնեմասերի արժեքի չափով: ԲԸ-ն կարող է հիմնադրվել կամ բաղկացած լինել մեկ անձից այն դեպքում, երբ բոլոր բաժնեմասերը ձեռք են բերվել բաժնետերերից մեկի կողմից: ԲԸ-ն կարող է դասակարգվել երկու տեսակով՝ բաց բաժնետիրական և փակ բաժնետիրական ընկերություններ: Բաց բաժնետիրական ընկերությունը կարող է անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրությունը և դրանց ազատ վաճառքը: Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների միջև և դրանց փոխանցումը այլ անձանց արգելվում է:
- **Կոոպերատիվներ:** Կոոպերատիվները քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր միավորումներ են, որոնք ստեղծված են իրենց անդամների կարիքների բավարարման նպատակով: Կան երկու տեսակի կոոպերատիվներ՝ առևտրային և ոչ առևտրային: Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է: Կոոպերատիվում կարող է ստեղծվել դիտորդ խորհուրդ:

Ավելի մանրամասն ինֆորմացիայի համար կարող եք դիմել Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Ջարգացման Ազգային Կենտրոն
375010, ք. Երևան
Միեր Մկրտչյան փողոց 5
հեռ 374 10 54 16 48
ֆաքս 374 1054 16 42
Էլ հասցե: info@smednc.am
ինտերնետային էջ :www.smednc.am

3.3.6.2. Վարկեր և սուբսիդիաներ և նրանց հասանելիությունը/տոկոսադրույք, վարկառուներ և այլն/

Հայաստանում բիզնես սկսելու համար ձեռնարկատերը սովորաբար պիտի վերցնի վարկ բանկից կամ վարկատու կազմակերպությունից:

Վարկեր տրամադրող բանկերը
http://www.cba.am/CBA_SITE/customer/index.html?_locale=hy+363

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կան 25 վարկային կազմակերպություններ/48 մասնաճյուղեր

http://www.cba.am/CBA_SITE/financial_system_control/creditor/credit.html?_locale=en

Անհրաժեշտ քայլեր փոխառություն կամ վարկ ստանալու:

- այցելություն բանկ փոխառությունը ստանալու համար
- վարկային գործակալին այցելություն
- հավաքված տեղեկատվության վերլուծություն

- վարկային հանձնաժողովի վերանայում, վարկի հաստատում

Այն փաստաթղթերը , որոնք պահանջվում են վարկային դիմումը վերանայելու և հաստատելու համար: Տարբեր բանկերի և վարկային կազմակերպությունների մոտեցումները շատ չեն տարբերվում: Վարկային դիմումի վերանայման և տրամադրման պրոցեսում որոշակի փաստաթղթեր են պահանջվում:

1. Իրավական փաստաթղթեր:

Կախված բիզնեսի գործունեության բնույթից և իրավական կարգավիճակից, տարբեր փաստաթղթեր կարող են պահանջվել: Հետևյալ ցուցակը վերաբերում է գրեթե բոլոր տեսակի ձեռնարկություններին:

- պետական գրանցման վկայական
- կանոնադրություն և հիմնադիրների պայմանագիր
- լիցենզիաներ, եթե լիցենզիաներ են պահանջվում ձեր բիզնեսի համար:
- ֆինանսական հաշվետվություններ ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի համար/վերջինս լրացված յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությամբ/
- հաշվետվություններ պետական բյուջե և սոցիալական ապահովագրության պետական ֆոնդ
- համապատասխան բանկից հաշվի հավաստում
- բաց բաժնետիրական ընկերությունների աուդիտորական հաշվետվություն/այլ ձեռնարկությունների համար աուդիտորական հաշվետվություն, եթե այն պահանջում է ծրագիրը
- պայմանագիր մատակարարների և հաճախորդների համար/եթե այդպիսիք կան:
- Բաժնետիրական ընկերությունների համար բաժնետերերի ցուցակ, որտեղ նշված են բաժնետերերի բաժնեմասերը, համապատասխան հաստատումով
- վճարելիք և ստանալիք հաշիվների ցուցակը, նշված գումարներով
- այլ համապատասխան փաստաթղթեր, կախված բիզնեսի բնույթից

2. Գրավի փաստաթղթեր

Գրեթե բոլոր իրավիճակներում անհրաժեշտ է առաջարկել գրավ կամ հետվճարի երաշխիք գրավատուին, փոխառություն ստանալու համար: Գրավը կարող է լինել սեփական կամ ձեռնարկության հիմնական միջոց, ներառյալ հողը, անշարժ գույքը, սարքավորումները, մեքենաները, ինչպես նաև շրջանառու միջոցները/ հումք, վերջնական արտադրանք և այլն, անձնական գույք, արժեքներ և այլն /Կապված գրավի տեսակից, պահանջվում են համապատասխան փաստաթղթեր:

Եթե գրավադրվում է բնակարան, ապա պահանջվում են հետևյալ փաստաթղթերը

- Սեփականության վկայական և աջակցող փաստաթղթեր
- Տեղեկանք սեփականատիրոջ ընտանիքի կազմի վերաբերյալ, որոնք գրանցված են կամ ապրում են բնակարանում/համատիրությունից կամ այլ համապատասխան գրասենյակից/
- Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրից հավաստելու, որ սեփականությունը չի գտնվում կալանքի տակ
- Սեփականատիրոջ ամուսնու կամ ընտանիքի չափահաս անդամների նոտարական վավերացմամբ համաձայնությունը: /Համաձայնությունը պիտի պարունակի հրաժարականի իրավունք տնօրինելու կամ օգտագործելու բնակելի տարածքը փոխառություն հետվճարումը չկատարելու դեպքում/
- Եթե կան անչափահասներ, ապա անհրաժեշտ է նրանց խնամակալների լիազորությունը կամ նրանց ծնողների նոտարական վավերացումը տրամադրել բնակելի տարածք անչափահասներին վարկը չվճարելու դեպքում:
- Եթե ընտանիքի չափահաս անդամը ամուսնացած չէ, ապա նոտարական վավերացում, իսկ երբ նա ամուսնացած է, ապա ամուսնության վկայականի պատճենը

- Գրավի պայմանագիր
- Գրավի վկայական
- Այլ համապատասխան փաստաթղթեր և հավաստումներ, կապված սեփականության հետ:

Եթե ձեռնարկությունը գրավադնում է իր սեփականությունը, ապա անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը

- Սեփականության վկայական և աջակցող փաստաթղթեր
- Սեփականաշնորհման պայմանագիր և հավաստումներ և ստացականներ վճարումը հաստատող
- Սեփականատերերի և /կամ հիմնադիրների նոտարական վավերացմամբ համաձայնագրեր
- Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրից հավաստելու , որ սեփականությունը չի գտնվում կալանքի տակ
- Գրավի պայմանագիր
- Գրավի վկայական
- Այլ համապատասխան փաստաթղթեր և հավաստումներ, կապված սեփականության հետ

Եթե գրավադրվում է ավտոմեքենա, ապա անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը

- Մեքենայի գնահատման գործարքը
- Մեքենայի տեխնիկական անձնագիրը, տրված ճանապարհային ոստիկանության կողմից
- Գրավատուի անուսնու Նոտարական համաձայնությունը գրավադնելու համար
- Նամակ ճանապարհային ոստիկանությունից, որ մեքենան չի գտնվում կալանքի տակ
- Գրավի պայմանագիր

Եթե գրավադրվում է սարքավորում կամ այլ շարժական գույք, ապա անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը

- Շարժական գույքի գնահատման գործարքը
- Շարժական գույքի տեխնիկական անձնագիրը, եթե կա այդպիսին, և փաստաթղթեր այդ ձեռքբերման օրինականությունը հաստատելու
- Փաստաթղթեր, հաստատող շարժական գույքի սեփականությունը, և եթե այդպիսին չկա, ապա գրավոր փաստարկ հավաստող այդ շարժական գույքի սեփականությունը
- Տեղեկանք, որ շարժական գույքը ենթակա չէ կալանքի, երրորդ կողմի պահանջի, կամ այլ տեսակի արգելքի
- Այլ փաստաթղթեր գրավի տեսակից կախված

Եթե գրավադրվում է գույք կամ այլ ինվենտար, ապա անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը

- Փաստաթղթեր գույքի կամ այլ ինվենտարի ստացումը հավաստող, ներառյալ հաշիվ-ապրանքագիր, դրամարկղային օրդեր, դրամարկղային ստացականներ, և եթե վճարումը կատարվել է էլեկտրոնակին եղանակով, ապա բանկի վճարման օրդերը, եթե կա այդպիսին
- Գնահատման գործարք
- Գրավի պայմանագիր
- Այլ փաստաթղթեր, կապված գրավի տեսակից
- Փաստաթղթեր գրավի ցանկացած փոփոխության մասին, երբ փոխառությունը դեռ ընթացքի մեջ է

Վարկերի և փոխառությունների հասանելիությունը: Միկրո, փոքր և միջին բիզնեսի զարգացման համար կան պետական, կիսա-պետական, ինչպես նաև միջազգային ծրագրեր: Այսպես կոչված էժան վարկեր կարելի է ձեռք բերել միջազգային վարկային

ծրագրերի շրջանակներում: Այս ծրագրերը սովորաբար աշխատում են բանկերի և վարկային ու փոխառական կազմակերպությունների հետ: Բայց յուրաքանչյուր ծրագիր աջակցում է որոշ տեսակի գործունեության: Նրանցից որոշ մասը աջակցում է արտադրությանը և սպասարկմանը, որոշը՝ գյուղատնտեսական և սննդի վերանշակմանը, որոշը միայն առևտրային նպատակների համար է:

Հետևյալ կազմակերպությունները օգնում են բանկերին տրամադրելու վարկեր

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
- ՓՄՁ ՋԱԿ
- Գերմանա-հայկական հիմնադրամ
- Թրփանջյան հիմնադրամ

Այս վերջին ծրագիրը կիրառվում է Շիրակի և Լոռու մարզերում:

«...Ծրագրի շրջանակներում վարկավորվում են բիզնես ծրագրեր: Վարկը տրամադրվում է միայն գրավի, բիզնես պլանի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում: Տոկոսադրույքը 6 % է: Շիրակի մարզում այն չի պահանջում գրավ, բայց ծրագիրը պիտի հաստատվի հատուկ կոմիտեի կողմից և միայն դրական եզրակացության դեպքում կտրվի վարկ:...»¹¹⁴

Յուրաքանչյուր բանկ ունի իր պայմանները վարկերի տրամադրման համար: Բանկերի մեծամասնության համար նվազագույն պահանջ է հաճախորդի լավ վարկային պատմության առկայությունը, կայուն եկամուտը և գրավը: Ֆինանսական ինստիտուտների մեծ մասը հասանելի չեն սկսնակների համար:

Վերադարձողների մեծամասնության համար բանկերից վարկ ստանալը անհնար է, որովհետև նրանք չեն բավարարում պահանջները: Նրանք չունեն գրավի համար անհրաժեշտ սեփականություն:

3.3.7. Սոցիալական Ապահովություն

3.3.7.1., 3.3.7.2., 3.3.7.3., 3.3.7.4 և 3.3.7.5 կետերում պարունակվող ամբողջ տեղեկատվությունը տրված է 2010թ. հունվարի դրությամբ:

3.3.7.1. Գործազրկության նպաստ և նրա մատչելիությունը

Նպաստը նախատեսված է նրանց համար, ովքեր ունեն գործազուրկի կարգավիճակ: Գործազրկության նպաստ տրվում է այն գործազուրկ աշխատանք-փնտրողներին, որոնք հասել են աշխատանքային տարիքի և չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նպաստներ, ունեն մեկ տարվա աշխատանքային ստաժ և դիմել են պետական զբաղվածության գործակալություն գրանցման համար:¹¹⁵

Գործազրկության նպաստ տրվում է 6-12 ամիս ժամկետով: Նպաստի չափը կազմում է նվազագույն աշխատավարձի 60%-ը/30000 ՀՀ դրամ ¹¹⁶կամ 54.73 Եվրո/, այսօր այն կազմում է 18000 ՀՀ դրամ/32.84 Եվրո/ ամսական:

Հարցերի դեպքում կարելի է դիմել համապատասխան զբաղվածության տարածքային կենտրոններ:

¹¹⁴ Հարցազրույց Լևոն Գասպարյանի հետ, Հայ բիզնեսբանկի Գյումրու մասնաճյուղի կառավարիչ, կայացած 2009 թվականի փետրվարի 7-ին

¹¹⁵ ՀՀ Աշխատանքի և ոցիալական Հարցերի նախարարություն, հարց-պատասխան, Բացատրություններ զբաղվածության օրենսդրություն http://www.mss.am/home/index.php?code_id=338&menu_id=317#

¹¹⁶ ՀՀ Ազգային ժողովը 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունեց օրենք թիվ 200 նվազագույն աշխատավարձի մասին ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ կատարելու մասին: Համաձայն այդ օրենքի նվազագույն աշխատավարձը 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 30 000 ՀՀ դրամ

3.3.7.2. Հիվանդության նպաստ և նրա մատչելիությունը

Ժամանակավոր անաշխատունակության նպաստ: Վարձու աշխատողները, որոնք կատարում են պարտադիր սոցիալական վճարումներ կարող են ստանալ ժամանակավոր անաշխատունակության նպաստ՝ անկարողության, հիվանդության, ինֆեկցիայի և արտադրական վնասվածքների դեպքում: Նպաստի չափը կախված է աշխատանքի ժամանակահատվածից և տատանվում է աշխատավարձի 80-100 տոկոսի չափ/վերջինս վճարվում է նրանց, ովքեր ունեն 8 տարվանից ավել աշխատանքային ստաժ:

Հաշմանդամության թոշակ: Ինչպես նշված է 1.1.3 կետում, այն անձինք, որքեր ունեն հաշմանդամության կարգավիճակ, կարող են ստանալ հաշմանդամության թոշակ:

Վճարման չափը: Հաշմանդամության թոշակը հաշվվում է այն նույն բանաձևով, ինչ տարիքային թոշակը/ավելի մանրամասն 3.3.7.4 կետում, որտեղ բազային չափն է՝

- Հաշմանդամ երեխաների և 1-ին կարգի հաշմանդամների համար բազային թոշակի 140 տոկոսը, որն կազմում է 11 200 ՀՀ դրամ¹¹⁷ կամ 20.43 Եվրո:
- Երկրորդ կարգի հաշմանդամների համար բազային թոշակի 120 տոկոսը, որը կազմում է 9600 ՀՀ դրամ կամ 17.51 Եվրո
- Երրորդ կարգի հաշմանդամների համար բազային թոշակի 100 տոկոսը, որը կազմում է 8000 ՀՀ դրամ կամ 14.60 Եվրո

Ընդհանուր առմամբ, թոշակները շատ ցածր են ապահովելու հաշմանդամների նվազագույն ապրուստը, ավելին, շատ հաշմանդամներ չունեն ապահովագրական ստաժ իրենց հաշմանդամության պատճառով և ստանում են միայն վերոնշյալ բազային թոշակը հաշմանդամության այն խմբի համար, որ նրանք ունեն: Այս տեսակետից, հաշմանդամության թոշակի հաշվարկման որոշված կարգը անարդար է և կարիք ունի բարելավման: «Օրինակ, մանկուց հաշմանդամ առաջին կարգի հաշմանդամները, որոնք չեն կարող աշխատել, ստանում են 1-ին կարգի հաշմանդամության համար նախատեսված թոշակիվոր ավել, որը կարող էլինել պակաս, քան 3-րդ կարգի հաշմանդամության թոշակը, իսկ 3-րդ կարգի հաշմանդամները ի վիճակի են աշխատել և ունեն աշխատանքային ստաժ»¹¹⁸

3.3.7.3. Ընտանեկան նպաստ և նրա մատչելիությունը

Ընտանիքի աղքատության նպաստ¹¹⁹/ ինչպես դիմել տես կետ 1.1.3/

Այն ընտանիքները, որոնք ապրում են ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում և գրանցված են ընտանեկան նպաստի համակարգում, կարող են ստանալ ընտանիքի աղքատության նպաստ:

Այն ընտանիքները, որոնք ունեն անապահովության գնահատման համակարգում հաշվառված 30.00 -ից ավելի բարձր միավոր, ստանում են ընտանեկան նպաստ:

Ընտանիքի աղքատության նպաստի համակարգում երեխաներն ունեն որոշիչ դեր: Հիմնական նպաստի չափը կազմում է 10000 ՀՀ դրամ/18.24 Եվրո սկսած 2009թ-ից:

¹¹⁷ Բազային կենսաթոշակի չափը կազմում է 8000 ՀՀ դրամ, այսինքն $8,000 \times 140 = 11,200$ ՀՀ դրամ

¹¹⁸ Համաձայն տիկին Անահիտ Մխոյանի անցկացված հարցազրույցի, <Հավատք և լույս> համայնքի ազգային համակարգող, հարցազրույցն անցկացվել է 2008թ. մայիսի 6-ին

¹¹⁹ Համաձայն ՀՀ կառավարության 2009թ. հունվարի 15-ի թիվ 39 որոշման, ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2009 թվականի համար սոցիալական նպաստների չափերը որոշելու մասին ավելի մանրամասն տես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքի <Ընտանեկան նպաստներ>, հարց-պատասխան բաժնում

Եթե անապահովության միավորը 30.01-35.00 է, նպաստի չափը հետևյալն է:

- Յուրաքանչյուր 18 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը ստանում է լրացուցիչ հավելում 5500 ՀՀ դրամի/10.03 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր 15 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 6500 ՀՀ դրամի/11.86 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, ստանում է լրացուցիչ հավելում 6000 ՀՀ դրամի/10.95 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 7000 ՀՀ դրամի /12.77 Եվրոյի/չափով

Եթե անապահովության միավորը 35.01-39.00 է, նպաստի չափը հետևյալն է:

- Յուրաքանչյուր 18 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը ստանում է լրացուցիչ հավելում 6000 ՀՀ դրամի/10.95 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր 15 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 7000 ՀՀ դրամի/12.77 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, ստանում է լրացուցիչ հավելում 6500 ՀՀ դրամի/11.86 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 7500 ՀՀ դրամի /13.68 Եվրոյի/չափով

Եթե անապահովության միավորը բարձր է 39.00-ից, նպաստի չափը հետևյալն է:

- Յուրաքանչյուր 18 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը ստանում է լրացուցիչ հավելում 6500 ՀՀ դրամի/11.86 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր 15 տարին չլրացած երեխայի համար ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 7500 ՀՀ դրամի/13.68 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, ստանում է լրացուցիչ հավելում 7000 ՀՀ դրամի/12.77 Եվրոյի/ չափով
- Յուրաքանչյուր երեխայի համար սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող ընտանիքը, բաղկացած 4 և ավելի երեխաներից ստանում է լրացուցիչ հավելում 8000 ՀՀ դրամի /14.60 Եվրոյի/չափով

Ովքեր կարող են ստանալ ընտանեկան նպաստ: Ընդհանուր առմամբ, այս նպաստը նշանակվում է կախված ընտանիքների ապրելու պայմաններից, նրանց եկամտի չափից, ընտանիքի կազմից, բնակության վայրից և այլ պայմաններից: Բայց հաշմանդամ երեխաները և այն անձինք, ովքեր ունեն հաշմանդամության կարգավիճակ, 75 տարին անց միայնակ և անզավակ ծերերը, մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքները ունեն բարձր անապահովության միավոր ընտանեկան նպաստի համարկագում:¹²⁰

3.3.7.4. Տարիքային կենսաթոշակ

Թոշակային համակարգը ընդհանրապես, արդյոք կարելի է ապրել միջին թոշակով

¹²⁰ Հարցազրույց Ալլա Հարությունյանի հետ, իրավաբան, >Առաքելություն Հայաստան> ՀԿ, անցկացված 2009թ. փետրվարի 10-ին

❖ ԶԳ կենսաթոշակային համակարգը

Ներկայումս ԶԳ կենսաթոշակային համակարգը ներառում է:

- Պետական պարտադիր կենսաթոշակային ապահովագրություն բոլոր աշխատող քաղաքացիների համար: ¹²¹Այն իրականացվում է պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների հաշվին:
- Պետական կենսաթոշակային ապահովագրություն քաղաքացիների համար, ովքեր ընդգրկված չեն պետական սոցիալական ապահովագրության համակարգում երաշխավորելու քաղաքացիների կենսաթոշակային սոցիալական ապահովագրությունը: Այն իրականացվում է Պետական բյուջեից:
- Լրացուցիչ/կամավոր, ոչ-պետական թոշակային ապահովում, որը պիտի իրականացվի աշխատողների կամավոր վճարումների հաշվին/ այն դեռևս չի կիրառվում/¹²²

Հայաստանում թոշակների չափը կախված է կամ ստացած աշխատավարձի չափից կամ կենսաթոշակային ապահովագրության վճարների չափից: Թոշակի չափը, թոշակի տեսակը, ինչպես նաև թոշակի շեմը կախված է ապահովագրական ստաժի տարիներից և աշխատանքի տեսակից:

❖ Ապահովագրական ստաժ

«Ապահովագրական ստաժը ԶԳ օրենսդրությամբ չարգելված աշխատանքային կամ այլ գործունեությամբ զբաղվելու տարիների համագումարն է, երբ անձը կարող է ստանալ պարտադիր պետական ապահովագրական կենսաթոշակ և նա ընդունված կարգի համաձայն կատարել է կենսաթոշակային ապահովագրական վճարումներ: ¹²³

Գործունեություն, որոնք հաշվարկվում են ապահովագրական ստաժում/առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի դեպքում/, համաձայն պետական կենսաթոշակների մասին ԶԳ օրենքի 45/3,5/հոդվածի

- ուսուցումը կրթական հաստատություններում, ցերեկային կուրսերը, եթե ուսուցման ընթացքում կամ հետո անձը կատարել է կենսաթոշակային ապահովագրական վճարներ
- պարտադիր զինվորական ծառայությունը
- ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը
- այն ժամանակը, երբ ծնողներից մեկը խնամում է երեխային/յուրաքանչյուր երեխայի համար մինչև 2 տարի, բայց ոչ ավելի քան 6 տարի/ այս ժամանակահատվածը կարող է գրանցվել միայն ծնողներից մեկի ստաժում/
- մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխային խնամելու ժամանակահատվածը ծնողներից մեկի համար հաշվառվում է/ այս ժամանակահատվածը կարող է գրանցվել միայն ծնողներից մեկի ստաժում կամ այն ժամանակահատվածը, երբ այն անձը, որ համարվում է խնամակալ, խնամում է առաջին կարգի հաշմանդամին, բայց ոչ ավելի քան 10 տարի
- օրենքով նախատեսված այլ դեպքեր

Փաստաթղթեր, հավաստող ապահովագրական ստաժը: Համաձայն պետական կենսաթոշակային օրենքի/հոդված 47/ ապահովագրական ստաժը հավաստող հիմնական փաստաթուղթ համարվում է աշխատանքային գրքույկը և սկսած 1992 թվականից

¹²¹ Համաձայն 1997թ. դեկտեմբերի 6-ի պարտադիր ապահովագրական վճարների մասին ՀՀ թիվ 179 օրենքի հոդված 5/2/-ի, աշխատողները կատարում են ապահովագրական վճարներ իրենց աշխատավարձերի 3 տոկոսի չափով: Գործատուն նույնպես որոշակի մուծումներ է կատարում սոցիալական ապահովագրության հիմնադրամին

¹²² Ավելի մանրամասն Հայաստանի կենսաթոշակային համակարգի, գոյություն ունեցող կենսաթոշակների մասին տես ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության կայքում

http://www.mss.am/home/index.php?code_id=332&menu_id=317

¹²³ Պետական կենսաթոշակների մասին 2002թ. նոյեմբերի 19-ի թիվ 519 օրենքի, հոդված 45/1//ա

պարտադիր կենսաթոշակային ապահովագրական վճարների մուծման մասին տեղեկանքը, որը տրվում է տարածքային սոցիալական ապահովագրական գործակալություններից: Աշխատանքային գրքույկի բացակայության կամ այլ փաստաթղթերի բացակայության դեպքում ապահովագրական ստաժը հաստատվում է արխիվային փաստաթղթերով, իսկ այն չլինելու դեպքում դատարանի որոշումով:

Նկատառումներ:

- *«Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ(...)¹²⁴: բացի օրենքով նախատեսված դեպքերից, օրինակ՝ բռնադատվածության կամ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակաշրջանից: Այս դեպքում մեկ տարուց ավելի է հաշվարկվում:*
- *Կենսաթոշակ նշանակելու ժամանակ ստաժը, որը ձեռք է բերվել ԽՍՄՅ որևէ հանրապետությունում մինչև 1992 թվականի հունվարի 1-ը, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրներում, հաշվարկվում է ապահովագրական ստաժում համաձայն ԱՊՀ անդամ երկրներում կենսաթաշակային ապահովության բնագավառում քաղաքացիների իրավունքների մասին 1992 թվականի մարտի 13-ի համաձայնագրի: Ինչ վերաբերում է այլ երկրներին, ապա չկան ապահովագրական ստաժի փոխադարձ ճանաչման կամ ընդհանրապես կենսաթոշակային հարցերին վերաբերող ընդունված համաձայնագրեր, ուստի **Եվրոպական Միության երկրներից մեկում ձեռք բերված աշխատանքային փորձառությունը չի կարող հաշվի առնվել Հայաստանում թոշակներ նշանակելիս:***

❖ **Կենսաթոշակները Հայաստանում¹²⁵**

Պետական կենսաթոշակների մասին օրենքը /հոդված12-39/ որոշում է Հայաստանում թոշակների տեսակները, թոշակների նշանակման հիմքերը և թոշակի չափը: Հակիրճ թոշակները նշված են ստորև:

- **Տարիքային կենսաթոշակի** իրավունք ունեն 63 տարեկան դարձած և առնվազն 5 տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձինք
- **Ծերության թոշակ:** Այն ծերերը, որոնք չունեն տարիքային թոշակի իրավունք/այսինքն, չունեն պահանջված աշխատանքային ապահովագրական ստաժ/ 65 տարեկան հասակում կարող են ստանալ ծերության թոշակ:
- **Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ:**
 - Թիվ 1 ցուցակով¹²⁶ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, ովքեր դարձել են 55 տարեկան և ունեն առնվազն 25 տարվա ապահովագրական ստաժ, որից առնվազն 15 տարին աշխատել են առանձնապես ծանր, աշխատանքային պայմաններում: Մինչև օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքի հասնելը, կանանց համար գործում է տարիքային սանդղակ, համաձայն որի այս տարիքը ամեն տարի ավելանում է 6 ամսով մինչև 55 տարեկանը, օրինակ՝2008 թվականին ունեն այս թոշակի իրավունքը 51.5 տարեկանում, 2009թ.-52 տարեկանում:
 - Թիվ 2 ցուցակով¹²⁷ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, ովքեր դարձել են 59 տարեկան և

¹²⁴ Ibid., հոդված 45 (2)

¹²⁵ Այս գեկույցում ներառված չեն զինվորականների, ոստիկանության, դատավորների, դատախազների, դիվանագետների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակների չափերը, որոնք որոշվում են այլ նորմատիվ ակտերով

¹²⁶ ՀՀ կառավարությունը որոշում է այս պաշտոնների և զբաղմունքների ցուցակը

¹²⁷ ՀՀ կառավարությունը որոշում է այս պաշտոնների և զբաղմունքների ցուցակը

ունեն առնվազն 25 տարվա ապահովագրական ստաժ, որից առնվազն 20 տարին աշխատել են հատկապես ծանր աշխատանքային պայմաններում: Կանանց համար կա սանդղակ, համաձայն որի այս տարիքը ամեն տարի ավելանում է 6 ամսով մինչև 59 տարեկանը, օրինակ՝ 2008 թվականին ունեն այս թռչակի իրավունքը 56.5 տարեկանում, 2009թ.-57 տարեկանում, և այլն:

- **Երկարատև ծառայության կենսաթոշակ:** Երկարատև ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, ովքեր աշխատում են քաղաքացիական ավիացիայում:
- **Հաշմանդամության կենսաթոշակ/** ավելի մանրամասն տես 3.3.7.2/
- **Կենսաթոշակ կերակրողին կորցնելու դեպքում:** Կերակրողին կորցնելու դեպքում ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունեն մահացած կերակրողի՝
 - 18 տարին չլրացած երեխան,
 - 18 տարին չլրացած եղբայրը, քույրը և թոռը, եթե նրանք չեն աշխատում և եթե չունեն աշխատունակ ծնողներ
 - ամուսինը կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ծանաչված անձը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նա խնամում է մահացած կերակրողի 8 տարին չլրացած երեխային, եղբորը, քրոջը կամ թոռանը և չի աշխատում;
 - Հաշմանդամ երեխաներ, ծնողներ, ամուսին, որոնք հասել են տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի կերակրողի մահվան պահին և եթե նրանք չեն աշխատում
- **Մասնակի կենսաթոշակ:** Մասնակի կենսաթոշակի իրավունք ունեն կրթության, մշակույթի ոլորտի աշխատողները, եթե նրանք 55 տարեկան են և մինչև 2003 թվականի հունիսի 23-ը ունեն ապահովագրական ստաժ: Մասնակի կենսաթոշակի դեպքում հաշվառնում է միայն մասնագիտական ապահովագրական ստաժը:

❖ Կարող է մարդ ապրել միջին թռչակով

Վերջին տարիների ընթացքում Հայաստանը զգալիորեն նվազեցրել է աղքատությունը ամբողջ բնակչության մեջ: Բացի տնտեսական աճից, աղքատության նվազումը ծերերի շրջանում բացատրվում է նաև թռչակների ավելացումով, թռչակների պարտքերի վերացումով, փոխանցումով և իրենց երեխաների կողմից ստացված այլ աջակցությամբ: Ամեն տարի կառավարությունը ավելացնում է թռչակների չափը, բայց և այնպես չի կարելի ասել, որ թռչակները բավարար են բավարարելու նվազագույն կենսաապահովումը: Ըստ սոցիոլոգիական հարցման, որն անցկացրել էր Հայկական Կարիտասը 2007 թվականին, «.../Հայաստանում ապրող ծերերը չեն կարող լիովին բավարարել ոչ մի հիմնական կարիք նորմալ կենսակերպ ապահովելու համար: Մասամբ նրանք կարող են բավարարել միայն սննդի և կոմունալ ծախսերի կարիքները»¹²⁸:

Այս տեսակետից որոշիչ է թռչակառուների ընտանիքների/երեխաների աջակցությունը, շատ թռչակառուներ կլինեին ծայրահեղ աղքատ առանց այս աջակցության:

Հայաստանը ներկայումս չի կարող վճարել բարձր թռչակներ: Թռչակները հիմա վճարվում են հիմնադրամից, որը ստեղծվել է պարտադիր սոցիալական վճարներից և հնարավոր չէ վճարել բարձր թռչակներ բնակչության 12.5 տոկոսին, որոնք կենսաթոշակային տարիքի են: Ի լրացումն դրա, շատ հայեր աշխատում են սև շուկայում,

¹²⁸ Հայկական Կարիտաս<Արժանավայել և բարեկեցիկ կյանք ծերերի համար> սոցիոլոգիական հետազոտություն, հեղինակ Ջառա Աղանյան, Գյումրի, մաս 5, Եզրակացություններ և առաջարկություններ, էջ 65, պարբերություն 5 http://www.caritasarm.am/downloads/sociological_research_2007.pdf

որտեղ ոչ աշխատակիցները և ոչ էլ աշխատողները աշխատավարձերի համար չեն վճարում հարկեր¹²⁹:

Թոշակի և այլ նպաստների իրավունք

❖ Թոշակի իրավունք

Այսպիսով, Հայաստանում, ծերերը ունեն տարիքային կամ ծերության թոշակի իրավունք/ինչպես դիմել, տես 1.1.3/

Տարիքային ապահովագրական թոշակ նշանակվում է նրանց, ովքեր 63 տարեկան են և ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ: Ընդ որում, կանանց համար գործում է տարիքային սանդղակ, ըստ որի նրանց համար այդ տարիքը յուրաքանչյուր տարի ավելանում է 6 ամսով, մինչև 63 տարեկանին հասնելը: Այսպես, 2008թ. կանայք իրավունք ունեին թոշակի անցնել 61.5 տարեկան հասակում, 2009-ին 62 տարեկանում: Յուրաքանչյուր անձ 35 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում իրավունք ունեն տարիքից շուտ անցնելու թոշակի, այսինքն նրանք կարող են անցնել թոշակի սահմանված տարիքային շեմից մեկ տարի շուտ:

Տարիքային կենսաթոշակի չափը: 2009թ. հունվարի 1-ից որոշված է բազային թոշակ, 8000 ՀՀ դրամի չափով/14.60 Եվրո և յուրաքանչյուր ապահովագրական տարվա գումարը կազմում է 450 ՀՀ դրամ/0.82Եվրո/, որը սահմանված է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 2-ի թիվ 1122 որոշմամբ:

Կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

Կենսաթոշակը=բազային թոշակ+Nx450/xC, որտեղ

N-ը ապահովագրական ստաժի տարիներն են,

C-ն կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Մինչև 25 տարվա/ներառյալ/ստաժը բազմապատկվում է 0.04 գործակցով, իսկ 25 տարին գերազանցող ստաժը` 0.02 գործակցով, այնուհետև ստացված արտադրյալները գումարվում են: Օրինակ` եթե կենսաթոշակառուն ունի 30 տարվա ապահովագրական ստաժ, նրա կենսաթոշակի չափը կհաշվարկվի հետևյալ կերպ.

$$Կ=8000+30 \times 450 \times [(25 \times 0.04) + (30 - 25) \times 0.02]$$

$$Կ=8000+30 \times 450 \times 1.1$$

$$Կ=22.850 \text{ ՀՀ դրամ կամ } 41.69 \text{ Եվրո}$$

Ծերության սոցիալական կենսաթոշակ: Ծերության սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, ովքեր դարձել են 65 տարեկան և չունեն առնվազն 5 տարվա ապահովագրական ստաժ:

Ծերության սոցիալական կենսաթոշակի չափը: Այս կենսաթոշակը հավասար է սահմանված բազային թոշակին, Այսինքն 8000 ՀՀ դրամ կամ 14.60 Եվրո

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը: Այս կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

➤ բազային թոշակ+կերակրողի ապահովագրական ստաժը

- մեկ անձի համար 50%
- երկու անձի համար 90%
- 3 և ավելի անձանց համար 120%,
- 4 և ավելի անձանց համար 150 %

¹²⁹ Ծերերի խնդիրների մասին տես CNEWA կայքում, /Կենսաթոշակառուները ճգնաժամի մեջ/, պատրաստված Գայանե Աբրահամյանի կողմից, 2008թ, <http://www.cnewa.org/mag-article-bodypg-us.aspx?articleID=3304>

- Երկկողմանի ծնողագուրկ յուրաքանչյուր երեխայի կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ հիմնական կենսաթոշակի հնգապատիկին ավելացվում է յուրաքանչյուր ծնողի հաշվարկած կենսաթոշակի ապահովագրական մասը՝ վերը նշված չափերով:
- Ծնողագուրկ երեխաները, որոնք գտնվում են պետության խնամքի տակ, /հատուկ դպրոցներ և մանկատներ/ ստանում են կենսաթոշակի 50 տոկոսը: Հատուկ հաշիվ է բացվում երեխայի անունով բանկում և այս գումարները հավաքվում են այստեղ: Երեխան իրավունք ունի ստանալ այն չափահաս դառնալուն պես մեկ ամսվա ընթացքում, որպես մեկանգամյա վճարում:
- Կենսաթոշակը տրվում է երեխայի ծնողին/խնամարկյալին/ անչափահաս կամ հաշմանդամ լինելու դեպքում:

Նկատառումներ:

- **Կենսաթոշակները վճարվում են ամսական մեկ անգամ:** Տրված ամսվա կենսաթոշակները վճարվում են ոչ ուշ քան նույն ամսվա առաջին կեսը: Սովորաբար թոշակառուները իրենց թոշակը ստանում են տանը, բայց կարող են ստանալ նաև իրենց բնակության վայրի տարածքային սոցապ բաժիններից՝ ներկայացնելով անձնագիր:
- **«Չստացած թոշակները կարող են ստանալ ոչ ավել քան 3 տարվա համար նախապես ներկայացնելով թոշակառուի գրավոր դիմումը»¹³⁰**
- «Այն թոշակառուները, որոնք լիովին գտնվում են պետական հոգածության ներքո և ապրում են պետական ծերանոցներում ստանում են միայն իրենց կենսաթոշակի ապահովագրական մասը/հանած բազային թաշակը/¹³¹: Նրանց, ում նշանակված է ծերության սոցիալական թոշակ, կենսաթոշակ չեն ստանում
- **«Կենսաթոշակառուի մահվան դեպքում, նրան հասանելիք և չվճարված թոշակը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին/.../»¹³²** Ընտանիքի անդամներից մեկը, կենսաթոշակառուի մահվանից հետո 6 ամսվա ընթացքում, տարածքային սոցիալական ապահովության բաժին պիտի ներկայացնի գրավոր դիմում, անձնագիր և սոցիալական քարտ, կենսաթոշակառուի մահվան վկայական:
- **Թաղման նպաստ կենսաթոշակառուի մահվան դեպքում/.../:** Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստը վճարվում է մահացած կենսաթոշակառուի հուղարկավորությունը կատարած անձին/.../¹³³ հիմնական կենսաթոշակի քսահինգապատիկի չափով: Ներկայումս թաղման նպաստը կազմում է 200000դրամ կամ 364.89 Եվրո: Այս նպաստը ստանալու համար անձը սոցիալական ապահովության բաժին պիտի ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝ գրավոր դիմում, անձնագիր, սոցիալական քարտ՝ պատճենների հետ միասին, մահվան վկայականը և պատճենը:
- **«Աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է լրիվ չափով»¹³⁴**

❖ **Կենսաթոշակառուներին հասնող այլ նպաստներ:**

Բացի կենսաթոշակից, Հայաստանում տարեցների համար չկան այլ հատուկ նպաստներ: **Ընտանեկան աղքատության նպաստի իրավունք:** Տարեց կենսաթոշակառուի առկայությունը ընտանիքում ավելացնում է անապահովության միավորը, մի կողմից, բայց մյուս կողմից ծերի կենսաթոշակը համարվում է եկամուտ և կարող է նվազեցնել ընտանիքի անապահովության միավորը: Ինչքան ցածր է ամսական միջին եկամուտը, այնքան բարձր է անապահովության միավորը: Ծերերի միակ կատեգորիան, որն ունի ավենամեծ հնարավորությունը ստանալու ընտանեկան աղքատության նպաստ, դրանք «միայնակ անժառանգ, 75 և բարձր տարիքի կենսաթոշակառուներն են»:

¹³⁰ Օրենք Պետական Կենսաթոշակների մասին, հոդված 57/1/
¹³¹ Ibid., հոդված 58
¹³² Ibid., հոդված 64 (5)
¹³³ Ibid., հոդված 64 (1)
¹³⁴ Ibid., հոդված 54

Անվճար բժշկական աջակցություն

- **Անվճար առաջնային բժշկական օգնություն:** 2006 թվականից սկսած առաջնային բուժօգնությունը անվճար է ՀՀ բոլոր քաղաքացիների համար,¹³⁵ և այդպիսով այն անվճար է նաև ծերերի համար:
- **Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն և ծառայություն անապահով խմբերի համար:** Որպես առանձին խումբ ծերերը չեն մտնում սոցիալապես անապահով անձանց ցուցակի մեջ, որն ընդունված է ՀՀ կառավարության կողմից: Նրանք կարող են օգտվել անվճար բուժօժանայությունից՝ պատկանելով այս սահմանված խմբերից որևէ մեկին: ընտանիքներ, որոնք ստանում են ընտանեկան նպաստ, այսինքն ընտանեկան նպաստի համակարգում 30 և ավել անապահովության միավոր ունեցող; հաշմանդամության խմբում ընդգրկված անձինք; բանտարկյալներն ու բռնադատվածները; 1941-45թթ Հայրենական Մեծ պատերազմի վետերանները:¹³⁶
- **Ատամնաբուժական ծառայություններ:** 65 և բարձր տարիքի անձինք իրավունք ունեն օգտվելու անվճար ատամնաբուժական ծառայություններից համաձայն ընդունված կարգի:¹³⁷
- ❖ **Լսողական սարքերի անվճար ստացումը:** ¹³⁸Անվճար լսողական սարքեր ստանալու համար ծեր թոշակառուները պետք է դիմեն հանրապետական սուրդոլոգիական կենտրոն և պետք է ստանան տեղեկանք ապարատի տեսակի մասին և ներկայացնեն այն տարածքային սոցապ կենտրոն՝ դիմումի հետ մեկտեղ:

Կոնտակտային ինֆորմացիա թոշակներով զբաղվող կառույցների մասին

- **Կենսաթոշակների խնդիրներ:** Ավելի մանրամասն թոշակների մասին ինֆորմացիա ստանալու համար դիմեք բնակության վայրի տարածքային սոցիալական ապահովության գործակալություն, որոնք ունեն իրավունք նշանակել թոշակներ կամ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարություն, որը գտնվում է ք. Երևան, Կառավարության շենք 3 հասցեում, կոնտակտային անձ՝ Ռոզա Մկրտչյան, Թոշակների ապահովության բաժին, հեռախոս 374 10 542796
- **Տարեցների խնդիրներ:** Ավելի մանրամասն ինֆորմացիա ծերերի խնդիրների, նրանց տրամադրվող արտոնությունների, ծերանոցների մասին ստանալու համար կարելի է դիմել ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարություն, Անահիտ Գևորգյանին, Ծերերի հիմնահարցերի բաժին, հեռախոս 374 10 52 17 61

3.3.7.5. Սոցիալական ապահովության համակարգի այլ նպաստներ

Նպաստներ կապված երեխայի ծննդյան հետ

- **երեխայի ծննդյան** հետ կապված ընտանիքը ստանում է միանվագ նպաստ 50000 ՀՀ դրամի չափով 91.22 Եվրո անկախ ընտանիքի անապահովությանից
- ընտանիքները երրորդ և մնացած հաջորդ երեխայի համար ստանում են 430 000 ՀՀ դրամ /784.51 Եվրո/
- հղիության և ծննդաբերության նպաստ/մայրության նպաստ/ վճարվում է աշխատող կնոջը 70 օր ծննդաբերությունից առաջ և 70 օր հետո: Այս նպաստը հավասար է

¹³⁵ Համաձայն ՀՀ կառավարության թիվ 291 որոշման 2004 թվականի թիվ 318 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ընդունված 2006թ. փետրվարի 9-ին

¹³⁶ Համաձայն Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների մասին ՀՀ կառավարության թիվ 318 որոշման, որը ուժի մեջ է մտել 2004թ. ապրիլի 8-ին

¹³⁷ Ibid

¹³⁸ Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 12-ի թիվ 453 որոշման Պրոթեզ-օրթոպեդիկ սարքավորումների, տեխնիկական և վերանորոգման այլ լրացուցիչ միջոցների տրամադրման կարգի մասին

նախքան մայրության արձակուրդ գնալը վերջին 3 ամիսների միջին աշխատավարձին:

- ամսական նպաստ 18 000 ՀՀ դրամի չափով/32.84 Եվրո/ տրվում է այն անձանց, որոնք գտնվում են մասնակի վճարովի արձակուրդում և խնամում են մինչև 2 տարեկան երեխաների: Եթե նրանք վերադառնում են իրենց աշխատանքին կամ ազատվում են աշխատանքից, նպաստը չի վճարվում:

Թաղման նպաստ տրվում է՝

- Գործազուրկին/գործազրկության նպաստի եռապատիկի չափով/
- Թոշակառուին և հաշմանդամին /բազային նպաստի քսանհինգապատիկի չափով, որը կազմում է 200 000 ՀՀ դրամ կամ 364.89 Եվրո/
- ընտանեկան նպաստ ստացող անձին /50 000 ՀՀ դրամ կամ 91.22 Եվրո

Հայրենական Մեծ պատերազմի/1941-1945թթ/ վետերաններին ու հաշմանդամներին տրվող նպաստներ

- Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին տրվում է ամսական 4500 ՀՀ դրամ կամ 8.21 Եվրո օգտվելու տրանսպորտային և էլեկտրո ծառայություններից
- Ձուկված մասնակցի ընտանիքին ամսական տրվում է 6 800 ՀՀ դրամ կամ 12.41 Եվրո, կոմունալ բոլոր ծառայություններից օգտվելու համար
- Հայրենական պատերազմի հաշմանդամներին-ամսական 6 800 ՀՀ դրամ կամ 12.41 Եվրո կոմունալ բոլոր ծառայություններից օգտվելու համար: ¹³⁹ Այս նպաստը ստանալու համար պետք է դիմել բնակության վայրի համապատասխան կենսաթոշակային մարմին/ նրանք ովքեր ստանում են կենսաթոշակ զինկոմիսարիատներից, պետք է համապատասխանաբար դիմեն այնտեղ/
- Որոշ արտոնություններ կոմունալ ծառայություններից օգտվելու համար՝ մինչև 50 տոկոս զեղչ հեռախոսի, բնակարանի, ռադիոյի բաժանորդային վճարների, ինչպես նաև անվճար բուժ օգնության և պետական պատվերի շրջանակներում ծառայության¹⁴⁰
- Տարեկան մեկ անգամ ԱՊՀ երկրների տարածքով անվճար ճանապարհորդելու իրավունք
- Հայրենական մեծ պատերազմի վետերանները կարող են ստանալ պատվովճար 20 000 ՀՀ դրամ կամ 36.49 Եվրո¹⁴¹

Զինհաշմանդամներ և զոհված/մահացած զինծառայողների ընտանիքի անդամներին տրվող նպաստներ

- Ամսական 7500 ՀՀ դրամ կամ 13.68 Եվրո տրվում է զինհաշմանդամներին՝ գազ, ջուր և տրանսպորտային ծառայություններից օգտվելու համար
- Ամսական 7500 ՀՀ դրամ կամ 13.68 Եվրո տրվում է զոհված զինվորականների ընտանիքի անդամներին պաշտոնական պարտականությունների համար, եթե ընտանիքի անդամների թիվը 5-ից ավել է յուրաքանչյուր անդամի համար լրացուցիչ 3000 ՀՀ դրամ կամ 5.47 Եվրո
- Այդ անձինք օգտվում են 50 տոկոս զեղչից՝ բաժանորդային կոմունալ վարձերի վճարումների համար

¹³⁹ Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 5-ի թիվ 207 որոշման Հայրենական մեծ պատերազմի վետերաններին և նրանց հավասարեցված անձանց ֆինանսական աջակցության հատկացման և տրամադրման կարգի հաստատման մասին, հավելված 1

¹⁴⁰ 1998թ. դեկտեմբերի 2-ին ընդունված ՀՀ թիվ 267 օրենքը Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մասին, հոդված 4

¹⁴¹ ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 15-ին ընդունած թիվ 444 որոշումը Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների համար ամսական պատվովճարի չափը որոշելու մասին

3.3.7.6. Հատուկ նպաստներ վերադարձողների համար

Հայաստանում վերադարձողների համար չեն նախատեսվում հատուկ նպաստներ կամ արտոնություններ:

Կան որոշ միջազգային և տեղական կազմակերպություններ որոնք զբաղվում են վերադարձողների խնդիրներով՝ տրամադրելով տարբեր տեսակի օգնություն, օրինակ ՄՄԿ-ն, Եվրասիան, Ֆրանս-հայկական ասոցիացիան, Հայկական Կարիտասը, Առաքելություն Հայաստանը և այլն: Բայց սովորաբար այս կազմակերպությունները սատարում են իրենց շահառուներին:

Կա ինտերնետային կայք, www.backtoarmenia.am, որը գործում է ՀՀ Տարածքային Կառավարման Նախարարության Միգրացիոն Գործակալության իրավասության տակ:

«Անհրաժեշտություն կա ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, որը կկորդինացնի վերադարձողներին վերաբերող պետական և ոչ-պետական գործակալությունների ու կազմակերպությունների աշխատանքը, որպեսզի ավելի լավ կազմակերպվի հայ միգրանտների վերադարձն ու վերաինտեգրումը»¹⁴²:

3.3.8. Բարեգործական կազմակերպություններ /ծառայություններ, կոնտակտային տվյալներ/

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ինտերնետային կայքում տեղադրված է տվյալների բազա հայկական հկ-ների ցուցակներով, որոնք տարբեր բնույթի ծառայություններ են մատուցում տարբեր սոցիալական խմբերի: Այս կազմակերպությունները դասակարգված են ըստ տեղանքի և գործունեության ոլորտի: <http://www.ngo.am/eng/index.asp?page=dir>

3.3.9. Օգտակար տվյալներ ապրելաձևիսը հաշվարկելու համար/բենզինի գին, հիմնական սնունդ և այլն/

ՀՀ Ազգային վիճակագրական վարչությունը հրապարակել է «ՀՀ-ում 2009թ. հունվարից նոյեմբեր ամիսների սպառողական գնացուցակը /հայերենով/», որտեղ կարելի է գտնել 470 անուն սննդային և ոչ-սննդային ապրանքների գներ Հայաստանի 11 քաղաքներում:¹⁴³

Սննդային ապրանքներ

Անվանումը	Չ/Մ	ՀՀ դրամ	Եվրո
ալյուր/բարձր որակի/	1 կգ	330.0	0.60
հաց/բարձր որակի/	1 կգ	399.7	0.73
կաթ	1 կգ	355.7	0.65
ձու	10 հատ	462.9	0.84
բուսական /արևածաղկի/ձեթ	1 կգ	637.2	1.16
ընդեղեն	1 կգ	948.9	1.73
կարտոֆիլ	1 կգ	121.4	0.22
բրինձ		673.5	1.23
շաքար	1 կգ	327.2	0.60
տավարի միս	1 կգ	1648.0	3.01
խոզի միս	1 կգ	2411.2	4.40
թռչնեղեն	1 կգ	1335.0	2.44
կարագ	1 կգ	2735.7	4.99

¹⁴² Հարցազրույց պարոն Ս. Վարդանյանի հետ, ՀՀ ոստիկանության ապօրինի միգրացիայի դեմ պայքարի վարչության պետ, անցկացված 2009թ. փետրվարի 17-ին

¹⁴³ ՀՀ Ազգային վիճակագրական Ծառայություն, Հայաստանում սպառողական գնացուցակներ, հունվար-նոյեմբեր 2009 http://www.armstat.am/file/article/cpi_11_09.pdf

պանիր	1 կգ	1667.6	3.04
մակարոն	1 կգ	441.7	0.81
կաղամբ	1 կգ	125.6	0.23
գլուխ սոխ	1 կգ	333.4	0.61
խնձոր	1 կգ	326.8	0.60

Ծառայություններ/գները հաստատված են Հայաստանի բոլոր շրջանների համար/

- Էլեկտրականություն սպառողների համար/ցերեկային տարիք/ 1 կվտ/ժամ 30 ՀՀ դրամ կամ 0.05 եվրո, գիշերային տարիք / 1 կվտ/ժամ 20 ՀՀ դրամ կամ 0.04 եվրո¹⁴⁴
- Խմելու ջրի տարիք /կախված է տարբեր շրջանների /ամսական վճար 1մ3- 76.98-154.47 ՀՀ դրամ¹⁴⁵ կամ 0.14-0.28 եվրո
- Բնական գազ այն սպառողների, որոնք ամսական ծախսում են մինչև 10000 խմ-1խմ-ի արժեքը 96.0 ՀՀ դրամ¹⁴⁶ կամ 0.18 եվրո
- Ամսական հեռախոսավճար-1100 ՀՀ դրամ կամ 2.01 եվրո

Հայաստանում կան երեք բջջային օպերատորներ՝ Բիլայն, Վիվա սել USU,

Beeline <http://mobile.beeline.am/>

VivaCell MTS <http://www.vivacell.am/>

Orange: <http://www.orangearmenia.am/>

3.4. Առողջապահություն

3.4.1. Ընդհանուր առողջապահական իրավիճակն ըստ տարածաշրջանների

Համաձայն Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական վարչության 2009 թվական տարեգրքի,¹⁴⁷ 2008 թվականին հիվանդությունների թիվը առաջին անգամ գրանցված դիագնոզով/ 100 000 դեպքից/ հետևյալն են՝

- շնչառական օրգանների հիվանդություններ-10090.2
- վարակիչ կամ պարազիտային հիվանդություններ-2146.8
- նյարդային համակարգի և զգայական օրգանների հիվանդություններ-2935.8
- հոգեկան խանգարումներ-232.3
- նորագոյացություններ-264.8
- արյան շրջանառության հիվանդություններ-1309.9
- մարտոդական օրգանների խանգարումներ-1388.2
- ուրոլոգիական հիվանդություններ-1414.8
- հղիության, ծննդաբերության և հետ-ծննդաբերական բարդություններ-1536.0
- մաշկային ինֆեկցիաներ և ենթամաշկային ճարպային հիվանդություններ-1156.0
- վնասվածքներ և թունավորումներ-1703.7
- և այլն:

¹⁴⁴ ՀՀ Հանրային ծառայությունները համակարգող հանձնաժողով, Էլեկտրականություն, տարիքներ <http://www.psrc.am/en/?nid=213>

¹⁴⁵ ՀՀ Հանրային ծառայությունները համակարգող հանձնաժողով, ջրամատակարարում, տարիքներ <http://www.psrc.am/en/?nid=229>

¹⁴⁶ ՀՀ Հանրային ծառայությունները համակարգող հանձնաժողով, բնական գազ, տարիքներ <http://www.psrc.am/en/?nid=218>

¹⁴⁷ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, Հայաստանում, 2008 թվականի Տարեգիրք, հանրային առողջություն, կետ 101-102, էջ 141-143 <http://www.armstat.am/file/doc/99458083.pdf>

Հիվանդությունների շարքում, որոնք պատճառ են ընտրովի ինֆեկցիոն հիվանդությունների 2008 թվականին /ամբողջ բնակչության թվից/, հետևյալն են՝ սուր աղիքային ինֆեկցիաներ-5767 տիֆի տենդ և պարատիֆային տենդ A,B,C-12 սալմոնելոզ-385 վիրուսային հեպատիտ-1043 քութեշ-767 կապույտ հագ-3

Ինչ վերաբերում է AH1N1 վիրուսին, ըստ Առողջապահության Նախարարության Պետական Հիգիենիկ և Հակահամաճարակաբանական Տեսչության համաճարակաբանական վիճակը Հայաստանում հանգիստ է և վերահսկվում է:

2010 թվականի հունվարի 8-ի տվյալներով, Հայաստանում կա AH1N1գրանցված 111 դեպք, որից 3 մահացու ելքով¹⁴⁸:

3.4.2. Խմելու ջուր և սանիտարիա ըստ շրջանների; ջեռուցման համակարգ/եթե հնարավոր է/

Խմելու ջրի մատչելիությունը: «Չնայած որ հայերի 90 տոկոսի համար ջուրը մատչելի է, սակայն ջրային ծառայությունների նկատմամբ վստահելիությունը և որակը ահազանգորեն խաթարվել է վերջին տասնամյակի ընթացքում: Ավելին, ջրամշակման գործարանների ոչ նորմալ գործունեությունը և խաթարված ջրամատակարարման ցանցերը դարձրել են խմելու ջուրը անապահով շատ քաղաքային վայրերում, որի արդյունքում առաջանում են ջրից առաջացած հիվանդություններ, ինչպիսին են տիֆը և լուծը: Գյուղական ջրամատակարարման համակարգերը մեծապես խաթարված վիճակում են:»¹⁴⁹

Տես նաև. Ջրի արդյունավետությունը/ամսագիր ջրապահպանման մասնագետների համար, 2008 թ ընթացիկ-հունիս: Քաղած Դասեր, հեղինակ. Ռոբերտ Քուրքչյան և Մաթյու Կարանյան <http://www.waterefficiency.net/may-june-2008/armenia,-water,-international-1.aspx>,

Կոյուղագծեր: «Բնակչության այն հատվածը, որոնց մատչելի են կոյուղագծերը 1990-ականներից մինչ օրս չի փոխվել և մնում է 70 տոկոս: Այս խնդիրը հատկապես վերաբերում է գյուղական բնակչությանը, որտեղ տնային տնտեսությունների մեծ մասին կոյուղագծերը հասանելի չեն»¹⁵⁰: Իրավիճակը վերջին տարիներին չի փոխվել:

3.4.3. Առողջապահություն/ ներառյալ հոգեբանական խնամք

3.4.3.1. Առողջապահական ենթակառուցվածքը ըստ շրջանների/ հիվանդանոցներ, սարքավորումներ և այլն

«(...)Առողջապահական համակարգը բաժանված է երեք վարչական շերտերի՝ ազգային, հանրապետական, շրջանային /մարզ/ և քաղաքային կամ համայնքային(...): Անկախությունից հետո հանրային ծառայությունների ապակենտրոնացման և վերաձևավորման արդյունքում, բացառությամբ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության և մի քանի երկրորդական խնամքի հաստատությունների, առողջապահական ծառայությունների գործարկումը և

¹⁴⁸ ՀՀ Առողջապահության Նախարարություն, հակահամաճարակային իրավիճակի մասին, A H1N1Հայաստանում; <http://www.moh.am/?section=news/open&id=143&nid=1073>

¹⁴⁹ Ջրային պրոֆիլ: Հայաստան, քաղաքային/գյուղական շջաններ, 2008թ հոկտեմբերի 2; <http://waterwiki.net/index.php/Armenia>

¹⁵⁰ ՄԱԿ, Ազգային Ձեկույց 2005, Հայաստան, Հազարամյակի Չարգացման նպատակները, ազգայնացում և առաջադիմություն ապահովել շրջակա միջավայրի կայությունը, թիրախ 11, բարելավել բնակարանային պայմանները, էջ 24; <http://www.undp.am/docs/publications/2005publications/mdgreporteng.pdf>

սեփականացումը փոխանցվել են տեղական իշխանություններին/ առաջնային առողջության պաշտպանությունը/ և մարզային կառավարությանը/ հիվանդանոցները:¹⁵¹

3.4.3.2. Ընտրության չափանիշները և առողջապահական ծառայությունների հասանելիությունը

Վճարովի բժշկական ծառայությունները, որպես հայեցակարգ պաշտոնապես ներմուծվել են Հայաստանում 1997-ից մինչև 2005: Նրանք կիրառվում էին բժշկական խնամքի և ծառայությունների նկատմամբ, որոնք տրամադրվում էին պետական բյուջեի կողմից ֆինանսավորված առողջապահական ծրագրերի շրջանակներից դուրս: 2006 թվականին կառավարությունը իրականացրեց շատ կարևոր փոփոխություններ առողջապահական համակարգում՝ տրամադրելով պետության կողմից երաշխավորված անվճար ամբուլատոր-պոլիկլինիկային առողջապահական ծառայություններ:

Անվճար բժշկական աջակցություն և ծառայություն ապահովված պետության կողմից

❖ Առաջնային բժշկական խնամք Հայաստանի բոլոր բնակիչների համար

- Շտապ օգնություն
- Ամբուլատոր/պոլիկլինիկային բժշկական խնամքի ամբողջ ծավալը
- Սանկաբարձական ծառայություններ
- Իրավիճակներ, որոնք պահանջում են վերակենդանացման բժշկական միջամտություն
- Հիվանդություններ և իրավիճակներ, որոնք պահանջում են հրատապ բժշկական միջամտություն
- Հոգեբուժական խնամք
- Չարորակ նորագոյացություններ
- Հենոֆիլյա
- Ապլաստիկ անեմիա
- Ինֆեկցիոն հիվանդություններ/հեպատիտ, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, և այլն

❖ Որոշ սոցիալապես անապահով խմբեր, որոնք կարող են ստանալ անվճար փաթեթ, բացառությամբ բարդ և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ դեպքերը

- Ընտանիքի աղքատության նպաստների համակարգում ընդգրկված շահառուներ /36 և ավելի միավորներ ունեցողներ/
- Հաշմանդամություն ունեցող անձինք/համաձայն եռաստիճան հաշմանդամության/, հաշմանդամ երեխաներ
- Զինվորականներ և նրանց ընտանիքի անդամներ; պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք; ծառայության մեջ զոհված զինվորականների ընտանիքներ
- Անձինք, որոնք ենթակա են լրացուցիչ բժշկական հետազոտության բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից/ ըստ ԲՍԳ ուղեգրման/
- Երեխաներ/առանց ծնողական խնամքի մնացած մինչև 18 տարեկան /
- մինչև 7 տարեկան երեխաներ
- և այլն¹⁵²

¹⁵¹ Առողջապահության Համաշխարհային կազմակերպություն, Առողջապահական համակարգերը անցման շրջանում, Հայաստան /Առողջապահական համակարգի վերանայում/
<http://www.euro.who.int/Document/E89732.pdf>

¹⁵² ibid., էջ 33-34 /սոցիալապես անապահով խմբերի լրիվ ցուցակը/

- ❖ **Բժշկական աջակցություն համաֆինանսավորման հիմքով:** «(...)2004 թվականին, Կառավարությունը ներմուծեց համաֆինանսավորում բնակչության այն խմբերի համար, որոնք չեն համարվում սոցիալապես անապահով, միանվագ հաստատուն վճարի տեսքով, հատուկ որոշված բժշկական խնամքի և ծառայության համար, որոնք ընդգրկված են հիմնական նպաստային փաթեթում¹⁵³: Համեմայն դեպս, սա սահմանափակվում է միայն Երևանի հիվանդանոցներով և կան մի քանի բացառություններ երկուսի համար՝ որոշակի պայմաններ/ օրինակ, հիվանդություններ և ախտորոշումներ, որոնք պահանջում են հիվանդանոցային խնամք և ծառայություններ, ընդունված Առողջապահության Նախարարության կողմից/ և որոշակի բնակչության խմբեր, հատկապես թոշակառուներ, խոցելի և հատուկ խմբեր, ինչպես նաև հիվանդներ, գործուղված Առողջապահության նախարարության, Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության կողմից կամ մարզային իշխանությունների կողմից»(...)¹⁵⁴
- ❖ **Հայաստանի մնացած բոլոր բնակիչները պիտի վճարեն ամբողջովին,** տեղում, բոլոր ծառայությունների համար, որոնք չեն մտնում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն և սպասարկման մեջ:

Նկատառումներ:

- *Անվճար բժշկական աջակցությունից և ծառայություններից կարող են օգտվել միայն ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք*
- *Հայաստանում չկա պարտադիր բժշկական ապահովագրություն*
- *Որոշ տեսակի բժշկական աջակցություն, որը պահանջում է դժվար և հատուկ տեխնոլոգիաների կիրառում, վճարովի են բոլոր անձանց համար, նույնիսկ նրանց, ովքեր ընդգրկված են սոցիալապես խոցելի խմբերի մեջ*

Գոյություն ունեցող «պետական պատվերի» շրջանակներում իրականացվող անվճար բուժօգնությունը այսպիսով կրում է ավելի դեկլարատիվ բնույթ, քան փաստացի: Հատկապես կարիքավոր բնակչությունը, և/ կամ նրանք, ովքեր ունեն սահմանափակ միջոցներ, հիմնական և հատուկ բժշկական ծառայություններից հազիվ են կարողանում օգտվել:

Կանայք: Դժվարությունների շարքում, որոնց կանայք հանդիպում են հայկական հասարակության մեջ, առողջապահության հասանելիությունն է: Վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական փոփոխությունները մեծապես ազդել են առողջապահական համակարգի վրա, առաջացնելով բազմաթիվ պրոբլեմներ: Առողջապահությունը դարձել է անհասանելի բնակչության մեծամասնության համար և առողջապահության որակը հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում խաթարված է: Շատ սոցիալական հիվանդություններ, ինչպիսիք են տուբերկուլյոզը, սեռավարակները, օնկոլոգիական և սիրտ-անոթային հիվանդությունները դարձել են շատ տարածված բնակչության մեջ: Մյուս խնդիրը կապված է կանանց վերարտադրողական առողջության հետ: Մայրական մահացությունները կապված են կանանց առողջական վիճակի վատթարացման հետ:

3.4.3.3. Առողջապահական ծառայությունների արժեքը/բուժման, դեղորայքի, բժիշկների կաշառքի արժեքը

¹⁵³ Հիմնական փաթեթ
¹⁵⁴ Առողջապահության Համաշխարհային կազմակերպություն, Առողջապահական համակարգերը անցման շրջանում, Հայաստան /Առողջապահական համակարգի վերանայում/
<http://www.euro.who.int/Document/E89732.pdf>

❖ **Բուժման արժեքը**

Յուրաքանչյուր կլինիկա ունի իր կողմից հաստատված գնացուցակը

Ստորև ներկայացված է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնում առկա որոշ բուժումների և հետազոտությունների արժեքները 2010 թվականի հունվարի դրությամբ:

Բոլոր տեսակի խորհրդատվություններ-5000 ՀՀ դրամ կամ 9.12 Եվրո

Ստացիոնար բուժման համար

- աղետամոքսային բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- սրտաբանական բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- նեֆրոլոգիական բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- էնդոկրին բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- թոքային բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- նյարդաբանական բաժանմունք-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- հեմոդիալիզի մեկ կուրսի համար- 35 000 ՀՀ դրամ կամ 63.86 Եվրո

Ընդհանուր վիրաբուժական

- բոլոր գինեկոլոգիական միջամտությունները- 90000-130000 ՀՀ դրամ-164.20-237.18 Եվրո
- ճողվածք-100 000 ՀՀ դրամ կամ 182.45 Եվրո
- քրոնիկ խոլեցիստիտ-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- քրոնիկ ապենդիցիտ-100 000 ՀՀ դրամ կամ 182.45 Եվրո
- գաստրոռեկտոմիա-140 000 ՀՀ դրամ կամ 255.42 Եվրո

Լապարասկոպիա

- Լապարասկոպիկ խոլեցիստեկտոմիա-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- ճողվածքահատում, ապենդեկտոմիա-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո
- դիագնոստիկ Լապարասկոպիա-80 000 ՀՀ դրամ կամ 145.96 Եվրո

Ամպուտացիա-110 000 ՀՀ դրամ կամ 200.69 Եվրո

Աորտա-ազդրային երկկողմանի շունտավորում- 230 000 ՀՀ դրամ կամ 419.62 Եվրո

Վնասվածքաբանություն

- Ռեկոնստրուկտիվ վիրահատություններ, ոսկորների տրանսպլանտացիա-300 000ՀՀ դրամ կամ 547.34 Եվրո
- Տոտալ արթրոպլաստիկա-400 000 ՀՀ դրամ կամ 729.78 Եվրո

Նկատառումներ:

- Միաժամանակյա վիրահատությունների դեպքում հիվանդը պարտավոր է կատարել լրացուցիչ վճարում համաձայն դիագնոզի
- Վերոնշյալ գները չեն ներառում ինյականտների արժեքը

❖ **Բժշկական հետազոտություններ**

Ընդհանուր կլինիկական հետազոտություն

- արյան ընդհանուր անալիզ-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո
- մեզի ընդհանուր անալիզ-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո
- շաքարը մեզի մեջ-500 ՀՀ դրամ կամ 0.91 Եվրո

Կլինիկական բիոքիմիա

- արյան յուրաքանչյուր բաղադրիչի համար-500-3000 ՀՀ դրամ կամ 0.91-5.47 Եվրո

Կլինիկական իմունոլոգիա

- արյան խոլեսթրոլ-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո
- Ռեզուս ֆակտոր-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո
- C-ռեակտիվ պրոտեին-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո
- Ռևմատոիդ ֆակտոր-1700 ՀՀ դրամ կամ 3.10 Եվրո

Հորմոնալ դիագնոզ-5000 ՀՀ դրամ կամ 9.12 Եվրո

Կլինիկական բակտերիոլոգիական անալիզ

- արյան բակտերիոլոգիական անալիզ-3000 ՀՀ դրամ կամ 5.47 Եվրո
- դիսբակտերիոզ-4500 ՀՀ դրամ կամ 8.21 Եվրո
- բացիլակրության բակտերիոլոգիական անալիզ-1000 ՀՀ դրամ կամ 1.82 Եվրո

Տարբեր հատվածների ռենտգեն-1000-18000 ՀՀ դրամ կամ 1.82-32.84 Եվրո

Տարբեր հատվածների սոնոգրաֆիա-5000-7000 ՀՀ դրամ կամ 9.12-12.77 Եվրո

Էնդոսկոպիա

- գաստրոդուոդենոսկոպիա-8000 ՀՀ դրամ կամ 14.60 Եվրո
- կոլոնոսկոպիա-10 000 ՀՀ դրամ կամ 18.24 Եվրո

Ֆունկցիոնալ դիագնոզ

- ԷՍԳ/Էլեկտրո սրտագրություն-2000 ՀՀ դրամ կամ 3.65 Եվրո
- Էխո սրտագրություն -8000 ՀՀ դրամ կամ 14.60 Եվրո
- արյան ճնշման մոնիտորինգ-4000 ՀՀ դրամ կամ 7.30 Եվրո

Ներթոֆիզիոլոգիա

- Էլեկտրոնցեֆալոգրամ-7000 ՀՀ դրամ կամ 12.77 Եվրո
- Էխտենցեֆալոգրամ-3000 ՀՀ դրամ կամ 5.47 Եվրո

Ֆիզիոթերապիա

- ուլտրաձայն և ֆոնոֆորեզ-500 ՀՀ դրամ կամ 0.91 Եվրո
- ուլտրա բարձր հաճախականության թերապիա-500 ՀՀ դրամ կամ 0.91 Եվրո

Մեկ հատվածի համակարգչային տոմոգրաֆիա-55 000 ՀՀ դրամ կամ 100.34 Եվրո

❖ Դեղորայքի արժեքը

«Նատալի ֆարմ» դեղագործական մատակարարի ինտերնետային կայքում կա «Նատալի ֆարմ» դեղատնեթում առկա դեղորայքի գնացուցակը՝ <http://www.natalipharm.am>

❖ Կաշառքներ բժշկների համար

Հայաստանի առողջապահական համակարգը դեռևս տառապում է ոչ ֆորմալ վճարումներից:

«(...)Գրպանի վճարումները (...)բաժանվում են երեք կատեգորիաների՝

- պաշտոնական /ֆորմալ/ համավճարներ այն ծառայությունների դիմաց, որոնք միայն մասամբ են վճարվում պետության կողմից

- պաշտոնական /ֆորմալ ուղիղ օգտագործողի վճարներ պետ պատվերի շրջանակներից դուրս տրամադրվող ծառայությունների համար
- ոչ-պաշտոնական կամ ոչ-ֆորմալ վճարումներ, ներառյալ շնորհակալությունները, որոնք կամավոր հիմքով են տրվում կամ պահանջվում են ծառայությունների մատուցման դիմաց, ավելին կամ բարձր, քան պաշտոնական պետական վճարման համակարգն է: (...)Ոչ ֆորմալ վճարումները հիմա վերածվել են գրեթե ֆորմալացված վճարումների համակարգի, ներառյալ բարտերային ապրանքների և ծառայությունների մատուցումը գյուղական վայրերում, առողջապահական ծառայություն մատուցողների, լրացուցիչ անձնակազմի և ադմինիստրացիայի համար: (...)»¹⁵⁵

Ըստ «Թրանսփարենսի Ինթերնայշնլը Զայաստան»-ի 2009թ. անցկացրած հետազոտության, առողջապահական սեկտորը հարցվողների կողմից համարվել է որպես ամենաառաջին կոռուպացված սեկտորը/ծառայությունը:¹⁵⁶

3.4.3.4. Խտրականություն առողջապահական համակարգում/էթնիկ, կրոնական, սոցիալական, և այլն

Զայաստանում չկա որևէ տեսակի էթնիկ, կրոնական խտրականություն: Խտրականությունը կապված է հիվանդների բժշկական ծառայությունների համար վճարման կարողությունից:

Ցածր պետական աշխատավարձերը տանում են կաշառակիրության առողջապահության և կրթության ոլորտներում, Կաշառակիրությունը փոխարինում է պաշտոնական «վճարման համակարգը», Տաթևիկ Սարգսյան, Անի Խուրշուդյան http://www.amnewsservice.org/index.php?f=articles/html/ANS080602_1_eng.html

Համաձայն 2005թ. հետազոտությունների, «(...)արտոնություններ ունեցող խմբերը, որոնք հաճախ նույնն են, ինչ անապահով խմբերը, գործնականում չեն կարող օգտվել իրենց արտոնություններից, ինչ վերաբերում է վճարներին և դեղորայքին: Ինչպես նշել են արտոնություններ ունեցող մարդիկ, նրանք ենթարկվում են արտարբեր և վատ վերաբերմունքի, եթե ուղղակիորեն չեն վճարում ծառայությունների դիմաց, հետևաբար գերադասում են վճարել ծառայություններից պատշաճ ձևով օգտվելու համար: Ինչ վերաբերում է դեղերին, շատ հաճախ ամենաանհրաժեշտ և քանակաբաշխ դեղերը մատչելի չեն առողջապահական հաստատություններում և այս հիվանդները ստիպված են ձեռք բերել իրենց ուժերով:(...)»¹⁵⁷ Այս պրոբլեմները դեռևս առկա են:

3.4.3.5. Ոչ-պետական կազմակերպությունների ծառայությունները առողջապահական ոլորտում /միջազգային, հկ-ներ, եկեղեցի/

Զայաստանում կան բազմաթիվ, հիմնականում միջազգային կազմակերպություններ, հկ-ներ, որոնք ներկայումս իրականացնում կամ աջակցում են առողջապահական ծրագրերի իրականացմանն ու գործունեությանը: Որոշները լայնամասշտաբ են, մինչդեռ մնացածները ուղղված են բնակչության որոշակի խմբերի և /կամ առողջապահական խնդիրների լուծմանը:

3.4.3.6. Հիվանդություններ, որոնք չեն կարող արդյունավետորեն բուժվել մեր երկրում

¹⁵⁵ Ibid., էջ 44-47,

¹⁵⁶ Տարածքային Զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեյշնլը/ Հայաստան, Կոռուպցիա/Ընկալումը Հայաստանում/, անցկացված 2006-ին, էջ 16 http://transparency.am/dbdata/UNDPbook_eng_web_2.pdf

¹⁵⁷ ՀՀ կառավարություն <Հայաստանի սոցիալական միտումները 07>, 2005, կետ <Առողջապահական խնդիրներ>, էջ 29

Ի պատասխան ՀՀ Առողջապահության նախարարությանն ուղղված գրավոր հարցման, ստացվել է հետևյալ պատասխանը:

«Ինչ վերաբերում է Հայաստանում չբուժվող հիվանդություններին, ապա չկան այնպիսի հիվանդություններ, որոնց մեր հիվանդանոցներում չանդրադառնան: Բայց ոչ միշտ է, որ մենք ստանում ենք բացարձակ դրական արդյունք: Դա կախված է հիվանդության աստիճանից և հիվանդների օրգանիզմների առանձնահատկություններից»¹⁵⁸:

Սովորաբար դժվար է պատասխան ստանալ այս հարցի վերաբերյալ: Բժիշկները սովորաբար խուսափում են նրան պատասխանելուց:

3.4.3.7. Ստանդարտ դեղորայքով ապահովումը

Հայաստանում դեղատները իրավունք ունեն ձեռք բերել և վաճառել միայն գրանցված դեղեր:

Կառավարությունը հաստատում և հրապարակում է այն դեղերի ցանկը, որոնք տրամադրվում են դեղատոմսով կամ առանց դրանց:

❖ **Դեղորայքի անվճար տրամադրում:**¹⁵⁹

Հատուկ հիվանդությունների բուժման համար

- տուբերկուլյոզ
- մտավոր հիվանդություններ
- չարորակ նորագոյացություններ
- շաքարային դիաբետ
- էպիլեպսիա
- ինֆարկտ միոկարդ
- պարբերական պեռիտոնիտ
- սրտի փականի արատ
- մալարիա
- երիկամի քրոնիկ բորբոքում
- ֆենիլկետոնուրիա

Սահմանված սոցիալական խմբեր, որոնք ունեն անվճար դեղորայքի իրավունք հիվանդության դեպքում

- առաջին և երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք, հաշմանդամ երեխաներ
- պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք
- մինչև 7 տարեկան երեխաներ,
- ծնողական խնամքից զրկված մինչև 18 տարեկան երեխաներ
- և այլն

Սահմանված սոցիալական խմբերը, որոնք կարող են դեղորայք ստանալ 50 տոկոս զեղչով

- երրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք
- Չեռնոբիլի վթարի հետևանքների վերացմանը մասնակից անձինք
- բռնադատվածները

¹⁵⁸ Անցկացված <Առաքելություն Հայաստան> հիլ-ի կողմից 2007թ մարտի 2-ին

¹⁵⁹ Համաձայն Կառավարության 2006թ. նոյոբերի 23-ին ընդունված թիվ 1717 որոշման, որը հաստատում է բնակչության այն սոցիալական խմբերի ցուցակները, որոնք իրավունք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով պոլիկլինիկաների միջոցով դեղորայք ստանալու:

- միայնակ չափսատող թռչակառու տարեցներ
- և այլն

Չափսատող թռչակառու տարեցները ստանում են դեղորայք 30 տոկոս զեղչով:

3.4.4. Ֆիզիկական հաշմանդամությամբ անձինք

Ըստ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության Բժշկական և Սոցիալական Հետազոտությունների Գործակալության պետ պարոն Վանյանի Հայաստանում ներկայումս գրանցված են 178085 հաշմանդամներ: Գրանցվածների մեջ կանայք կազմում են 40 տոկոս, հաշմանդամ երեխաները՝ 8274:¹⁶⁰ Հաշմանդամների իրական թիվը ավելի մեծ է, քանի որ «հաշմանդամ» ճանաչվելու համար ոչ բոլոր հաշմանդամներն են դիմում բժշկա-սոցիալական փորձագիտական հանձնաժողով:

3.4.4.1. Իրավական կարգավորումը և պրակտիկան

Իրավական տեսանկյունից հաշմանդամները ունեն արտոնություններ բոլոր բնագավառներում: Խնդիրն ավելի շատ տարբեր պատճառներով այդ իրավունքների և արտոնությունների կիրառման մեխանիզմի և հնարավորությունների բացակայությունն է:

Նկատառում:

- Հաշմանդամ լինելու փաստը բավարար չէ օգտվելու նշված իրավունքներից ու արտոնություններից: Մարդիկ պետք է ներկայացնեն հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ, այսինքն՝ պիտի ճանաչված լինեն որպես «հաշմանդամ»/ Ինչպես ստանալ վկայականը տես կետ 1.1.3-ում/
- հաշմանդամների մասին օրենսդրությունը հավասարապես վերաբերվում է և ֆիզիկական և մտավոր հիվանդներին, ինչպես նաև այն անձանց, որոնք ճանաչվել են հաշմանդամ, որովհետև ունեն սոմատիկ հիվանդություններ /սիրտանոթային, հենաշարժողական, մկանային, շնչառական հիվանդություններ/: Հայկական օրենսդրությունը 18 տարեկանից բարձր հաշմանդամներին բաժանում է հետևյալ խմբերի, անկախ հաշմանդամության տեսակից՝ /3-րդ կարգ, 2-րդ կարգ, 1-ին կարգ- ամենաժանր տեսակը/: Մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխային տրվում է «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ:

3.4.4.2. Բուժօգնություն

Հաշմանդամները ընդգրկվում են ՀՀ Կառավարության հաստատած սոցիալապես անապահով խմբերի ցուցակում, որոնք իրավունք ունեն պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և ծառայության:¹⁶¹ Առաջին և երկրորդ կարգի հաշմանդամները, հաշմանդամ երեխաները ունեն իրավունք ստանալու անվճար դեղորայք, իսկ երրորդ կարգի հաշմանդամները վճարում են ստանալիք դեղորայքի արժեքի 50 տոկոսը:¹⁶²

Իրականության մեջ այդ արտոնությունները գրեթե երբեք չեն կիրառվում:

¹⁶⁰ ՀՀ բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողով http://www.hhbsp.am/MainPage_2.shtml

¹⁶¹ Համաձայն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայության ՀՀ կառավարության թիվ 318 որոշման/հավելված 1/, որն ուժի մեջ է մտել 2004թ. ապրիլի 8-ին

¹⁶² Համաձայն Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ին ընդունված թիվ 1717 որոշման, որը հաստատում է բնակչության այն սոցիալական խմբերի ցուցակները, որոնք իրավունք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով պոլիկլինիկաների միջոցով դեղորայք ստանալու

- **Պրոթեզ-օրթոպեդիկ սարքավորումներ:** Այս սարքավորումները կարելի է ստանալ դիմելով ԲՍՓՅ, ներկայացնելով դիմում, սոցիալական քարտ, անձը հաստատող փաստաթուղթ, քաղվածք հիվանդության պատմությունից, հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ; աչքի կամ ձայնալարերի պրոթեզավորման համար նաև եզրակացություն համապատասխան մասնագիտական կազմակերպությունից: ԲՍՓՅ-ն տալիս է եզրակացություն պրոթեզների և օրտեզների հրատապության մասին: Այս փաստաթղթերի հիման վրա տարածքային սոցժառայությունները տալիս են ուղեգիր, որի հիման վրա այս սարքերը տրամադրվում են Երևանի Պրոթեզ-օրթոպեդիկ ձեռնարկության կողմից /Հասցե՝ Երևան, Ծարավ Աղբյուրի 55 ա/
- **Անվասայլակները** տրամադրվում են հաշմանդամ երեխաներին և առաջին կարգի հաշմանդամներին: Հաշմանդամը կամ նրա ներկայացուցիչը պետք է դիմի ՀՀ ԲՍՓ Գործակալություն/ Երևան, Նորք-Մարաշ համայնք, Արմենակյան 129/ վերականգնողական բաժին՝ ներկայացնելով անձնագիր/ ներկայացուցիչը նաև իր անձնագիրը/, հաշմանդամի հաշմանդամությունը հաստատող վկայականի պատճենը, սոցիալական քարտը և տարածքային ԲՍՓՅ-ի կողմից տրված եզրակացությունը անվասայլակի հրատապության մասին: Այնտեղ կնքվում է պայմանագիր անվասայլակի տրամադրման համար և այս պայմանագրի հիման վրա անվասայլակը հատկացվում է Երևանի Օրթոպեդիկ Ձեռնարկության կողմից չորս տարի ժամկետով:
- **Լսողական սարքեր:** Լսողական խնդիրներ ունեցող անձանց լսողական սարքերը տրվում են Երևանում ՀՀ ԲՍՓ Գործակալության վերականգնողական բաժանմունքի կողմից Արմենակյան 129 հասցեում և մարզերում հաշմանդամները կարող են ստանալ տարածքային ԲՍՓՅ-ից՝ ներկայացնելով անձնագիր, սոցիալական քարտ, հաշմանդամի հաշմանդամությունը հաստատող վկայականի պատճենը և համապատասխան տեղեկանք հանրապետական լսողական/սուրդուլողիա/ կենտրոնից: Հաշմանդամը ստանում է սարքը չորս տարի ժամկետով:

Ավելի մանրամասն ինֆորմացիա կարելի է ստանալ տարածքային ԲՍՓԳ-ից կամ սոցժառայության տարածքային բաժիններից, ինչ վերաբերում է պրոթեզավորման և օրթոպեդիկ սարքերի և կենսապահովման միջոցների ստացման ընթացակարգին:

Քաղաքային էլեկտրական տրանսպորտը անվճար է առաջին և երկրորդ կարգի հաշմանդամների և հաշմանդամ երեխաների համար: Քանի որ էլեկտրոտրանսպորտ կա միայն Երևան քաղաքում/մետրո և տրոլեյբուսների մի քանի գծեր/, հաշմանդամները կարող են օգտվել իրենց իրավունքից միայն Երևան քաղաքում: Դրա համար հաշմանդամները կարող են ստանալ «անվճար երթևեկության վկայական» Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնից:

Ավելի մանրամասն ինֆորմացիա հաշմանդամությանը վերաբերող խնդիրների, գոյություն ունեցող արտոնությունների մասին կարելի է ստանալ սոցժառայության տարածքային կենտրոններից կամ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության Հաշմանդամների հարցերով զբաղվող բաժնից, բաժնի վարիչ Կարմեն Պետրոսյան, հեռ: 374 10 52 17 61

❖ **Հատուկ հաստատություններ:**

Վերականգնողական կենտրոններ: Հայաստանում գոյություն ունեցող հիմնական վերականգնողական կենտրոնները ներկայացված են ստորև:

- **«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնը** գտնվում է Երևանում, Ծարավ Աղբյուրի փողոց 55 ա հասցեում, հեռ՝ (374)(10) 622890, (374)(10) 624450: Այն գործում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի Նախարարության ենթակայության ներքո, բազմաֆունկցիոնալ բժշկական հաստատություն է, որտեղ ներքին և վերին վերջույթների պրոթեզավորման

կարիք ունեցող հաշմանդամները կարող են վերականգնողական թերապիայի կուրս հաճախել, իսկ անհրաժեշտության դեպքում անցնել վերականգնողական վիրահատություն: Հաշմանդամները, մեծամասամբ շարժողական և խոսքի դժվարություններ ունեցողները նույնպես ստանում են վերականգնողական բուժում: Հաշմանդամության կարգավիճակ ունեցողները կարող են օգտվել անվճար ծառայությունից տեղական պոլիկլինիկայի ուղեգրի հիման վրա:

- **Միջազգային հետ-տրավմատիկ վերականգնողական կենտրոն:** 1988 թվականի երկրաշարժից հետո միջազգային կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերության հետ համագործակցելով Երևանում ստեղծվեց իր տեսակի մեջ յուրօրինակ մի հիվանդանոց՝ ողնաշարի վնասվածքներով, ինչպես նաև շարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների համար: Կենտրոնը կահավորված է ժամանակակից սարքավորումներով և լիովին համապատասխանում է հաշմանդամների կարիքներին: Անվճար բուժ սպասարկման համար հաշմանդամները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ ՀՀ անձնագիր, հաշմանդամությունը հաստատող վկայական, տեղեկանք պոլիկլինիկայից, որին հաշմանդամը կցված է: Անվճար բուժման տեղերը սահմանափակ են, ուստի հաշմանդամը ստիպված է երբեմն ամիսներ սպասել գրանցումից հետո: Վճարովի բուժման վճարները սկսվում են օրական 15 000 ՀՀ դրամից¹⁶³ կամ 27.37 Եվրոյից: Հասցեն է՝ ք. Երևան, Գ. Չաուշի 50/1, հեռ՝(374)(10) 345200 (374)(10)351323
- **Բալնեոլոգիայի և ֆիզիկական բժշկության հետազոտական ինստիտուտ:** հասցեն: ք.Երևան Օրբելի 41, հեռ՝(374)(10) 262779,(374)(10) 265954
- **Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն:**¹⁶⁴ Այն գործում է ՀՀ Առողջապահության Նախարարության ենթակայության ներքո: Այն նախատեսված է մինչև 18 տարեկան պսիխո-մոտորային հիվանդություններով և զարգացման հապաղումներով երեխաների համար: Բուժումը անվճար է ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Պահանջվող փաստաթղթերն են՝ ինքնությունը հաստատող քարտ, հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ/եթե այն հնարավոր է/, տեղեկանք պոլիկլինիկայից, որին երեխան կցված է:
- **ԱՐԲԵՍ առողջապահական կենտրոն:** /Արաբկիր բժշկական կենտրոնի վերականգնողական ամբուլատոր բաժանմունք/ տրամադրում է երեխաներին կանոնավոր հետազոտում և բուժում մասնագետների կողմից, որոնք մասնագիտացված են ամենատարածված պսիխո-մոտորային հիվանդությունների խնամքի և բուժման մեջ և զարգացման հապաղումներ ունեցող/ աուտիկ, նյարդաբանական և մկանա-կմախքային և այլ խնդիրներ ունեցող /երեխաների համար, որը տրամադրում է մասնագետների խումբը:¹⁶⁵ Հաշմանդամ դարձած երեխաները օգտվում են վերականգնողական ծառայություններից անվճար, եթե ներկայացնում են համապատասխան տեղեկանք: Մյուս երեխաների համար ծառայությունները վճարովի են: Երևան, Փափազյան 32, հեռ՝(374)(10) 262100

¹⁶³ Ավելի մանրամասն տես Միջազգային Հետ-տրավմատիկ վերականգնողական Կենտրոնի պաշտոնական կայքում <http://www.iptrc.am/index.html>

¹⁶⁴ Հասցեն՝ Երևան, Էջմիածնի խճուղի 109, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն, հեռ՝ 374 10 56 56 06

¹⁶⁵ Ավելի մանրամասն ծառայությունների մասին տես Արբես կենտրոնի ինտերնետային կայքում. <http://www.arabkirjmc.am/ArBeS/index.htm>

- Բացի վերոնշյալ հատուկ հաստատություններից, կան նաև այլ վերականգնողական կենտրոններ մարզերում, օրինակ, «Մասիս» օրթոպեդիկ հիվանդանոցը,¹⁶⁶ Գյումրու վերականգնողական կենտրոնը¹⁶⁷:

«Հաշմանդամները կարիք ունեն երկարատև կայուն բուժման և ռեաբիլիտացիայի: Չնայած ըստ օրենքի հաշմանդամները իրավունք ունեն անվճար վերականգնողական բուժման, բայց իրականում անվճար տեղերը սահմանափակ են, ինչպես նաև ուղեգրումը անվճար վերականգնողական բուժման տրվում է որոշակի ժամկետներով, որն անբավարար է:»¹⁶⁸

Խնամքի կենտրոն անկողնային/անկարող հաշմանդամների համար: «Գթություն» խնամքի կենտրոնը գործում է Երևանի Հաղթանակ թաղամասում, տեղակայված թիվ 1 ինտերնետին կից¹⁶⁹: Այն նախատեսված է 1-ին և 2-րդ կարգի 50 անկարող հաշմանդամների համար, որոնք չունեն խնամողներ: Այստեղ տեղավորվելու համար ընթացակարգը նույնն է, ինչպես պետական ինտերնատներ դիմելիս: Սովորաբար ազատ տեղեր չկան այս խնամքի կենտրոնում, կան շատ գրանցված հաշմանդամներ, որոնք սպասում են իրենց հերթին:

Ինտերնատ ֆիզիկական հաշմանդամ մեծահասակների համար: Կա մեկ պետական տուն-ինտերնատ, միայնակ և կարիքավոր 18-ից մեծ հաշմանդամների համար: Այն գտնվում է Շիրակի մարզում Հասցեն՝ Գյումրի, Երևանյան խճուղի 18, հեռ՝(374)(312) 4.0821: Ինչպես տեղավորվել այնտեղ, տես կետ 3.2.7:

Ինտերնատներ հաշմանդամ երեխաների համար: Հաշմանդամ երեխաների համար նախատեսված են հետևյալ մանկատները:

- **Գյումրու հատուկ մասնագիտացված երեխաների տուն:** 0-5 տարեկան 98 երեխա են խնամվում Գյումրու «Երեխաների տունը»: Նրանք հիմնականում տառապում են կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և ֆունկցիոնալ խանգարումներով, ունեն բնածին և ձեռքբերովի ֆիզիկական արատներ:./.../¹⁷⁰ Այս մանկատան երեխաները հիմնականում ունեն երկու ծնողներին էլ, և նրանց հայտնվելու պատճառը ավելի քան անբուժելի հիվանդությունն է, քան անբարենպաստ սոցիալական պայմանները: Հասցեն՝ ք.Գյումրի, Թամանյան 17, տնօրեն՝ Ռուզաննա Ավագյան:
- **Խարբերտի հատուկ մասնագիտացված երեխաների տուն:** Ներկայումս Նոր Խարբերտի մասնագիտացված մանկատունը խնամում է 5 տարեկանից մեծ կենտրոնական նյարդային համարկարգի խանգարումներով, օրգանական և ֆունկցիոնալ խանգարումներով տառապող, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական արատներ ունեցող երեխաների, ինչպես նաև հաշմանդամների: Նրանք այստեղ են տեղափոխվում Գյումրիի երեխաների տնից, երբ լրանում է նրանց 6 տարին: 265 երեխա է խնամվում այստեղ/18 խումբ յուրաքանչյուրում 16 երեխա/: Խմբային բաժանումը արվում է հիմնված տարիքի և հիվանդությունների տեսակի վրա: Մանկատան հիմնական խնդիրը երեխաների խնամքն է, բուժումը, կրթությունը,

¹⁶⁶ Այն տրամադրում է ավանդական, վիրաբուժական և վերականգնողական բուժում վերջույթների բնածին և ձեռքբերովի արատների, ինչպես նաև վնասվածքների ավանդական և վիրաբուժական բուժում: Այն գտնվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում, Գործարանային 2/1, հեռ՝ 374 236 4 39 00 4 32 90:

¹⁶⁷ Այն գտնվում է Գյումրի քաղաքում, Շիրակացի 31 հասցեում, 374 312 3 82 21

¹⁶⁸ Համաձայն <Հավատք և լույս> համայնքի ազգային համակարգող տիկին Անահիտ Մխոյանի հետ 2008թ. մայիսի 6-ին անցկացրած հարցազրույցի

¹⁶⁹ Հաղթանակի թաղամաս, փ. 2, 45 հեռ՝ 374 10 72 10 70; 72 39 10

¹⁷⁰ ՀՀ աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն, Ընտանիքի, երեխաների և կանանց հարցերի վարչություն, Երեխաների տուն, Գյումրի
http://www.mss.am/home/links.php?menu_id=110&child_id=128&id_link=43

իրենք իրենց ծառայելու հմտությունների զարգացումը և սոցիալական ինտեգրումը:»¹⁷¹

- **«Գթության միսիոներների»** կողմից աջակցվող մանկատներ: Կան երկու այսպիսի հաստատություններ հաշմանդամ երեխաների համար: մեկը՝ Երևանում, մյուսը՝ Սպիտակում: Սպիտակի մանկատան հասցեն՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Իտալական թաղամաս 179 հեռ: (374)(10) 39 81 50:

Այսօր այս երեխաների 18 տարեկանից հետո հասարակության մեջ ինտեգրման/ տուն, աշխատանք, մասնագիտություն/ խնդիրը լուծված չէ: Դեհնստիտուցիոնալիզացիայի առաջին քայլը «Ջերմիկ անկյուն» խմբային տան ստեղծումն էր: Սա առաջին և յուրօրինակ երկարաժամկետ խմբային տունն է Հայաստանում հաշմանդամ որբերի համար, որը ֆինանսավորել է «Ջերմիկ անկյան ընկերներ» կորպորացիան: Նպատակն է կանխարգելել անպաշտպան մտավոր հիվանդ կամ հաշմանդամ մեծահասակներին ստիպված իրենց կյանքը Հայաստանի հոգեբուժական հաստատություններում անցկացումը, որտեղ նրանց կարիքները չեն բավարարվում, որտեղ հույս չկա անհատական խնամքի, ռեաբիլիտացիայի և արժանավայել կյանքի: Ներկայումս այստեղ խնամվում են 8 անձինք: «Ջերմիկ անկյունը» գտնվում է Երևանի Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 14/16-ում, հեռ: 374 10 398150:¹⁷²

3.4.5. Ստավոր հաշմանդամության խնդիրներով և խանգարումներով անձինք/ներառյալ տրավմայի երթարկված անձինք/

Անվճար հոգեբուժական խնամք: Հայաստանում մտավոր խանգարումներով անձանց համար հոգեբուժական խնամքը իրականացվում է պետական միջոցներից, համաձայն հոգեբուժական խնամքի մասին 2004թ. մայիսի 25-ին ընդունված ՀՀ թիվ 80 օրենքի 7/1 հոդվածի: ՀՀ կառավարությունն ընդունել է նաև չափանիշներ բժշկական հաստատություններում անվճար հոգեբուժական խնամքի մասին:

Հոգեմետ դեղերի անվճար տրամադրում: Ստավոր խանգարումներ ունենալու դեպքում հոգեմետ դեղերը հիվանդներին տրվում են անվճար պոլիկլինիկաների և բժշկական հաստատությունների միջոցով, որոնց նրանք կցված են:¹⁷³ Այս դեղերը տրվում են միայն համապատասխան մասնագետների կողմից նշանակված դեղատոմսի համաձայն:

Հնարավոր հոգեմետ դեղամիջոցները, որ մտավոր խնդիրներով անձինք կարող են ստանալ անվճար, հետևյալն են՝¹⁷⁴ ամիտրիպտիլին(հաբ 25մգ), դիազեպամ(հաբ 2մգ և 5 մգ), լիթիում կարբոնատ(կապսուլ կամ հաբ 300մգ), կարբամազեպին(հաբ 100մգ և 200մգ), հալոպերիդոլ(ներարկման հեղուկ 5 մգ/մլ և հաբ 2 մգ, 5մգ), վալպրոիդաթթու(հաբ 300մգ և հաբ 500մգ), կլոմիպրամին(կապսուլ 10մգ և 25 մգ), քլորպրոմազին(հաբ 50մգ և 100մգ), ֆլուֆենազին(ներարկման հեղուկ 25 մգ/մլ):

Իրականում ոչ բոլոր անհրաժեշտ դեղորայքն է մատչելի անվճար, ուստի հիվանդները ստիպված են գնել դրանք ինքնուրույն:

Անվճար հոգեմետ դեղերի ստացման ընթացակարգը:¹⁷⁵ Երևանում մտավոր խանգարումներով հիվանդները պիտի գրանցվեն Ավանի նյարդա-հոգեբուժական հիվանդանոցում՝ անվճար հոգեմետ դեղեր ստանալու համար:

¹⁷¹ ՀՀ աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն, Ընտանիքի, երեխաների և կանանց հարցերի վարչություն, Նոր-Իսաբեկտի հատուկ մանկատուն
http://www.mss.am/home/links.php?menu_id=110&child_id=128&id_link=47

¹⁷² Ջերմ Սրտերի ընկերներ?????

¹⁷³ Համաձայն ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ին ընդունված թիվ 1717 որոշման, որը հաստատում է բնակչության այն սոցիալական խմբերի ցուցակները, որոնք իրավունք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով պոլիկլինիկաների միջոցով դեղորայք ստանալու,

¹⁷⁴ Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի ՀՀ հիմնական դեղորայքի ցանկը հաստատելու մասին թիվ 854 հրամանի, հիմնական ցուցակ, կետ 20, հոգեմետ դեղեր

¹⁷⁵ Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2001 թ. Մարտի 7-ի թիվ 128 հրամանի, կետ 8.3

Մարզերում հոգեմետ դեղերը հիվանդները ստանում են համապատասխան նյարդահոգեբուժական հիվանդանոցների ամբուլատոր-պոլիկլինիկական բաժանմունքներից, որտեղ նրանք գրանցված են:

Ստավոր առողջապահական խնդիրներ ունեցող անձանց մեծ մասը ունեն հաշմանդամության կարգի վկայական և այսպիսով օգտվում են իրավունքներից և արտոնություններից, ստանում են հաշմանդամների համար նախատեսված հաշմանդամության թոշակ՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Խնդիրն այն է, որ պետության կողմից երաշխավորված անվճար հոգեբուժական խնամքը մտավոր խնդիրներով անձանց թույլ չի տալիս նրանց օգտվել այլ բժշկական ծառայություններից: Ստավոր խնդիրներ ունեցող անձինք որպես առանձին խումբ ներառված չեն ՀՀ կառավարության կողմից ընդունված սոցիալապես խոցելի խմբերի մեջ, որոնք կարող են օգտվել անվճար բժշկական ծառայություններից: Եթե նրանք չունեն հաշմանդամության կարգ, ապա ստիպված են վճարել ամեն տեսակի բժշկական աջակցության համար, բացի հոգեբուժական խնամքից: Ուստի եթե հոգեկան խնդիրներ անեցող անձինք չունեն հաշմանդամության կարգի վկայական, խորհուրդ է տրվում այն ձեռք բերել: /Ինչպես դիմել տես կետ 1.1.3

❖ **Հոգեբուժական խնամքի օրենքը**

Հոգեբուժության մասին օրենքը Հայաստանում ընդունվել է միայն 2004 թվականին:

Այն կարգավորում է հոգեկան առողջությանը վերաբերող խնդիրները, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները:

2006 թվական «հոգեկան առողջության հիմնադրամը» նախաձեռնել է մի համալիր վերլուծություն, որի նպատակն է պարզել, թե ինչպես է իրականացվում հոգեբուժության մասին օրենքը: Այս զեկույցի համաձայն «Այսպիսով կարելի է փաստել, որ հոգեբուժական խնամքի մասին ՀՀ օրենքի իրականացումը ընդհանուր առմամբ ադեկվատ չէ և մտավոր խնդիրներ ունեցող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ապահովելու ներկա պրակտիկան չի համապատասխանում օրենքի պայմաններին:»¹⁷⁶

Հոժարական հոսպիտալացում: Հոդված 15/1 ասում է, որ նախքան բուժում ստանալը պետք է ստանալ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությունը: Սա նշանակում է նաև, որ հիվանդը ինքը ունի իրավունք ընտրելու բուժման հաստատությունը:

«...Դեռևս շատ դեպքերում մեր երկրում, հիվանդը համարվում է կամավոր բուժման մեջ, եթե համաձայնությունը տրվում է բարեկամների կամ ընտանիքի անդամների կողմից»/.../¹⁷⁷:

Ոչ-կամավոր/հարկադիր բուժումը և հոսպիտալացումը հնարավոր է օրենքով նախատեսված դեպքերում: Հոգեբուժության մասին օրենքի 23-րդ հոդվածը նշում է, որ անձը, որը գտնվում է ստացիոնար/հիվանդանոցային հոգեբուժական կլինիկայում, պետք է անցնի քննություն հոգեբուժական հանձնաժողովի կողմից, տեղավորվելուց հետո 72 ժամվա ընթացքում և տրվի հոսպիտալացման մասնագիտացված հիմնավորման մասին որոշում:

Հիմնավորման դրական որոշումից հետո հոգեբուժական հաստատության ղեկավարությունը պետք է դիմի դատարան՝ ստանալու սանկցիա սկսելու հիվանդի ոչ-կամավոր բուժումը: Պետք է որ այս ընթացակարգը կիրառվի բոլոր դեպքերի համար, եթե մարդիկ տեղավորվել են հոգեբուժական հաստատություն առանց գրավոր դիմումի: Վերոնշյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ իրականության մեջ այս ընթացակարգը չի կիրառվում, բայց անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին իրադրությունը փոխվում է

¹⁷⁶ Հոգեկան Առողջության Հիմնադրամ, Հոգեբուժական խնամքի մասին օրենքի իրականացումը, 2006, եզրակացություն, պարբերություն 9, էջ 42 http://www.mentalhealth.am/MHLaw_report_eng_PDF.pdf

¹⁷⁷ Ibid., Գլուխ 9, կամավոր հոսպիտալացում, պարբերություն 3, էջ 23

և հոգեբուժական հաստատությունները իրականացնում են հարկադիր հոսպիտալացման օրինական ընթացակարգեր:¹⁷⁸

❖ **Հատուկ հաստատություններ**

Ընդհանուր բնութագիր: Գոյություն ունեցող բոլոր հոգեբուժական դիսպանսերներն ու հիվանդանոցները պետական հաստատություններ են և ֆինանսավորվում են պետական բյուջեից:

- ❖ **Բժշկական հաստատությունները, որոնք նախատեսված են մատուցել հոգեբուժական ծառայություններ բոլոր ՀՀ քաղաքացիներին:** Երևանի Նուբարաշենի հիվանդանոց, Երևանի Նորքի բժշկական կենտրոն, Երևանի նյարդահոգեբուժական դիսպանսեր, Երևանի նարկոլոգիական դիսպանսեր, Նևորզների հանրապետական հիվանդանոց Երևանի մոտ, Սթրես Կենտրոն Երևանում, Սևանի հիվանդանոց, Վարդենիսի նյարդահոգեբուժական ինտերնատ Գեղարքունիքի մարզում և Հայրիյանի անվան հիվանդանոց Արարատի մարզում;
- ❖ **Տարածքային նյարդա-հոգեբուժական դիսպանսերները** նախատեսված են մարզերի բնակչության համար: Գյումրու հոգեկան առողջության կենտրոն Շիրակի մարզում, Սյունիքի Մարզի նյարդահոգեբուժական դիսպանսեր Կապանում և Լոռու Մարզի տարածքային նյարդահոգեբուժական դիսպանսեր Վանաձորում
- ❖ Առանձին հոգեբուժական ծառայություն ՀՀ Պաշտպանության Նախարարության կառուցվածքում

2007թվականին Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիան և Նորվեգական Հելսինկյան Կոմիտեն համատեղ անցկացրեցին վերահսկողություն Հայաստանի հոգեբուժական հաստատություններում: Համաձայն այս հետազոտության «Հայաստանում հոգեբուժական հաստատությունները շատ վատ բուժում են իրականացնում հիվանդների, ոչ ադեկվատ ուտելիք են տալիս և պակասություն կա իմաստալից գործողությունների: Մյուս հիմնական խնդիրն այն է, որ այդ հաստատությունների ղեկավարները կրթվել են սովետական ժամանակներում և բուժման մեթոդներն ու հաստատությունների գործունեության հիմքում ընկած արժեքները կարիք ունեն էական բարեփոխումների: Թափանցիկության լուրջ պակաս կա հաստատությունների գործունեությունում, որոնք շատ հազվեդեպ են տրամադրում ինֆորմացիա հիվանդներին և նրանց մոտ հարազատներին դիագնոզի և բուժման մեթոդների մասին: Անձնակազմը շատ հպանցիկ է ծանոթ հոգեբուժական աջակցության օրենքին»:¹⁷⁹

Երևանի նյարդահոգեբուժական դիսպանսեր: Երևան, Ավան համայնք, Աճառյան 21, հեռ: (374)(10)617282/616533
Նուբարաշենի հիվանդանոց: Երևան, Նուբարաշեն համայնք, հեռ` (374)(10)475322; 475571
Նորքի հոգեբուժական կլինիկա: Երևան, Նորք-Մարաշ համայնք, Հովսեփյան 2ա, հեռ` (374)(10)652002/650832
Նևորզների հանրապետական հիվանդանոց, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ, հեռ` (374)(91)321870
Երևանի նարկոլոգիական դիսպանսեր, Երևան, Ավան համայնք, Աճառյան 2, 2-րդ նրբանցք` (374)(10)617090,61087
Սևանի հոգեբուժական հիվանդանոց, Գեղարքունիքի մարզ, ք, Սևան` (374)(261)23400
Սյունիքի մարզի նյարդահոգեբուժական դիսպանսեր Կապանում` նախատեսված Սյունիքի մարզի մտավոր հաշմանդամների համար, հեռ` (374)(285)53712

¹⁷⁸Ibid., Գլուխ Ե, ոչ-կամավոր հոսպիտալացում, էջ 28-31

¹⁷⁹ Հայաստանի Հելսինկյան Ասոցիացիա և նորվեգական հելսինկյան կոմիտե, հոգեկան առողջության հաստատությունները Հայաստանում, նախնական հետազոտություն, Երևան և Օսլո, 2007թ. Հունվարի 30, պարբերություն 1 <http://www.nhc.no/php/files/documents/land/Armenia/mentalhealthinstitutionsArmenia-report-Feb07.pdf>

<p>Լոռու Մարզի տարածքային նյարդահոգեբուժական դիսպանսեր Վանաձորում՝ նախատեսված Լոռու մարզի մտավոր հաշմանդամների համար, հեռ՝(374)(322)30188; 24163</p>
<p>Գյումրու հոգեկան առողջության կենտրոն՝ նախատեսված Շիրակի մարզի մտավոր հաշմանդամների համար, հեռ՝(374)(312)30128</p>
<p>Ակադեմիկոս Հայրիյանի անվան առողջապահական կենտրոն Արարատի մարզում: Հիվանդանոցը անվանվում է Հայրիյանի անունով, գտնվում է Արարատի մարզի Արմաշ քաղաքում, վերջերս սկսել է տրամադրել հոգեբուժական խնամք և ծառայություններ: Այն գտնվում է մարզպետի ենթակայության ներքո: Այս կենտրոնը ընդունում է քրոնիկ մտավոր խանգարումներով 18 տարեկանից մեծ անձանց Հայաստանի բոլոր մարզերից, բացի տարիքային պսիխոզով տառապող ծերերից: Տնօրեն՝ (374)(91)200845</p>
<p>Վարդենիսի նյարդահոգեբուժական ինտերնատ: Սա Հայաստանի միակ հաստատությունն է, որտեղ կարող են մնալ քրոնիկ մտավոր խանգարումներով անձինք: Այն նախատեսված է 18 տարեկանից բարձր քրոնիկ խանգարումներով, ծերունական պսիխոզով և սաստիկ սկլերոզով տառապող բոլոր անձանց համար: Այստեղ հիվանդները կարող են տեղավորվել ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության ենթակայության տակ: Տեղակայված է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում: Մանրամասն տեղեկությունների համար այս ինտերնատ տեղավորվելու և անհրաժեշտ փաստաթղթերի համար դիմել ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն, հեռ՝ (374)(10)521761</p>
<p>Վարդենիսի ցերեկային կենտրոն: Կա ցերեկային կենտրոն Վարդենիսում Նյարդահոգեբանական կենտրոնին կից: Այն տրամադրում է սոցիալ-հոգեբանական աջակցություն Վարդենիսի և շրջակա գյուղերի մտավոր հիվանդ անձանց և նրանց ընտանիքներին:</p>
<p>Ստրես կենտրոն: Այն սկսել է իր գործունեությունը 1988 երկրաշարժից հետո՝ տրամադրելով ծառայություններ տրավմայի ենթարկված մտավոր խանգարումներով անձանց: Այն գործում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության ենթակայության տակ: Սթրես կենտրոնը ընդունում է սահմանային վիճակում գտնվող և նկրդներ ունեցող ՀՀ քաղաքացիներին: Նրանք, ովքեր գործուղված են ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության կողմից, սպասարկվում են անվճար: Կենտրոնը տրամադրում է նաև վճարովի ծառայություններ: Հասցեն՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա, հեռ: 374)(10)628997/627481</p>
<p>Մտավոր առողջության կենտրոն Սևանում: Կենտրոնը գտնվում է ՀՀ Առողջապահության նախարարության ենթակայության ներքո և աջակցվում է Բելգիական ԲԱՍ –ի կողմից: Նրանք տրամադրում են հոգեբուժական խնամք և հոգեմետ դեղեր շահառուներին: Այս կենտրոնում աշխատում են սոցիալական աշխատող, հոգեբան, հոգեբույժ, մանկական հոգեբույժ և այլ մասնագետներ: Հասցեն՝ ք. Սևան, Նաիրյան 169; հեռ. (374)(261)21359</p>

3.4.5.1. Հատուկ հաստատությունների և խնամքի հասանելիությունը վերադարձողների համար

Հայաստանում հոգեկան հիվանդները մնում են ամենախոցելի խավը: Պաշտոնական տվյալների համաձայն, 2008թ. Հայաստանում կան 42 961 գրանցված հոգեկան հիվանդներ, որոնք գտնվում են հիվանդության կանխարգելման հաստատություններում:¹⁸⁰ Բուժման կարիք ունեցող մարդկանց ճշգրիտ թիվը հայտնի չէ, իրական թիվը պետք է որ ավելին լինի, քան պաշտոնական թվերն են, ոչ բոլոր հոգեկան հիվանդներն են գրանցված Հայաստանում, բայց վստահորեն կարելի է ասել, որ հոգեբուժական խնամքի կարիքը մեծ է: Հոգեբուժական ծառայությունը Հայաստանում ներկայումս գտնվում է վերակառուցման և անցումնային փուլում: Բայց այն հանդիպում է բազմաթիվ դժվարությունների: Մի կողմից, բազմաթիվ խնդիրներ են ժառանգվել

¹⁸⁰ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի տեղեկագիրք 2009, Հանրային Առողջություն, կետ 109, Հոգեկան խանգարումներով պայմանավորված հիվանդությունները, էջ 152
<http://www.armstat.am/file/doc/99458083.pdf>

խորհրդային համակարգից, մյուս կողմից անհրաժեշտություն կա ընդունել և իրականացնել ժամանակակից հոգեբուժության և մարդու իրավունքների արժեքները:

Հիվանդանոցային հոգեբուժական խնամք: Համաձայն «Հոգեկան առողջության հիմնադրամի» հետազոտության/.../ հիմնական խնդիրը ծառայությունների անբավարար ծավալն է միջանցիկ մակարդակում/օղակում-ցերեկային խնամք, զբաղվածություն, խնամքի կենտրոններ, ապաստարաններ և այլ համայնքային ծառայություններ: Հոգեբուժական ծառայություններում հոգեբանների և այլ մասնագետների ներգրավվածությունը նույնպես ցածր է/.../¹⁸¹:

Ամբուլատոր հոգեբուժական խնամք: «Հոգեբուժական ծառայությունների հիմնական բեռը ընկնում է ամբուլատոր համակարգի վրա-դիսպանսեր, հոգեբուժական/խորհրդատվական կենտրոններ: Ինչևիցե, նրանց ոչ-հավասարաչափ բաշխումը հանրապետության տարածքում ստեղծում է բազմաթիվ խնդիրներ: Երևանում, որտեղ ապրում են բնակչության 1/3-ը, կա 2 կենտրոն՝ հոգեբուժական բժշկական կենտրոնը¹⁸² և Սթրես կենտրոնը; մինչդեռ տարածքներում, որտեղ բնակչության մոտ 36 %-ն է բնակվում, չկա ոչ մի հոգեբուժարան: Ավելին, 12 մախկին վարչական շրջաններում և մեծ քաղաքներում չկա հոգեբուժարան և հիվանդներին զննում են նյարդաբաններն ու թերապևտները/ընտանեկան բժիշկները»:¹⁸³

Հոգեբուժական խնամքի ցածր մակարդակը համայնքներում: Հայաստանում հոգեբուժական խնամքը բացառապես տրամադրվում է հատուկ հոգեբուժարաններում և սոցիալ-հոգեբանա-նյարդաբանական կենտրոններում: Կան որոշ փորձեր զարգացնելու համայնքային հոգեբուժական ծառայությունները, սովորաբար միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Ինչ վերաբերում է տնային խնամքին և բուժմանը «/.../հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բարեկամների մեծ մասը ունեն դժվարություն կազմակերպելու նրանց խնամքը տանը և գոյություն ունեցող դիսպանսերները չունեն ռեսուրսներ ծառայություններ մատուցելու համայնքներում/.../»¹⁸⁴:

Ծառայությունները պակասը թեթևակի շեղումներ ունեցող և կայուն հիվանդների համար: Նրանք, ովքեր ունեն պակաս խիստ հոգեկան առողջության խնդիրներ դրսում, չունեն այլ բուժման տարբերակ: /.../«Ավելի թեթև տեսակի հոգեկան խնդիրներ ունեցող կամ կայուն հիվանդների համար, իրավիճակը հոսպիտալացումից հետո ավելի վատ է: Այս հիվանդները չեն կարող դուրս գրվել հոգեբուժական հիվանդանոցներից, քանի որ ընտանիքները չեն ընդունում նրանց հոսպիտալացումից հետո և չկան այլ հաստատություններ, ուր նրանք կարող են գործուղվել»¹⁸⁵:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող հիվանդների համար ստիգմատիզացիան մնում է մարտահրավեր և ընտանիքների և ընդհանուր առմամբ հասարակության համար: Նրանք , որքեր ունեն հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, շատ հաճախ ստիգմատիզացված են: Շատ սովորական է համարվում, երբ ընտանիքները թաքցնում են իրենց հիվանդ հարազատներին, վախենալով, որ նրանք դուրս կմղվեն հասարակությունից, եթե նրանք դա փորձեն: Նանք , որքեր չեն կարող պահել իրենց հոգեկան հիվանդ հարազատներին տանը, ստիպված ուղարկում են նրանց

¹⁸¹ Հոգեկան Առողջության Հիմնադրամ, Հոգեբուժական խնամքի օրենքի իրականացումը, 2006, գլուխ Բ: Հայաստանում Հոգեբուժական ծառայությունների Կառուցվածք, ռեսուրսներ և ընդհանուր իրավիճակ: հիվանդանոցային խնամք, պարբերություն 2, էջ 19 http://www.mentalhealth.am/MHLaw_report_eng_PDF.pdf
¹⁸² Հոգեբուժարան
¹⁸³ Հոգեկան Առողջության Հիմնադրամ, Հոգեբուժական խնամքի օրենքի իրականացումը; Ամբուլատոր խնամք
¹⁸⁴ Ibid., էջ 24
¹⁸⁵ Բժիշկներ Առանց Սահմանների Ավստրալիա <Հայաստան. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ունեն բժշկական խնամքի պակաս>/2004 թ. հետազոտության հիման վրա/, պարբերություն 4

հոգեբուժարաններ: ¹⁸⁶Այն հանգամանքներում, երբ մարդիկ ապրում են ընդարձակ ընտանիքում, հիվանդանոցում մնալը լինում է անորոշ, երբ ընտանիքները հրաժարվում են ընդունել հիվանդին հետ տուն:

Հոգեկան հիվանդ երեխաների համար հատուկ հոգեբուժարանների բացակայությունը:

Հայաստանում հոգեկան հիվանդ երեխաները պրակտիկորեն զուրկ են հատուկ հոգեբուժական խնամքից ու ծառայություններից: Տարիներ շարունակ, ամիրաժեշտության դեպքում, նրանց խնամքը կազմակերպվել է մեծահասակների համար նախատեսված հոգեբուժական հաստատություններում:

Հատուկ հոգեբուժական խնամք մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար զարգացել է միայն վերջին տարիներին: Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ երեխաների նյարդաբանական կենտրոնը ընդունում է հոգեկան առողջության ունեցող խնդիրներ ունեցող երեխաներին: Կա նաև երեխաների բաժանմունք Երևանի Նորքի հոգեբուժական հիվանդանոցին կից, որը նույնպես ապահովում է հոգեբուժական խնամք մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին ամբողջ Հայաստանից:

Ինչ վերաբերում է մտավոր խնդիրներ ունեցող երեխաների կրթությանը, ներկայումս Հայաստանում կան 16 հատուկ հաստատություններ մտավոր հետամնաց երեխաների ու դեռահասների համար: Նրանցից 3-ը գտնվում են Երևանում, մյուսները գտնվում են Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում: Այլ տեսակի մտավոր հիվանդությունների համար հատուկ կրթական հաստատություններ չկան: Ոչ բոլոր երեխաներն են այս դպրոցներում մտավոր հետամնաց: Ավելի ու ավելի շատ աղքատ ընտանիքներ են փորձում իրենց կատարելապես առողջ երեխաներին ընդգրկել այս դպրոցներում միայն այն պատճառով որ այստեղ նրանք կարող են սովորել և հագուստներ ստանալ: Իսկ այս հաստատությունների տնօրենների համար ավելի հեշտ է գործ ունենալ առողջ երեխաների հետ: Մինչև վերջերս նույնիսկ անսովոր չէր որոշ հատկապես ծանր դեպքերի համար մտավոր հիվանդ և հաշմանդամ երեխային տեղավորել մեծահասակների հիվանդանոցում, որոնք բացառապես անհարմար էին:¹⁸⁷

Վերջին տարիներին փորձեր են արվում մտավոր և ֆիզիկական թերություններով երեխաների կրթությունը կազմակերպել սովորական դպրոցներում նրանց հասարակությունում ինտեգրելու համար: Ներկայումս այս կրթությունը տարվում է Երևանի 10 սովորական դպրոցներում և Տավուշի մարզի 4 դպրոցներում 300 և ավել երեխաների համար, բայց շատ վաղ է խոսել այս փորձնական ծրագրի հաջողության մասին:

3.4.5.2. Բարեգործական և խնամքի կազմակերպություններ

Հոգեբուժական ծառայությունների մատուցման ամբողջ համակարգում ոչ-պետական սեկտորի մասնաբաժինը դեռ շատ ցածր է և հիմնականում ներկայացված է սոցիալ-ռեաբիլիտացիոն ծրագրերի միջոցով և աջակցվում է միջազգային կառույցների կողմից:

Վճարովի հոգեբուժական ծառայությունները անսովոր երևույթ է և չկանոնակարգված:

❖ ՀԿ-ներ

Առաքելություն Հայաստան ՀԿ: 2006 թվականի վերջից Հայաստանի ԲԱՍ Բելգիան «Առաքելություն Հայաստան» հկ-ին հանձնեց 4 ցերեկային կենտրոններից 3-ը: Դրանք էին Սևանի, Գավառի և Ճամբարակի ցերեկային կենտրոնները:

Նրանցից յուրաքանչյուրը ծառայում է մտավոր խնդիրներով մարդկանց և նրանց ընտանիքներին, որոնք ապրում են տվյալ քաղաքում կամ շրջապատող գյուղերում: Շահառուների համար այստեղ կազմակերպվում են ձեռքի աշխատանքի, նկարչության,

¹⁸⁶ Բժիշկներ Առանց Սահմանների < 4 տարի անց ԲԱՍ-ը պատրաստվում է հանձնել հոգեկան առողջության ծրագրերը> պարբերություն 5, Էմմա Բել, Տարածքային տեղեկատվական գործակալ, 16.05.2006

¹⁸⁷ Բժիշկներ Առանց Սահմանների< Հայաստան, նոր հորիզոններ մտավոր խնդիրներ ունեցողների համար>, Մարտ 2004

երաժշտության, սեղանի խաղերի, ընթերցանության, ինչպես նաև հայերեն և անգլերեն լեզուների դասեր: Ավելի մանրամասն տեղեկատվություն այս կենտրոնների մասին կարելի է ստանալ կենտրոններից, հետևյալ հասցեներով:

Սևանի կենտրոն – ք.Սևան, Աբովյան փ., 140, հեռ.՝(374 261) 2 24 17

Գավառի կենտրոն – ք.Գավառ, Կահիրեի փ.9, հեռ.՝(374 364) 2 74 48

Ճամբարակի կենտրոն – ք.Ճամբարակ, Նժդեհի փ, մանկապարտեզ 2, հեռ.՝(374 265) 3 6551

Հոգեկան առողջության հիմնադրամ: Երևանում կա մեկ Հոգեկան առողջության կենտրոն Հոգեկան առողջության հիմնադրամի ենթակայության ներքո: Այստեղ աշխատում են սոցիալական աշխատող, հոգեբան, արթ-թերապիստ: Շահառուները զբաղված են հետևյալ գործունեությամբ: նկարչություն, կավագործություն: Այն ծառայում է 18-ից բարձր տարիքի մարդկանց համար:

Կան նաև այլ հկ-ներ, որոնք զբաղվում են հաշմանդամների խնդիրներով ընդհանուր առմամբ ներառյալ ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանցով: Այս հկ-ների գործունեությունը ներկայացվել է նախկինում:

❖ Միջազգային կազմակերպություններ

Որոշ միջազգային կազմակերպություններ շատ ակտիվ են այս ոլորտում: «ԲԱՍ» Խաղաղության Կորպուս, Ուորլդ Վիժն, Քաունթերփարթ ինթերնեյշնլ և այլն: Ներկայումս ոչ մի միջազգային կազմակերպություն չի տրամադրում ուղղակի աջակցություն մտավոր հիվանդ անձանց: Այս կազմակերպությունները բազմաթիվ ծրագրեր են իրականացնում տեղական գործընկերների միջոցով: շարունակում են աջակցել հոգեբուժական հաստատությունների պայմանների բարելավմանը; օգնում են հոգեբուժության մասին օրենքի իրականացմանը, իրականացնում են քարոզչական և տեղեկատվության բարձրացման կամպանիաներ և կարողությունների հզորացման ծրագրեր:

ԲԱՍ: Հայաստանում միջազգային կազմակերպությունների մեջ ամենանշանակալից գործունեությունը հոգեկան առողջության բնագավառում ծավալել է ԲԱՍ Բելգիան: ԲԱՍ-ը առաջինն էր, որ տրամադրեց հոգեբանա-սոցիալական խնամք 1988թ. Սպիտակի երկրաշարժի վերապրածներին: Հաջորդ տարիներին, ծրագրեր մշակվեցին ամբուլատոր հոգեբուժական հաստատություններում խնամվող հիվանդների համար և 1989թ.-ից սկսված Ադրբեյջանի և Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ տրամվայի ենթարկված փախստականների համար: 2002թ.-ից սկսած ԲԱՍ-ի հոգեկան առողջությանը վերաբերող գործունեությունը կենտրոնացավ հիվանդանոցային խնամքի վրա: 2002թ. նրանք առաջինը սկսեցին կենտրոնանալ Հայաստանի ամենաաղքատ և ամենախոցելի մարզերից մեկում, Գեղարքունիքում ստեղծելու հիվանդանոցային հոգեբուժության աշխատանքային մոդել: 2006թ.սկզբից ԲԱՍ/ Բելգիան հանձնեց իր ցերեկային կենտրոնները Առաքելություն Հայաստանին և ՀՀ Առողջապահության նախարարությանը: ԲԱՍ Բելգիան ծանոթացավ Հոգեբուժարանների խնդիրներին՝ հիվանդների չարաշահմանը, թերսնմանը, գերբեռնմանը և այլն և որոշեց անդրադառնալ այս խնդրին: Նախնական միջամտությունը անցկացվեց հոգեբուժական հաստատություններում՝ շենքերի վերակառուցում, անձնակազմի վերապատրաստում, հիվանդների բուժում, սննդի բարելավում և այլն:

Ավելի մանրամասն ինֆորմացիա ԲԱՍ-ի գործունեության մասին Հայաստանում և նրանց հոգեկան առողջության իրավիճակի մասին զեկույցների մասին կարելի է գտնել <http://www.msf.org/msfinternational/countries/europe/armenia/index.cfm> ինտերնետային էջում:

4. Մարդու Իրավունքներ

4.1. Էթնիկ փոքրամասնություններ

❖ Ընդհանուր բնութագիր

Հայաստանի փոքրամասնությունները ցրված են ամբողջ երկրով, և չեն կազմում տեղական մեծամասնություն որևէ շրջանում կամ վարչական տարածքում: Համաձայն Հայաստանի բնակչության մարդահամարի արդյունքների, որն անցկացվել է 2001թ, հոկտեմբերի 10-19-ը,¹⁸⁸ Հայաստանի 3.2 միլիոն ընդհանուր բնակչության 98 տոկոսը կազմում են էթնիկ հայերը: Փոքրամասնությունները ընդգրկում են՝ եզդիներ(40620 կամբնակչության1.3%) ռուսներ(14660,0.5%) ասորիներ, (3409) քրդեր, (1519) ուկրաինացիներ, (1633) հույներ(1176) և այլն(4640):

❖ Ազգային փոքրամասնություններին ուղղված ընդհանուր պետական քաղաքականությունը

Միջազգային պարտավորություններ: Հայաստանը արդեն միացել է 1992թ Ստրասբուրգում ընդունված Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին կոնվենցիային և 1992թ. Ստրասբուրգի Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային: Դրանք իրականացվում են Հայաստանում և ազգային օրենսդրությամբ, և ներառնելով այն մշակութային, կրթական, տեղեկատվական և այլ ծրագրերում:

Համաձայն 2006թ. մայիսի 12-ին ընդունված Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ խորհրդատվական հանձնաժողովի երկրորդ կարծիքի «Հայաստանը շարունակում է ցուցաբերել պարտավորվածություն կոնվենցիայի իրականացման համար: Այն մի շարք իրավական և ինստիտուցիոնալ քայլեր են արել բարելավելու ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց պաշտպանությունը, իսկ երկրում շարունակում է գերակայել հանդուրժողականության ընդհանուր մթնոլորտը»¹⁸⁹:

Հայաստանի կողմից նշված պայմանգրերի իրականացման վերաբերյալ բոլոր գեկույցները կարելի է գտնել Եվրոպայի խորհրդի կայքում http://www.coe.int/t/e/human_rights/minorities/Country_specific_eng.asp#P28_981, ինչպես նաև ՀՀԿառավարության կողմի գործերի և Ազգային Փոքրամասնությունների բաժնի էջում <http://www.gov.am/am/staff-structure/info/74/> (in Armenian).

Ազգային օրենսդրությունը: Համաձայն ՀՀ սահմանադրության 41-րդ հոդվածի «Յուրաքանչյուր մարդ պիտի ունենա իրավունք պահպանելու իր ազգային և էթնիկ ինքնությունը: Սարդիկ, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին, ունեն իրավունք պահպանելու և զարգացնելու իրենց ավանդույթները, կրոնը, լեզուն և մշակույթը»: Այս իրավունքները հարգվում են նաև այլ համապատասխան օրենքներում:

Հայաստանի ցանկացած ոչ-հայ բնակիչ ազատորեն օգտվում է բոլոր միջազգային և ազգային իրավունքներից, որ տրվում է ազգային փոքրամասնություններին և բնականաբար որպես ՀՀ քաղաքացիներ, նրանք ունեն նույն իրավունքները, ինչ մնացած բնակչությունը:

Հայաստանը դեռևս չի ընդունել հատուկ օրենք ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ: Կան որոշ տարածայնություններ փոքրամասնությունների

¹⁸⁸ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, Հայաստանը թվերով, 2008: Բնակչություն, էջ 22 http://www.armstat.am/file/article/armenia_08_4.pdf

¹⁸⁹ Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքներ և իրավական հարցեր, երկրի հատուկ տեղեկատվություն, Հայաստանում խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքը Հայաստանում Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ (CFC/OP/II(2006)005), ընդունված 2006թ. մայիսի 12-ին, Ստրասբուրգ, պարբերություն 1, էջ 1 [http://www.coe.int/t/e/human_rights/minorities/2_FRAMEWORK_CONVENTION_\(MONITORING\)/2_Monitoring_mechanism/4_Opinions_of_the_Advisory_Committee/1_Country_specific_opinions/2_Second_cycle/PDF_2nd_OP_Armenia_en.pdf](http://www.coe.int/t/e/human_rights/minorities/2_FRAMEWORK_CONVENTION_(MONITORING)/2_Monitoring_mechanism/4_Opinions_of_the_Advisory_Committee/1_Country_specific_opinions/2_Second_cycle/PDF_2nd_OP_Armenia_en.pdf)

մի շարք ներկայացուցիչների և իշխանությունների միջև օրենքի նախագծի հետ կապված, ուստի քննարկումները դեռևս շարունակվում են:

Պետական աջակցություն ազգային փոքրամասնություններին: Վերջին տարիների ընթացքում Հայաստանը մեծացրել է իր աջակցությունը ազգային փոքրամասնությունների ինքնության, մշակույթի, ավանդույթների և լեզվի պահպանությանը ուղղված ծրագրերին, չնայած որ այն մինչ օրս շարունակում է դիմակայել դժվարին տնտեսական պայմանների: 2001 թվականից սկսած Ֆոնդեր են հատկացվել ազգային փոքրամասնություններին ազգային փոքրամասնությունները համակարգող խորհրդի միջոցով և այն հավասարապես բաշխվել է 11 փոքրամասնական խմբերի միջև¹⁹⁰, որը ըստ որոշ ներկայացուցիչների անարդար է ավելի մեծ փոքրամասնությունների հանդեպ: 2008թ. այն կազմել է 10 միլիոն ՀՀ դրամ¹⁹¹, կամ մոտավորապես 18245 եվրո: Բացի այս աջակցությունից ՀՀ կառավարությունը ազգային փոքրամասնություններին տրամադրում է նաև զանազան ֆինանսական հատկացումներ տարբեր առիթներով: Համենայն դեպս, /.../«ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը մնում են դժգոհ իրենց մշակույթի և լեզվի պահպանմանը ուղղված գործունեությանը պետական աջակցության մակարդակից»¹⁹² « Այս առնչությամբ, ՀՀ կառավարությունը պարզաբանում է, որ /.../«եթե հարցը վերաբերում է միայն ֆինանսավորմանը, ուրեմն բազմաթիվ հկ-ներ Հայաստանում ունեն պրոբլեմներ կապված բավարար պետական ռեսուրսների սղության հետ: Բայց եթե դա կապված է ազգային փոքրամասնությունների կրթա-մշակութային ձեռնարկների պետական աջակցության հետ, ապա պետությունը պրակտիկորեն տրամադրում է աջակցություն գրեթե բոլոր նախաձեռնություններին»¹⁹³

Կրոնի գործերի և էթնիկ փոքրամասնությունների բաժին է ստեղծվել ՀՀ կառավարության կազմում, որի նպատակն է ուժեղացնել քաղաքականության մշակումը ի նպաստ ազգային փոքրամասնությունների:

Ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոն է ստեղծվել Երևանում, Սարյանի փողոցում: Այն ունի համերգային դահլիճ, դասասենյակներ փոքրամասնությունների լեզուները սովորելու համար, հանդիպման սենյակներ, ազգային փոքրամասնությունների արվեստի ցուցասրահներ, գրադարաններ՝ ազգային փոքրամասնության լեզուներով գրականությամբ:

❖ Կրթական հարցեր

Հայոց լեզվի պարտադիր ուսուցում: Լեզվի մասին 1993թ. մարտի 3-ին ընդունված ՀՀ թիվ 52 օրենքի հոդված 1.1-ը ասում է, որ «Հայոց լեզուն /.../համարվում է ՀՀ պետական լեզու: Գրական հայերենը պիտի լինի Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն»: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների բողոքին, որ իշխանությունները հատուկ աջակցություն ցույց չեն տալիս մեծահասակների հայերեն լեզվի ուսուցմանը, ՀՀ կառավարությունը տեղեկացնում է, որ /.../«Լեզվի պետական գործակալությունը, որը Կրթության և Գիտության նախարարության բաժին է, շատ

¹⁹⁰ Այս 11 փոքրամասնական խմբերն են-ասորի, բելոռուսցի, վրացի, գերմանացի, հույն, հրեա, քուրդ, լեհ, ռուս, ուկրաինացի, եզդի

¹⁹¹ 2008 թվականի հունվարի 31-ի Հի կառավարության թիվ 70 որոշումը Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ

¹⁹² Եվրոպայի խորհուրդ. խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքը Հայաստանում Շրջանակային Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ, ազգային փոքրամասնությունների աջակցության քաղաքականությունները, էջ 4

¹⁹³ Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքներ և իրավական հարցեր, երկրի հատուկ տեղեկատվություն, Հայաստանում խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքը Հայաստանում Շրջանակային Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ(CFC/OP/II(2006)005), ընդունված 2006թ. մայիսի 24-ին, արձագանք հիմնական եզրահանգումներին, ընդհանուր իրավաբանական և ինտիտուցիոնալ շրջանակ, պարբերություն 10, էջ 2

անգամներ է հայտարարել իր պատրաստակամությունը՝ կազմակերպելու անվճար հայոց լեզվի դասեր բոլոր տարիքային խմբերի համար: Այս ծրագիրը չի իրականացվել դիմողների բացակայության պատճառով: Բայց այն ուժի մեջ է և կարող է սկսվել ցանկացած ժամանակ, եթե լինեն դիմողներ»:¹⁹⁴

Կրթություն փոքրամասնությունների լեզուներով: Ինչ վերաբերում է իրենց մայրենի լեզվով ուսուցմանը, «ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի լեզվով համաձայն պետական ծրագրի և պետական հովանավորության, և նաև պարտադիր հայոց լեզվի ուսուցմամբ»:¹⁹⁵

«Կրթությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հիմնական մտահոգության առարկան է, որը նկատել է խորհրդատվական հանձնաժողովը/.../¹⁹⁶: Նրանք բողոքում են իրենց մայրենիով կրթություն ստանալու դժվարության մասին: ՀՀ կառավարությունը տեղեկացնում է, «/.../որ այս առնչությամբ չկան խոչընդոտներ ուսուցանելու որևէ լեզու, որն ընտրված է ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների կողմից: Դա այլ հարց է, որ պետական բյուջեից ֆինանսավորվող միջնակարգ դպրոցներում կրթությունը իրականացվում է երկրի պետական լեզվով, այսինքն հայերենով, և կան լրացուցիչ ակադեմիական ժամեր ազգային փոքրամասնությունների մայրենի լեզուն, մշակույթը և պատմությունը ուսուցանելու համար/.../¹⁹⁷:

Ռուսերեն լեզվի լայնամասշտաբ կիրառումը: Չնայած որ ռուսերենը չի համարվում Հայաստանի պետական լեզու, բայց այն կարելի է համարել ՀՀ երկրորդ լեզու: Ռուսերենի օգտագործումը շատ է տարածված: Այն ուսուցանվում է միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններում, ռուսերեն մանուկ ու գրականություն է տպագրվում, ռուսերեն ռադիոհաղորդումներ են հեռարձակվում, և որոշ մասնավոր հեռուստատալիքներ հեռարձակում են ռուսերեն ֆիլմեր առանց հայկական տիտրերի: Ավելին, մեծ թվով մարդիկ, որոնք պատկանում են ազգային փոքրամասնությունների /պրակտիկորեն քրդերից ու եզդիներից բացի/ բնորոշում են ռուսերենը որպես իրենց նախընտրած փոքրամասնության լեզու և նախընտրում են շարունակել կիրառել ռուսերենը որպես իրենց երեխաների կրթության լեզու:

❖ Ազգային Փոքրամասնությունների մասնակցությունը հանրային գործերին:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը հանրային գործերին շարունակվում է մնալ սահմանափակ, հատկապես ազգային մակարդակում: «Ազգային փոքրամասնություններից շատերի ներկայացուցիչները, որոնց հանդիպել է խորհրդակցային Հանձնաժողովը շարունակում են մնալ չբավարարված հանրային գործերում իրենց մասնակցության աստիճանով և հատկապես իրենց սահմանափակ ներկայությամբ ընտրական մարմիններում, հատկապես ազգային մակարդակում:/.../¹⁹⁸ Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ներկայացված են տեղական ինքնակառավարման մարմիններում, հատկապես այն վայրերում, որտեղ նրանք զգալի թիվ են կազմում, բայց նրանց համար դժվար է մուտք ունենալ ազգային խորհրդարան,

¹⁹⁴ Ibid., էջ 8

¹⁹⁵ ՀՀ ազգային ժողով, Պետության և տեղական իշխանությունների կառույցները Լեզվի մասին թիվ 52 օրենք, հոդված 2/2/, <http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>.

¹⁹⁶ Խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքը Հայաստանում Երջանակային Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ, հիմնական եզրակացություններ, կրթություն, կետ 12, էջ 5

¹⁹⁷ Կառավարության նկատառումները Հայաստանում Երջանակային Կոնվենցիայի իրականացման խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքի վերաբերյալ, արձագանք հիմնական եզրահանգումներին, ընդհանուր իրավաբանական ր ինտիտուցիոնալ շրջանակ, պարագրաֆ 12, էջ 3

¹⁹⁸ Հայաստանում Երջանակային Կոնվենցիայի իրականացման խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիք, հոդված 15

չկա քվոտաների համակարգ կամ զբաղեցրած տեղեր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ՀՀ ազգային ժողովում:

❖ Էթնիկ խտրականություն

Հանդուրժողականության ընդհանուր մթնոլորտը մնում է գերակայող Հայաստանում և չկա սիստեմատիկ խտրականություն էթնիկ ծագումով հիմնավորված: Չկան գրանցումներ սիստեմատիկ խտրականության ոստիկանության և իշխանությունների կողմից: Համենայն դեպս, գրեթե բոլոր զեկույցները Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավիճակի մասին նշում են էթնիկ փոքրամասնությունների դեմ «հասարակական խտրականության» հատուկեմտ դեպքերի մասին:

խտրականություն բանակում: 2006 թվականին խորհրդակցական հանձնաժողովի երկրորդ կարծիքում նշվում է տարերային բնույթի խտրականության վերաբերմունքի դեպքերի մասին եզրի ազգային փոքրամասնությունների հանդեպ: ԽՀ-ն զեկուցում է, որ «/.../եզդիները ավելի հաճախ են վատ վերաբերմունքի արժանանում զինվորական ծառայության ժամանակ»/.../199:

Մյուս կողմից, ինչ վերաբերվում է բանակին, ՀՀ կառավարությունը հաստատում է, որ «/.../չկան չարաշահումներ կապված էթնիկ պատկանելության հետ զինծառայության կոնտեքստում, և եզդիների դեպքում չկան գրանցված դեպքեր, մոտիվացված էթնիկ ծագումով: 2003թվականից սկսած 60 հկ-ներ, ներառյալ ազգային փոքրամասնությունների հկ-ներ՝ «Ազգությունների միություն» «Եզդիների ազգային միություն» համագործակցում են ՀՀ զինվորական ուժերի հետ: Պարբերաբար նրանք այցելում են իրենց կողմից ընտրված զինմասեր և առանց որևէ խոչընդոտի անցկացնում են հետազոտություններ սոցիալ-իրավական, ամենօրյա սանիտարա-հիգիենիկ պայմանների, անձնակազմի բարոյական և հոգեբանական վիճակի և զինծառայության կազմակերպման պայմանների մասին»²⁰⁰

Անցած տարիներին, համաձայն Միջազգային կրոնական ազատությունների մասին Հայաստանի զեկույցի, չկան փաստեր որ նորակոչիկների նկատմամբ զինվորական հետապնդումները եղել են ավելի խիստ փոքրամասնությունների հանդեպ²⁰¹:

Հասարակական խտրականություն: ԱՄՆ պետ դեպարտամենտը մարդու իրավունքների պրակտիկայի 2007 թ.ազգային զեկույցում մշտապես նշում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների հանդեպ հասարակական խտրականության փաստերի մասին:

«խորհրդակցական Հանձնաժողովը ինֆորմացվել է նաև եզդիների սոցիալական օգնությունների և զբաղվածության հասանելիության խտրական դեպքերի մասին, չնայած նշվում է, որ չի նկատվում փոքրամասնությանը պատկանող անձանց սիստեմատիկ դուրս մղում աշխատանքի շուկայից կամ սոցիալական նպաստներից:/.../202

2007թ. «Ազատության տուն» հայաստանյան զեկույցը նշում է «...Չնայած որ երկրի սակավ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչները հազվադեպ են զեկուցում ակնհայտ խտրականության մասին, նրանք բողոքում են իրենց մայրենի լեզուներով կրթություն ստանալու դժվարությունների մասին: Եզդիների համայնքը բողոքել է, որ

¹⁹⁹ Հայաստանում Շրջանակային Կոնվենցիայի իրականացման խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիք, հոդված 6 Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա, պարագրաֆ 60 էջ 11

²⁰⁰ ՀՀ կառավարության նկատառումները Հայաստանում Շրջանակային Կոնվենցիայի իրականացման խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիք, հոդված 5

²⁰¹ ԱՄՆ Պետ Դեպարտամենտ <http://www.state.gov/g/drl/rls/irf/index.htm>

²⁰² Հայաստանում Շրջանակային Կոնվենցիայի իրականացման խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիք կետ 43, 9

ուստիկանությունը և տեղական իշխանությունները երբեմն նրանց ենթարկում է խտրականության»²⁰³:

Հարկ է նշել, որ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդեպ գրանցված իրավունքների խախտումը Հայաստանում դեռևս չի նշանակում «խտրականություն ազգային հիմքով»: Սոցիալական նպաստների տրամադրման գոյություն ունեցող կոռուպցիան, խտրականությունը աշխատանքի և անշարժ գույքի շուկայում, չարաշահումներն ու կոռուպցիան բանակում և այլ խնդիրները ազդում և վերաբերում են են բոլոր հայ և ոչ-հայ բնակիչներին, անկախ նրանց ազգությունից: Սոցիալ-տնտեսական խնդիրները, որ նշում են ազգային փոքրամասնությունները, ընդհանուր են Հայաստանի բոլոր քաղաքացիների համար:

❖ Ազգային փոքրամասնություն կազմող համայնքները Հայաստանում:

Ազերիները Հայաստանում: Նախքան Ադրբեջանի հետ կոնֆլիկտը, Հայաստանի ամենամեծ փոքրամասնությունը ադրբեջանցիներն էին, որոնք ամբողջովին տեղափոխվեցին Ադրբեջան կոնֆլիկտի արդյունքում:

Ներկայումս չկա նրանց թվի մասին պաշտոնական տվյալ: Ինչպես տեղեկացրեց ազգագրագետ Հրանուշ Խառատյանը, «Իրականության մեջ անցկացվել է հատուկ հետազոտություն ազերի մասին Հայաստանում: Միայն այդ արդյունքները չեն հրապարակվում և տվյալները չեն հայտարարվում, ադրբեջանցի պատասխանողները խնդրել են այդ տվյալները չտարածել խտրականության չենթարկվելու համար»:²⁰⁴

Ինչը կարելի է վստահորեն ասել, որ կան շատ մարդիկ ադրբեջանական ծագումով, որոնք շարունակում են ապրել Հայաստանում, նրանք տարալուծված են հասարակության մեջ և ներկայանում են որպես «հայեր» սովորաբար հայկական անուն-ազգանուններով, և խուսափում են նշել իրենց ադրբեջանական արմատները: Ինչպես բացատրեց ազգագրագետ Խառատյանը հարցազրույցում, «փաստորեն չկան գրանցված դեպքեր էթնիկ խտրականության ադրբեջանցիների հանդեպ, բայց ի տարբերություն այլ էթնիկ փոքրամասնությունների, դա չի նշանակում, որ իրականում չկա ադրբեջանցիների խտրականություն Հայաստանում, որովհետև բոլոր էթնիկ ազերիները թաքցնում են իրենց էթնիկ ծագումը և ոչ մեկը չի ներկայանում որպես ազերի, ուստի անհնար է համոզված ասել, կա ադրբեջանցիների նկատմամբ խտրականություն Հայաստանում, թե ոչ»:

Գնչուները Հայաստանում: «/.../Իր ավանդական իմաստով այստեղ չկա գնչուական ազգային համայնք: Հայկական բոշաները, որոնք պարբերաբար ներկայացվում են որպես գնչուներ, իրականության մեջ ազգային համայնք չեն կազմում, նրանք ամբողջովին ինտեգրված են հայ համայնքի մեջ և նախընտրում են չներկայանալ որպես գնչու»/.../²⁰⁵:

Մնացած փոքրամասնությունները՝ ասորի, բելոռուս, վրացի, գերմանացի, հույն, հրեա, քուրդ, լեհ, ռուս, ուկրաինացի, եզդի շատ ակտիվ են. մի շարք ոչ-կառավարական կազմակերպություններ նախաձեռնել են օգնել ազգային, ինչպես նաև կրոնական համայնքներին:

4.2. Կրոնական փոքրամասնություններ

Ընդհանուր բնութագիր: Բնակչության մոտավորապես 98 տոկոսը էթնիկ հայեր են: Չնայած որ հայ բնակչության մեծ մասը ակտիվ կրոնական կիրառողներ չեն, բայց կապը

²⁰³FreedomHouse, Ազգային Զեկույց, Հայաստան
<http://www.freedomhouse.org/template.cfm?page=22&country=7126&year=2007>,

²⁰⁴ Հարցազրույց ազգագրագետ Հրանուշ Խառատյանի հետ, ՀՀ Ազգային Փոքրամասնությունների և Կրոնի Գործերի կոմիտեի պետ, անցկացված 2008թ. Հունիսի 13-ին, Երևանում

²⁰⁵ ՀՀ կառավարության նկատառումները Շրջանակային Կոնվենցիայի Իրականացման վերաբերյալ խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքի վերաբերյալ, հոդված 3, կետ 11, էջ 4

հայ ազգության և հայ եկեղեցու միջև ուժեղ է: Քաղաքացիների 90 տոկոսը պատկանում է հայ առաքելական եկեղեցուն:

Ամեն տարի ԱՄՆ պետդեպարտամենտը պատրաստում է Ձեկույց Միջազգային կրոնական ազատությունը Հայաստանում և տալիս է մանրամասն ինֆորմացիա Հայաստանի կրոնական խմբավորումների իրավիճակի մասին: Համաձայն այդ զեկույցի, 2008 թվականին «Հայաստանում կան այլ կրոնական խմբերի փոքր համայնքներ: Չկա վստահելի մարդահամարային տվյալ կրոնական փոքրամասնությունների մասին, և միաբանությունների հաշվարկները շատ տարբեր են: Այս խմբերը կազմում են բնակչության 5 տոկոսից պակասը և ընդգրկում են Հռոմի կաթոլիկներին, Հայ Մխիթարյան կաթոլիկներին, ուղղափառ քրիստոնյաներին, հայ ավետարանական քրիստոնյաներին, մալականներին²⁰⁶, հոգեգալստականներին, Յոթերորդ օրվա ադվենտիստներին, բափթիստներին, քարիզմատիկ քրիստոնյաների տարբեր խմբերի, եհովայի վկաների, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցուն, մորմոններ/ եզդիներին/ ոչ մուսուլման քրդերին, որոնք կիրառում են եզդիականություն, հրեաներին, սունի մուսուլմաններին, քրդերին, Շիիտ մուսուլմաններին, Բահաիներին և այլն:

Եզդիները հիմնականում տեղավորված են Արարատ լեռան շուրջ, Երևանից հյուսիս արևմուտք գյուղատնտեսական տարածքներում: Հայ կաթոլիկները հիմնականում ապրում են հյուսիսում, մինչդեռ հրեաները, մորմոնները, բահայիները և ուղղափառ քրիստոնյաները Երևանում, կա նաև շիիտ մուսուլմանների, ներառյալ իրանցիների փոքր համայնք և ժամանակավոր բնակիչներ միջին արևելքից:²⁰⁷

Օրենսդրություն: ՀՀ սահմանադրության հոդված 8.1-ը սահմանում է եկեղեցու և պետության բաժանումը: Այն ճանաչում է «Հայ առաքելական սուրբ եկեղեցու բացառիկ պատմական առաքելությունը որպես ազգային եկեղեցի հայ ժողովրդի հոգևոր կյանքում, ազգային կուլտուրայի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»:

1991 թվականին ընդունվեց թիվ 0333 օրենքը խղճի և կրոնական կազմակերպությունների ազատության մասին²⁰⁸, որը բնորոշում է գրանցման ընթացակարգերը և կրոնական կազմակերպությունների օրինական գործունեության շրջանակը: Հավասարության սկզբունքը օրենքի առջև կյանքի բոլոր ասպարեզներում անկախ կրոնական հավատքից և պատկանելությունից անփոփոխ է նաև այլ մի շարք նորմատիվ ակտերում:

❖ Առաջացած խնդիրները

Գրանցում: Ներկայումս ավելի քան 60 կազմակերպություններ են գրանցված: Չկան նշված դեպքեր, որ ՀՀ կառավարությունը հրաժարվել է գրանցել կրոնական խմբերը, որոնք կարող են գրանցվել օրենքով:

Ավելին, որոշ կրոնական համայնքներ, որոնք գրանցված չեն դեռ, չունեն իրավական խոչընդոտ իրականացնելու իրենց կրոնական գործունեությունը: «/.../Որոշ փոքրամասնական կրոնական խմբեր, ներառյալ մալականներն ու այլ եզդի խմբեր, չեն փնտրում գրանցում: Չնայած որ որպես կրոնական հաստատություն գրանցված չեն, բայց Երևանում գործում է միակ մզկիթը և այն բաց է բոլոր ուրբաթ օրերին և կառավարությունը չի արգելում մուսուլմաններին աղոթքներ անելու»²⁰⁹:

Կրոնական կրթություն դպրոցներում: «Կրթության մասին օրենքը նշում է որ դպրոցներում կրթությունը աշխարհիկ է: Միայն Կառավարության կողմից երաշխավորված կրթված

²⁰⁶ Որոշ զեկույցներում <մալականների> բառի փոխարեն օգտագործվում է <մոլդկաններ>

²⁰⁷ ԱՄՆ Պետ դեպարտամենտ, Կրոնական ազատությունների միջազգային զեկույց 2008, պարբերություն 3,4 <http://2001-2009.state.gov/g/drl/rls/irf/2008/108433.htm>,

²⁰⁸ ՀՀ Ազգային Ժողով, Օրենսդրություն, Պետության և տեղական իշխանության հիմնական կառույցները <http://www.parliament.am/legislation.php?sel=subject&lang=eng>, last accessed in January 2010

²⁰⁹ Կրոնական ազատությունների միջազգային զեկույց 2008, պարբերություն 5 paragraph 5

անձնակազմը կարող է դասավանդել հանրային դպրոցներում: Կրոնի պատմության դասերը մաս են կազմում հանրակրթական ծրագրի և ուսուցանվում են հանրային դպրոցների ուսուցիչների կողմից: Հայ եկեղեցու պատմությունը այս ծրագրի հիմքն է: Շատ դպրոցներ դասավանդում են համաշխարհային կրոնների մասին նախնական դպրոցում և հայ եկեղեցու պատմությունը միջին դպրոցում: Բոլոր կրոնական կազմակերպությունները կարող են հիմնել կրոնական կրթության խմբեր՝ իրենց անդամներին ուսուցանելու, օգտագործելով իրենց պատկանող կամ իրենց հատկացված հաստատությունները: Օրենքը իրավունք է տալիս հայ եկեղեցուն կազմակերպելու կամավոր կրոնական դասեր պետական կրթական հաստատություններում՝ օգտագործելով այդ հաստատությունների հնարավորություններն ու ռեսուրսները»²¹⁰: Դպրոցներում պարտադիր կրոնական դասերի անցկացումը, միայն հայ առաքելական եկեղեցու պատմություն դասավանդմամբ հարցը հակասական է և տարբեր քննարկումների առակա է:

Իշխանությունների կողմից կրոնական գործունեության խոչընդոտելը: Ըստ միջազգային կրոնական ազատության 2007թ.գեկույցի, հաշվետու ժամանակահատվածում գրանցված կրոնական կազմակերպությունների մեծամասնությունը չի նշում լուրջ իրավական խոչընդոտներ իրենց գործունեության համար, չի գրանցվել որևէ պաշտոնապես հովանավորված բռնություն փոքրամասնական կրոնական խմբերի հանդեպ: Համենայն դեպս, նշված գեկույցում Եհովայի վկաները նշում են իրենց գործունեությունը խոչընդոտող հանգամանքներ, ինչպիսին է կրոնական հավաքների անցկացման համար հանրային տարածքների տրամադրումից հրաժարվելը, մաքսային ծառայության կողմից Եհովային վկաների կրոնական գրականություն ստացման համար նշանակված զգալիորեն բարձր տոկոսները, քան խումբը ակնկալում էր և այլն:

Կրոնական բանտարկյալները: Բացի Եհովայի վկաներից, որոնք խղճի հիմքով հրաժարվել են ծառայությունից, կրոնական բանտարկյալների կամ դատապարտյալների այլ փաստեր չեն արձանագրվել:

«Ըստ Եհովայի վկաների առաջնորդների, հաշվետու ժամանակահատվածի վերջում, իրենց անդամներից 78-ը դեռևս մնում են բանտերում խղճի և կրոնական հիմքով զինծառայությունից խուսափելու կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն ընտրելու համար: Եհովայի վկաների ներկայացուցիչները նշում են, որ բոլոր բանտարկյալներին տրվել է հնարավորություն այլընտրանքային զինծառայությունը ընտրելու, բայց նրանք հարժարվել են, որովհետև զինվորականները շարունակել են պահպանել վարչական վերահսկողությունը այլընտրանքային ծառայության վրա»²¹¹:

Ձինվորական ծառայություն: Պարտադիր զինվորական ծառայությունը մնում է Եհովայի վկաների կարևոր պրոբլեմային խնդիրներից մեկը:

Եհովայի վկաների հանդեպ հայ հասարակության ակնհայտ բացասական վերաբերմունքի հիմնական պատճառը զինվորական ծառայությունից նրանց հրաժարվելն է, որն իր հերթին պատճառ է հանդիսանում դատապարտման և դատավարությունների:

Եհովայի վկաները անբավարարված են այլընտրանքային քաղաքացիական ծառայությամբ: Երիտասարդները/խղճի հիմքով հրաժարվողները, որոնք ընտրում են այլընտրանքային քաղաքացիական ծառայությունը արժանանում են վատ վերաբերմունքի: /.../ Ի պաշտպանություն իրենց, երիտասարդը նշում է , որ իրենք ցանկությամբ են ընդունել աշխատանքը հոգեբուժական հիվանդանոցում, համոզված լինելով, որ նոր այլընտրանքային ծառայության մասին օրենքով աշխատանքը քաղաքացիական է: Համենայն դեպս, նրանցից պահանջվել է հագնել զինվորական համազգեստ, ստիպված են եղել անցնել կանոնավոր ստուգումներ զինվորական

²¹⁰ Կրոնական ազատությունների միջազգային գեկույց 2008, պարբերություն 6

²¹¹ ibid.

ուստիկանության կողմից, իրենց կրոնը կիրառելու հնարավորություն չեն ունեցել և դուրս գալ տարածքներից նույնպես արգելված է եղել: /.../ ²¹²

Ինչպես Եհովայի Վկաները/.../« Որոշ մարդիկ, որոնք պատկանում էին Ռուսախոս Մալականներիին, որոնք, կրոնական հիմքով հրաժարվում են զինվորական ծառայությունից, համարում են, որ այլընտրանքնային ծառայությունը, ինչպես որ դա հիմա է, չի տրամադրում համապատասխան այլընտրանք զինծառայությանը, քանի որ այն համապատասխանաբար տարանջատված չէ զինվորական վերահսկման կառուցվածքից» ²¹³:

Իր հերթին, ՀՀ կառավարությունը նշում է, որ /.../Հայաստանի Հանրապետությունում, «Այլընտրանքային ծառայության օրենքի» համաձայն, կա երկու տեսակի այլընտրանքային ծառայություն՝ «այլընտրանքային զինվորական» և «այլընտրանքային աշխատանքային»: Մալականները, ինչպես նաև ՀՀ ցանկացած քաղաքացի, կարող է ընտրել իր ցանկացած տեսակը: Պրակտիկայում, եղել է միայն մի դեպք, երբ մալականը ընտրել է այլընտրանքային աշխատանքային ծառայությունը: ՀՀ Պաշտպանության Նախարարությունը չունի որևէ կապ այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպման, իրականացման և վերահսկման հետ: Փաստորեն, ծառայության կազմակերպումը և իրականացումը վերահսկվում է այն կազմակերպության ադմինիստրացիայի կողմից, որտեղ իրականացվում է ծառայությունը և այն նախարարության կողմից, որին տվյալ կազմակերպությունը պատկանում և ենթարկվում է: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը անցել է Եվրոպայի Խորհրդի փորձությունը ²¹⁴:

Չնայած որ այլընտրանքային ծառայության մասին քննարկումները չեն ավարտվել , բայց 2005թ-ից ոչ մի դիմում, այլընտրանքային ծառայության չի գրանցվել:

Ինչ վերաբերում է եզդիներին, 2007 և 2008 թվականներին, ի տարբերություն նախկին հաշվետու ժամանակահատվածի, չկան զեկույցներ, որ նորակոչիկների հանդեպ զինվորական հետապնդումները ավելի խիստ է եղել փոքրամասնությունների հանդեպ: Եզդի ներկայացուցիչները չեն գրանցել հետապնդման և խտրականության դեպքեր:

4.3. Սեռական փոքրամասնություններ:

Ընդհանուր պատկերը: Հայաստանում սեռական փոքրամասնությունների վերաբերյալ չկան հաշվարկված տվյալներ: Շատ համասեռամուլներ թաքցնում են այս փաստը՝ վախենալով կորցնել իրենց ընտանիքները, ընկերներին և աշխատանքը: Համասեռամուլների հաղորդակցության ամենալավ միջոցը ինտերնետն է: 2007թ. ինտերնետում հայտնված հոդվածի համաձայն, /.../«Կան 1764 համասեռամուլներ գրանցված Հայաստանի համասեռամուլների սոցիալական ցանցում- որոնցից 1306-ը կազմում են հոմոսեքսուալները, 342-ը բիսեքսուալները, 94-ը լեսբիանները և 22-ը տրանսվեստիտները»/.../ ²¹⁵: Իրական թիվը հավանաբար ավելի շատ է:

Գոյություն ունեցող համասեռամուլների ակումբներն ու հկ-ները: Պաշտոնապես գրանցված համասեռամուլների ակումբներ չկան Հայաստանում: Բայց կան որոշ ակումբեր համասեռամուլների համար Երևանում: Այսօրվա դրությամբ, Հայաստանում չկա համասեռամուլների իրավունքների շարժում/ *ոչ կազմակերպված կամ ակնհայտ, ավելի նուրբ համասեռամուլների իրավունքների շարժումը գոյություն ունի* ²⁰⁰⁰

²¹² Եհովայի Վկաներ, Հանրային տեղեկատվության գրասենյակ, Խղճի հիմքով զինծառայությունից հրաժարվողները դատապարտվել են զինվորական օրենքով, փ-ը նոյեմբերի 2005 http://www.jw-media.org/region/europe/armenia/english/releases/conscientious_obj/arm_e051103.htm

²¹³ Եվրոպայի Խորհուրդ, պոլիտիկայի հարձնաժողովը Հայաստանում շրջանակային կոնվենցիայի իրականացման մասին, երկրորդ կարծիք, կետ 61, էջ 12

²¹⁴ ՀՀ կառավարության նկատառումները Շրջանակային Կոնվենցիայի Իրականացման վերաբերյալ խորհրդակցային հանձնաժողովի երկրորդ կարծիքի վերաբերյալ

²¹⁵ Global Gayz. Com, Հայաստանի թշնամությունը արվամուլների հանդեպ՝ Շուշան Հարությունյան, պարբերություն 9, 7-ը Օգոստոսի 2007, <http://www.globalgayz.com/armenia-news.html>

համասեռամուլների հաստատությունների ձեռնարկների տեսքով, Սփյուռքի կազմակերպությունների աջակցությամբ՝ և հասարակությունը մնում է ծայրահեղ հոմոֆոբիկ: Առաջին համասեռամուլների բարը Մելինե բացվել է 2004թ. նոյեմբերի 12-ին: Առաջին լեսբիանների, համասեռամուլների, բիսեքսուալների և տրանսսեքսուալների հի-ց²¹⁶ կոչվում է «Մենք հանուն քաղաքացիական հավասարության», հայտնի նաև որպես Մենք: Ֆորմալ գրանցվել է Արդարադատության Նախարարությունում 2006թ.-ին: Երկրորդ ԼԳԲՏ- առնչվող հի-ց ՊԻՆԿ Հայաստան. հանրային իրազեկում և գիտելիքների կարիք հաստատվել է 2007 թվականի դեկտեմբերին: /.../Նույնիսկ եթե շատ ձեռնարկներ այս ուղեցույցում նշված արվում է համասեռամուլների և լեսբիանների կողմից, դա չի նշանակում, որ այն կարելի է համեմատել արևմուտքի հոմոսեքսուալ բարերի և դիսքոների հետ»²¹⁷:

Չկան իշխանությունների և ոստիկանության կողմից համասեռամուլների ակումբների գործունեությանը և համասեռամուլների հանդիպումներին խոչընդոտող գրանցումներ: Միակ պատճառը, որ համասեռամուլական շարժումները ակտիվ չեն, հասարակական պարսավանքն է նրանց հանդեպ:

Օրենսդրություն: 2003 թվականին Հայաստանը ընդունել է նոր քրեական օրենսգիրք և հանել է դեռևս 1936 թվականից գործող հակա-համասեռամուլական 116-րդ հոդվածը: Այսուհետ, համասեռամուլությունը պատժելի չի: Բայց ՀՀ քրեական օրենսգիրքը բնութագրում է համասեռամուլական գործողությունները անօրինական, եթե այն իրականացվել է անչափահասի հետ/ մինչև 16 տարեկան/²¹⁸ կամ օգտագործելով ուժ կամ սպառնալիք²¹⁹:

❖ **Խնդիրներ, որոնց հանդիպում են համասեռամուլները Հայաստանում:**

Ձին ծառայություն: Կան գրանցված դեպքեր բանակում համասեռամուլների հետ վատ վերաբերմունքի²²⁰: Ուստի կա հատուկ քաղաքականություն չհավաքագրել համասեռամուլներին բանակ: «2001թվականից սկսած, ՀՀ պաշտպանության նախարարի 378-րդ հրամանով համասեռամուլությունը համարվում է հիվանդություն և համասեռամուլները պիտանի չեն զինծառայության համար, անկախ այն փաստից, որ համասեռամուլությունը պաշտոնապես պատճառ չէ զինծառայությունից ազատվելու համար: Շատ համասեռամուլներ իրենք իրենց կամավոր բնութագրում են որպես այդպիսիք և խնդրում են իրենց ազատել ծառայությունից, քանի որ վախենում են, որ իրենց բացահայտելու դեպքում կդառնան բռնության առարկա բանակում, և կմեկուսացվեն մյուս բոլոր ծառայողներից, օրինակ, նրանք իրենց չեն բարևի, չեն ուտի միասին և այլն: Եղել են նաև դեպքեր, երբ զինվորական կոմիսարիատները ուղարկել են անձանց, որոնք իրենց համարել են համասեռամուլներ, հոգեբուժական հաստատություններ, որտեղ համապատասխանաբար նրանց տրվել է վկայական, որտեղ ասվում է, որ նրանք «մտավոր խանգարումներ» ունեն և այսպիսով ազատվում են զին ծառայությունից»²²¹:

²¹⁶ <Լեսբիանների, համասեռամուլների, բիսեքսուալների և տրանսսեքսուալների կազմակերպության> հավաքական անվանումը

²¹⁷ Unzipped: Gay Armenia, Armenia Gay Guide, Country overview, II paragraph, <http://gayarmenia.blogspot.com/2007/06/armenia-gay-guide.html>

²¹⁸ Համաձայն ՀՀ քրեական Օրենսգրքի 141 հոդվածի սեռական գործողություններ մինչև 16 տարեկան անձանց հետ 18 տարին լրացած անձի կողմից պատժվում է ուղղիչ աշխատանքներով մինչև 2 տարի, կամ մինչև 2 տարի ազատազրկմամբ

²¹⁹ Հիմնված ՀՀ Քրեական օրենսգրքի վրա, հոդված 139,140

²²⁰ Ավելի մանրամասն՝ Հայաստանի թշնամությունը արվամուլների հանդեպ՝ Շուշան Հարությունյան, հիմնված Հայ արվամուլի հետ հարցազրույցի վրա, 2007

²²¹ Միջազգային Հելսինկյան ֆեդերացիա, Տարեկան զեկույց մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ http://www.ihf-hr.org/viewbinary/viewdocument.php?doc_id=7391

Այս լուծումները կարող են ունենալ բացասական ազդեցություն համասեռամուլների վրա հետագայում: «Մարդիկ, որոնք բացահայտ համասեռամուլներ են, ազատվում են զինծառայությունից, նրա համար որ կարող են չարաշահվել իրենց ընկեր ծառայողների կողմից: Համեմայն դեպս, այս ազատման իրավական ենթատեքստը հաստատվում է համասեռամուլների բժշկական հայտնաբերումով, որպես մտավոր խանգարում ունեցող, որը դրվում է նրանց անձնագրի մեջ և կարող է ազդել նրանց ապագայի վրա/.../»²²²:

Հասարակության վերաբերմունքը համասեռամուլներին: Հայաստանը համարվում է հոմոֆոբիկ հասարակություն: Չնայած համասեռամուլությունը պատժելի չի օրենքով այլևս և ոստիկանությունը դադարել է համասեռամուլների հետապնդումը և ձերբակալումը, բայց հասարակության վերաբերմունքը բացասական է: Հարկ է նշել, որ 90-ականների հետ համեմատած համասեռամուլների նկատմամբ վերաբերմունքը փոխվել է և հիմա հայ հասարակությունը համեմատաբար ավելի հանդուրժող է: Համեմայն դեպս խորհուրդ չի տրվում բացահայտ արտահայտել իրենց համասեռամուլությունը հանրության առջև: «/.../Հայ հասարակությունը մնում է հոմոֆոբիկ, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում ձեռքեր չբռնել և չհամբուրվել հանրության մեջ, չնայած կարող եք տեսնել տղամարդկանց և կանանց, որոնք բռնում են մեկմեկու ձեռք և համբուրվում են հանդիպելու կամ հրաժեշտ տալուց, սա անհրաժեշտաբար նշան չէ սեքսուալ օրինետացիայի, բայց ավելի շատ հաստատված ավանդույթի/.../»²²³

Շատ համասեռամուլներ ստիպված են թաքցնել իրենց համասեռամուլությունը նույնիսկ իրենց ընտանիքներից, ընկերներից և կուլեգաներից:

Ինչ վերաբերում է եկեղեցուն, Հայ առաքելական եկեղեցին ունի կատեգորիկ դիրքորոշում համասեռամուլության վերաբերյալ:

Հասարակության պարսավանքը հիմնական պատճառն է, որ ստիպում է համասեռամուլներին փախչել Հայաստանից արտասահման:

Խոչընդոտներ իշխանությունների կողմից: «/.../«Տեղական դիտորդները նշում են, որ ի տարբերություն նախորդ տարիների, չկան արձանագրված դեպքեր համասեռամուլների ոստիկանական հետապնդման, շանտաժի, պատժի կամ բռնության գործադրման միջոցով: Համեմայն դեպս, հասարակության վերաբերմունքը մնում է խիստ և խոչընդոտում է համասեռամուլների բժշկական հասանելիությանը»²²⁴:

Ավելի մանրամասն համասեռամուլների մասին ինֆորմացիա կարելի է ստանալ ներքոնշյալ ինտերնետային կայքերից:

GlobalGayz.com, Gay Armenia News & Reports, <http://www.globalgayz.com/armenia-news.html>,

Unzipped: Gay Armenia, Armenia Gay Guide, <http://gayarmenia.blogspot.com/2007/06/armenia-gay-guide.html>

²²² ԱՄՆ Պետ դեպարտամենտ, Մարդու իրավունքների Հայաստանի ազգային զեկույց 2007, իրականացված Ժողովրդավարություն, Մարդու Իրավունքներ և աշխատանք բաժնի կողմից 2008 թվականի մարտի 11-ին, հոդված 5, Խտրականություն, հասարակական պարսավանք և մարդկանց Թրաֆիքինգ <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/100546.htm>

²²³ Unzipped: Gay Armenia, Հայ համասեռամուլների ուղեցույց, պարբերություն 3, <http://gayarmenia.blogspot.com/2007/06/armenia-gay-guide.html>,

²²⁴ Մարդու իրավունքների Հայաստանի Ազգային զեկույց 2007, հոդված 5, Խտրականություն, հասարակական պարսավանք և մարդկանց Թրաֆիքինգ, պարբերություն 1

5. Հապավումների ցանկ

ABA/CEELI-Ամերիկյան Իրավաբանների Ասոցիացիա/ Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի օրենքի նախաձեռնություն
ՀԲԲ-Հայ Բիզնես ԲԱՆԿ
ՀՀ դրամ-Հայկական դրամ
ՀՆՓ-Հիմնական Նպաստների Փաթեթ
ԱՊՀ-Անկախ Պետությունների Համագործակցություն
ՓԲԸ-Փակ բաժնետիրական Ընկերություն
CNEWA-Catholic Near East Welfare Association
ԿԶԿ/ԹԻ-Տարածքային Ջարգացման Կենտրոն/Թրանսպարանսի Ինթերնեյշնլ
ՎՋԵԲ Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկ
ԷՍԳ-ԷԷկտրաստրագրություն
ՀՕՖ-Հայ Օգնության Ֆոնդ
ԼԸ-Լիակատար ընկերակցություն
ՀՆԵ-Համախառն Ներքին Եկամուտ
ԲՈՒՀ-Բարձրագույն Ուսումնական Հաստատություն
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Մարդու Իմունային Ամբավարարության Վարակ/Ձեռքբերովի Իմունային ամբավարարության համախտանիշ
ԲԳՎ-Բնակարանի Գնման Վկայական
ID-Նույնականացման քարտ
ԱՄԿ-Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն
ՄՀՏՎԿ-Միջազգային հետ-տրավմատիկ վերականգնողական կենտրոն
ՄՄԿ-Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ԲԸ-Բաժնետիրական Ընկերություն
ԼՀԲՏ-Լեսբիան, համասեռամուլ, բիսեքսուալ, տրանսսեքսուալ
ԻԱ-Իրավաբանական Անձ
ՄՊԸ-սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՍԸ-Սահմանափակ ընկերակցություն
ՀՁՆ-Հազարամյակի Ջարգացման նպատակներ
ԲՍՓՀ-Բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողով
ԲԱՍ-Բժիշկներ Առանց Սահմանի
ՀԿ-հասարակական կազմակերպություն
ԼԴ-Լեռնային Ղարաբաղ
ՀՀԱՎԾ -Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայություն
ԲԲԸ-Բաց Բաժնետիրական Ընկերություն
ԵԱՀԿ-Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն
ՀՏԳԿ-Հանրային տեղեկատվություն և գիտելիքների կարիք
ՀԲԿ-Հոգեբուժական բժշկական կենտրոն
ՀԾՀՀ-Հանրային ծառայությունները համակարգող հանձնաժողով
ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
ՊՀՀԾ-Պետական հիգիենիկ և համաճարակային ծառայություն
ՓՄՁ-փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ-փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ԼՊԸ-լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն
ԱԶ-անհատ ձեռներեց
ՀՎՀՀ-հարկ վճարողի հաշվառման համար
ԹՁՊԼԱ-Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության լիազորման ակտ
ԱՄԷ- Արաբական Միացյալ Էմիրություններ
UMCOR-United Methodist Committee on Relief-ԱՄՔՈՐ
ՄԱԿ-Միացյալ Ազգերի Կազմակերպություն
ՅՈՒՆԵՍԿՈ- Միացյալ Ազգերի Կրթական, Գիտական և Մշակութային Կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ-Միացյալ Ազգերի Երեխաների Ֆոնդ
ՄԱԿԳՀԳ-Միացյալ Ազգերի Կազմակերպության Գերազույն Հանձնակատարի գրասենյակ

ՄԱԿ ԶԾ-Միացյալ ազգերի կազմակերպություն Ձարգացման Ծրագիր
ԱՄՆ-Ամերիկայի Միացյալ Նահանգներ
USAID-Միացյալ Ազգերի զարգացման Գործակալություն
ԽՄՅՄ-Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՍՄԽ-Չպայթած ականներ
ԱԱՀ-Ավելացված արժեքի Հարկ
ԾՎԱՀ-Վիետնամի Վետերանների Ամերիկյան Հիմնադրամ
ՀՊԾ- Համաշխարհային Պարենի Ծրագիր
ՄԳԲՀ-Մենք Հանուն Քաղաքացիական Հավասարություն
ԱՀԿ-Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Տեղեկատվական նյութը պատրաստվել է հիմնականում հասանելի հանրային ինֆորմացիայի հիման վրա, լրացվել է տեղական գործընկերների կողմից հավաքած տեղեկատվությամբ և կթարմացվի պարբերաբար Մեր տեղական Գործընկերները Հայաստանում`

- ՀԿ Հայկական Կարիտաս
- ՀԿ Առաքելություն Հայաստան